


գիտահանրամատչելի հանդես

ԳԻՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՐՀՈՒՄ

ISSN 1829-0345

№2-3, 2013 թ.



Լրատվական գործունեություն
իրականացնող՝ ՀՀ ԳԱԱ Նախագահություն
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

Պետական գրանցման
վկայականի համարը՝ 03ԱՈ55313
Տրված՝ 28.06.2002 թ.

Գլխավոր խմբագիր՝ Ղազարյան Էդ.
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Սուվարյան Յու.
Բաժինների խմբագիրներ՝ Պապոյան Ա.
Նորայան Ա.
Պողոսյան Ա.
Խառատյան Ա.
Մարգարյան Ա.

Գործադիր տնօրեն՝ Պատասխանատու

Գլխավոր խմբագիր՝ Վարդանյան Ն.

Վարչական խմբագիր՝ Կիրակոսյան Ա.

Համակարգչային օպերատոր՝ Հովհաննիսյան Բ.

Պրոդյուսեր՝ Օհանջանյան Ա.
Թարգմանիչ՝ Մարգարյան Մ.

Համարի պատասխանատու՝ Կիրակոսյան Ա.

Մտորագրված է տպագրության՝ 26.08.2013

«Գիտության աշխարհում» խմբագրական խորհրդի կազմը՝

Աղայան Կ., Աղայրվյան Լ., Աղայան Ա., Ավագյան Ս. (ՌԴ), Աֆրիկյան Է., Բրուտյան Գ., Գալստյան Հ., Եսայան Ա. (ԱՄՆ), Թավադյան Լ., Հարությունյան Բ., Հարությունյան Հ., Հարությունյան Ռ., Համբարձումյան Ս., Հովհաննիսյան Լ., Ղազարյան Հ., Մարտիրոսյան Բ. (ՌԴ), Մեջրոնյան Ա., Ներսիսյան Ա., Օսիկյան Ա., Օւրբուրյան Ս., Զրբաշյան Ռ., Սեդրակյան Դ.

Խմբագրության հասցեն՝

Մարշալ Բաղդամյան 24 դ.
Հիմնարար գիտական գրադարանի շենք, 9-րդ հարկ,
Հեռ.՝ 52 38 30, ֆաքս՝ 56 80 68
e-mail: journal@sci.am

© «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսը ստեղծվել է կառավարության և ՀՀ ԳԱԱ Նախագահության որոշմամբ:


Տպագրանակը՝ 600 օրինակ:
Ծավալը՝ 112 էջ:
Գինը՝ պայմանագրային:

Հոդվածների վերատպումը հնարավոր է միայն խմբագրության գրավոր համաձայնության դեպքում:
Մեջբերումների դեպքում հանդեսին հղումը պարտադիր է: Խմբագրությունը միշտ չէ, որ համակարծիք է հեղինակների հետ: Խմբագրությունը պատասխանատվություն չի կրում գովազդային նյութերի բովանդակության համար:



ԿԱՐԴԱՑՔԸ ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

2013 թ. NN 2-3 միացյալ համարը նվիրվում է Գիտությունների ակադեմիայի հիմնադրման 70-ամյակին: Այս համարը հիմնականում կազմվել է ՀՀ ԳԱԱ բաժանմունքների ներկայացրած նյութերի հիման վրա:



- 1** ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ ՀԱՅ ԱԶԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ
(ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑ ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ ԱԿԱԴԵՄԻԱՆ Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ)
ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
- 9** ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ
ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
- 20** ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ
Ա. ԽԱՌԱՏՅԱՆ, Է. ԴԱՆԻԵԼՅԱՆ, Ս. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
- 24** ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՋՆԵՐՈՒՄ
ՍՏԵՓԱՆ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
- 29** ՀՈՎԱՍԵՓ ՕՐԲԵԼԻ - 125
ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
- 35** ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ
ՀՀ ԳԱԱ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ
- 45** ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
ԱՆԲԵՐՏ ՍԱՐԳՍՅԱՆ
- 48** ՀՀ ԳԱԱ ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆԸ
ՅՈՒՐԻ ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ
- 57** ՀՀ ԳԱԱ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆԸ
ՆՈՐԱՅՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
- 68** ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՄՆԱՔԱՐԵՐԸ
ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ
- 78** ԹԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԼԵՎՈՆ ԹԱՎԱՐՅԱՆ
- 90** ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆԸ
ՎԻԼԵՆ ՀԱԿՈՒԲՅԱՆ, ԳՈՀԱՐ ՅԱԿԱՆՈՎԱ
- 98** ԵՎՐՈԿ ԳԵՂԱՄԻ ԱՖՐԻԿՅԱՆ
ԱՇՈՏ ՍԱՐՅԱՆ
- 101** ԻՍ ՈՒՍՈՒՑՉԻ՝ ԱԿԱԴԵՄԻԱՆ ՀՐԱՉՅԱ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ՄԱՍԻՆ
ԱՐՄԵՆ ՄԻՄՈՆՅԱՆ
- 105** ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՆՏԱԿՈՐՆԵՐԸ
ԺԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ
- 111** ԱՆԴՐԱՆԻԿ ԻՈՍԻՖՅԱՆԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԵՐԶՅԱՆ





ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ՝ ՀԱՅ ԱԶԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

(ՀԱՐՅԱԶԴՐՈՒՅՑ ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ)



մունք է ունեցել գիտության ու մշակույթի հանդեպ այն պարզ պատճառով, որ գիտությունն ու մշակույթը ժողովրդի զարգացման և գոյապահպանման հիմնական գործոններից են: Այդ պատճառով հայն իր էությամբ միշտ ձգտել է դեպի նոր գիտելիք: Դրանով կարելի է բացատրել նախ հայի գիտելիք ձեռք բերելու ձգտումը, այնուհետև իր ունեցած գիտելիքների հիման վրա նա հոգացել է իր գոյապահպանման խնդիրները: Դրա վառ օրինակը IV դարի վերջի իրադարձություններն են, երբ Հայաստանը բաժանվեց երկու գերիշխող պետությունների՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Հայ ժողովուրդը, կորցնելով իր պետականությունը, կանգնեց միաձուլվելու, ինքնությունը կորցնելու և պատմության թատերաբեմից անհետանալու ահավոր վտանգի առաջ: Ահա այդ ժամանակ էլ V դարի սկզբին, հայ ժողովրդի հանձարեղ զավակ Մեսրոպ Մաշտոցը հայ ժողովրդի ինքնությունը պահպանելու համար ստեղծեց հայոց գրերը: Հայոց գրերի գյուտը ոչ միայն փրկեց հայ ժողովրդին միաձուլումից: Այդ գյուտի շնորհիվ հայ ժողովրդի պատմությունը, գիտու-

– Հարգելի պարոն Մարտիրոսյան, այս տարի լրանում է ՀՀ Գիտությունների ակադեմիայի հիմնադրման 70-ամյակը: Մեր հարցազրույցի հիմնական թեման այսօր լինելու է ԳԱԱ 70-ամյա պատմությունը: Ձեր կարծիքով՝ ակադեմիայի հիմնադրումն ի՞նչ է տվել հայ ժողովրդին:

– Ակադեմիան այն հաստատությունն է, որտեղ իրականացվում են գիտական հետազոտություններ: Հայ ժողովուրդն իր ողջ պատմության ընթացքում առանձնահատուկ վերաբեր-



թյունն ու մշակույթը հարստացան նոր ձեռքբերումներով, նոր դեմքերով: Եզնիկ Կողբացի, Մովսես Խորենացի, Անանիա Շիրակացի, Նարեկացի,.... ավելի ուշ՝ Հովհաննես Թումանյան, Եղիշե Չարենց, Օրբելի եղբայրներ, Վիկտոր Համբարձումյան, Արամ Խաչատրյան, Ալեքսանդր Թամանյան և այլք, որոնք հայ ազգին համաշխարհային քաղաքակրթության թատերաբեմում արժանավայել տեղ և դիրք են ապահովել:

Մեր որոշ հարևաններ վերջին հարյուրամյակում երեք անգամ փոխել են իրենց գիրը և հայտնի չէ, թե ինչ են տվել քաղաքակրթությանը: Նրանք սեփականաշնորհել են ուրիշներին պատկանող մշակութային և գիտական քաղաքակրթական նվաճումներ:

Իսկ, օրինակ, Համբարձումյանը լուծեց մի խնդիր՝ լույսի տարածումը պղտոր միջավայրում: Եվ այդ խնդիրն այնքան խորն է, որ մինչ այսօր չի կորցրել իր կարևորությունը: Ասեմ ավելին. ունի բազում կիրառություններ գիտության տարբեր բնագավառներում:

Վերադառնալով այն հարցին, թե ինչ դեր ունեցավ Գիտությունների ակադեմիայի ստեղծումը հայ ժողովրդի կյանքում, պետք է ասել, որ այն օգնել և նպաստել է մեր ժողովրդի գոյապահպանմանը և զարգացմանը: Գիտությունների ազգային ակադեմիայի ստեղծումը նպաստել է հայ ազգի մշակույթի, լեզվի, գրականության, պատմության, ինչպես նաև ինքնության պահպանմանը:

– **Խնդրում եմ, ներկայացրեք Գիտությունների ակադեմիայի ամենակարևոր ձեռքբերումները թե՛ խորհրդային, թե՛ հետանկախացման տարիներին:**

– Հայ իրականության մեջ



գիտության զարգացմանն անդրադառնալիս նախ պետք է նշել, որ ի սկզբանե ծնունդ են առել ու զարգացել հայագիտությունը, հայոց պատմությունը, հայ գրականությունը, երաժշտությունը և այլն: Այս յուրահատկությունը համամարդկային է: Բայց արդեն XVII-XVIII դարերում ողջ աշխարհում սկսել է զարգանալ բնագիտությունը: XX դարում Թումանյանը խոսում էր հայոց համալսարան և գիտությունների ակադեմիա ունենալու անհրաժեշտության մասին:

Հայաստանի առաջին հանրապետությունը գոյության երկուսուկես տարվա ընթացքում հնարավորություն չունեցավ և չհասցրեց զբաղվել ակադեմիա հիմնելու խնդրով, սակայն ի կատար ածեց հայոց համալսարան հիմնելու մեծագույն գործը:

Խորհրդայնացման առաջին տարիներին Էջմիածնում, ապա Երևանում հիմնվել են գիտական օջախներ, սակայն գիտության ավանգարդը մինչև 1930-ական թվականների կեսերը, այնու-

մենայնիվ, եղել է Երևանի պետական համալսարանը, որտեղ գիտակրթական գործունեություն են ծավալել գլխավորապես ավագ սերնդի անվանի գիտնականները: 1935 թ. Երևանում բացվեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը՝ Արմֆանը, որը ղեկավարում էր Հայաստանում ուսումնասիրություններ կատարած անվանի երկրաբան, ակադեմիկոս Ֆ. Լևինսոն-Լեսսինգը: 1938 թ. Արմֆանի նախագահ ընտրվեց տաղանդաշատ արևելագետ, հայագետ, ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելին: ԳԱ հայկական մասնաճյուղը, հայագիտական ուսումնասիրություններից զատ, զբաղվում էր ֆիզիկամաթեմատիկական, երկրաբանական, տեխնիկական, բնական և գիտության այլ ձյուղերով:

Հայրենական մեծ պատերազմի ամենածանր շրջանում, ՀԽՍՀ կառավարության որոշմամբ՝ 1943 թ. նոյեմբերին հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Ակադեմիայի հիմ-



նադիր կազմում ընդգրկվեցին գիտության տարբեր բնագավառների 23 անվանի գիտնականներ, իսկ գիտության նորաստեղծ կաճառի նախագահ ընտրվեց ակադեմիկոս Հովսեփ Օրբելին: Սկսվեց ակադեմիայի ձևավորման գործընթացը: Հ. Օրբելին միաժամանակ աշխարհահռչակ թանգարան Էրմիտաժի տնօրենն էր, և 1947 թ., ազատվելով նախագահի պաշտոնից, վերադարձավ Լենինգրադ՝ զբաղվելու թանգարանագիտությամբ:

Ակադեմիայի նախագահ ընտրվեց դեռևս չորրորդ տասնամյակը չբոլորած, սակայն համաշխարհային ծանաչման արժանացած, կազմակերպչական մեծ ունակությունների տեր Վիկտոր Համազասպի Համբարձումյանը: Այս ընտրությունը Հայաստանում գիտության զարգացման համար ունեցավ վճռորոշ նշանակություն, ՀԳԱ-ն թևակոխեց զարգացման նոր փուլ:

Ակադեմիայի հիմնադրման պահին հասարակական գիտությունները ներկայացված էին Պատմության, Լեզվի և Գրականության ինստիտուտներով: Հայագիտության բոլոր ծյուղերով և պատմական բոլոր դարաշրջաններով մասնագիտական լայնածավալ ուսումնասիրություններին նպաստելու նպատակով կարճ ժամանակում ստեղծվեցին Արվեստի, Արևելագիտության, Տնտեսագիտության, Փիլիսոփայության և իրավունքի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտները: Հայաստանը, իրավամբ, դարձավ հայագիտության կենտրոն:

Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի 46-ամյա ղեկավարման ժամանակաշրջանում Հայաստանի գիտությունների ակադեմիան ունեցել է ծան-

րակշիռ ձեռքբերումներ, առաջատար դեր է ստանձնել Խորհրդային Միության հանրապետությունների ակադեմիաների շարքում, արժանացել միջազգային ծանաչման: ՀԳԱ նախագահ Վ. Համբարձումյանն ընտրվել է գիտական կազմակերպությունների համաշխարհային խորհրդի նախագահ, իսկ գիտական, գիտակազմակերպական և հասարակական փայլուն գործունեության համար նրան շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսի կոչում:

XX դարում հայոց գիտական այրերի հաղթարշավի դրոշակակիրը մեծատաղանդ Վիկտոր Համբարձումյանն է, որի հուշակը համաշխարհային հանրությանը ծանաչելի է դարձնում նրան ծնած ժողովրդին: Երբ գիտական բացահայտումներն էլ պետք է փոխել են մեր պատկերացումները տիեզերքի և նրանում ֆիզիկական երևույթների, տիեզերական մարմինների առաջացման ու դրանց զարգացման առանձնահատկությունների մասին: Երբ խոսում էր այնպիսի հետազոտությունների մասին, որոնք ժամանակակիցներին հեքիաթ էին թվում: Բայց որոշ ժամանակ անց դրանք դառնում էին իրականություն: Օրինակ՝ արդեն 60-ական թվականներին ամբողջ աշխարհում բուռն թափով զարգանում էր ֆիզիկայի բնագավառներից մեկը՝ կիսահաղորդիչների ֆիզիկան: Հայաստանում այդ բնագավառը ներկայացված չէր: Բայց Համբարձումյանը գիտակցում էր, որ այն դառնալու է մարդկության զարգացման կարևորագույն ուղղություններից, ուստի նա իր կապերի միջոցով գտավ հայազգի մի գիտնականի՝ Գեդեոն Ավագյանցին, որը գիտության դոկտոր էր, աշխատում էր Ուզբեկստանի Գիտությունների

ակադեմիայի ֆիզիկայի ինստիտուտում: Երբ Համբարձումյանը նրան հրավիրեց Հայաստան, վերջինս որոշ պայմաններ դրեց: Համբարձումյանը բնավորության գիծ ուներ. նա խոստումներ չէր տալիս, մինչև ինքը չէր համոզվում, որ դիմացինն արժանի է: Եվ ահա Համբարձումյանի ներկայացմամբ Գ. Ավագյանն ընտրվեց ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ և հիմնադրեց նոր գիտական ուղղություն՝ կիսահաղորդիչների էլեկտրոնիկան և իր գիտական դպրոցը: Այնուհետև այդ դպրոցի սաներն ստեղծեցին իրենց գիտական դպրոցները:

Նետագայում Համբարձումյանը ուշադրություն դարձրեց Հայաստանում ռադիոաստղագիտության զարգացմանը: Ընտրեցին բարձր առաջադիմությամբ ուսանողների և ուղարկեցին Մոսկվա՝ սովորելու: Ես նրանցից մեկն էի:

Այդ տարիներին բազմաթիվ կիրառական բնույթի ինստիտուտներ հիմնվեցին Հայաստանում: Երևի ԽՍՀՄ-ում չկար այնպիսի հանրապետություն, որը Հայաստանի պես այդչափ գիտական հետազոտություններ իրականացներ՝ տարբեր ուղղություններով: Այս ամենի հետ մեկտեղ Համբարձումյանն իր ուշադրության կենտրոնից երբեք բաց չէր թողնում նաև հայագիտությունը:

Գիտական գործունեությունը թանկ հաճույք է: Այն ուժեղ, հարուստ երկրի մենաշնորհն է: Եվ պատահական չէ, որ տասնյակ երկրներ, որոնք և՛ ազգաբնակչությամբ, և՛ տարածքով ավելի մեծ էին, իսկ տնտեսությամբ՝ հարուստ, գիտական աշխարհում տեղ չունեցան: Գիտության բարձր մակարդակ մենք կարողացանք ստեղծել,



քանի որ ԽՍՀՄ հզոր միջոցները Վ. Համբարձումյանի շնորհիվ առանց սահմանափակման տրամադրվում էին Հայաստանի գիտությունների ակադեմիային:

Անկախության շրջանում այդ հզոր աղբյուրը փակվեց: Մենք մնացինք մեր միջոցների, հնարավորությունների հույսին՝ զարգացնելու տնտեսությունն ու գիտությունը: Եվ պարզ է, որ առանց նյութական միջոցների հնարավոր չէ կատարել գիտական բարձրակարգ հետազոտություններ և մրցունակ արդյունք ստանալ: Այսօրինակ դժվարություններ ծագեցին անկախության հենց առաջին տարիներից: Արդյունքում՝ հանրության շրջանում ընկավ գիտնականի և գիտական աշխատանքի հեղինակությունը: Եթե նախկինում գիտական աշխատողի նկատմամբ կար որոշակի հարգանք և ակնածանք, ապա հետանկախացման շրջանում, երբ գիտական արդյունքը գնահատող չկար, գիտության աշխատողը դարձավ իր գոյությունը մի կերպ քարշ տվող, հասարակության մեջ չգնահատվող անհատ:

- **Քիչ առաջ խոսում էիք այն մասին, որ հայ ժողովուրդը դարերով կարևորել է գիտությունն ու մշակույթը:** Բնչով կբացատրեք այն հանգամանքը, որ մեր օրերում որպես հերոս հանդես է գալիս ոչ թե գիտնականը, պատերազմում հաղթած ազատամարտիկը, այլ պատգամավորը, օլիգարխը և այլն:

- Երևի թե դա էլ ունի իր պատճառները, պատերազմի հերոսն օլիգարխ չի դարձել, հերոսը մնացել է հերոս: Հանրության մեջ առաջ են եկել այնպիսի երևույթներ, որոնք ո՛չ տրամաբանական են, ո՛չ էլ մարդկության զարգացմանը հարիր: Տասնյակ

տարիների ընթացքում ստեղծված պոտենցիալը միանգամից վաճառվեց, ցաք ու ցրիվ եղավ: Տեսնելով գիտնականների ծանր ապրելակերպը, մարդիկ սկսեցին մտածել, որ պետք չէ գիտությամբ զբաղվել: Երիտասարդն սկսեց մտածել, որ ավելի լավ է՝ գնալ բանկում, խանութում աշխատել, բիզնես հիմնադրել, քան գիտությամբ զբաղվել, որովհետև պետք էր առաջին հերթին ընտանիք պահել: Առաջին՝ առկա էր նյութական անբավարարվածություն, և երկրորդ՝ առաջ եկան այնպիսի բարքեր, որոնք նախկինում չկային. շուկայական տնտեսության, ժողովրդավարության անվան տակ ծավալվող իրադարձությունները բացասական երևույթներ առաջ բերեցին և, ցավոք, դեռ շարունակում են առաջացնել:

Ժամանակին Համբարձումյանն իր աշխատակազմով ստեղծել է բազմաթիվ բնագավառներ, որոնք զարգանում էին: Բայց հետանկախացման շրջանում ստեղծված պայմաններում, երբ արդեն գիտությանը հատկացվում էին չնչին գումարներ, մեր երկրում գիտությունը նույն չափով զարգացնել պարզապես հնարավոր չէր:

Գիտությունների ակադեմիայի առաջ ծառայել էին դժվարությամբ ձեռք բերված հաջողություններն ամրապնդելու, խորացնելու, գիտության զարգացման արդի մարտահրավերներին համահունչ ձեռնարկումներ կատարելու հիմնահարցերը: Եվ զված դժվարին ու բարդ խնդիրների լուծումը պահանջում էր գիտության բնագավառում իրականացնել գիտության զարգացմանը նպաստող բազմակողմանի վերափոխումներ:

- **Արդյոք բարեփոխումները նպաստեցին գիտության առաջընթացին:**

- Նախորդ 60 տարիների ընթացքում Գիտությունների ակադեմիան եղել է վիթխարի ԽՍՀՄ-ի հզոր գիտական համակարգի մի մասը, ինչով էլ պայմանավորված էր գիտական ու գիտատեխնիկական մեծաքանակ կազմակերպությունների առկայությունը երկրում: Անցումային շրջանում գիտության անընդհատ թերֆինանսավորումը բացասաբար է ազդում նրա վերելքի վրա: Ուսումնասիրությունների համաձայն՝ եթե գիտության ֆինանսավորման չափը փոքր է ՀՆԱ-ի 1%-ից, ապա տվյալ երկրի գիտությունը չի կարող դրական ազդեցություն ունենալ նրա տնտեսության զարգացման վրա, իսկ գիտությունն աստիճանաբար կմահանա:

Անկախացմանը հաջորդած շրջանում Հայաստանը գիտական կարգերի էական կորուստ ունեցավ: Եթե մինչև 1990 թ. ԳԱԱ համակարգում աշխատում էր 7500 մարդ, ապա առ 01.01.2007 թ. այն կիսով չափ նվազեց՝ դառնալով 3750, որոնցից միայն 2200 էին գիտաշխատող:

Եթե նաև, որ գիտական ենթակառուցվածքը ֆիզիկապես և բարոյապես մաշվել էր: Անկախության շրջանում ԳԱ համակարգի կառույցները ժամանակակից սարքավորումներ ձեռք բերելու հնարավորություն չեն ունեցել: Խնդիրը լուծելու համար անհրաժեշտ էր գիտության ասպարեզում ներդնել վարկային համակարգ:

Ընդհանուր առմամբ, գիտությունը հանդիպել է մեծ դժվարությունների, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ էին նրա զարգացմանը նպաստող վերափոխումներ: Այնուամենայնիվ, ԳԱԱ համակարգի գիտաշխատողները, անկախության տարիներին և նույնիսկ վերջին 5-6



տարիների ընթացքում գիտության տարբեր բնագավառներում ունեցել են լուրջ գիտական ձեռքբերումներ, որոնք ծանաչել է համաշխարհային գիտական հանրությունը:

Սակայն ակադեմիական համակարգի ոչ բոլոր կազմակերպություններում են տարվում նմանատիպ աշխատանքներ, ոչ բոլոր հետազոտություններն են արդիական: Մտահոգիչ են գիտական արդյունքները տնտեսության տարբեր ծյուղերում ներդնելու, գիտության տարբեր ծյուղերը երիտասարդ կադրերով համալրելու հարցերը և, վերջապես, բարոյապես և ֆիզիկապես մաշված սարքավորումներն արդիականացնելու հրատապ խնդիրը:


2006 թ. սկսված բարեփո-

խումների գործընթացն առաջին հերթին պետք է նպաստեր գիտության զարգացմանը: Անհրաժեշտ էր ունեցած մարդկային, նյութական և մնացյալ պաշարները կենտրոնացնել գիտական այն ուղղությունների շուրջ, որոնք ապահովված էին կադրերով, ունեին ավանդույթներ և մոտ ապագայում կատարվելիք աշխատանքների հստակ ծրագրեր: Այս առումով կարևորվում էր գիտության գերակա ուղղությունների ցանկի հաստատումը, որոնք պետք է դառնային պարտադիր բոլոր գիտատեխնիկական կառույցների համար: Գերակա ուղղությունները պետք է լինեին իրատեսական և ապահովված անհրաժեշտ գիտատեխնիկական ներուժով, բարձր որակավորմամբ մասնագետներ

պատրաստելու գիտակրթական համակարգով: Միաժամանակ, կարևորագույն ուղղությունների ընտրության հարցում, ինչպես, օրինակ, հայագիտության դեպքում, անհրաժեշտ էր հաշվի առնել Հայաստանի Հանրապետությանը վերապահված դերակատարումը՝ որպես աշխարհում գիտության այդ ուղղության լիարժեք զարգացման եզակի ու հիմնական օջախի:

Գերակա ուղղությունները, ի մի բերելով գիտական և գիտատեխնիկական առկա ներուժը, կոչված են երկրում զարգացնելու մրցունակ գիտարար արդյունաբերություն և գյուղատնտեսություն, ինչպես նաև նպաստելու մարդկանց առողջության բարելավմանն ու շրջակա միջավայրի աղտոտվածության վերացմանն





ուղղված միջոցառումների մշակմանը: Հաշվի առնելով հիշյալ հանգամանքները՝ ԳԱԱ-ն, Գիտության պետական կոմիտեի հետ համատեղ, մշակել և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացրել գիտության զարգացման գերակա ուղղությունների ցանկը:

Բարեփոխումների գործընթացի կարևոր մասը համակարգի օպտիմալացումն է, որի նպատակը մանր, ոչ արդյունավետ գործող փոքր ստորաբաժանումներից ազատվելն է: Այսպես, Աշտարակի Ճարտարագիտական կենտրոնը միացվեց Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտին, Գառնիի Երկրաֆիզիկական կենտրոնը՝ Երկրաբանական գիտությունների ինստիտուտին, Գյումրիի կոնստրուկտորական բյուրոն՝ Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտին: Բացի հիշյալ կազմակերպություններից, այդ ծրագրով միավորվեցին ավելի խոշոր կազմակերպություններ՝ ստեղծելով գիտական կենտրոններ. Օրգանական քիմիայի ինստիտուտի, Մոլեկու-

լի կառույցի կենտրոնի և Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի հենքի վրա ստեղծվեց Դեղագործության և օրգանական քիմիայի, դեղագործական տեխնոլոգիայի կենտրոնը, Սևանի Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի և Կենդանաբանության ինստիտուտի միացմամբ՝ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը: Գերատեսչական երեք տարբեր տնտեսագիտական ինստիտուտներ միացվեցին ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտին, և ստեղծվեց մեկ բազմաձյուղ Տնտեսագիտության ինստիտուտ, որն ի զորու է զբաղվել տնտեսագիտության թե՛ տեսական, թե՛ կիրառական խնդիրներով: Գերատեսչական պատկանելության Կենսատեխնոլոգիայի ինստիտուտի և ԳԱԱ միկրոբիոլոգիայի ինստիտուտի միավորմամբ ստեղծվեց բարձր արդյունավետությամբ աշխատող Կենսատեխնոլոգիայի գիտաարտադրական կենտրոնը:

– **Պարոն Մարտիրոսյան, արդյոք գիտությունը և ԳԱԱ-ն՝ որպես կառույց, հեռանկար ու-**

ն՞ն Հայաստանի նման փոքր երկրում:

– Պատմական գործընթացը փաստում է, որ գիտությունն ու մշակույթը, իրոք, եղել են մեր ազգի և գոյատևման և զարգացման աղբյուրը: Գիտությունն իր նշանակությունը չի կորցրել նաև այսօր: Դեռ ավելին, այո՛, այն հեռանկարներ ունի նաև Հայաստանի նման փոքր երկրում:

Ինչ վերաբերում է ԳԱԱ-ի դերին, ապա պետք է ասել, որ այսօր արդեն օրենքով է սահմանված, թե ինչ դեր ունի Գիտությունների ազգային ակադեմիան պետության կյանքում: ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի՝ որպես պետական ոչ առևտրային կազմակերպության գոյության իրավական հիմքերը, կարգավիճակը, նպատակներն ու խնդիրները մինչև վերջերս կարգավորվել են 2000 թ. դեկտեմբերին ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքով, որի համաձայն ԳԱԱ-ն Հայաստանի Հանրապետության գիտական բարձրագույն կենտրոնն է, ունի ՀՀ գիտական քաղաքականության մշակման, իրականացման



և գիտության կառավարման հատուկ կարգավիճակ և պետության հետ հարաբերություններում անմիջականորեն առնչվում է ՀՀ վարչապետի հետ:

Սակայն ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների իրավական կարգավիճակը, նորարարական ու գիտական արդյունքների առևտրային ամրապնդման հետ կապված արդիական պահանջների իրականացումը հակասության մեջ էին հայտնվել ավելի ուշ՝ 23.10.2001 թ., ընդունված «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների, ինչպես նաև այլ օրենքների և ենթօրենսդրական ակտերի հետ:

Այս հակասությունները վերացնելու, ԳԱԱ գիտատեխնիկական ներուժը հիմնարար գիտական արդյունքների, դրանց հիման վրա կիրառական մշակումների ներդրման բնագավառում առավել նպատակասլաց օգտագործելու համար ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հանձնարարությամբ մշակվեց «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ԱԺ-ն հաստատել է 14.04.2011թ.: ՀՀ ԳԱԱ իրավական կարգավիճակը որոշվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա և սույն օրենքով սահմանվում է որպես ոչ առևտրային կազմակերպություն՝ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային (պետական) ակադեմիա» բնորոշող ձև: Օրենքի կարևոր դրույթներից է ԳԱԱ համակարգի կազմակերպությունների համար ԳԱԱ՝ որպես պետական լիազորված մարմնի դերի մասին դրույթը, որը հստակեցնում է համակարգի կառավարումը:

Օրինական դաշտը հստակեցնելուց հետո անհրաժեշտ է անդրադառնալ մեր՝ դեռևս բավականաչափ աղքատ և թույլ զարգացած տնտեսությունը այսօր հզորացնելու կարևորագույն խնդրին, մենք պետք է հիմնավորենք, թե ինչպիսի հետազոտություններ են անհրաժեշտ տնտեսության մեջ կիրառելու համար: Այս ուղղությամբ տարվում են աշխատանքներ, մենք կառավարություն և տնտեսվարող սուբյեկտներին ենք ներկայացրել ԳԱԱ տարբեր ինստիտուտների մշակած գիտական տարբեր որոշակի արդյունքներ և ծրագրեր: Այդպիսի 24 տարբեր առաջարկներ վերջերս քննարկվել են կառավարությունում: Սակայն հիմնական դժվարությունն այն է, որ մեր տնտեսվարող սուբյեկտները դժվարությամբ են համաձայնվում աջակցել այդպիսի աշխատանքների ներդրմանը: Իսկ ներդրման համար պետք է որոշակի միջոցներ ծախսել, այնինչ մեր ամեն մի տնտեսվարող ձգտում է նվազագույն ծախսերով առավելագույն շահույթ ստանալ: Այս պարագայում կան և՛ սուբյեկտիվ, և՛ օբյեկտիվ դժվարություններ: Օբյեկտիվն այն է, որ մեր երկրի շուկան շատ փոքր է: Բայց մենք ունենք նաև դրական օրինակներ:

– ԳԱԱ համակարգում մշակված ինչ առաջարկներ են արվել մեր գործարարներին և որոնք են արժանացել հավանության:

– Ընդունվել են մի քանի առաջարկ, որոնցից են մետաղական ժանգի դեմ պայքարի միջոցի ստեղծումը, կենսատեխնոլոգիայի ինստիտուտի մշակած պարարտանյութերը և տարբեր բնույթի սպիտակուցները, որոնք փոքր ծավալներով արտադրվում և արտահանվում են եվրոպա-

կան երկրներ, ինչպես նաև նախկինում մշակած դեղեր, որոնք այսօր ավելի են կատարելագործվում՝ թե փաթեթավորման, թե բովանդակային տեսանկյունից:

– Ո՞րն եք համարում գիտության առջև ծառայած առաջնահերթ խնդիրը:

– Գիտության ոլորտի առջև ծառայած առաջնահերթ խնդիրը գիտական կադրերի երիտասարդացումն է: Չնայած պետական տարբեր մակարդակներում ընդունված որոշումներին ու ծրագրերին՝ երիտասարդ կադրերի համար գիտությունն այնուամենայնիվ, մնում է պակաս գրավիչ, շարունակվում է երիտասարդ կադրերի արտահոսքը գիտությունից այլ ոլորտներ, նաև արտերկիր: ԳԱԱ բաժանմունքների և ինստիտուտների գործունեության հիմնական ուղղություններից մեկը հետազոտական աշխատանքների՝ երիտասարդ կադրերով ապահովվածությունն է: Վերականգնվել է ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհուրդը, որն ակտիվ գործունեությամբ հասել է որոշակի հաջողությունների: Երիտասարդ գիտնականների մասնակցությամբ անցկացվել են բազմաթիվ գիտաժողովներ, հանդիպումներ, այլ միջոցառումներ Հայաստանում և արտերկրում: Բազմաթիվ երիտասարդներ ընդգրկված են տարբեր ինստիտուտների թեմատիկ և դրամաշնորհային ծրագրերով նախատեսված աշխատանքներում:

– Պարոն Մարտիրոսյան, հայտնի է, որ դրամաշնորհները են տրվում որոշակի գիտահետազոտական ծրագրերի, և շատ հաճախ նշվում է, որ դրանց միջոցով իրականացվում է գաղափարների վաճառք: Արդյոք այդ դրա-



մաշնորհները կարող են օգնել Հայաստանին:

– Մենք հիմա խոսում ենք գիտական արդյունքների առևտրայնացման մասին, որը նշանակալից է՝ կա արդյունք, որն ինչ-որ բանի պետք է, և դրա համար կա գնորդ: Օրինակ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեր տարածաշրջանում տպագրված գիտական հոդվածների քանակով մենք ամենալավ գիտական արդյունքն ունենք: ԱՊՀ երկրներում մենք առաջին տեղն ենք զբաղեցնում: Իսկ այդ արդյունքին հասել ենք նաև դրամաշնորհների շրջանակներում կատարած ուսումնասիրությունների և ստացված արդյունքները հրապարակելու միջոցով:

– **Վերադառնալով ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին, խնդրում եմ պատմել հուշեր Ակադեմիայի հիմնադրման, հանրահայտ ակադեմիկոսների մասին:**

– Նախ և առաջ պետք է հիշեմ իմ ուսուցիչներին, և առաջինը, իհարկե, ակադեմիկոս Վ. Համբարձումյանին: Հիշում եմ, որ ուսանողական տարիներին մենք կլանված, հմայված լսում էինք Համբարձումյանի դասախոսությունները: Ես շատ բան եմ սովորել նրանից: Երեք տարի լսել եմ նրա դասախոսությունները: Իր ստացած գիտական արդյունքներն ամենաառաջինը պատմում էր ուսանողության գիտական ընկերության նիստերում: Առաջին անգամ գալակտիկաների ակտիվության մասին նա պատմել է այդ նիստերից մեկի ժամանակ: Ես ծանոթ էի նաև նրա հորը, որը հին հունահռոմեական գրականության մասնագետ էր, պրոֆեսոր: Նա ուներ մի ցուցակ, որտեղ նշված էին աշխարհահռչակ մարդկանց անուններ: Այդ ցուցա-

կի առաջին տողը զբաղեցնում էր Արիստոտելը: Ցուցակում կար նաև Համբարձումյանի անունը: Ամեն անգամ, երբ Համբարձումյանը մի լավ բան էր անում, նրա անունը բարձրացնում էր մի քանի տող վեր:

Պետք է հիշեմ իմ մյուս ուսուցիչն՝ Լորելյան մրցանակի դափնեկիր Ալեքսանդր Պրոխորովին, որից շատ բան եմ սովորել ասպիրանտական տարիներին: Սովորել եմ գնահատել գիտական աղյուսքի, գիտական աշխատանքի խորությունը, նշանակությունը: Նա մեծապես նպաստել է իմ՝ որպես գիտաշխատողի ձևավորմանը:

– **Ակադեմիայի ականավոր անդամներից ո՞ւմ հետ եք առնչություններ ունեցել, ո՞ւմ եք հիշում:**

– Հիշում եմ Անդրանիկ Իոսիֆյանին. տաղանդավոր մարդ էր՝ յուրահատուկ բնավորությամբ անձնավորություն: Նա երկու անգամ եղել է ԳԱ փոխնախագահ: Եթե մարդ երկար տարիներ զբաղվում է գիտության մի ուղղությամբ, մի խնդրով, առաջ է գալիս վախի գործոնը՝ վախենում ես, որ այլևս լավ արդյունքներ չես կարող ստանալ, եթե փոխես գիտական ուղղությունը: Իոսիֆյանը խիզախ մարդ էր, եթե խնդրի մասին պատկերացում էլ չունենար, ասում էր, որ կլինի, լինելիք գործ է: Դրանով նա հասել էր մեծ հաջողությունների: Մեր հանրապետությունում ամբողջ էլեկտրատեխնիկական արդյունաբերության զարգացումը կապված է նրա անվան հետ: Ծատ յուրահատուկ մարդ էր պատմաբան Մկրտիչ Ներսիսյանը: Մյուսների հետ առնչություն չեմ ունեցել:

– **Եվ վերջում, խնդրում եմ, պատմեք, թե ի՞նչ միջոցառում-**

ներ են նախատեսված այս օրերին:

– 70-ամյակին նվիրված միջոցառումները մեկնարկել են տարվա սկզբից: Անց են կացվել բազմաթիվ գիտաժողովներ: Վերջերս Ծաղկաձորում ավարտվեց մաթեմատիկոսների միջազգային մեծ գիտաժողովը, որին մասնակցել են 105 արտասահմանցի գիտնականներ: Նույն օրերին կայացել է «Քիմիայի զարգացման հեռանկարները» թեմայով գիտաժողովը, որին մասնակցել են 123 արտասահմանցի գիտնականներ: Ծուռով ինֆորմատիկայի ասպարեզում միջազգային մեծ կոնգրես է լինելու: Բյուրականում անցկացվել է միջազգային աստղագիտական ընկերության համաժողովը: Հոկտեմբերի վերջին Ծաղկաձորում նախատեսված է անցկացնել երիտասարդ գիտնականների արդեն երկրորդ հանրապետական համաժողովը և այլն, և այլն: Բուն 70-ամյակին նվիրված հայագիտական մեծ համաժողովն իր աշխատանքները կսկսի հոկտեմբերի 15-ին: Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա ԳԱԱ հանդիսավոր նիստը: Արդեն հաստատված է 15 ակադեմիաների նախագահների մասնակցությունն այդ միջոցառմանը: Նույն օրն ակադեմիայի նախագահության շենքում կբացվի ցուցահանդես, որտեղ ներկայացված կլինեն ԳԱԱ համակարգի գիտահետազոտական ինստիտուտներն ու կենտրոնները:

– **Շնորհակալություն հետաքրքիր հարցազրույցի համար:**

– Ես նույնպես շնորհակալ եմ:

Հարցազրույցը վարեց
Նարինե Վարդանյանը




ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ



**ԱԲԵՂՅԱՆ ՍԱՆՈՒԿ
ԽԱՉԱՏՈՒՐԻ
(1865-1944)**

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), բանագետ, գրականագետ, լեզվաբան, բառարանագետ: Փիլիսոփայության դոկտոր (1898), բանասիրական գիտությունների դոկտոր (1935), պրոֆեսոր (1926), գիտության վաստակավոր գործիչ: 1893-1897 թթ. ուսանել է Լայպցիգի, Բեռլինի, Փարիզի համալսարաններում, 1898 թ. ավարտել է ենայի համալսարանը: Ծուրջ հինգ տասնամյակ մանկավարժական աշխատանք է կատարել: Երևանի պետական համալսարանի հիմնադիր դասախոսներից է, պատմագիտական ֆակուլտետի ղեկավար: Հիմնական աշխատությունները նվիրված են հայ ժողովրդի բա-

նահյուսությանը, գրականությանը, տաղաչափությանը, հայոց լեզվի տեսության հիմնահարցերին: Հրատարակել է «Սասնա ծռերի» երկրորդ տարբերակը: Նրա գրչին են պատկանում «Դավիթ և Միեր». ժողովրդական դյուցազնավեպը, (1889), «Հայոց լեզվի ուղղագրությունը» (1892), «Գրաբարի համառոտ քերականություն» (1907), «Աշխարհաբարի հոլովները» (1908), «Ուղղագրության ռեֆորմը» (1925), «Գրաբարի քերականություն» (1936), «Հայոց լեզվի տեսություն» (1965), «Ռուս-հայերեն ռազմական բառարան» (1925), «Հայոց հին գրականության պատմություն» (1955, 1959) և այլ աշխատություններ: 1966-1985 թթ. հրատարակվել է Մ. Աբեղյանի երկերի ժողովածուն՝ 8 հատորով: Նրա անունով է կոչվում ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտը, Երևանի թիվ 3 դպրոցը:



**ԱՃԱՌՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՀԱԿՈՒԻ
(1876-1953)**

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), լեզվաբան, բանասեր, բառարանագիր, բանասիրական գիտությունների դոկտոր (1953), պրոֆեսոր (1924), գիտության վաստակավոր գործիչ (1933): Ավարտել է Փարիզի Սորբոնի համալսարանը (1898): Մանկավարժական աշխատանք է կատարել Ծուշիի թեմական, Կարինի, Թավրիզի, Նոր Բայազետի, Նոր Նախիջևանի, Թեհրանի հայկական դպրոցներում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: ԵՊՀ հիմնադիր դասախոսներից է, պրոֆեսոր, եղել է Զեխուսովսկիայի արևելագիտության ինստիտուտի գիտբաժնի թղթակից անդամ (1937), Փարիզի լեզվա-

բանական ընկերության անդամ (1897): Լրա գրչին են պատկանում Չարբախի, Վանի, Լոր Լախիջևանի, Լոր Ջուղայի, Համշենի և այլ բարբառներին նվիրված հետազոտությունները, «Հայերեն արմատական բառարան» (հ. 1-5, 1942-1962), «Հայոց լեզվի պատմություն» (հ. 1-2, 1940-1951), «Լիակատար քերականություն հայոց լեզվի...» (հ. 1-6, 1952-1971), «Մեսրոպի և գրերի գյուտի պատմության աղբյուրները և անոնց քննությունը» (1907), «Հայոց գրերը» (1928, 1968) և այլ հիմնարար աշխատություններ: Հր. Աձառյանի անունն է կրում ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը:



**ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ
ՍԱՀԱԿԻ
(1875-1957)**

Բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ-հրապարակախոս, հասարակական գործիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943), ԽՍՀՄ գրողների միության անդամ (1936): Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ձեմարանը (1892): Լայպցիգի համալսարանի ազատ ունկնդիր (1893): Երկար տարիներ աշխատել և ստեղծագործել է արտասահմանում (1893-1895, 1897-1902, 1911-1925, 1930-1936): Հայաստանի գրողների միության նախագահ (1944-1957): Արժա-

նացել է կառավարական մի շարք պարզևների և պետական մրցանակների:

1975 թվականից սահմանված է Ա. Իսահակյանի անվան ամենամյա մրցանակ պոեզիայի բնագավառում: Ա. Իսահակյանի տուն-թանգարաններ կան Երևանում և Գյումրիում: Լրա անունով է կոչվում նախկին Ղազարապատ գյուղը (1945):


Ստեղծագործություններում, որոնցից առաջինները տպագրվել են XIX դ. 90-ական թթ., իսկ վերջինները՝ XX դ. երկրորդ կեսին, արտացոլվել են դարաշրջանի էական գծերը, հայ ժողովրդի պատմական ճակատագիրը, նրա երազանքները: Ավ. Իսահակյանը հայ ժողովրդի մեծ երախտավորներից է: Առանձին գրքերով և երկերի ժողովածուների ձևով 1939-1940 թթ. լույս են տեսել նրա Ընտիր երկերի երկհատորյակը, 1950-1951 թթ.՝ երկերի ժողովածուի 4 հատորները, ապա երկերի ժողովածուն՝ 6 հատորով, «Հիշատակարանը» և այլ գործեր:



**ՂԱՓԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԱՅՎԱԶԻ
(1886-1957)**

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), ձանաչված հայագետ, լեզվաբան, բանասիրական գիտու-

թյունների դոկտոր (1942), պրոֆեսոր (1930), գիտության վաստակավոր գործիչ (1942): Աշխատությունները նվիրված են հայոց լեզվի պատմությանը, ընդհանուր և պատմահամեմատական լեզվաբանությանը, հայերենի և փոքրասիական լեզուների առնչություններին, խեթերենի, ուրարտերենի, խուրիտերենի հետ հայերենի առնչություններին, Ուրարտուի սոցիալ-քաղաքական կյանքի և մշակույթի ուսումնասիրությանը: Հետազոտելով սեպագիր արձանագրությունները՝ պարզել է հայերենի էթնիկ կապերը հարևան ժողովուրդների հետ, լեզվական փոխառություններն ու փոխազդեցությունները: Սովորել և ավարտել է Պետերբուրգի համալսարանը (1913): Դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ձեմարանում, մասնակցել է Ն. Մառի ղեկավարած Անիի պեղումներին (1914-1917): ԵՊՀ հիմնադիր դասախոսներից է, եղել է լեզվաբանության ամբիոնի վարիչ (1927-1954): ԳԱԱ նախագահության անդամ, հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (1943-1949), ԵՊՀ-ի Ն. Մառի անվան կաբինետի վարիչ (1943-1957), Լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1950-1956 թթ.՝ տնօրեն: Գրիգոր Ղափանցյանի գրչին են պատկանում տասնյակ արժեքավոր հետազոտություններ, այդ թվում՝ «Ընդհանուր լեզվաբանություն» (1939), «Ուրարտուի պատմություն» (1940), «Հին Հայաստանի տեղանունների պատմալեզվաբանական նշանակությունը» (1940), «խեթական աստվածները հայերի մոտ» (1940), «Հայասան հայերի բնօրրան» (1947), «Հայոց լեզվի պատմություն», «Արա Գեղեցիկի պաշտամունքը» և այլ մենագրություններ:



**ՄԱՆԱԿՅԱԼ ՀԱՎՈՐ
ՀԱՄԱՉԱՍՊԻ
(1873-1952)**

ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1939),
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943),
պատմաբան, բանասեր, աղբյուրագետ,
պատմական գիտությունների դոկտոր (1938),
պրոֆեսոր (1925), գիտության վաստակավոր գործիչ (1935):
Խորհրդահայ պատմագիտության հիմնադիրներից է: Գիտական աշխատությունները նվիրված են հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմությանն ու բանասիրությանը, քաղաքներին, առևտրին, Հայաստանի և Անդրկովկասի պատմական աշխարհագրությանը, ծանապարհների ուսումնասիրությանը, չափագիտությանը: Լուսաբանել է հին և միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները, մշակույթի պատմության հարցերը: Ավարտել է Ենայի (1897), Պետերբուրգի (1898), Տարտուի (1909) համալսարանները: Դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ձեմարանում, Ներսիսյան դպրոցում: Խմբագրել է «Արմենիշե ցայտշրիֆտ», «Արշալույս» (1906), «Բաքու» (1917) պարբերականները: Եղել է ԵՊՀ երկրորդ ռեկտորը, արևելագիտական, ապա՝ պատմագ-


րական ֆակուլտետների դեկան (1921-1925), հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ: 1925 թ. ընտրվել է գիտության և արվեստի ինստիտուտի անդամ: 1931 թ. նվիրվել է գիտությանը՝ թողնելով մանկավարժական աշխատանքը: 1928 թ. Վիեննայում լույս է տեսել նրա «Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները», 1934 թ.՝ «Մ. Խորենացու առեղծվածի լուծումը», 1941 թ.՝ «Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար» աշխատությունները: Նրա «Հայաստանի առևտրի և քաղաքների մասին», «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», «Տիգրան Բ և Հռոմը», «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» և այլ մենագրություններ մնայուն գործեր են, որոնք զետեղված են նաև նրա երկերի բազմահատորյակում:



**ՄԱՆԽԱՍՅԱՆՑ ԱՍԵՓԱՆ
ԱՍՐԳՍԻ
(1857-1947)**

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943),
լեզվաբան, բանասեր, բառարանագիր, բանասիրական գիտությունների դոկտոր (1942):
Ավարտել է Պետերբուրգի համալ-


սարանը (1889): Դասավանդել է Ախալցխայի Կարապետյան և Եղիազարյան վարժարաններում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, եղել է Հովնանյան և Գայանյան օրիորդաց դպրոցների, Էջմիածնի Գևորգյան ձեմարանի, Ախալցխայի գիմնազիայի տեսուչ, հանրապետության գիտության և արվեստի գծով տերմինաբանական հանձնաժողովի նախագահ: Դասախոսել է Երևանի ուսուցիչների կատարելագործման, Թիֆլիսի մանկավարժական և քիմիական ինստիտուտներում: Նրա գրչին են պատկանում տասնյակ գրքեր: Տակավին 1885 թ. Պետերբուրգում լույս է ընծայել Ստեփանոս Տարոնացու (Ասողիկ) «Պատմություն տիեզերականը» (առաջաբանը՝ Կ. Եզյանցի): Հրատարակել է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկության» և այլ դասական երկեր: Նրա գլխավոր գործը քառահատոր «Հայերենի բացատրական բառարանն» է, որը լույս է տեսել 1944-1945 թթ. և արժանացել է Պետական մրցանակի:



**ՏԵՐՏԵՐՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ
(1882-1953)**

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943),
գրականագետ, բանասիրական

գիտությունների դոկտոր (1943), պրոֆեսոր (1929), գիտության վաստակավոր գործիչ (1940): Ավարտել է Շուշիի հոգևոր սեմինարիան, ապա՝ Էջմիածնի Գևորգյան ձեմարանը (1905): Սովորել է Պետերբուրգի նյարդահոգեբանական ինստիտուտում (1907-1909): Դասավանդել է Շուշիի և Երևանի թեմական դպրոցներում: ԵՊՀ հիմնադիր դասախոսներից է, հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ (1929-1953): Դասախոսել է նաև Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում: Հիմնական աշխատությունները նվիրված են XIX դ. և XX դ. սկզբի հայ գրականության և գեղագիտական, գրաքննադատական մտքի զարգացման օրինաչափություններին, գրական հոսանքների և առանձին գրողների ստեղծագործությունների վերլուծությանը, գեղագիտական հայացքների ու ըմբռնումների լուսաբանմանը, ռուս գրականության պատմության հարցերին, ռուս գրականության հետ հայ գրականության կապերին: Ծանրակշիռ ներդրում ունի Հայաստանում գրականագիտական կադրերի պատրաստման և դաստիարակության, ինչպես նաև հայ գրականագիտության տերմինաբանության մշակման գործում: Գրել է գրականագիտական շատ աշխատություններ՝ նվիրված հայ դասականներին:



**ՕՐԲԵԼԻ ՀՈՎՍԵՓ
ԱՐԳԱՐԻ
(1887-1961)**

ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1935), ԽՍՀՄ ճարտարապետության ակադեմիայի իսկական անդամ (1941), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), հայագետ, կովկասագետ և հասարակական գործիչ: ՀԽՍՀ ԳԱ առաջին նախագահ (1943-1947): Պետական Էրմիտաժի տնօրեն (1934-1951): ԽՍՀՄ ԳԱ նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտի տնօրեն (1937): Ավարտել է Պետերբուրգի համալսարանը (1911): Պետերբուրգի, այնուհետև Լենինգրադի համալսարանի դասախոս, պրոֆեսոր (1914-1931): Նյութական մշակույթի պատմության պետական ակադեմիայի իսկական անդամ (1919-1931): 1920 թ. աշխատել է Պետական Էրմիտաժում: Կազմակերպել և ղեկավարել է Էրմիտաժի Արևելքի բաժինը: ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի վարիչ (1956-1961):

Հովսեփ Օրբելու գիտական հետազոտությունները նվիրված են մշակույթի պատմությանը: Մասնակցել է Անիի պեղումներին (1906-1917): Պեղումներ է կատարել Վանի միջնաբերդում (1916): Գիտական աշխատությունները վերաբերում են միջնադարյան

Հայաստանի մշակույթին, հայկական վիճակագրությանը, հայ ժողովրդական էպոսին, քրդերեն լեզվին, Հայաստանի և Վրաստանի միջնադարյան ճարտարապետությանը: Մանկավարժական գործունեության հիմնական արդյունքներից է խորհրդային կովկասագետների դպրոցի ստեղծումը: Մեծ են նրա ծառայությունները «Սասունցի Դավիթ» էպոսի հրատարակության գործում: Անգնահատելի է նրա հայագիտական, հայ ժողովրդի պատմությանը և մշակույթին նվիրված հետազոտական երկերի նշանակությունը:

ՀՀ ԳԱԱ-ն իր կազմավորման և հետագա գործունեության համար երախտապարտ է ականավոր գիտնականին՝ պատմաբանին, գիտության տաղանդավոր կազմակերպչին: ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր անդամների կազմը ցույց է տալիս, թե Հովսեփ Օրբելին ինչպիսի խստապահանջությամբ է ստեղծել ազգային ակադեմիան, ինչպես է նրանց համախմբել իր շուրջը և պատերազմի դժվարին տարիներին Հայաստանում զարգացրել գիտությունը:



**ԱԼԻԽԱՆՅԱՆ ԱՐՏԵՍ
ԻՍԱՀԱԿԻ
(1908-1978)**

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս



(1943), ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ (1946), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր (1940), պրոֆեսոր (1942), գիտության վաստակավոր գործիչ (1967): Ավարտել է Լենինգրադի պետական համալսարանը: Հիմնական աշխատությունները նվիրված են ճառագայթաակտիվության և ատոմի միջուկի հետազոտմանը: Հայտնաբերել է էլեկտրոններ առաքող առաջին արհեստական ճառագայթաակտիվ տարրը (սիլիցիում): Եղբոր՝ Ա. Ալիխանյանի և Մ. Խ. Կոզոդոնի հետ հայտնաբերել և հետազոտել է գրգռված միջուկներից էլեկտրոն-պոզիտրոն զույգերի արձակման երևույթը, Ա. Ալիխանյանի հետ 1942 թ. հիմնել է Արագածի տիեզերական ճառագայթների հետազոտման կայանը: Լրա նախաձեռնությամբ ստեղծվել է Երևանի 6 ԳԵՎ էներգիայով արագարարը: Լա մեծ ավանդունի բարձր և գերբարձր էներգիաների մասնիկների իմպուլսների դետեկտման և չափման նոր մեթոդների ստեղծման ասպարեզում: Կազմակերպել է Մոսկվայի ինժեներա-ֆիզիկական ինստիտուտի (ՄԻՖԻ) միջուկային ֆիզիկայի ամբիոնը (1946): Եղել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն և ԵՊՀ ամբիոնի վարիչ (1943-1973): ՄԻՖԻ միջուկային ֆիզիկայի ամբիոնի և ԽՍՀՄ ԳԱ ֆիզիկական ինստիտուտի տարրական մասնիկների լաբորատորիայի վարիչ (1946-1960): Հիմնադրել է Լոր Ամբերդի կայանը: Արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակների և կառավարական բարձր պարգևների:



**ԱԼԻԽԱՆՈՎ ԱՐԲԱՀԱՄ
ԻՍԱՀԱԿԻ
(1904-1970)**

ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1943), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (1937), սոցիալիստական աշխատանքի հերոս (1954): Ավարտել է Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտը (1928): Աշխատել է ԳԱ Լենինգրադի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում (1927-1941), ԳԱ տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտի հիմնադիր և տնօրեն (1945-1968): Հետազոտությունները նվիրված են միջուկային, տիեզերական ճառագայթների ֆիզիկային, միջուկային ռեակտորների ֆիզիկային և տեխնիկային, արագարար տեխնիկային, տարրական մասնիկների ֆիզիկային: Կազմակերպել է Էլբրուսի տիեզերական ճառագայթների հետազոտման առաջին արշավախումբը: Ա. Ալիխանյանի հետ հիմնել է Արագածի տիեզերական ճառագայթների հետազոտման կայանը (1942): Ա. Ալիխանյանի և Մ. Կոզոդոնի հետ միասին հայտնաբերել և հետազոտել է գրգռված միջուկներից էլեկտրոն-պոզիտրոն զույգերի արձակման երևույթը: Փորձա-

կանորեն ապացուցել է էներգիայի և իմպուլսի պահպանումը էլեկտրոնի և պոզիտրոնի անհիիլացման պրոցեսում: Իրագործել է խորհրդային առաջին ծանր ջրային ռեակտորի գործարկումը: Ա. Ալիխանյանը միջուկային ֆիզիկայի և տարրական մասնիկների արագարարների ֆիզիկայի խորհրդային դպրոցի հիմնադիրներից է, համաշխարհային հռչակ վայելող գիտնական: Արժանացել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման, ԽՍՀՄ Պետական մրցանակի (3) և կառավարական այլ բարձր պարգևների:




**ԳՈՒԼՔԱՆՅԱՆ ՎԱՐՂԱՆ
ՀՈՎՀԱՆԵՍԻ
(1902-1976)**

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), բույսերի գենետիկայի և սելեկցիայի բնագավառի ծանաչված մասնագետ: Ավարտել է ԵՊՀ (1927): ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի կենսաբանության ինստիտուտի տնօրեն (1938-1943): ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ (1943-1950) կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (1950-1956, 1959-1971): Հանրապետության գյուղատնտեսության նախարարության երկրագործության ԳՀԻ



լաբորատորիայի վարիչ (1956-1976):

Հեղինակ է հացահատիկային մի շարք նոր տեսակների, որոնք երկար տարիներ մշակվել են Հայաստանի հատկապես բարձրադիր լեռնային շրջաններում: Ստեղծել է տարբեր տեսակի ցորենների հարուստ հավաքածու, մշակել խաչածեղևի նոր մեթոդ՝ հիմնված հիբրիդային սերնդի գենետիկական բարդացման ընթացքի հետազոտման վրա: Ուսումնասիրել է բամբակի ֆիտոտեխնիկայի հիմնարար հարցերը, արդյունքներն օգտագործվել են պրակտիկայում: Մեծ վաստակ ունի հանրապետությունում կենսաբանական գիտությունների զարգացման, հատկապես ԳԱ գիտական նոր ինստիտուտների կազմակերպման գործում:



ԵՂԻՍԱԿ ԻՎԱՆ ԿՈՆՍՏԱՆԻՆՅԱՆ
ՎԱՍԻԼԻ
(1893-1971)

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), հիդրոէներգետիկայի նշանավոր մասնագետ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (1935): 1916 թ. ավարտել է Ս. Պետերբուրգի էլեկտրատեխնիկական ինստիտուտը, 1922-1943 թթ. եղել է նույն ինստիտուտի հիդրոէլեկտրական ուժային տեղակայանքների

ամբիոնի պրոֆեսոր, 1943-1951 թթ.՝ Հայաստանի ԳԱ ջրաէներգատեխնիկական ինստիտուտի տնօրեն և հիդրոէլեկտրական լաբորատորիայի վարիչ (1945-1957), ԵրՊԻ ջրային էներգիայի օգտագործման ամբիոնի վարիչ (1943-1971), հիդրավիլի հետազոտությունների միջազգային ասոցիացիայի հիմնադիր անդամ, Թուրուզի ակադեմիայի (Ֆրանսիա) թղթակից անդամ, Բուդապեշտի համալսարանի պատվավոր դոկտոր: Նրա գիտահետազոտական ուսումնասիրությունները նվիրված են ջրային տնտեսության, հիդրոէներգետիկայի, հիդրավիլիայի հարցերին: Մասնակցել է ԳՈՒԷԼ-ՌԻ-ի հանձնաժողովի աշխատանքներին, եղել է Դնեպրի ՀԷԿ-ի նախագծի կառավարման փորձագետը, մասնակցել Վոլխովի, Սվիրի ու Չորագետի ՀԷԿ-երի նախագծմանը: Հեղինակ է մի շարք աշխատությունների:

1934-1937 թթ. լույս է տեսել նրա «Հիդրոէլեկտրական ուժային սարքերը» խորագրով եռհատորյակը:



ԲՈՒՆԻԱԹՅԱՆ ՀՐԱՉՅԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ
(1907-1981)

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), կենսաբանական գիտությունների դոկտոր (1937), պրոֆեսոր

(1939), գիտության վաստակավոր գործիչ (1940), կենսաքիմիկոս: Ավարտել է ԵՊՀ (1930), եղել է բժշկական ինստիտուտի կենսաքիմիայի ամբիոնի վարիչ (1937-1960): ԵՊՀ ռեկտոր (1942-1946), ՀԽՍՀ ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն (1961-1981): ՀԽՍՀ ԳԱ կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (1947-1957), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար (1958-1961), փոխնախագահ (1961-1967), նախագահության անդամ (1964-1981): Հայաստանի ֆիզիոլոգների և կենսաքիմիկոսների ընկերությունների նախագահ (1960-1981): Բնախույզների գերմանական ակադեմիայի անդամ (1971): «Նյարդաքիմիա» հանդեսի գլխավոր խմբագիր (1980-1981):

Հր. Բունիաթյանը Հայաստանում նյարդային համակարգի կենսաքիմիայի գիտական դպրոցի հիմնադիրն է: Նրա հիմնական աշխատությունները նվիրված են ուղեղի կենսաքիմիային, օքսիդացման պրոցեսներում և նյութափոխանակության նյարդային կանոնավորման մեջ առանձին վիտամինների, ֆոսֆատիդների և կենսածին ամինների դերին:

Ս. Մովսիսյանի հետ առաջ է քաշել պիրիդին-նուկլեոտիդների մասնակցությամբ ամինաթթուներից ամոնիակի գոյացման մասին տեսակետը: Մասնավորապես, ուսումնասիրել է A և C վիտամինների նշանակությունը, նյութափոխանակության նյարդահամորալ և պայմանական ռեֆլեկտորային կարգավորման երևույթները, գամմա-ամինակարազաթթվի դերն ուղեղի կենսաքիմիական պրոցեսներում: Նրա գրչին են պատկանում մի շարք արժեքավոր և մնայուն աշխատություններ:



**ԹԱՄԱՄՇՅԱԼ
ԱԼԵՔՍԱՆԴ
ՉԱՔԱՐԻ
(1877-1967)**

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), նշանավոր անասնաբույժ, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր (1939), պրոֆեսոր (1922), գիտության վաստակավոր գործիչ (1935): ԽՍՀՄ ԳԳԱ պատվավոր ակադեմիկոս (1956): 1903 թ. ավարտել է Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտի գյուղատնտեսական ֆակուլտետը: 1903-1917 թթ. աշխատել է Կովկասի հողագործության դեպարտամենտում՝ որպես անասնաբույժ: 1920-1928 թթ. Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի, այնուհետև Երևանի անասնաբուժական ինստիտուտի ամբիոնի վարիչ (1930-1963), ֆակուլտետի ղեկավար (1931-1938): Գյուղատնտեսության նախարարության անասնապահության ԳՀԻ հիմնադիրներից, ավագ գիտաշխատող (1944-1967): Անդրկովկասում անասնաբուժական գիտության հիմնադիրներից է: Առաջինն է ուսումնասիրել անասնաբուծության տեղական պաշարները: Կատարել է Հայաստանի անասնապահության

գիտականորեն հիմնավորված շրջանացում, սկզբնավորել գյուղատնտեսական կենդանիների սելեկցիոն, ցեղային գործը: Թամամշյանի գիտահետազոտական աշխատությունները նվիրված են տավարաբուծության, մատղաշի աճեցման, տավարի ցեղերի շրջանացման, կենդանիների կերակրման հիմնահարցերին: 1947-ին լույս է տեսել նրա «Խոշոր եղջերավոր անասունները Հայաստանում՝ անցյալում և այժմ» արժեքավոր մենագրությունը:



**ԹՈՒՄԱՆՅԱԼ ՄԻՔԱՅԵԼ
ԳԱԼՈՒՍԻ
(1886-1950)**

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), բուսաբույժ, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր (1937), պրոֆեսոր (1939), գիտության վաստակավոր գործիչ (1931): Ավարտել է Մոսկվայի համալսարանը (1911) և Մոսկվայի գյուղատնտեսական ինստիտուտը (1914): ԵՊՀ հողագործության ամբիոնի վարիչ (1920-1930), հայկական գյուղատնտեսական ինստիտուտի բուսաբուծության ամբիոնի վարիչ (1930-1950):

ՀԽՍՀ ԳԱ գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար և հողագործության ինստիտուտի

տնօրեն (1943-1948): Բուսաբուծության, բույսերի գենետիկայի և սելեկցիայի բնագավառի ճանաչված մասնագետ: Ուսումնասիրել է Անդրկովկասի, մասնավորապես Հայաստանի մշակաբույսերը: Նրա հետազոտությունների հիման վրա հանրապետությունում բարելավվել և շրջանացվել են ցորենի, գարու և աշորայի մի շարք հնագույն տեսակներ: Բացահայտվել են ցորենի նոր տեսակներ, ընդ որում՝ Վավիլոնի (Վանի), Ուրարտուի, Երևանյան և տասնյակ այլ ձևեր: Միքայել Թումանյանը Հայաստանում հայտնաբերել և ուսումնասիրել է վայրի ցորենի մի քանի տեսակ՝ իրենց տարատեսակներով: 1957 թ. լույս է տեսել նրա «Ընտիր երկեր»-ի ժողովածուն (ռուսերեն): Մեծ է նրա երախտիքը Հայաստանում գյուղատնտեսական կադրերի պատրաստման գործում:



**ԿԱՐԱՊԵՏՅԱԼ ՍԱՀԱԿ
ԿԱՐԱՊԵՏԻ
(1906-1987)**

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), անասնաբույժ-սելեկցիոներ, կենսաբանական գիտությունների դոկտոր (1961), պրոֆեսոր (1962), գիտության վաստակավոր գործիչ (1966), ֆիզիոլոգ, գյուղատնտեսական կենդանի-



ների ֆիզիոլոգիայի բնագավառի մասնագետ, հասարակական-քաղաքական գործիչ: Ավարտել է Երևանի անասնաբուժական ինստիտուտը (1933): Եղել է ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի գիտության գծով նախագահի տեղակալ, ՀԿԿ ԿԿ քարտուղար, Մինիստրների խորհրդի նախագահ, արտաքին գործերի նախարար, ՀԽՍՀ գյուղմինիստրության ԱԱԳՀ ինստիտուտի տնօրեն (1952-1954): Հայկական մանկավարժական ինստիտուտի ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ (1964-1981), Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ (1958): Ֆիզիոլոգիայի միջազգային միության, թոչնաբուծության միջազգային գիտական ասոցիացիայի գլխավոր խորհրդի և ուղեղի հետազոտման միջազգային կազմակերպության անդամ: Աշխատությունները նվիրված են գյուղատնտեսական կենդանիների բազմացման և վերարտադրական ֆունկցիայի խթանման, թոչունների մթերատվության բարձրացման, արդյունաբերական թոչնաբուծության տարբեր ձյուղերի ինտենսիվացման հարցերին: Իր գործընկերների հետ միասին ստեղծել է Երևանյան հավերի մսաձվատու նոր ցեղը: Հրատարակել է բազմաթիվ աշխատություններ, այդ թվում՝ «Արդյունաբերական թոչնաբուծություն և նրա զարգացման ուղիները» (1965), «Թոչնաբուծություն» (1969), «Երևանյան հավերի ծագումը, մթերատվությունը և տոհմային արժանիքները» գործերը և այլն:




**ԻՍԱԳՈՒԼՅԱՆՅ ՎԱՉԵ
ՀՈՎՀԱՆՆԵՍԻ
(1893-1973)**

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), քիմիական գիտությունների դոկտոր (1939), քիմիկոս: Ավարտել է Մոսկվայի առևտրի ինստիտուտը (1917): Աշխատել է Մոսկվայի քիմիկադեղագործական գործարանում, Ժողովրդական տնտեսության, Դ. Ի. Մենդելեևի անվան քիմիկատեխնոլոգիական ինստիտուտներում: Մոսկվայի նավթի ինստիտուտի նավթի քիմիայի ամբիոնի վարիչ, գիտական գծով պրոռեկտոր (1933-1941): 1941-1945 թթ. ՀԽՍՀ ԳԱ Արմֆանի քիմիական ինստիտուտի գիտաշխատակից և ԵՊՀ պրոֆեսոր, 1946 թ.՝ Մոսկվայի նավթի քիմիայի և գազի արդյունաբերության ինստիտուտի գիտաշխատող, հավելանյութերի պրոբլեմային լաբորատորիայի վարիչ (1963-1973):

Հիմնական աշխատությունները նվիրված են օրգանական սինթեզի, նավթի քիմիայի, ացետիլենի, նավթաքիմիական սինթեզի հարցերին: Նրա աշխատանքները խթանել են սինթետիկ հոտավետ նյութերի հայրենական արտադրության կազմակերպումը: Մշակել է արդյունաբերության մեջ իրականացված հայրենա-

կան իոնիտների ներկայությամբ ֆենոլների ալկալիացման եղանակը: Նրա գրչին են պատկանում մի շարք ինքնատիպ, արժեքավոր աշխատություններ, այդ թվում՝ ռուսերեն «Սինթետիկ անուշաբեր նյութեր» (1947), «Նավթի քիմիան» (1949) և այլ երկեր:



**ԿՈՇՏՈՅԱՆՅ ԽԱՉԱՏՈՒՐ
ՍԵԴՐԱԿԻ
(1900-1961)**

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ (1939): Ավարտել է Մոսկվայի համալսարանը (1927): Ա. Սևերցովի անվան կենդանիների մորֆոլոգիայի ինստիտուտի էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի բաժնի վարիչ (1936-1943): ՀԽՍՀ ԳԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն (1943-1945): ԽՍՀՄ ԳԱ բնագիտության պատմության ինստիտուտի տնօրեն (1946-1953), Մոսկվայի համալսարանի ամբիոնի վարիչ (1943-1961): Պրագայի Կառլովի համալսարանի պատվավոր դոկտոր: ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր (1954): Նրա գիտական հետազոտության արդյունքներն ամփոփված են «Համեմատական ֆիզիոլոգիայի հիմունքներ» երկհատո-



րյակում (հ. 1, 1940, հ. 2, 1957): Չբաղվել է նյարդային համակարգության առաջացման և զարգացման հարցերով: 1946 թ. հրատարակվել է նրա «Ուրվագծեր Ռուսաստանի ֆիզիոլոգիայի պատմության» մենագրությունը: Արժանացել է Լոմոնոսովի անվան և Պետական մրցանակների: Կարևոր արդյունքների է հասել էվոլյուցիայի տարբեր մակարդակներում գտնվող գրգռվող համակարգերի ֆունկցիոնալ նյութափոխանակությունում գոյություն ունեցող ընդհանուր գծերին վերաբերող հետազոտություններում, նոր ձևով է լուսաբանել նյարդահումորալ կարգավորման և նյարդային սնուցման հարցերը: Ցույց է տվել նյարդային պրոցեսների փոփոխման հնարավորությունը նյութափոխանակության և սպիտակուցային մարմինների կառուցվածքի նպատակադրված ազդեցությունների միջոցով:



ՀԱՎՈՐՅԱՆ ԱԼԵԹՍԱՆ ԴԱՐՇԱԿԻ
(1890-1971)

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), քիմիական գիտությունների դոկտոր (1936), պրոֆեսոր (1937): Գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (1940): Ավարտել է Պետրոգրադի պո-

լիտեխնիկական ինստիտուտը (1917): Դասախոսել է Երևանի պետական համալսարանում (1920-1930), տեխնիկական ֆակուլտետի դեկան (1928-1929): Հիմնադրել և գլխավորել է ԵրՊԻ տեսական մեխանիկայի (1930-1939), թերմոդինամիկայի և ջերմատեխնիկայի (1939-1954) ամբիոնները, եղել է ԵրՊԻ ռեկտորի տեղակալ գիտական և ուսումնական աշխատանքների գծով (1936-1944):

Հիմնական գիտական աշխատանքները վերաբերում են դասական և կիրառական թերմոդինամիկայի տարբեր հարցերին: Հիմնավորել է թերմոդինամիկայի երկրորդ օրենքը՝ ջերմաստիճանի ցանկացած նշանի դեպքում: Ձևակերպվել է թերմոդինամիկական հավասարակշռության շեղման օրենքների միասնական արտահայտությունը: Չբաղվել է հեղուկից և տարբեր գազերից բաղկացած խառնուրդների թերմոդինամիկական հատկությունների ուսումնասիրությամբ՝ հաշվի առնելով նրանցում քիմիական ռեակցիաների և արսորբացման հնարավորությունը: Խորհրդային Միությունում առաջիններից է շարադրել տեսական մեխանիկայի բուհական դասընթացը վեկտորական հաշվի օգնությամբ: Հրատարակել է «Տեսական մեխանիկա, ստատիկա» (1941), «Թերմոդինամիկա» (1952), «Տեսական մեխանիկա» (1954), «Ընդհանուր թերմոդինամիկա» (1955), «Քիմիական թերմոդինամիկա» (1963) և այլ աշխատություններ:



ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԱԶԱՍՊԻ (1908-1996)

Աշխարհահռչակ գիտնական, գիտության մեծ կազմակերպիչ, հասարակական-քաղաքական գործիչ, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ԽՍՀՄ ակադեմիկոս (1953), թղթակից անդամ (1939), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), առաջին փոխնախագահ (1943-47), 1943-1993 թթ. ապրիլ՝ նախագահ, ապա ՀՀ ԳԱԱ պատվավոր նախագահ: ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի հիմնադիր և տնօրեն՝ 1947 թվականից, Բյուրականյան դպրոցի հիմնադիր: Ավարտել է Լենինգրադի պետական համալսարանը (1928), սովորել և 1931 թ. ավարտել է ԳԱ գլխավոր (Պոլկովյան) աստղադիտարանի ասպիրանտուրան: 1934 թվականից՝ պրոֆեսոր: Խորհրդային Միությունում աստղաֆիզիկայի առաջին ամբիոնի վարիչ (1939), Լենինգրադի համալսարանի աստղադիտարանի տնօրեն և ուսումնական մասի պրոռեկտոր: Վ. Համբարձումյանը, իբրև ՀՀ ԳԱԱ հիմնադիր ակադեմիկոս, մեծ ավանդ է ներդրել ակադեմիական գիտության զարգացման գործում: Նրա



գիտահետազոտական աշխատանքները նվիրված են տեսական աստղաֆիզիկայի, աստղերի ու միգամածությունների, ֆիզիկայի, աստղաբաշխության ու աստղային դինամիկայի, աստղագիտության, աստղերի ու գալակտիկաների էվոլյուցիայի հիմնահարցերին: Վ. Համբարձումյանը ստեղծել է գազային միգամածությունների լուսարձակման քանակական տեսությունը, մշակել է նոր աստղերից արտանետվող և անկայուն աստղերի մակերևութից արտահոսող զանգվածների գազային գնահատման մեթոդ: Մշակել է աստղային համակարգերի վիճակագրական մեխանիկայի հիմունքները: Ակադեմիկոս Վ. Համբարձումյանի ուսումնասիրությունները, որոնք ընկած են աստղերի ու գալակտիկաների էվոլյուցիային նվիրված «Բյուրականյան ուղղության» հիմքում, գիտական մեծ հայտնագործություններ են և հեղինակին բերել են մեծ փառք: Դրա առիավատչյան աշխարհի 53 ակադեմիկաների, գիտական ընկերությունների և խորհուրդների կազմում ընտրվել է: Վ. Համբարձումյանը պարգևատրվել է կառավարական բարձր շքանշաններով, Լոմոնոսովի, Վավիլովի և Հելմհոլցի անվան մեդալներով: Նրա ողջ կյանքն անօրինակ սխրանք է՝ նվիրված աստղագիտությանը, Հայաստանին, հայ գիտության կայացմանն ու զարգացմանը:



**ՊԱՖԵՆՀՈՒՅ
ԿՈՆՍԱՆՏԻՆ
ՆԻԿՈՒՍԻ
(1893-1983)**

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), Ճարտարագետ-երկրաբան, երկրաբանահանքագիտական գիտությունների դոկտոր (1943), պրոֆեսոր (1945), գիտության վաստակավոր գործիչ: Ավարտել է Պետերբուրգի լեռնային ինստիտուտը: 1919 թվականից աշխատել է Համառուսաստանյան երկրաբանական կոմիտեում (1919-1962), Հայկական երկրաբանական վարչության գլխավոր երկրաբան, 1959 թ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ երկրաբանության ինստիտուտում, 1942-1952 թթ.՝ Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր: Հիմնական աշխատությունները նվիրված են Հայաստանի և Կովկասի շերտագրության, տեկտոնիկայի, երկրաբանության, մագմայականության, հրաբխականության և մետաղաձուլության հարցերին: Առաջին անգամ ընդհանրացրել է Կովկասի վերաբերյալ երկրաբանական հարուստ նյութերը, առանձնացրել երկրաբանական և մագմայական ֆորմացիաները, մշակել տարածքի տեկտոնական և կառուցվածքային շրջանացման սխեման, կազ-

մել Կովկասի երկրաբանական քարտեզը (1956): Նրա աշխատություններում ցույց է տրված Հայաստանի տեղը ալպիական ծալքավոր գոտում: Նա բազմաթիվ մենագրությունների և քարտեզների հեղինակ է: Նրա «Հայաստանի երկրաբանություն» հիմնարար աշխատությունը, որը ռուսերեն հրատարակվել է 1948 թ. Մոսկվայում, արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի, իսկ Կովկասի երկրաբանական քարտեզը, որպես եզակի նմուշ, ցուցադրվել է 1966 թ. Մեքսիկայում կայացած երկրաբանական XX միջազգային համաժողովում:



**ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԵՎՈՆ
ԱՆԴԻԵԱՍԻ
(1885-1970)**

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), ԽՍՀՄ ԲԳԱ ակադեմիկոս (1944), բժշկական գիտությունների դոկտոր (1937), պրոֆեսոր (1927), գիտության վաստակավոր գործիչ (1940), բժիշկ, բժշկության պատմաբան, առողջապահության բնագավառի ականավոր գործիչ: Հայտնաբերել է ջերմախտի նոր ձև, մշակել դրա դեմ պայքարի մեթոդները, տվել հիվանդության նոր դասակարգում: Ուսումնասիրել է սրտային աղմուկների ծագումը, առաջարկել սիրտ-անոթային հիվանդու-



թյունների ախտորոշման ուրույն մեթոդ: Ավարտել է Խարկովի համալսարանը (1909), աշխատել է որպես բժիշկ Խարկովում, Թբիլիսիում, Ղազախստանում: Երևանի առաջին հիվանդանոցի գլխավոր բժիշկ (1919): Հայաստանի բուժաշխատողների արհմիության նախագահ (1921-1925), Երևանի տրոպիկական ինստիտուտի հիմնադիր (1923) և գիտական ղեկավար, ԵՊՀ, ապա Բժշկական ինստիտուտի ամբիոնի վարիչ (1923-1968): ԳԱ բժշկության և կենսաբանության պատմության բաժնի վարիչ (1944-1958): Սրտաբանության և սրտի վիրաբուժության ինստիտուտի հիմնադիր (1961) և առաջին տնօրեն:

Բժշկության պատմության Միջազգային ակադեմիայի անդամ (1962-1970): Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի երկու շքանշանով: Լ. Հովհաննիսյանի անունով է կոչվում Երևանի սրտաբանության և սրտի վիրաբուժության ինստիտուտը: Հովհաննիսյանի նախաձեռնությամբ ուսումնասիրվել են Արզնու հանքային ջրերը: Եւ ռուսերեն է թարգմանել Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարությունը» (1968): Մ. Աբեղյանի և Ա. Տեր-Պողոսյանի հետ կազմել է «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարանը», 1946-1947 թթ. ռուսաց լեզվով լույս է տեսել նրա «Բժշկության պատմությունը Հայաստանում՝ հին ժամանակներից մինչև մեր օրերը» մենագրությունը (հինգ հատորով):



**ՕՐԲԵԼԻ ԼԵՎՈՆ
ԱԲԳԱՐԻ
(1882-1958)**

ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1935), ԲԳԱ ակադեմիկոս (1943), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943): Ֆիզիոլոգ, էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի ուսմունքի ստեղծողներից: Բժշկական ծառայության գեներալ-գնդապետ: Մեծ հռչակ են ձեռք բերել նրա վեգետատիվ նյարդային համակարգին վերաբերող հետազոտությունները: Լայն ծանաչում են գտել սիմպատիկ նյարդային համակարգի հարմարողական-սնուցող ֆունկցիայի, ողնուղեղ-ուղեղային գործունեության համադասեցման ֆիզիոլոգիայի և ուղեղիկի ֆիզիոլոգիայի մասին հիմնարար աշխատությունները:

1904 թ. ավարտել է Պետերբուրգի ռազմաբժշկական ակա-

դեմիան, աշխատել է որպես Ի. Պավլովի օգնական (1907-1920): Լենինգրադի բժշկական ինստիտուտի պրոֆեսոր (1920-1931): Ռազմաբժշկական ակադեմիայի պրոֆեսոր, Ռազմաբժշկական ակադեմիայի պետ (1943-1950): ԽՍՀՄ ԳԱ Ի. Պավլովի անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն (1936-1950), կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (1939-1946), փոխնախագահ (1942-1946), Ի. Սեչենովի անվան էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն (1956): ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր (1941), սոցիալիստական աշխատանքի հերոս (1945): Լ. Օրբելու անունով է կոչվում ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտը: Լևոն Օրբելու աշխատությունները հարստացրել են համաշխարհային գիտությունը և լայն ծանաչում գտել: Եւ հիմնադրել է ֆիզիոլոգիական նշանավոր դպրոցներից մեկը: Հրապարակվել են նրա հարյուրավոր աշխատություններ, այդ թվում՝ «Ընտիր էջեր էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի» (1967), «Դասախոսություններ նյարդային համակարգության ֆիզիոլոգիայի» (1982), «Ընտիր երկեր» (ռուսերեն, հինգ հատորով, 1961-1968) և այլ աշխատություններ:




ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ

ՀՀ ԳԱԱ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀԸ. ՀՈՎԱՍԵՓ ՕՐԲԵԼԻ (1887-1961)

Հարազատ իր տոհմիկ՝ Հայկազուն-Սիսակյան ծագմանը և հայագիտությանը նվիրվածությանը, Հովսեփ Օրբելին (1887-1961) իր ողջ կյանքը նվիրել է հին և միջնադարյան, հատկապես, հայրենի պատմության հետազոտմանը՝ հենվելով հնագիտական նյութերի, վիճագիր, հին և միջնադարյան հայկական և օտար սկզբնաղբյուրների վրա: Ս. Պետերբուրգի Կայսերական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում, հունահռոմեական հնությունների դասընթացներին զուգահեռ, Օրբելին արտակարգ հետաքրքրասիրություն է ցուցաբերել իր հայրենիքի՝ Հայաստանի, ինչպես նաև Վիրքի և Իրանի հին ու միջնադարյան պատմության ու մշակույթների հանդեպ: 1906 թ. Օրբելին մասնակցել է Բագրատունյաց թագավորության Անի մայրաքաղաքի պեղումներին: 1911 թ. փայլուն կերպով ավարտելով արևելյան լեզուների ու պատմաբանասիրական ֆակուլտետների լրիվ դասընթացը, նա վերադարձել է Անի և շարունակել մասնակցել պեղումներին: Օրբելին հրապարակել է Անիի ծարտաբանական հուշարձաններին

նվիրված հետազոտություններ և հիմնել է հնադարան: Հայոց հնություններն արյան կանչով ձգում էին գիտնականին: Հաջորդը՝ Մեծ Հայքի Վասպուրական աշխարհում հինավուրց Վան քաղաքի ժայռի սեպագրերի, հնավայրերի ու ազգագրական նյութերի և Մոկք աշխարհում՝ հայերենի տեղական բարբառի ուսումնասիրություններն էին: Օրբելու ուշադրության կենտրոնում էին Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու քանդակները, որոնցից նա հատուկ ուսումնասիրել է թե՛ «խաղողի գոտին», որպես ազգագրական պատկերներով մի նմուշ, և թե՛ ազգային խոր ակունքներ ունեցող «Սասունցի Դավիթ»՝ «Սասնա ծռեր» դյուցազնավեպին աղերսվող կերպարները: Նրա հետազոտությունների շարքը լրացնում են Բագավանի, Բագարանի, Անիի, Նախիջևանի, Սանահի-նի կամուրջի, Մարմաշենի և Գանձասարի վանքերի, Թալինի եկեղեցու, Կարսի աշտարակների շինարարական վիճագիր արձանագրությունների ընթերցումները: Օրբելու բազմակողմանի ուսումնասիրությունների արդյունքն են նրա հայագիտական և արևելագիտական հետա-



զոտությունները, հայ պատմիչների (Եղիշե, Ղազար Փարպեցի, Թովմա Արծրունի) երկերի, հայկական միջնադարյան առակների և «Սասունցի Դավիթ» հերոսավեպի բնագրի ուսերեն թարգմանությունները:

Ակադեմիկոս Հ. Օրբելին գիտության մեծ նվիրյալ էր ու փայլուն կազմակերպիչ: Ս. Պետերբուրգի համալսարանի պրիվատ-դոցենտ, դոցենտ (1914-1918), պրոֆեսոր (1919-1933), 1919 թ. Ռուսաստանի Լուսժողկոմատի թանգարանների գործերով կոլեգիայի գիտական քարտուղար, Էրմիտաժի ավանդապահ (1920-1926), Արևելքի բաժնի վարիչ (1926-1933), տնօրեն (1934-1951), միևնույն ժամանակ՝ ԽՍՀՄ ԳԱ նյութական մշակույթի պատմության ինստիտուտի տնօրեն (1937-1939),



ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) նախագահության նախագահ (1938-1943), ՀԽՍՀ ԳԱԱ (ներկայիս՝ ՀՀ ԳԱԱ) առաջին նախագահ (1943-1947), ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի տնօրեն (1943-1947), Լենինգրադի Լեզվաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող (1953-1955), 1955 թ. պետհամալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկան, իսկ 1956-1961 թթ. նաև Մերձավոր և Միջին Արևելքի պատմության ամբիոնների վարիչ, ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի վարիչ (1956-1961): Իր գիտակազմակերպչական մեծ վաստակի համար Օրբելին արժանացել է պետական բարձր պարգևների:

Ս. Պետերբուրգում կանգնեցված է Հ. Օրբելու կիսանդրին: Ծաղկածորում գործում է Օրբելի եղբայրների տուն-թանգարանը: Հ. Օրբելու գիտական ժառանգությունը, հայրենանվեր գործունեության արդյունքները, ստեղծած պատմագիտական դպրոցը, բազում աշակերտները նրա մեծ վաստակի վկայությունն են, որի շնորհիվ նրա հանդեպ սերն ու ակնածանքն է իր սրտում կրում պատմագիտության ասպարեզ մտնող նոր սերունդը:

**ՀՀ ԳԱԱ ԵՐԿՐՈՐԴ
ՆԱԽԱԳԱՀԸ.
ՎԻԿՏՈՐ ՀԱՄԱԶԱՍՊԻ
ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱԼ
(1908-1996)**

ՀՀ ԳԱԱ հիմնադիր անդամ, փոխնախագահ (1943), նախագահ (1947-1994), պատվավոր նախագահ (1994-1996):

Չափազանց լայն է Վ. Համբարձումյանի գիտական հետազոտությունների շրջանակը՝ քվանտային ֆիզիկայից ու

ատոմի միջուկի տեսությունից մինչև մաթեմատիկական ու աստղաֆիզիկական հակադարձ խնդիրներ, միզամածությունների ֆիզիկա և ճառագայթման տեղափոխման խնդիրներ, աստղային խմբերի դինամիկա և տիեզերական տեսություններ: Դարակազմիկ նշանակություն ունեն մաթեմատիկական հետազոտությունների նոր ուղղության ծնունդ տված՝ Շտուրմ-Լիովիլի հակադարձ խնդրի, ինչպես և ատոմի միջուկի կառուցվածքի Համբարձումյանի (Դ. Իվանենկոյի հետ) ուսումնասիրությունները (1929-1930): 1932 թ. սկսած՝ Վ. Համբարձումյանը մշակել է գազային միզամածությունների լուսարձակման տեսությունը: Նա առաջիններից մեկն էր, որ մշակեց լուսային ձնշման ազդեցությամբ միզամածությունների ընդարձակման տեսությունը: Վ. Համբարձումյանը (Ն. Կոզիրևի հետ) ստեղծել է աստղերի գազաթաղանթների զանգվածները որոշելու մեթոդներ, որոնք կարևոր նշանակություն են ունեցել աստղային էվոլյուցիայի բացահայտումների համար:

1935 թ. Վ. Համբարձումյանը լուծել է անգլիացի գիտնական Ա. Էդինգտոնի առաջադրած մաթեմատիկական խնդիր աստղերի տարածական արագությունների բաշխումը որոշելու վերաբերյալ: Նրա գիտական խոշոր ներդրումն է աստղային համակարգերի միջնակագրական մեխանիկայի հիմունքների ստեղծումը՝ կապված աստղային համակարգերի տարիքի որոշման հետ:

Վ. Համբարձումյանի հետազոտությունների մի ամբողջ շարք վերաբերում է Գալակտիկայի միջաստղային նյութի բաշխման բացահայտմանը: Միջաստղային ամպերի ամբողջական հետազոտության կարևոր միջոց դարձավ



նրա առաջադրած ֆլուկտուացիաների տեսությունը, որը նոր ուղիներ հարթեց աստղագիտության մեջ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Վ. Համբարձումյանն ստեղծեց պղտոր միջավայրում լույսի ցրման տեսության հիմնահարցերի լուծման նոր եղանակ, որը հիմնված էր իր իսկ առաջադրած՝ ինվարիանտության սկզբունքի վրա: Այն գործնական լայն կիրառություններ գտավ ֆիզիկայում և երկրաֆիզիկայում, ռադիոֆիզիկայում և մաթեմատիկական ֆիզիկայում: Գալակտիկայի աստղային համակարգերի դինամիկայի տեսական վերլուծությունը Վ. Համբարձումյանին հանգեցրեց նոր տեսակի աստղային համակարգերի՝ աստղասփյուռների հայտնագործությանը (1947): Դրանով հիմնովին հերքվեց մինչ այդ գիտության մեջ իշխող այն կարծիքը, թե Գալակտիկայում բոլոր աստղերն առաջացել են միաժամանակ:

Իր հետագա հետազոտություններում Վ. Համբարձումյանն առաջարկել է նախաստղային նյութի վերաբերյալ նոր հայեցակարգ, ըստ որի, աստղային համակարգերի առաջացումն



ու զարգացումն ընթանում են նյութի խիտ վիճակներից դեպի նոսր վիճակների անցման միջոցով: Տրոհման պրոցեսը նախաստղերի բռնկումները հանգեցնում է աստղերի և աստղային համակարգերի առաջացմանը: Սրան են առնչվում նրա՝ գալակտիկաների էվոլյուցիայի հիմնահարցերին նվիրված հետազոտությունները: Հատկապես պետք է առանձնացնել գալակտիկաների և դրանց համակարգերի առաջացման մեջ վճռական նշանակություն ունեցող միջուկների (կենտրոնական խտացումների) ակտիվության վերաբերյալ նոր հայեցակարգը:

Լշված հայտնագործություններն ու գիտական կարևորագույն արդյունքները միայն մոտավոր պատկերացում են տալիս Վ. Համբարձումյանի վիթխարի գիտական ժառանգության և XX դ. աստղաֆիզիկայում նրա հսկայական ներդրման մասին:

ՀՀ ԳԱԱ ԵՐՐՈՐԴ

ԼԱՍԻԱԳԱՀԸ.

ՖԱԴԵՅ ՏԱՃԱՍԻ

ՍԱՐԳՍՅԱՆ (1923-2010)

ՀՀ ԳԱԱ նախագահ (1993-2006), հաշվողական տեխնիկայի և կառավարման ավտոմատացված համակարգերի բնագավառի խոշորագույն կազմակերպիչ, 1960-ական թվականներից ի վեր ԽՍՀՄ ռադիոսարքավորումների նոր տեսակների ստեղծման ու արտադրության գործի ականավոր մասնագետ:

1963-1977 թթ. Ֆ. Սարգսյանը ղեկավարել է Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը, դրան զուգահեռ՝ 1968-1977 թթ. աշխատել է որպես ԽՍՀՄ Պաշտպանության նախարարության զորատեսակների կառավարման ավտոմատացված համակարգերի գլխավոր կոնստրուկտոր: Երևանի մա-

թեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում նրա գլխավորությամբ իրականացվող տեսական և կիրառական բնույթի աշխատանքների հիմնական նպատակն են դարձել էլեկտրոնային հաշվիչ մեքենաների համալիրների հիման վրա պաշտպանական և ժողովրդատնտեսական համակարգերի ստեղծումն ու զարգացումը: 1968 թ. նրան շնորհվել է տեխնիկական գիտությունների թեկնածուի, իսկ 1975 թ.՝ տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1969 թ. արժանացել է գեներալ-մայորի կոչման: Մեծ է Ֆ. Սարգսյանի ներդրումը մասնավորապես միկրոծրագրային սկզբունքի և ավտոմատ ծրագրավորման հիման վրա կազմակերպված «Լաիրի» էլեկտրոնային հաշվիչ մեքենաների մշակման և արտադրության գործում, որի համար 1971 թ. նրան շնորհվել է Պետական մրցանակ: 1971 թ. Ֆ. Սարգսյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 1977 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: 1977-1983 թթ. եղել է ՀԽՍՀ Մինիստրների նախագահ: Նրա ղեկավարությամբ հանրապետությունում աննախընթաց զարգացում են ապրել այնպիսի նորագույն գիտաարտադրական ոլորտներ, ինչպիսիք են սարքաշինությունն ու ռադիոէլեկտրոնիկան, արդիականացվել է մեքենաշինությունը:

Իբրև ՀՀ ԳԱԱ նախագահ՝ Ֆ. Սարգսյանն առավել քան երբևէ դրսևորել է գիտության կազմակերպչի իր տաղանդը, հանրապետության գիտական խոշորագույն օջախի ներուժի պահպանման, գիտական հնարավորությունների կայունացման, հասարակական հեղաբեկումների պայմաններում գիտությունը գործնական զարգացումների հունով տանելու



ուղղությամբ: Հանրապետության համար հույժ կարևոր այս գործունեության հետ մեկտեղ պետք է առանձնացնել Ֆ. Սարգսյանի հետազոտությունների հրատապ նշանակությունը երկրի պաշտպանության և ինֆորմատիկայի ուղղությունների բնագավառում, որի գործնական արդյունքներից





է ակադեմիական գիտահետազոտական ցանցը՝ իր լրատվական անսահմանափակ հնարավորություններով:

Ֆադեյ Սարգսյանի հետևողական գործունեության շնորհիվ ընդլայնվել են ՀՀ ԳԱԱ միջազգային գործակցական կապերը Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ մյուս երկրների, Մեծ Բրիտանիայի, Հնդկաստանի, Չինաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և այլ երկրների գիտությունների ակադեմիաների և գիտական այլ հաստատությունների հետ: Նրա ծանրակշիռ գիտական գործունեությունը բարձր է գնահատել արտերկրի գիտական հանրությունը. նա եղել է արտասահմանյան տասնյակ գիտական հաստատությունների ու կազմակերպությունների անդամ, պարգևատրվել միջազգային մի շարք ջրանշաններով ու մեդալներով:

**ՀՀ ԳԱԱ ՉՈՐՐՈՐԴ
ԼԱՆԱԳԱՀԸ.
ՌԱԴԻՎ ՄԱՐՏԻՐՈՍԻ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
(ծնվ. 1936 թ.)**

ՀՀ ԳԱԱ նախագահ (2006 թվականից), ռադիոֆիզիկայի բնագավառի ականավոր գիտնական: Հեղինակ է երկու հարյուրից ավել գիտական աշխատանքների, որոնք վերաբերում են դեցիմետրական տիրույթի քվանտային ուժեղարարների ստեղծմանը և դրանց ռադիոաստղագիտական կիրառություններին, քվանտային էլեկտրոնիկայի համար արհեստական բյուրեղների ստեղծման տեխնոլոգիաների կատարելագործմանը, բարձր զգայությամբ ընդունիչ համակարգերի մշակմանն ու ներդրմանը: 1980թ. Ռ. Մարտիրոսյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1984թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, 1986 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ

թղթակից անդամ, իսկ 1990թ.՝ ակադեմիկոս: Ռ. Մարտիրոսյանն առաջարկել է քվանտային ուժեղարարներում էներգիական մակարդակների շրջման սխեմա, որը հնարավորություն է տալիս միաժամանակ ուժեղացնելու տարբեր հաճախություններով երկու ազդանշաններ: Նրա մշակած ալիքատարային քվանտային ուժեղարարը, որը 14 անգամ բարձրացրել է ընդունիչ համակարգի զգայությունը, հաջողությամբ օգտագործվել է երկրի ամենամեծ՝ «Ռատան-600» ռադիոդիտակում՝ հնարավորություն տալով հետազոտելու տիեզերական մի շարք լազերային աղբյուրների ռադիոձառագայթումը: Ռ. Մարտիրոսյանի գիտական ղեկավարությամբ ստեղծված բարձր զգայության ռադիոընդունիչ սարքերը լայնորեն կիրառվել են բնական պաշարների հետազոտման «Պրիրոդա» և «Օկեան» տիեզերական ծրագրերում, ինչպես նաև ռադիոաստղագիտական և բժշկական սարքանական հետազոտություններում: Գիտակիրառական լուրջ նշանակություն է ունեցել նրա տևական մասնակցությունը տիեզերական տարածության ուսումնասիրություններին նվիրված ծրագրերին: ՀՀ ԳԱԱ Աշտարակի Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում կատարված գիտական մշակումները լայն ճանաչում են գտել ԱՊՀ և արտասահմանյան երկրներում: Նա առաջիններից մեկն է ռադիոաստղագիտական հետազոտություններում քվանտային ուժեղարարների կիրառման ասպարեզում: Տիեզերքի հետազոտման ուղղությամբ կատարված աշխատանքների համար ԽՍՀՄ տիեզերագնացության ֆեդերացիայի բյուրոյի որոշմամբ 1987 թ. Ռ. Մարտիրոսյանն արժանացել է Յուրի Գագարինի



անվան Ոսկե հուշամեդալի, 1988թ.՝ ՀԽՍՀ Պետական մրցանակի, 1989 թ.՝ Ռեկրահիայի Պետական մրցանակի: Նրա անվան հետ է կապված նաև էներգիական մակարդակների գերբնակեցման նոր սխեմաների հայտնաբերումը:

1993-2006 թթ. Ռ. Մարտիրոսյանն եղել է Երևանի պետական համալսարանի ռեկտորը: Նրա ջանքերով Երևանի պետական համալսարանում կազմակերպված ցածր ջերմաստիճանների ֆիզիկայի լաբորատորիայում Հայաստանում առաջին անգամ ստացվել է հեղուկ հելիում, որը մեծապես նպաստել է ցածր ջերմաստիճանների բնագավառում ֆիզիկական հետազոտությունների ծավալմանը: Նա զգալի ներդրում ունի նաև միջազգային գիտակրթական և մշակութային կառույցների հետ արդյունավետ համագործակցության բնագավառում: Միջազգային գիտական հանրության մեջ լայն ճանաչման արժանացած գիտնականը տարիներ շարունակ անդամակցել է համալսարանների միջազգային և համաեվրոպական ընկերակցությունների խորհուրդներին որպես լիիրավ անդամ:

Նյութը պատրաստել են՝
**Ա. Խառատյանը
Է. Դանիելյանը
Ս. Նարիբջանյանը**



ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

ՍՏԵՓԱՆ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

«ԿԱՄԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու»

1920-ական թթ. սկզբներին ստեղծվեցին Խորհրդային Հայաստանի առաջին բուհերը և գիտահետազոտական օջախները: Գիտությունը դարձավ պետական քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը: Առաջին պլան մղվեցին գիտության այն ուղղությունները, որոնց ուսումնասիրության ոլորտն ընդգրկում էր ժողովրդատնտեսական կարևոր նշանակություն ունեցող ծյուղեր: Գիտական աշխատանքներ էին ծավալվել գյուղատնտեսության մի շարք ծյուղերի, քիմիական, երկրաբանական, կենսաբանական և բժշկական գիտությունների գծով:

Հասարակագիտության բնագավառում հիմնականում ուսումնասիրվում էին հայ ժողովրդի պատմության, լեզվի և գրականության, հնագիտության և ազգագրության բազմազան հիմնախնդիրներ:

1920-1930-ական թվականների կեսին հանրապետությունում հիմնադրվեցին նաև ակադեմիական սկզբունքով գործող ինստիտուտներ, որոնցից էին Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը (1921), ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտը (1925), ՀԽՍՀ Կենտրոնական կից Գիտությունների (1930) և Մարքսիզմ-լենինիզմի

ինստիտուտները (1931), ՀԽՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտը (1932), Լուսժողկոմատին կից ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտը (1935):

1933 թ. վերջերին Հայաստանում գործում էին 52 գիտահետազոտական հիմնարկներ և բուհեր: Գիտաշխատողների թվաքանակի անշեղ աճի մասին են վկայում հետևյալ տվյալները. 1930թ. հանրապետությունում կար 248, իսկ 1934 թ.՝ արդեն 1060 գիտաշխատող: Գիտահետազոտական հիմնարկների ցանցի ընդլայնումը և գիտական կադրերի աճը 1930-ական թթ. առաջին կեսին հանգեցրին գիտական մեկ միասնական կենտրոն ստեղծելու գաղափարին: Այդպիսի կենտրոն դարձավ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաձյուղը, որը հիմնադրվեց 1935 թ. հուլիսին:

Մինչև 1930-ական թթ. սկիզբը ԽՍՀՄ ԳԱ գրեթե բոլոր հիմնարկները կենտրոնացված էին Մոսկվայում և Լենինգրադում: 1931 թ. հոկտեմբերին կազմակերպվեց ԽՍՀՄ ԳԱ բազաների հանձնաժողով՝ ԳԱ փոխնախագահ Վ. Լ. Կոմարովի գլխավորությամբ, որը տեղական ղեկավար մարմինների աջակցությամբ ակտիվ գործունեություն ծավալեց ազգային շրջաններում ակադեմիական

հաստատությունների ծյուղավորված ցանցի ստեղծման ուղղությամբ: Մինչև 1932 թ. կեսերը հիմնվեցին ՍՍՀՄ ԳԱ հեռավորարևելյան, անդրկովկասյան և ուրալյան մասնաձյուղերը, դաճախական ու տաջիկական բազաները:

ԽՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաձյուղը՝ Չակֆանը, ստեղծվեց ՌԽՖՍՀ ժողկոմխորհի 1932 թ. նոյեմբերի 25-ի ԽՍՀՄ ԳԱ կովկասագիտության մասնաձյուղի վերափոխելու մասին որոշմամբ: Մասնաձյուղի առաջին նախագահը դարձավ մեծ գիտնական-կովկասագետ, ակադեմիկոս Ն. Մառը: Սկզբնական շրջանում Չակֆանը բաղկացած էր երկու բաժանմունքից՝ ադրբեջանական և վրացական, որոնք զբաղվում էին նաև Սովետական Հայաստանի բնական հարստությունների, պատմության և մշակույթի ուսումնասիրության մի շարք հիմնահարցերի մշակմամբ: Անդրկովկասի կուսակցական ու կառավարական մարմինները մշտապես հոգ էին տանում Չակֆանի գիտահետազոտական աշխատանքների ընդլայնման, նրա նյութատեխնիկական բազայի ամրապնդման ուղղությամբ: ՀամԿ(Բ)Կ Անդրերկրկոմի և ՌԽՖՍՀ ժողկոմխորհի նիստերում բազմիցս քննարկվում էին մասնաձյուղի գիտական հիմ-

նարկները որակյալ կադրերով, համապատասխան սարքավորումներով ապահովելու հարցեր, անհրաժեշտ միջոցներ էին տրամադրվում նոր գիտական ստորաբաժանումներ կազմակերպելու համար: Չակֆանը մեծ դեր խաղաց Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում գիտական մտքի կենտրոններ ձևավորելու գործում: 1935 թ. հուլիսի կեսին Չակֆանի հիման վրա ստեղծվեցին երեք առանձին ակադեմիական ստորաբաժանումներ՝ ԽՍՀՄ ԳԱ ադրբեջանական, վրացական և հայկական մասնաձյուղերը:

Հայաստանի կոմկուսի կենտրոնի և ՀԽՍՀ ժողկոմխորհի նախաձեռնությամբ և ԽՍՀՄ ԳԱ անմիջական աջակցությամբ 1935 թ. սկզբին կազմակերպվեց Չակֆանի հայկական բաժանմունքը. ՀԽՍՀ ժողկոմխորհը փետրվարի 1-ին որոշում ընդունեց «ԽՍՀՄ-ում ԽՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաձյուղի բաժանմունք հիմնադրելու մասին», որով նախատեսվում էր առաջին հերթին բնական և տեխնիկական գիտությունների զարգացումը: 1935 թ. մայիսի 25-ից մինչև հունիսի 1-ը տեղի ունեցած ԽՍՀՄ ԳԱ ընդհանուր ժողովի նստաշրջանը որոշեց Չակֆանի հայկական բաժանմունքը վերակազմել ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաձյուղի (Արմֆան): Սկզբնական շրջանում Արմֆանի կազմի մեջ մտան երկրաբանական, կենսաբանական, քիմիական ինստիտուտները, հողագիտության և պատմության, հնագիտության ու ազգագրության սեկտորները: 1935 թ. աշնանը ստեղծվեց բուսաբանական այգին, իսկ 1936թ. սկզբին Արմֆանի համակարգում ընդգրկվեց Սևանի ջրակենսաբանական կայանը, 1940 թ.՝ Պետական պատմական թագարանը: 1937 թ. հիմնվեց Պատ-



ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաձյուղի շենքը (այժմ Ա.Սախարովի անվան հրապարակում)

մության և նյութական մշակույթի ինստիտուտը, 1938 թ.՝ Գրականության և լեզվի ինստիտուտը, 1939 թ.՝ Բուսաբանության ինստիտուտը, 1941 թվականին՝ տնտեսագիտության սեկտորը: Մասնաձյուղի նախագահությամբ կից գործում էին գիտարշավային հետազոտությունների բյուրոն, խմբագրական-հրատարակչական խորհուրդը, կենտրոնական գրադարանը, աշխարհագրական ու բուսաբանական ընկերությունները և այլն:

Արմֆանի առաջին նախագահը դարձավ խոշոր երկրաբան, ակադեմիկոս Ֆ. Յու. Լևինսոն-Լեսինգը, որին 1938 թ. փոխարինեց ականավոր արևելագետ-կովկասագետ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին: Մասնաձյուղի գիտական հիմնարկներում աշխատում էին անվանի գիտնականներ Մ. Խ. Աբեղյանը, Հ. Ա. Աճառյանը, Հ. Հ. Մանանդյանը, Հ. Գ. Գյուլիքևիսյանը, Ս. Վ. Տեր-Ավետիսյանը, Հ. Գ. Հովհաննիսյանը, Հ. Տ. Կարապետյանը, Ս. Պ. Ղամբարյանը, Լ. Ա. Ռոտինյանը, Մ. Գ. Թումայանը, Պ. Բ. Քալանթարյանը, Ս. Մ. Յուզբաշյանը, Ա. Ի. Ալիխանովը, Ա. Ի. Ալիխանյանը, Բ. Հ. Գալստյանը, Վ. Ի. Իսագույանը և ուրիշներ: Արմֆանի գործունեությանն ակտիվորեն աջակցում

էին նշանավոր ռուս գիտնականներ Վ. Լ. Կոմարովը, Ն. Դ. Չելինսկին, Ն. Ի. Վավիլովը, Ն. Խ. Կուոնակովը, Վ. Պ. Վոլգինը, Կ. Վ. Տրևերը և այլք:

1935 թ. հուլիսի 14-ին երևանում՝ մշակույթի տանը, տեղի ունցավ հանդիսավոր նիստ, որը նվիրված էր Արմֆանի բացմանն ու Ֆ. Յու. Լևինսոն-Լեսինգի մեծարմանը՝ նրա գիտական և հասարակական գործունեության 50-ամյակի առթիվ: Հայաստանի կոմկուսն ու կառավարությունը մասնաձյուղի առջև խնդիր դրեցին հայտնաբերել և ուսումնասիրել Հայկական ԽՍՀ բնական հարստությունները, ամեն կերպ նպաստել հանրապետության արտադրողական ուժերի զարգացմանը, մարքսիստական դիրքերից ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը, հրատարակել եղած հարուստ գրական ժառանգությունը, պատրաստել գիտական կադրեր և բարձրացնել նրանց որակավորումը, մասնաձյուղի աշխատակիցների բեղմնավոր գիտական գործունեության համար ստեղծել անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և այլն:

Որո՞նք էին Արմֆանի հիմնարկներում կատարված գիտահետազոտական աշխատանքները:



ԽՍՀՄ ԳԱ հայկական և վրացական մասնաձյուղերի մի խումբ գիտաշխատողներ, 1936 թ., Թբիլիսի

րի հիմնական ուղղություններն ու արդյունքները:

Երկրաբանական ինստիտուտն զբաղվում էր Հայաստանի երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրման, հանրապետության մանրամասն երկրաբանական քարտեզի կազմման աշխատանքներով, օգտակար հանածոների հանքավայրերի տեղաբաշխման օրինաչափությունների և նոր հանքավայրերի հայտնաբերմամբ ու հետազոտմամբ, ինչպես նաև ջրաերկրաբանության, հանքաբանության, երկրաքիմիայի, բնական շինանյութերի հետազոտման և այլ հարցերով: Բացվեցին մետաղային և ոչ մետաղային օգտակար հանածոների, այդ թվում մոլիբդենի, դոլոմիտի, անդալուզիտի, տորֆի, մարմարի, կրի հանքավայրեր, ուսումնասիրվեցին տասնյակ հանքադրյուրներ, որոնց մի մասն օգտագործվեց ջրաբուժական նպատակներով:

Կեսաբանական ինստիտուտը հիմնականում զբաղվում էր ձևագոյացման պրոցեսների, տեսակների ծագման, էվոլյուցիայի և գենետիկայի, Հայաստա-

նի բուսական ու կենդանական աշխարհի ուսումնասիրման հարցերով: Ինստիտուտի թեմատիկ պլանը սերտորեն կապված էր հանրապետության գյուղատնտեսական արտադրության խնդիրներին: Ստացվեցին և արտադրության մեջ ներդրվեցին հացահատիկի նոր արժեքավոր տեսակներ, բամբակենու և ծխախոտի բերքատվությունն էլ ավելի բարձրացնելու նպատակով առաջարկվեց խոր էտման մեթոդը: Ուսումնասիրվեցին տեղական ագիդոֆիլային մանրէները, որոնք կիրառություն գտան բժշկության մեջ: Հետազոտվեցին պտուղների՝ խնձորի, տանձի, դեղձի, ծիրանի, խաղողի, թզի, նշի անցյալում չնկարագրված բազմաթիվ տեսակներ: Ինստիտուտը հրատարակեց Հայաստանի թռչունների մասին երկհատորանոց ցուցակ, մանրէակեսաբանական և կենդանաբանական ժողովածուներ, մոտ երկու տասնյակ հանրամատչելի գրքույկներ:

Բուսաբանության ինստիտուտը մեծ աշխատանք կատարեց Հայաստանի բուսական

պաշարների ուսումնասիրության և ցուցակագրման ուղղությամբ: Ակադեմիկոս Ն. Ի. Վավիլովի պատկերավոր արտահայտությամբ՝ Հայաստանը ներկայանում էր որպես բուսական աշխարհի արարման հնոց: Բույսերի բազմաթիվ տեսակներ, որոնք այլ վայրերում միատեսակ են, այստեղ ներկայացված էին մեկը մյուսին անցնող ձևերի բազմազանությամբ: Ինստիտուտի գիտաշխատողները հայտնաբերեցին վայրի եթերայուղատու բույսերի և դեղաբույսերի նոր, արժեքավոր տեսակներ: Մշակվեց խորդենու ագրոտեխնիկայի համակարգ, որը կարևոր նշանակություն ունեցավ օժանելիքի արտադրության համար: Բուսաբանական այգու խնդիրներից էին Հայաստանի չորային շրջանների կանաչապատումը, համանման կլիմայական պայմաններ ունեցող երկրների մի շարք էկոտիկ բուսատեսակների կլիմայավարժեցումը, բնության մեջ տեսագոյացման և ձևագոյացման պրոցեսների ուսումնասիրումը: Կառուցվեց ու սարքավորվեց այգուն կից օդերևութաբանական կայան, որը ձեռնամուխ եղավ մշտական դիտարկումների, ստեղծվեց հարուստ տնկարան, ծաղկանոց և ջերմոց: Այգին մշտական կապերի մեջ էր խորհրդային 34 և արտասահմանյան 112 բուսաբանական այգիների հետ: Բուսաբանության ինստիտուտի և այգու աշխատակիցների միացյալ ուժերով հրատարակվեցին «Հայկական ԽՍՀ բուսականությունը», «Երևանի ֆլորան», «Հայաստանի բուսաբանաաշխարհագրական ուրվագիծ» մենագրությունները և այլն:

Սևանի ջրակենսաբանական կայանը ուսումնասիրում էր Սևանա լճի ու այլ ջրավազանների ջրաբանության, ջրային տնտեսության հարցերը: Կայա-



նը ձեռնարկեց մինչ այդ դեռևս չուսումնասիրված Սևանա լճի պլանկտոնի, իշխանի մանրածկան և կլիմայավարժեցված սիգի կենսաբանության հետազոտումը, շարունակում էր ձկների հումքային պաշարների դիտարկումը:

Քիմիական ինստիտուտում մշակվեցին մի շարք թեմաներ, որոնք ունեին ինչպես տեսական, այպես էլ գործնական նշանակություն: «Ացետիլենի մետաղաօրգանական միացությունները» թեմայի փորձարարական արդյունքները մեծ նշանակություն ունեցան Երևանում սինթետիկ կաուչուկի գործարան կառուցելու համար: Բացահայտվեց, որ Երևանի շրջակայքում գտնված որոշ կավատեսակներ լիովին պիտանի են կղմինդրասալիկների, կոյուղու խողովակների և դեկորատիվ գեղարվեստական իրերի պատրաստման համար: Առաջարկվեց հանրապետության մագնեզիումային հումքի համալիր օգտագործման նախնական կառույցը, ինչպես նաև մշակվեց նեֆելինային սինթետիկների վերամշակման համալիր մեթոդ՝ կավահողի, կալաքարի (ալկալի) և ցեմենտի ստացման համար: Մի շարք հետազոտություններ նվիրվել են Ը վիտամինի կայունացման վրա սպիտակուցային և պորինային նյութերի ազդեցությանը. պարզվել է, որ օքսիպորինները դանդաղեցնում են ոչ միայն Ը վիտամինի, այլև դիֆենոլների և ադրենալինի օքսիդացումը: Քիմիական ինստիտուտը հրատարակել է գիտական աշխատությունների երկու ժողովածու:

Հողագիտության սեկտորի հիմնական խնդիրն էր Հայաստանի հողային ծածկույթի հետազոտումը՝ գյուղատնտեսական արտադրության կարիքների համար անհրաժեշտ

հողային պաշարների առավել ուսումնասիրման օգտագործման նպատակով: Մասնավորապես, սեկտորը ՀԽՍՀ հողօրդկոմատի առաջադրանքով իրականացրեց Սարուխանի ենթաշրջանի դաշտավարության հատուկ ուսումնասիրությունը, որի նպատակն էր ենթաշրջանի կոլտնտեսություններում բերքատվության արագ և առավելագույն աճն ապահովող ցանքաշրջանառություններ կազմելը: Մշակվեցին նաև Արարատյան դաշտավայրի աղուտների յուրացման և հողի էրոզիան կանխող հիմնավորված միջոցառումներ:

Պատմության, հնագիտության և ազգագրության սեկտորը, իսկ այնուհետև Պատմության և նյութական մշակույթի ինստիտուտը զբաղվում էին Հայաստանի պատմության և նյութական մշակույթի հուշարձանների (արխիվային նյութեր, հին ձեռագրեր, վիմագրագիտություն), խորհրդահայ պատմագիտության հարցերի ուսումնասիրությամբ, կազմակերպում էին հնագիտական պեղումներ, միջնակարգ և բարձրագույն դպրոցների համար կազմում էին հայ ժողովրդի պատմության ձեռնարկներ և այլն: 1936թ. Լեոնինգրադի Էրմիտաժի հետ համատեղ, ակադեմիկոս Հ. Օրբելու անմիջական ղեկավարությամբ, սկսվեցին միջնադարյան նշանավոր ամրոց Ամբերդի պեղումները, որոնք տվեցին դրական արդյունքներ: Պեղումներով հայտնաբերվեցին Պահլավունի իշխանների պալատի մի մասը և երկու սենյակից բաղկացած բաղնիքը: Հետազոտվեց կավե ու երկաթե խողովակներով անցկացված ջրմուղ ցանցը, ինչպես նաև ամրոցից դեպի գետն ընկած գաղտնուղին: Գիտական նշանակություն ունեցող հայտնաբերված իրերի թիվը հասնում

էր 530-ի, որոնց մեջ կային նաև Սիրիայից, Եգիպտոսից, Չինաստանից և այլ վայրերից բերված առարկաներ: Այս արշավախմբին մասնակցում էին երիտասարդ պատմաբաններ և հնագետներ Ս. Տ. Երեմյանը, Կ. Գ. Ղաֆադարյանը, Ն. Մ. Տոկարսկին, Բ. Բ. Պիոտրովսկին: 1939 թվականին դարձյալ Էրմիտաժի աշխատակիցների հետ սկսվեցին ուրարտական քաղաք-ամրոց Թեյշեբաինիի՝ Կարմիր-բլուրի պեղումները: Հրատարակվեցին մի շարք սկզբնաղբյուրներ՝ Զաքարիա Ազուլեցու «Օրագրությունը», Աբրահամ Երևանցու «Պատմություն պատերազմացն. 1721-1736թթ.», Սեբեոսի «Պատմությունը», Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» և այլն, մենագրություններ՝ Խ. Սամվելյանի «Հին հայ իրավունքի պատմության» առաջին հատորը և «Հին Հայաստանի կուլտուրան»: «Պատմական ակնարկներ» երկրորդ և երրորդ հատորները, Հ. Մանանդյանի «Հայաստանի քաղաքները X-XI դարերում», «Տիգրան Բ. և Հռոմը», «Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար», Ս. Մալխասյանցի «Խորենացու առեղծվածի շուրջը», Ա. Ծահնագարյանի «Դվին: Պատմաաշխարհագրական ակնարկ», Կ. Ղաֆադարյանի «Ալքիմիան պատմական Հայաստանում», «Հայկական գրի սկզբնական տեսակները» և այլ ուսումնասիրությունները:

Գրականության և լեզվի ինստիտուտը զբաղվում էր հայ գրականության պատմության հարցերով, գրական հուշարձանների ու դասականների երկերի հրատարակությամբ ժողովրդական բանախոսության և լեզվաբանական ուսումնասիրություններով: Ինստիտուտի հրատարակած աշխատություն-



ՀԽՍՀ ԳԱ-ն 1943 թ. հիմնադրվել է այս շենքում:

ներից պետք է նշել Մ. Աբեղյանի, Գ. Աբովի և Ա. Ղանալանյանի կազմած «Սասունցի Դավիթ: Հայկական ժողովրդական էպոս»-ի համահավաք բնագիրը՝ Հ. Օրբելու ընդանուր խմբագրությամբ և առաջաբանով, «Սասունցի Դավիթ» հոբելյանական ժողովածուն՝ նվիրված էպոսի 1000-ամյակին, Միքայել Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի 3-րդ հատորը, «Դիվան Խաչատուր Աբովյանի» առաջին հատորը, Մ. Աբեղյանի «Գուսանական ժողովրդական տաղեր», «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձանները», Գ. Հովնանի «Մաքսիմ Գորկին և հայկական կուլտուրան» մենագրությունները և այլն: Տպագրության պատրաստվեցին Անդրկովկասի ժողովուրդների մեջ տարածված «Քյոռօղլի» էպոսի քսան տարբերակները:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին խորհրդային ամբողջ ժողովուրդի հետ միասին Արմֆանի գիտնականներն իրենց բոլոր ուժերն ու գիտելիքները տրամադրեցին մեր երկրի ամրապնդման, թշնամու ջախջախման գործին: Մասնաձյուղի հիմնարկները ներգրավվեցին պաշտպանական բնույթի մի շարք առաջադրանքների կատարման գործում, լուծեցին

կարևոր գիտատեխնիկական նշանակություն ունեցող բազմապիսի խնդիրներ: Պատերազմի ընթացքում զգալի օգնություն ցույց տրվեց արդյունաբերական ձեռնարկություններին՝ նոր տեխնոլոգիական խնդիրների մշակման, ապրանքների արտադրության ավելացման և տեղական հումքային բազայի ընդլայնման ուղղությամբ: 1942 թ. պատմության ինստիտուտը հիմնեց Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետ:

Մինչև 1943 թ. վերջն այստեղ հավաքվեց հազարից ավելի փաստաթուղթ: Կազմակերպվեց «Հայաստանի զավակների մարտական սխրագործությունները» գիտահանրամատչելի մատենաշարի հրատարակությունը: Արմֆանի պատմաբաններից կազմվեց դասախոսների մի բրիգադ, որը ենթարկվում էր Անդրկովկասյան ռազմաձևատի քաղվարչությանը: Մի շարք պատմաբաններ գրեցին հայ ժողովրդի հերոսական անցյալին նվիրված աշխատություններ: Մասնաձյուղի բոլոր հիմնարկները ակտիվորեն մասնակցում էին զինվորական միավորումներում, հոսպիտալներում, դպրոցներում և այլուր տարվող քարոզչական աշխատանքներին:

Արդեն 1943 թ. վերջերին Արմֆանի համակարգում կային մոտ երկու տասնյակ գիտահետազոտական հիմնարկներ: Գիտաշխատողների քանակի մասին պատկերացում են տալիս հետևյալ թվերը. 1935թ.՝ 58 հոգի, 1936թ.՝ 74, 1937թ.՝ 55, 1938թ.՝ 114, 1939թ.՝ 156, 1940թ.՝ 208: Եթե 1935 թ. ասպիրանտուրայում սովորում էր 12 հոգի, ապա 1940 թ.՝ 34:

ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաձյուղի ստեղծումն, անտարակույս, ակնառու իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում: Իր գոյության ութ տարիների ընթացքում Արմֆանի գիտական հիմնարկները զգալի աշխատանք կատարեցին Հայկական ԽՍՀ բնական հարստությունների և արտադրողական ուժերի, ժողովրդական տնտեսության զարգացման հիմնախնդիրների ուղղությամբ: Արմֆանում մշակվող թեմաների արդիականությունն այն վերածեց մեր հանրապետության գիտական մտքի գործուն կենտրոնի:

Արմֆանի ձևավորման, մասնաձյուղի նյութատեխնիկական բազայի ամրապնդման, նրա հիմնարկներն անհրաժեշտ սարքավորումներով և որակյալ գիտական կադրերով ապահովելու գործում հսկայական դեր խաղաց ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիան: Վերջինիս նախաձեռնությամբ ԳԱ անդամները մշտապես այցելում էին Հայաստան:

1943 թ. նոյեմբերին Խորհրդային Միության կառավարությունը որոշում ընդունեց ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաձյուղի հիման վրա Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիա ստեղծելու մասին, որով նոր փուլ սկսվեց հայ ժողովրդի գիտական և մշակութային կյանքում:



ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ


ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻ - 125

Համաշխարհային քաղաքակրթության մեջ հայ ժողովրդի ծանրակշիռ ավանդը մեծապես պայմանավորված է եղել գիտության և մշակույթի ոլորտում ունեցած հզոր անհատականությունների առկայությամբ: Հայ մտքի տիտանների ջանքերով մի կողմից ապահովվել է հայության հազարամյակների անխափան գոյընթացը, մյուս կողմից՝ համաշխարհային գիտամշակութային առաջընթացում հայ ժողովրդին բաժին է ընկել ամենապատվաբեր տեղերից մեկը՝ հայ մարդը դարձել է ծանաչված և գնահատված ամբողջ երկիր-մոլորակի վրա:

Համաշխարհային ծանաչման հասած հայ անհատականություններից յուրաքանչյուրի անցած ուղին դիտարկելիս աչքի է զարնում մի կարևոր հանգամանք. նրանք հառնել են հայրենի միջավայրից, եղել իրենց ժողովրդի արժանի զավակներ, սնվել հայրենական գիտության ու մշակույթի լավագույն ավանդույթներով, և ազգային արժեքները հասցնելով դասական մակարդակի, հարստացրել նաև համաշխարհային քաղաքակրթության անդաստանը: Այսօր

հայ մեծանուն արևելագետ-հայագետ, պատմաբան, հնագետ, բանասեր, ազգագրագետ, Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադիր-նախագահ, Էրմիտաժի երկարամյա տնօրեն, ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելու ծննդյան 125-ամյա հեռավորությունից վստահաբար կարող ենք արձանագրել, որ համաշխարհային արևելագիտության մեջ հայազգի գիտնականների շարքում նա անմիջելի և իր հավասարը չունեցող ամենապայծառ դեմքն է:

Հովսեփ Օրբելին ներկայացնում էր դասական արևելագետների այն սերունդը, որը կանխորոշել էր ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Հայաստանի արևելագիտության զարգացման հետագա ընթացքը, հանդիսացել հասարակական գիտությունների շարքում այդ կարևոր բնագավառի ականավոր ներկայացուցչներից մեկը: Լա սահուն կերպով առանց ցնցումների, շրջանցելով ժամանակի քաղաքական կապանքների պարտադրանքը՝ դարձավ նախախորհրդային ժամանակների արևելագիտությունից դեպի խորհրդային արևելագիտություն անցումն ապահովող



սերնդի առաջատարներից մեկը: Հովսեփ Օրբելի մարդ-քաղաքացու, մեծ հայրենասերի, նվիրյալ հայագետ-արևելագետի, գիտության հմուտ կազմակերպչի հմայքը հասկանալու համար անհրաժեշտ է խորամուխ լինել նրա ոչ դյուրին, սակայն անցած փառահեղ ուղու մեջ՝ տոհմաբանությունից մինչև հարուստ ու բազմաբեղուն գիտակազմակերպական գործունեություն: Օրբելիների ընտանիքը ծագում էր միջնադարի հայ ազնվականական տների շառավիղնե-



րից և, ինչպես վայել է տոհմիկ գերդաստաններին, նոր ժամանակներում շարունակում էր իրեն դրսևորել համապատասխան որակներով: Ապագա հայագետ-արևելագետի պապը՝ ավագ Հովսեփ Օրբելին, սովորել էր Լազարյան ձեռնարանում, ուսուցչությամբ զբաղվել Մոսկվայում, Պետերբուրգում, հոգևոր-եկեղեցական ծառայություն կատարել Անդրկովկասում: Երեք որդիներից Դավիթը և Համազասպը բժիշկներ էին, աշխատությունների հեղինակներ, երրորդը՝ Աբգարը, Պետերբուրգի համալսարանի շրջանավարտ, գիտությունների թեկնածու: Վերջինս, ստանալով փայլուն կրթություն, վերադարձել էր հայրենիք, աշխատել իրավաբան-հաշտարար Լախիջևանում և Դարաչիչակում (այժմ՝ Ծաղկաձոր), ապա հաստատվել Քութայիսում, աշխատել Թիֆլիսի զանազան դատական ատյաններում, ստեղծել հարուստ գիտական գրադարան: Լա անվիճելի հեղինակություն էր դարձել ոչ միայն իրենց, այլև երբևէ շփում ունեցած այլ ընտանիքների շրջապատում: Աբգար Օրբելին ամուսնացած էր նշանավոր հայկական մեկ այլ տոհմից՝ Արղության Երկայնաբազուկների

իշխանական տնից սերված տիկին Վարվառայի հետ: Ահա այսպիսի ընտանիքում ծնվեց երեք զավակ, որոնք պիտի դառնային ռուսական-խորհրդային, միաժամանակ հայկական գիտության տարբեր ոլորտների խոշորագույն ներկայացուցիչներ:

Աբգար Օրբելու ավագ որդին՝ Ռուբենը (1880-1943), թեև մասնագիտությամբ իրավաբան էր, ժամանակի ընթացքում տարվեց շատ յուրահատուկ մասնագիտությամբ՝ ստորջրյա հնագիտությամբ, և շուտով իր կատարած հայտնագործություններն այդ բնագավառում մեծ ձանաչում բերեցին նրան: Ռուբեն Օրբելու գլխավորած բազմաթիվ ստորջրյա արշավախմբերը նոր լույս սփռեցին Հին աշխարհի և միջնադարի պատմության բազմապիսի վիճահարույց խնդիրների վրա: Լա դարձավ ԽՍՀՄ ստորջրյա հնագիտության հիմնադիրը:

Լևոն Օրբելին՝ ծնված 1882 թ. (մահ. 1958 թ.), դարձավ համաշխարհային ֆիզիոլոգիայի խոշորագույն ներկայացուցիչներից, էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի հիմնադիրներից մեկը, ակադեմիկոս, սոցիալիստական աշխատանքի հերոս, Ի. Պավլովի ան-

վան ֆիզիոլոգիայի ինստիտուտի 14-ամյա տնօրենը (1936-1950):

Հասկանալի է, որ նման միջավայրում Աբգար Օրբելու կրտսեր որդին՝ Հովսեփը՝ ծնված Քութայիսում, 1887 թ. մարտի 8 (20)-ին, պիտի նույնպես բնութային օժտված լիներ և իր հերթին գալու էր յուրովի հարստացնելու Օրբելիների տոհմի արդեն իսկ հարուստ տարեգրությունը: Հայրը ամեն ինչ արեց, որ որդին դպրոցից գատ Թիֆլիսի երրորդ գիմնազիայից դուրս, սովորի նաև արհեստներ, մասնավորապես ատաղձագործություն՝ փայտի արվեստ: Այդ գիտելիքները նրան շատ օգնեցին հետագայում էրմիտաժի աշխատանքների ժամանակ: Ծնողների պահանջով Հովսեփը թիֆլիսյան բակերում՝ իր հասակակիցների հետ շփումների շնորհիվ բարելավեց հայերենի իմացությունը, սովորեց վրացերեն, ռուսերեն և թուրքերեն:

Ուշագրավ է, որ արդեն պատանեկան տարիքում Հովսեփ Օրբելուն հուզում էր իր հայրենի լեռնաշխարհի պատմությունն ու մշակութային հարուստ ժառանգությունը: Պատահական չէ, որ Թիֆլիսի երրորդ արական գիմնազիան դեռ նոր ավարտած 19-ամյա երիտասարդը կարողացավ համոզել հորը և ստանալ թույլտվություն՝ 1906թ. մեկնելու Հայաստանի հինավուրց Անի մայրաքաղաք և մասնակցելու իր ուսուցիչ, մեծանուն արևելագետ Լիկոդայոս Մառի ղեկավարությամբ այնտեղ ընթացող հնագիտական պեղումներին: Անին արմատապես փոխեց Հովսեփ Օրբելու կյանքը, մեկընդմիջտ նրան կապեց հայ հնագիտության հետ, երիտասարդին մղեց ուսման նոր բարձունքների:

Ն. Մառի ղեկավարած արշավախմբի հետ ամուսն ամիսներին



Անիում պեղումներ կատարելու առաքելությունը շարունակվեց մինչև 1917 թ.: Ըստ Օրբելու՝ Անին ոչ միայն զուտ պեղումների վայր էր, այլև իսկական համալսարան, ուր շարունակվում էր և լեզուների, և պատմության, և բանասիրության, և արվեստի պատմության ուսումնասիրությունը՝ պեղված հնագույն հուշարձանների հիման վրա: Այդ բոլորն աշակերտներին էր փոխանցվում հենց իր՝ Մառի միջոցով: Արդեն առաջին արշավախմբի օրերին Օրբելին ականատեսն ու մասնակիցը եղավ Գագկաշեն-Չվարթնոցատիպ եկեղեցու պեղումների ընթացքում կարևոր հայտնագործությունների, մասնավորապես Գագիկ Առաջին արքայի արձանիկի հայտնաբերմանը և ուսումնասիրությանը: Շուտով Մառը, հաշվի առնելով երիտասարդ հետազոտողի որակական հատկանիշները, հատկապես լեզվախմացության բարձր մակարդակը, նրան վստահեց պեղումների նյութերի հիման վրա ստեղծված թանգարանի նմուշների պահպանման ու մշակման, ինչպես և Հայաստանի ու Ռուսական կայսրության զանազան երկրամասերից ժամանող բազմահազար զբոսաշրջիկների հետ բացատրական



աշխատանք տանելու գործը:

Ուսուցչի վստահությունը շահած հետազոտողը շուտով ընկերակցեց Մառին Արևմտյան Հայաստան՝ Օլթիի շրջան կատարած ուղևորության ընթացքում, իսկ 1909 թ. հենց նրան հանձնարարվեց իր հայրենի երկրի մեկ այլ շրջանի՝ Արցախի հաչեն գավառի արձանագրություններն ուսումնասիրելու գործը:

Խաչենում Օրբելու ուսումնասիրած շուրջ 220 հայկական արձանագրությունների մեծ մասը վերաբերում էր XII-XIII դարերին: Դրանց մեծ մասը գիտնականներին ծանոթ էր և շրջանառության էր հանվում առաջին անգամ՝ մեկ անգամ ևս փաստելով երկրամասի անվիճելի հայկականությունը:

1911 թ. Հովսեփ Օրբելին ավարտեց Ս. Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը՝ միաժամանակ հաճախելով արևելագիտության ֆակուլտետի հայ-վրաց-պարսկական բաժնի դասընթացներին: Պետերբուրգյան դպրոցը շատ արդյունավոր եղավ նրա համար: Եւ աշակերտեց Լիկոդայոս Մառին, Լիկո-

դայոս Ադոնցին, Իվանե Զավախիշվիլուն, Յակով Սմիռնովին, Վասիլի Բարթոլդին և ուրիշների: Համալսարանական տարիներին Հովսեփն իր լեզուների իմացությունն ավելացրեց նաև հունարենով ու լատիներենով: Սակայն նրա իսկական տարերքն արևելյան բանասիրությունն էր, որով նա լայն գիտական գործունեություն ծավալեց դեռ ուսանողական տարիներին: Ուստի և, համալսարանն ավարտելուց հետո Օրբելին որպես թեկնածուականատենախոսության նյութ ընտրեց «Կովկասի ազգագրությունը՝ ըստ հունահռոմեական աղբյուրների» թեման: Հետագայում ակադեմիկոս Ն. Մառը խոստովանել է, որ այդ աշխատությունը շատ մեծ տպավորություն էր թողել և իրեն բերել այն համոզման, որ Օրբելին պիտի դառնա խոշոր մասնագետ կովկասագիտության բնագավառում: Եվ, իրոք, արդեն երիտասարդ արևելագետն իր հրատարակած հոդվածներում կարողացավ իր վրա հրավիրել ժամանակի ծանաչված արևելագետների ուշադրությունը:

Ն. Մառի հիմնադրած «Անիի մատենաշարում» 1910 թ. լույս տեսավ Օրբելու Անի քաղաքի ուղեցույցը (կատալոգը), որը ոչ





միայն ընթերցողին ընդհանուր պատկերացում էր տալիս հայոց հինավուրց մայրաքաղաքի ամբողջական կառուցվածքի մասին, այլև մաս-մաս ներկայացնում քաղաքի կարևորագույն ծարտարապետական շինությունները, հուշարձանախմբերն ու համալիրները: Ուղեցույցի հրատարակումից հետո Օրբելին ձեռնամուխ եղավ իր հայտնի «Անիի ավերակները» գիտահանրամատչելի գրքույկի պատրաստմանը: Այն շարադրված էր Ն. Մառի առաջարկած հայեցակարգով: Հեղինակն ընդգծում էր այն հանգամանքը, որ Անին այնքան խորն ու հիմնավոր էր շնչում հայկականությամբ, որ Բագրատունիների անկումից հետո, երբ հայտնվեց օտարների ձեռքում՝ Շադդադյանների, Վրաց թագավորության, մոնղոլների, նույնիսկ թուրքմենական ցեղերի տիրապետության տակ, բացարձակապես չփոխեց իր նախկին հայկական նկարագիրը և մինչև ամայացումը մնաց այդպիսին: Գիրքն ավարտվում է հեղինակի հիացական խոսքերով Անիի մասին. ոչ միայն հայությունը, այլև ողջ Անդրկովկասն ու աշխարհը «կարող է հպարտանալ նաև երկնքի կողմից տրված մշակութային մի պարզևով Անիի ավերակներով, իր հնագիտական պսակի այդ խոշորագույն մարգարտով»:

Հայագիտական ուսումնասիրություններին զուգահեռ Օրբելին ձեռնամուխ եղավ նաև արևելագիտական այլ խնդիրների հետազոտությանը. գրեց աշխատություններ վրացական ու մուսուլմանական արվեստների մասին: Նա ուսումնասիրողների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքին, որ հայ ու վրացական արվեստները, լինելով միմյանց նման, միաժամանակ

շատ տարբեր են ու ինքնատիպ: Մուսուլմանական արվեստի մասին խոսելիս՝ պետք է նկատել, որ այն մեծապես ընդօրինակել է հայկական ու վրացական, ինչպես և առհասարակ քրիստոնեական մշակույթի բազմաթիվ տարրեր: Այդ իմաստով կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ սելջուկյան գմբեթավոր դամբարաններն ընդօրինակված են հատկապես հայկական տաճարներից:

1910-1911 թթ. Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի պատմաբանասիրական բաժանմունքում քննարկվում էր Վանի շրջան բարբառագետ-բանասեր գործուղելու հարցը: Մառի առաջարկությունը՝ կապված Օրբելու թեկնածության հետ, որևէ առարկության չհանդիպեց: 1911 թ. հուլիսին Օրբելին Բաբերդ-Էրզրումի վրայով ուղևորվեց Վան, ապա անցավ Մոկս, սկսեց լրջորեն զբաղվել տեղի հայերի բարբառով: Հատկանշական է, որ նա Մոկսում հինգ շաբաթ հյուրընկալվեց մյուզիք, 1890-ական ջարդերի ժամանակ իր մարդասիրական գործունեության շնորհիվ հայության ջերմ համակրանքը շահած Մուրթալաբեկի տանը: Այդ մարդու մասին Օրբելին հետագայում պիտի գրեր. «Ես հազվադեպ եմ տեսել այդպիսի համակրելի, գեղեցիկ ու բարեկիրթ ծերունի»:

Դաշտային-ազգագրական հետազոտությունների ընթացքում հավաքվեց ահռելի նյութ Մոկսի բարբառի, բանահյուսության և բարբառագիտության վերաբերյալ: Հաջորդ տարի, ամփոփելով հավաքված նյութը, Օրբելին սկսեց աշխատանքներ տանել Վանի քրդերի լեզվի ու ազգագրության ուսումնասիրության ուղղությամբ, կազմեց քրդերեն բառարան՝ հայերեն

բառարանի բառացանկի հիման վրա:

Վասպուրականում իրականացրած հետազոտությունների երրորդ ուղղությունն ընդգրկում էր Վանի՝ Ուրարտական թագավորության պատմության ու մշակույթի ոլորտը: Հատկապես կարևոր աշխատանք տարվեց Վանի մերձակայքում՝ Հողաբերդի՝ Թուփրակ կալեի շրջանում: Գիտնականը կարողացավ ուսումնասիրել Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին, Էրզրումի, Բայազետի գավառների մի շարք կոթողներ: Սանկտ Պետերբուրգ վերադառնալուց հետո Օրբելին իր կատարած աշխատանքների մասին հանգամանալից հաշվետվություն ներկայացրեց:

Օրբելու ինքնատիպ հաշվետվություն-դասախոսությունները մեծ տպավորություն թողեցին ռուսաստանյան արևելագիտության գլխավոր դպրոցի բոլոր խոշոր ներկայացուցիչների վրա: Ի դեպ, այդ դասախոսություններից մեկը, որ կրում էր «Սելջուկյան գմբեթավոր դամբարանների ու տապանաքարերի կախվածությունը համապատասխան հայկական հուշարձաններից» շատ համարձակ վերնագիրը, ոչ միայն մասնագետների կողմից ընդունվեց անվերապահորեն, այլև հեղինակի համար ճանապարհի հարթեց դեպի համալսարանական դասախոսական աշխատանք հայ-վրացական բանասիրության ամբիոնում՝ պրիվատ-դոցենտի հաստիքով: Ի դեպ, ընդհանուր արևելագիտական խնդիրների խորապատկերի վրա հայկական մշակույթի ծանրակշիռ դերն ու ազդեցությունը վերհանելու, պարզաբանելու կոչմանը Օրբելին հավատարիմ մնաց իր ողջ գիտական գործունեության ընթացքում: Ընդ որում, ազնիվ գիտնականը երբևէ չփորձեց հայ



Ժողովրդին արհեստականորեն վեր դասել հարևան ժողովուրդներից, գերազնահատել նրա ստեղծած պատմամշակութային ժառանգությունը, առավել ևս, որ դրա համար խորագիտակ արևելագետը որևէ դրդապատճառ չուներ: Կարծում ենք, որ դրանով պիտի բացատրել այն փաստը, որ ինչպես երիտասարդ տարիներին, այնպես էլ հետագայում՝ ստալինյան բռնաճնշումների շրջանում, պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու ընթացքում նրա հակառակորդները չհամարձակվեցին նրան բացահայտ մեղադրանք ներկայացնել՝ «ազգայնամոլությանը» տուրք տալու համար:

Գիտական աշխատությունների տպագրմանը զուգընթաց՝ Օրբելու գործունեության առանցքը կազմեցին հավաքված արձանագրությունների մշակումը և հրատարակումը: Լա այդ արձանագրությունների տեքստերը գիտական տեսքի բերելու համար սկսեց խորությամբ ուսումնասիրել հայկական, վրացական, հունահռոմեական և այլ աղբյուրներ, իրականացրեց դրանց թարգմանությունները տարբեր լեզուներով: Անիի արձանագրություններից զատ՝ Օրբելին աշխատանքներ ծավալեց նաև Մարմաշենի ու Շիրակի այլ հուշարձանների արձանագրությունները տպագրելու ուղղությամբ, որոնք ցավոք, մնացին անավարտ և մասամբ էլ ոչնչացան Պետերբուրգի ջրհեղեղի ժամանակ:

1917 թ. Հոկտեմբերյան իրադարձություններից հետո, հետևելով իր ուսուցիչ Մառի օրինակին, Օրբելին չհակադրվեց նոր իշխանությանը և շարունակելով հավատարիմ մնալ գիտությանը ծառայելու իր հավատամքին, ընդգրկվեց խորհրդային իշխա-

նության ստեղծած գիտական նոր կառույցների մեջ: Դրանցից առավել կարևոր դեր խաղաց Նյութական մշակույթի ռուսական ակադեմիան: 1920-1930-ական թթ. Օրբելու ղեկավարած գիտական արշավախմբերը նոր բացահայտումներ կատարեցին Դաղստանում՝ որպես մի մասով Աղվանքի ժողովրդի հայրենիքի պատմությունն ու մշակույթը կրող բնակչության հայրենիքում: Լույն ժամանակ լայնածավալ պեղումներ իրականացվեցին Հայաստանում՝ Գառնիում, Ամբերդում, Փարպիում, Պտղնիում, Աշտարակում և այլուր:

Սակայն Օրբելու՝ գիտության և թանգարանային գործի իսկական կազմակերպչի տաղանդը դեռ պիտի փայլատակեր Էրմիտաժում, որտեղ նա 1920 թ. աշխատանքի անցավ ավանդապահի, քիչ անց՝ նաև Մահմեդական Արևելքի բաժնի վարիչի, ապա՝ տնօրենի օգնականի, 1934 թ. հուլիսին՝ տնօրենի պաշտոններում: Հատկապես իր ուսուցիչներից Յա. Սմիռնովի աջակցության շնորհիվ Օրբելին արմատապես փոխեց Էրմիտաժի՝ միայն արևմտաեվրոպական մշակույթի կենտրոն լինելու ավանդական նկարագիրը: Շուտով թանգարանը վերածվեց նաև համաշխարհային արևելագիտական հզոր գիտացուցադրական կենտրոնի: Միմյանց հաջորդեցին կազմակերպված բազմաթիվ ցուցահանդեսներ: Օրբելուն հատկապես մեծ ծանաչում բերեցին սասանյան արվեստին նվիրված բացառիկ ցուցահանդեսները: 1935 թ. Հ. Օրբելին ընտրվեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ: Երա ամենագործուն մասնակցությամբ նշվեցին պարսիկ մեծանուն պոետ Աբուլ-Կասիմ Ֆիրդուսու ծննդյան հա-



զարամյա, Շոթա Ռուսթավելու 750-ամյա, «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյա հոբելյանները: Հովսեփ Օրբելի անունն սկսեց հնչել միջազգային գիտական զանազան ամբիոններից, նա ընտրվեց մի շարք արտասահմանյան ակադեմիաների և այլ հաստատությունների անդամ:

Սակայն Էրմիտաժում Հովսեփ Օրբելուն վիճակված չէր շարունակելու իր բարեփոխիչ գործունեությունը՝ երկրում սկսված ստալինյան «սոցիալիստական» վերափոխումների, մասնավորապես ծավալված արդյունաբերացման (ինդուստրացման) պատճառով: Գունենալով անհրաժեշտ նյութական միջոցներ՝ խորհրդային իշխանությունը հայացքը սևեռեց ազգային արժեքների, առաջին հերթին՝ Էրմիտաժի վրա: Աշխարհի տարբեր երկրներից ժամանած զանազան կուլեկցիոներներ, մեծահարուստներ փորձեցին օգտվել առիթից՝ էժան գներով Էրմիտաժի եզակի ցուցանմուշներին տեղ դառնալու համար: Այդ տմարդի ու անհեռատես քաղաքականության դեմ անվարան պայքար սկսեց մեծանուն գիտնականը: Ականատեսների վկայությամբ՝ Օրբելին, չթաքցնելով իր զայրույթը, հայտարարեց, որ ցուցանմուշները թանգարանից կհանվեն միայն իր դիակի վրայով: Լա, մերթ օտագործելով երկրի ղեկավարության շրջանում իր ունեցած հե-

ղինակությունը, մերթ՝ զանազան հնարքներով առավել արժեքավոր ցուցանմունքները տեղափոխելով տեղից տեղ, անգամ դուրս բերելով՝ իր և աշխատակիցների հագուստի մեջ թաքցրած՝ կարողացավ բազմաթիվ արժեքներ փրկել անդառնալի կորստից:

Միայն 1938 թ., երբ խորհրդային իշխանության գրոհները մշակույթի ու գիտության նկատմամբ մի փոքր թուլացան, Օրբելին կրկին լծվեց գիտակազմակերպական լայն աշխատանքի: Մտահոգված հայրենի երկրում Հայաստանում գիտության զարգացման խնդրով՝ նա համաձայնություն տվեց ընտրվելու ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաձյուղի (Արմֆանի) նախագահության նախագահի պաշտոնում: Ինչպես ցույց տվեց կյանքը, այդ հանգամանքը մեծ նշանակություն ունեցավ հետագայում՝ 1943 թ. ՀԽՍՀ ինքնուրույն Գիտությունների ակադեմիա ստեղծելու գործում:

Մեծ Հայրենականի օրերին Օրբելուն բաժին ընկավ ծանր ու դժվարին մի պարտականություն՝ Էրմիտաժի եզակի թանգարանային նմուշների տեղափոխումն օրեցօր թշնամու կողմից օղակվող Լենինգրադից դեպի Սվերդլովսկ: Այդ խնդիրը հաջողությամբ իրականացնելուց հետո նա չլքեց շրջափակված քաղաքը՝ շարունակելով զբաղվել տեղում մնացած արժեքների պահպանությամբ: Միայն 1942 թ., արդեն հիվանդ վիճակում, Օրբելին տեղափոխվեց Երևան և 1943 թ. նոյեմբերի 29-ին ընտրվեց Հայաստանի նորաստեղծ ԳԱ առաջին նախագահ: Այդ իրադարձությունը շրջադարձային նշանակություն ունեցավ Հայաստանում գիտության զարգացման համար: Ի դեպ, Օրբելին միաժամանակ զբաղեցրեց Հայաստանի ԳԱ պատմության ինս-

տիտուտի առաջին տնօրենի պաշտոնը, կարճ ժամանակում քայլեր ձեռնարկեց հայ ակադեմիական պատմագիտության և արևելագիտության զարգացման ուղղությամբ: Նրա ջանքերով Պատմության ինստիտուտում ստեղծվեց Հայրենական պատերազմի պատմության կաբինետը, որն առ այսօր գործում է: Սկիզբ դրվեց «Հայաստանի զավակների սխրագործությունները» գիտահանրամատչելի շարքի հրատարակությանը:

1944 թ. Օրբելին վերադարձավ Լենինգրադ և նույն խնամքով իրականացրեց արդեն Էրմիտաժի նմուշները թանգարան վերադարձնելու գործը, իսկ պատերազմից հետո՝ նյուրնբերգյան դատավարության ժամանակ հանդես եկավ որպես մեղադրող՝ Լենինգրադի նյութական մշակույթի արժեքները ֆաշիստների կողմից ոչնչացնելու համար: ՀՀ ԳԱ նախագահի պաշտոնում Օրբելին մնաց մինչև 1947 թ., երբ հայոց գիտության կազմակերպման առաքելությունը ստանձնեց հայ գիտական մտքի մյուս հանձարեղ ներկայացուցիչը՝ Վիկտոր Համբարձումյանը:

Ինչպես խորհրդային շատ մեծանուն գիտնականներ, այնպես էլ Օրբելին անմասն չմնաց ստալինյան վարչակարգի հալածանքներից: Նա թեև բռնաձնշումների չենթարկվեց, սակայն 1951 թ. ազատվեց Էրմիտաժի տնօրենի պաշտոնից: Դրանից հետո նրան այլև չվիճակվեց կրկին ոտք դնել այն նվիրական հաստատության շենից ներս, որին նվիրաբերել էր իր ողջ կյանքը: Մեծ գիտնականը դրանից հետո էլ շարունակեց իր գիտական հետազոտությունները, նորանոր աշխատություններ հրապարակ հանեց և իր մահկանացուն կնքեց 1961 թ. փետրվարի 2-ին:

Հովսեփ Օրբելին իր խիստ

զբաղվածության պատճառով ի վիճակի չէղավ հրատարակելու իր գիտական ժառանգության մի ահռելի մասը: Այդ շնորհակալ գործը հետագայում կատարեցին նրա աշակերտները: Այսօր թեև սեղանին կան Օրբելու գիտական ժառանգության հատորյակները, սակայն դեռ ոչ բոլոր գործերն են, որ տպագրված են և հասու ընթերցողներին:

Ամփոփելով մեծ գիտնականի գործունեության վերաբերյալ մեր խոսքը՝ ուզում ենք ընդգծել մի կարևոր հանգամանք. Հովսեփ Օրբելին որքան էլ ուսական, ապա՝ խորհրդային արևելագիտության պայծառ դեմքերից մեկն էր, այնուամենայնիվ առաջին հերթին՝ հայագետ էր, իր ժողովրդի նվիրյալ զավակ, Հայաստան աշխարհի հոգսերով ապրող իսկական քաղաքացի: Մենք՝ Հայաստանի ԳԱԼ աշխատակիցներս, այսօր շարունակում ենք ապրել այն գիտակցությամբ, որ մեզ բաժին է ընկել մեծն Օրբելու հիմնադրած հայոց գիտության կաճառի անընդհատականությունն ու հարատևությունն ապահովելու առաքելությունը, ցանկացած դժվարության դեպքում հայկական գիտության ապագայի նկատմամբ հավատը չկորցնելու հրամայականը:





ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱԼ

Ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար
suvaryan@sci.am

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀՀ ԳԱԱ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ*

Հայաստանում հայագիտության և հասարակական գիտությունների բնագավառում դարերի ընթացքում վիթխարի ժառանգություն է կուտակվել: XX դարի 20-30-ական թվականներին հայագիտությունը և հասարակական մյուս գիտությունները զարգանում էին երևանի պետական համալսարանում, 1921թ. Էջմիածնում հիմնված Գիտության ինստիտուտում, ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտում (1925 թ.) և այլ ուսումնագիտական հաստատություններում: Այդ գիտությունների զարգացմանը նոր թափ հաղորդեց 1943 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրումը, որի հիմնադիր 23 անդամներից 8-ը՝ Հովսեփ Օրբելի, Մանուկ Աբեղյան, Հրաչյա Աձառյան, Ավետիք Իսահակյան, Գրիգոր Ղափանցյան, Ստեփան Մալխասյանց, Հակոբ Մանանդյան, Արսեն Տերտերյան, ընդգրկված էին հասարակական գիտությունների բաժանմուն-

քում: Բաժանմունքը միավորում էր նաև 3 կազմակերպություն՝ Պատմության, Գրականության և Լեզվի ինստիտուտները: 1955 թ. բաժանմունքի կազմում ընդգրկվեց նորաստեղծ Տնտեսագիտության ինստիտուտը, 1958 թ.՝ Արվեստի, 1959 թ.՝ Հնագիտության և ազգագրության, 1969 թ.՝ Փիլիսոփայության և իրավունքի, 1971 թ.՝ Արևելագիտության ինստիտուտները: Այդ տարիներին բաժանմունքը ղեկավարել են ակադեմիկոսներ Գ.Ղափանցյանը (1943-1949 թթ.), Ա. Հովհաննիսյանը (1955-1960 թթ.), Ա. Կարինյանը (1960-1963 թթ.), Մ. Ներսիսյանը (1963-1965 թթ.), Ս. Երեմյանը (1965-1968 թթ.), Ծ. Աղայանը (1968-1977 թթ.):

1977 թ. հասարակական գիտությունների բաժանմունքը տրոհվել է երկու ինքնուրույն բաժանմունքների՝ պատմության և տնտեսագիտության, փիլիսոփայության և բանասիրության: Այդ տարիներին պատմության և տնտեսագիտության բաժանմունքը գլխավորել են ակադեմիկոսներ Գ. Ղարիբջանյանը

(1977-1982 թթ.), Բ. Առաքելյանը (1982-1990 թթ.), Հ. Սիմոնյանը (1990-1994 թթ.), իսկ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքը՝ ակադեմիկոս Գ. Բրուտյանը (1977-1994 թթ.):

1994 թ. պատմության և տնտեսագիտության, փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքների միավորմամբ ստեղծվել է հումանիտար գիտությունների (հետագայում՝ հայագիտության և հասարակական գիտությունների) բաժանմունքը՝ ընդգրկելով վերը նշված ինստիտուտները, ինչպես նաև Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը (1995 թ.-ից), Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը (1997 թ.-ից), «Հայկական հանրագիտարան» հրատարակչությունը (2012 թ.-ից): Տարբեր տարիների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարներ են եղել ակադեմիկոսներ Գևորգ Բրուտյանը (1994-1995 թթ., 1998-2002 թթ.), Գ.Սարգսյանը (1995-1998 թթ.), Հ. Ավետիսյանը (2002-2004 թթ.), Վլադիմիր Բարխուդարյանը (2005-2011 թթ.): 2011-ից բա-

* Հոդվածը պատրաստվել է բաժանմունքի ինստիտուտների ներկայացրած նյութերի հիման վրա:



ժամնունքը ղեկավարում է ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

Բաժանմունքի ինստիտուտների հետազոտական աշխատանքի գերակա ուղղություններն են՝ հայ ժողովրդի պատմության համակարգված հետազոտումը, հնագիտությունը, ազգաբանությունը, էթնոսոցիոլոգիան, բանահյուսությունը, մարդաբանությունը, վիճակագրությունը, Մերձավոր և Միջին Արևելքի, Կովկասի, Արևելյան Ասիայի երկրների և ժողովուրդների պատմությունը և հարաբերությունները, հայերենագիտությունը, գրականագիտությունը, տնտեսագիտության տեսության և կիրառական հիմնահարցերը, գիտության փիլիսոփայությունն ու մեթոդաբանությունը, փիլիսոփայական և հայ գեղագիտական մտքի պատմությունը, իրավունքի և հայ քաղաքական մտքի պատմության, ծարտարապետության և կերպարվեստի, ազգային երաժշտության և թատրոնի տեսության և պատմության հիմնախնդիրները:

Ներկայումս բաժանմունքի կազմում ընդգրկված են՝ 8 ակադեմիկոս, 19 թղթակից անդամ, 26 արտասահմանյան անդամ, 31 պատվավոր դոկտոր:

ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 6-ի որոշմամբ ստեղծվել է Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող հիմնադրամ:

Բաժանմունքի հիմնական ուղղություններով հրապարակվում են «Պատմաբանասիրական հանդես» և «Լրաբեր հասարակական գիտությունների» գիտական հանդեսները:

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ:

Պատմության ինստիտուտի հիմնադրումը նոր թափ հաղորդեց հայրենի պատմագիտությանը, որի գործունեության առաջին

տարիներն անքակտելիորեն կապված են ՀՀ ԳԱԱ առաջին նախագահ Հովսեփ Օրբելու անվան հետ: Պատմության ինստիտուտը դարձավ հանրապետության պատմական մտքի հիմնական և առաջատար օջախը: Փաստորեն, սկսվեց հայ ժողովրդի պատմության համակարգված հետազոտումը՝ հնագույնից մինչև նորագույն ժամանակաշրջանը, ինստիտուտը մասնագիտացավ հայոց պատմության ամբողջական ուսումնասիրության բնագավառում:

Արդյունավետ աշխատանքներ են տարվել հին և միջնադարյան Հայաստանի պատմության բարդ ու առանցքային հիմնախնդիրների լուսաբանման ուղղությամբ. Սուրեն Երեմյանը հրատարակել է «Հայաստանն ըստ «Աշխարհացոյցի» մենագրությունը, Լևոն Բաբայանը քննության է ենթարկել XIII-XIV դդ. Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության հարցերը: Բորիս Պիոտրովսկու հեղինակությամբ լույս տեսած «Ուրարտուի պատմությունն ու մշակույթը» ուսումնասիրությունն արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի:

1940-ական թթ. երկրորդ կեսին ի հայտ են եկել աղբյուրագիտական լուրջ հետազոտություններ: Լ. Խաչիկյանը կազմել է XIV և XV դարերի հայերեն ձեռագիր հիշատակարանների բազմահատոր ժողովածուն: Հ.Անասյանը սկզբնավորել է V-XVIII դդ. հայ ինքնուրույն և թարգմանական, տպագիր և անտիպ գրականության մշակումը: Եզակի աշխատանք է նրա «Հայկական մատենագիտություն» ուսումնասիրությունը:

Վերածնվել է դեռևս 1920-ական թվականներին հայտնի «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենա-

շարը՝ հին հունական, արաբական, թուրքական, ասորական, բյուզանդական աղբյուրներից կատարված թարգմանություններով ու ծանոթագրություններով (Ս. Կրկյաշարյան, Ա. Տեր-Ղևոնդյան, Մ. Ջուլյան, Հ. Մելքոնյան և Հ. Բարթիկյան): Վ. Հակոբյանը նախաձեռնել է «Կանոնագիրք Հայոց»-ի ավելի քան 50 գրչագրերի հիման վրա կազմվող բնագրի ստեղծման ու հրատարակման գործը:

Հայ ազատագրական շարժումների, հայ-ռուսական հարաբերությունների ուսումնասիրման բնագավառում զգալի ներդրում ունեն Ա. Հովհաննիսյանը, Աբգար Հովհաննիսյանը, Հ. Անասյանը, Վ. Ռշտունին, Վ. Պարսամյանը, Ջ. Գրիգորյանը, Մ. Ներսիսյանը, Վ. Դիլոյանը, Ն. Սարովանյանը և ուրիշներ:

1950-ական թթ. կեսից ուժեղացել է հետաքրքրությունը հայկական գաղթավայրերի պատմության նկատմամբ (Վ. Բարխուդարյան, Վ. Միքայելյան, Ա. Արրահամյան, Ռ. Խաչատրյան, Հ. Մելիքսեթյան, Ժ. Անանյան, Ս. Քոլանջյան, Ս. Հովնանյան, Կ. Դավթյան, Ա. Խառատյան, Ջ. Ղասաբյան և ուր.):

Հատուկ ուշադրության է արժանացել Կիլիկիայի հայկական պետության պատմության ուսումնասիրությունը (Գ. Միքայելյան, Ս. Բուռնազյան):

Զգալի են Հայրենական մեծ պատերազմի տարիների հանրապետության պատմության վերաբերյալ աշխատությունները: Լուսաբանվել են հայորդիների սխրագործությունները ռազմաձակատում, հայ ազգային զորամիավորումների մարտական ուղին, հայերի մասնակցությունը պարտիզանական պայքարին ու դիմադրության շարժմանը, թիկունքի աշխատավորների հերոսական աշխատանքը և այլ



հարցեր (Ա. Մնացականյան, Ե. Խալեյան, Կ. Հարությունյան և ուր.):

Հայ պատմաբանների ձեռքբերումները խորհրդային ժամանակաշրջանում ընդհանրացվել են Պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակում (Երևան, 1967-1984 թթ.), որն արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի:

Ուսումնասիրություններ են հրատարակվել հնագույն հայկական պետական կազմավորումների, Ուրարտուի (Վանի թագավորության), Երվանդունիների, Արտաշեսյան դարաշրջանի Հայաստանի (Է. Դանիելյան, Վ. Խաչատրյան, Ա. Ղարաբաղյան, Ե. Մարգարյան Ռ. Մանասերյան, Ս. Կրկյաշարյան և ուր.) վերաբերյալ:

Հայ-բյուզանդական հարաբերությունների վերաբերյալ մեծարժեք ուսումնասիրություններ է կատարել ակադեմիկոս Հ. Բարթիկյանը: Նրա հրատարակած «Հայ-բյուզանդական հետազոտություններ» եռահատորն արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին:

Ուսումնասիրվել են վաղմիջնադարյան Հայաստանի վարչաքաղաքական բաժանումները, եկեղեցի-պետություն հարաբերությունները (Է. Դանիելյան, Վ. Վարդանյան), Աղվանքի (Հ. Սվազյան), Արցախի մելիքությունների և մելիքական տների XVII-XIX դդ. պատմության հարցերը (Ա. Մաղալյան), Հայաստանի տարածաշրջանների պատմությունը և ժողովրդագրությունը (Ա. Մելքոնյան, Հ. Հարությունյան, Հ. Աբրահամյան, Ա. Հակոբյան, Հ. Մուրադյան և այլք):

Հայաստանի անկախացումից հետո հայ պատմագիտության ձեռքբերումները կներկայացվեն Պատմության ինստիտու-

տում պատրաստվող «Հայոց պատմություն» ակադեմիական նոր հրատարակությունում (չորս հատոր՝ յուրաքանչյուրը երկու գրքով, նաև մեկական հատոր ռուսերեն և անգլերեն): 2010 թ. հրատարակվել է արժեքավոր այդ աշխատության երրորդ հատորի առաջին գիրքը (XVII դ. II կես-1900 թ.) և չորրորդ հատորի առաջին գիրքը (1918-1945 թթ.):

ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտն իր հիմնադրման օրվանից հետևողականորեն զբաղվում է հավաքչական աշխատանքով, որի արդյունքում թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդերն ու գրադարանն անընդհատ ընդլայնվում են: Ստեղծվել է մշտական թանգարանային ցուցադրություն Հայոց ցեղասպանության թեմայով, որը պարբերաբար համալրվում է նորահայտ նյութերով:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ:

Հնագիտության ոլորտում կարևոր արդյունքներ են գրանցվել մարդագոյացման, վաղ երկրագործական հասարակությունների ձևավորման գործընթացների, հին և միջնադարյան Հայաստանի պատմության և մշակույթի ուսումնասիրության ոլորտներում:

Հնագույն Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան հնագիտական մշակույթների բացահայտման, լեռնաշխարհին բնորոշ հասարակական զարգացումների առանձնահատկությունների լուսաբանման համար առանցքային նշանակություն ունեն ինստիտուտի արշավախմբերի ուժերով պեղված Կարմիր բլուրի նախաուրարտական շրջանի (Հ. Մարտիրոսյան), Ջրահովտի, Մեծամորի (Է. Խանգադյան), Հառիձի (Տ. Խաչատրյան), Այգևանի (Ս. Եսայան), Մոխրաբլուրի (Գ. Արեշյան), Հոռոմի, Գեղարտի (Ռ.

Բադալյան), Ագարակի (Պ. Ավետիսյան) բնակատեղիների նյութերի ուսումնասիրությունները: Բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի մշակույթների ամբողջական նկարագրության, պարբերացման և ժամանակագրության համակարգի ձևավորման համար կարևոր տվյալներ են ձեռք բերվել ՀՀ տարբեր շրջաններում պեղված դամբարանադաշտերից (Լոռի Բերդ, Լձաշեն, Օշական, Քարաշամբ, Թալին, Ծաղկալանջ, Հոռոմ, Սյունիք և այլն):

Ուսումնասիրվել են Վանի թագավորության, հելլենիստական, անտիկ շրջանների և միջնադարյան խոշոր բնակավայրեր, հայոց մայրաքաղաքները (Բ. Պիտրովսկի, Բ. Առաքելյան, Գ. Տիրացյան, Կ. Ղաֆադարյան, Ա. Քալանթարյան, Ժ. Խաչատրյան, Ֆ. Տեր-Մարտիրոսով, Ի. Կարապետյան, Հ. Պետրոսյան, Հ. Հակոբյան):

Հիմնարար հետազոտություններ են կատարվել միջնադարյան վանական համալիրների ուսումնասիրության ոլորտում (Վահանավանք, Խամշի վանք, Մարմաշեն, Ուշի, Հառիձ, Աքրոի, Աղիտու, Հանդաբերդ, Ցախացքար, Թեղենյաց և այլն): Հետազոտվել են անտիկ և քրիստոնեական Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի բազմաշերտ դրսևորումները:

ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Իտալիայի, Բելգիայի, Ավստրիայի տարբեր համալսարանների ու գիտական կենտրոնների հետ համատեղ իրականացվել են հնագիտական ուսումնասիրություններ Հայաստանի տարբեր մարզերում, որոնց շնորհիվ հիմնովին թարմացվել է Հայկական լեռնաշխարհի և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության ու մշակույթի ուսումնասիրության աղբյուրա-



գիտական հենքը, օտար լեզուներով հրատարակվել են բազմաթիվ մենագրություններ և հոդվածներ (Ռ. Բադալյան, Պ. Ավետիսյան, Ս. Հմայակյան, Ա. Բոբոխյան, Բ. Գասպարյան, Մ. Զարդարյան և ուր.):

Հավաքվել, վերծանվել և մեկնաբանվել են Հայկական լեռնաշխարհի և գաղթօջախների հարյուրավոր վիճակագրական աղյուսակներ (Կ. Նաֆադարյան, Ս. Բարխուդարյան, Գ. Գրիգորյան, Գ. Սարգսյան):

Հնագիտության և վիճակագրագիտության ոլորտներում ինստիտուտի գիտական ուսումնասիրությունների արդյունքները հրատարակվել են «Հնագիտական պեղումները Հայաստանում», «Հայաստանի հնագիտական հուշարձանները», «Դիվան հայ վիճակագրության» մատենաշարերում և բազմաթիվ մենագրություններում:

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

Հիմնարար ուսումնասիրություններ են կատարվել ազգագրության ոլորտում, հատկապես հայոց նյութական և հոգևոր մշակույթի, առանձին պատմաազգագրական շրջանների, ազգագրության տեսական ու մեթոդաբանական հիմնախնդիրների ուղղությամբ: Հայ ազգագրական գիտության կայացման ու միջազգային գիտական հանրության կողմից ծանաչման գործում մեծ նպաստ ունեն Դ. Վարդումյանը, Վ. Բոբոխյանը, Է. Կարապետյանը, Կ. Մելիք-Փաշայանը, Ա. Օդաբաշյանը: Հայ ազգագրության կարևոր ձեռքբերումներից պետք է համարել «Աշխարհի ժողովուրդները» մատենաշարով «Կովկասի ժողովուրդներ» երկհատորյակում հայերին վերաբերող հատվածի շարադրումը ռուսերենով, որը հայոց նյութական ու հոգևոր

մշակույթի յուրօրինակ հանրագիտարան էր և համապատասխանում էր ժամանակի գիտության պահանջներին:

Վերջին տարիների ամենալուրջ հաջողությունը, որն ամբողջացնում է ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից հայ ազգագրության վերջին ձեռքբերումները, «Հայեր» հատորի հրատարակությունն է ռուսերենով (ՌԴ, Մոսկվա), որը գիտական բարձր մակարդակով ներկայացնում է հայոց մշակութային ժառանգության բոլոր հիմնական ոլորտներն ու կարևոր քայլ է հայոց մշակութային ժառանգության հանրայնացման ու միջազգայնացման ճանապարհին:

Ազգաբանության ոլորտին վերաբերվող մի շարք մենագրություններ հրատարակվել են արտերկրի այնպիսի հեղինակավոր հրատարակչություններում, ինչպիսին են Ինդիանայի համալսարանի հրատարակչությունը, Մազդա հրատարակչության «Հայագիտական ուսումնասիրություններ» մատենաշարը, ինչպես նաև գերմանական՝ Հ. Բյոլի անվան հիմնադրամի հրատարակչությունը (Լ. Աբրահամյան, Հ. Մարության): Ակնառու նվաճումներից են «Հիշողության ազգագրություն» մատենաշարի հիմնումը և երեք մենագրությունների հրատարակումը (Հ. Մարության):

Ազգագրության բնագավառի ուսումնասիրությունները հրատարակվել են ինստիտուտի ստեղծած «Հայ ազգագրություն և բանահյուսություն» 26 հատորանոց մատենաշարում և բազմաթիվ մենագրություններում:

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ:

Ինստիտուտի թուրքագետներն իրենց ուշադրությունը կենտրոնացրել են Օսմանյան կայսրության և Թուրքիայի հանրապետության պատմության, ներքին և արտաքին քաղաքականության, սոցիալ-տնտեսական դրության, գաղափարական հոսանքների և այլ հանգուցային հարցերի լուսաբանման վրա:

Առանձնահատուկ տեղ է գրավել թուրքական իշխանությունների՝ հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ցեղասպանության ծրագրի ուսումնասիրությունը (Ռ. Սաֆրաստյան):

Արաբագիտության բնագավառում գերակայել են արաբական երկրների ազգային-ազատագրական շարժումների (Ն. Հովհաննիսյան), սոցիալ-քաղաքական և հոգևոր-մշակութային զարգացման ուղիների (Ե. Նաջարյան), միջարաբական, ինչպես նաև հայ-արաբական պատմաքաղաքական հարաբերությունների (Ա. Տեր-Ղևոնդյան), իսլամի դերի և այդ երկրներում հայ համայնքների պատմության ուսումնասիրությունները:

Իրանագիտության բնագավառում ուսումնասիրություններն ընթացել են հիմնականում հետևյալ ուղղություններով՝ Իրանի պատմություն, ներքին և արտաքին քաղաքականություն, իրանական բանասիրություն և հայ-իրանական պատմամշակութային հարաբերություններ: Մասնավորապես, հիշատակման է արժանի «Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)» (Վ. Բայբուրդյան), «Հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան» (Ա. Կոզմոնյան) աշխատությունները:

Ինստիտուտի հետազոտական աշխատանքներում կարևոր տեղ է գրավել քրդերի, նրանց պատմության, բանահյուսության, հայ-քրդական փոխհարաբերությունների ուսումնասիրությունը (Հ. Ջնդի, Կ. Չաչանի, Ծ. Մոյսյան և ուր.):



Ոսումնասիրվել են Աղվանքի, հայ-բյուզանդական քաղաքական-դավանական հարաբերությունների, հայ-վրացական փոխհարաբերությունների պատմության հարցերը: Այս ոլորտում կարևորվում են «Կովկասյան մշակութային աշխարհը և Հայաստանը» (Պ. Մուրադյան), «Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թթ.» (Ա. Բոզոյան), «Հայ-ուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին» (Պ. Չոբանյան) աշխատությունները:

Ձգալի աշխատանք է կատարվել հատկապես սեպագիր աղբյուրների վերծանման, ուսումնասիրության և մեկնաբանման ոլորտում (Ն. Հարությունյան, Ա. Քոսյան, Մ. Խաչիկյան, Ն. Մկրտչյան):

Անկախ Հայաստանի համար կարևոր նշանակություն է ձեռք բերել նաև արևելասիական աշխարհաքաղաքական տարածաշրջանի առաջատար երկրների՝ Հնդկաստանի, Չինաստանի և Ճապոնիայի հետ հարաբերությունների ուսումնասիրությունը:

Կարևորագույն ձեռքբերումներից է նաև տարաբնույթ ժողովածուների՝ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» (լույս է տեսել 28 հատոր), «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» (լույս է տեսել 8 հատոր), «Մերձավոր Արևելք» (լույս է տեսել 8 հատոր), «Կովկաս և Բյուզանդիա» (լույս է տեսել 6 հատոր), «Հին Արևելք» (լույս է տեսել 5 հատոր), «Արևելասիական ուսումնասիրություններ» (լույս է տեսել 2 հատոր), «Ժամանակակից Եվրասիա» (լույս է տեսել 2 հատոր) հրատարակումը:

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ: Ինստիտուտը զբաղվում է առաջին

հերթին հայերենագիտության հիմնարար հարցերով, հատկապես հայոց լեզվի կառուցվածքի և գործառության, պատմության և համեմատական քերականության ուսումնասիրությամբ, վերջին տարիներին՝ նաև գրական արևելահայերենի և արևմտահայերենի քննությամբ, ուշադրության կենտրոնում է պահում գրական լեզվի կանոնարկման, տերմինաբանության մշակման, ուսուցողական լեզվաբանության հարցերը, ստեղծում ստուգաբանական, երկլեզվյան, բարբառային բառարաններ և տերմինարաններ:

Ձեռնարկվել և ավարտվել կամ ավարտին են մոտենում հայերենագիտական այնպիսի հիմնարար աշխատություններ, ինչպիսիք են «Հայոց լեզվի քառահատոր պատմությունը» (լույս է տեսել նախագրային ժամանակաշրջանին նվիրված հատորը) (Գ. Ջահուկյան), որն արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի (1988 թ.), պատրաստ է արևմտահայերենի նկարագրությունը: Աշխատանքում դիտարկվել է արևմտահայերենի նորագույն փուլը՝ ըստ հստակորեն առանձնացված խոսակցական ոլորտների (Ա. Սարգսյան), հայերենի պատմական եռահատոր քերականությունը (լույս են տեսել պատմական հնչյունաբանությամբ և բառագիտությամբ նվիրված հատորները), հայ բարբառագիտական ատլասը (2008 և 2010 թթ.), հայերենի ստուգաբանական (2010 թ. լույս է տեսել Գ. Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանը») և բարբառային բառերի (2001- 2010 թթ. հրատարակվել են վեց հատորները) բառարանները:

Ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի և գործառության հետազոտության արդյունքների յուրատեսակ

ամփոփում է «Ժամանակակից հայոց լեզու» եռահատոր ակադեմիական հրատարակությունը: Կարևորագույն արդյունքներ են հայոց լեզվի զարգացմանը և կառուցվածքին, ժամանակակից հայերենի տեսության հիմունքներին, իմաստաբանությանը և բառակազմությանը (Գ. Ջահուկյան), ժամանակակից գրական հայերենին, արդի հայերենի դերանուններին, քերականությանը, չթեքվող խոսքի մասերին, դրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությանը (Ս. Աբրահամյան), ժամանակակից հայերենի շարահյուսությանը (երկհատոր, հեղինակ՝ Վ. Առաքելյան) նվիրված հիմնարար աշխատությունները:

Ձգալի աշխատանքներ են կատարվել ընդհանուր և համեմատական լեզվաբանության բնագավառում: Ստեղծվել են ընդհանուր և համեմատական լեզվաբանության հարցերին և պատմությանը նվիրված հիմնարար աշխատություններ (Գ. Ղափանցյան, Է. Աղայան, Գ. Ջահուկյան): Գ. Ջահուկյանի «Համընդհանուր լեզվաբանական տեսությունը» մենագրությունը հրատարակվել է անգլերեն և ռուսերեն:

Պատմաբառագիտական հետազոտությունների շրջանակում ուսումնասիրվել են գրաբարի, միջին հայերենի, վաղ աշխարհաբարի բառապաշարի շերտերը, դրանց գործառական առանձնահատկությունները, իմաստային խմբերը: Հնչյունական, հոլովման, բայական համակարգերի, բառակազմության պատմական նկարագրությունների յուրատեսակ ամփոփումն է «Հայերենի պատմական քերականություն» երկհատորյակը:

Ձգալի աշխատանք է կատարվել հայերենի բարբառների



ուսումնասիրության ուղղությամբ (Ա. Նարիբյան, Հ. Մուրադյան և ուր.): Հրատարակվել են բազմաթիվ բարբառների վերաբերող մենագրություններ, մշակվել են հայերենի բարբառների հնչյունական, տիպաբանական և բազմահատկանիշ դասակարգման սկզբունքները (Ա. Նարիբյան, Գ. Ջահուկյան):

1962 թ. ինստիտուտում կազմվել և հրատարակվել են հեղինակային համաբարբառներ: Հրատարակվել է գրաբար ինքնուրույն գրականության հեղինակային համաբարբառների ավելի քան 40 հատոր (2007թ.՝ Թ. Մեծովեցու (երկհատոր), 2011-2012 թթ.՝ Գ. Տաթևացու «Գիրք հարցմանցի» (հհ. I-II) համաբարբառները): Պատրաստ են Մ. Կաղանկատուացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի», Կ. Գանձակեցու «Պատմութիւն հայոց», Ուխտանէս Եպիսկոպոսի «Պատմութիւն հայոց» էլեկտրոնային համաբարբառները:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ:

Լինելով ԳԱԱ հիմնադիր անդամ՝ Մ. Արեղյանը երկհատոր «Հայոց հին գրականության պատմություն» կոթողային աշխատանքով հիմք է դրել հայ գրականության ակադեմիական ուսումնասիրություններին: Ակադեմիական նույն չափանիշներով 1936-1954 թթ. իրականացվել է «Սասնա ծռերի» բոլոր պատմմաների գիտական հրատարակությունը չորս գրքով:

Համակողմանի ուսումնասիրման է ենթարկվել հայ միջնադարյան գրականության ժանրային համակարգը: Լույս է տեսել «Հայ միջնադարյան գրական ժանրեր» (1984թ.) համատեղ աշխատանքը, «Հայ տաղերգուներ» մատենաշարը (9 հատորով), առանձին մենագրություններ են նվիրվել սրբախոսական գրականությանը (Զ. Տեր-Դավթյան), հայ

միջնադարյան ողբերին (Պ. Խաչատրյան), կաֆաներին (Հ. Սիմոնյան), պանդխտության երգերին (Մ. Մկրտչյան), տաղերին և գանձերին (Ա. Քյոշկերյան):

1950-ական թվականներից ինստիտուտում առանձնակի կարևորություն է տրվել հայ միջնադարյան բանաստեղծության ուսումնասիրմանը: Այս բնագավառի կոթողային աշխատանքներից է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի քննական բնագրի կազմումն ու ծանոթագրումը, որն իրականացվել է այս գործը պարունակող 61 ձեռագրերի հիման վրա (կազմողներ՝ Պ. Խաչատրյան և Ա. Ղազինյան):

Առանձին մենագրություններ են նվիրվել Խ.Արծվյանին, Մ.Նալբանդյանին, Բաֆֆուն, Ծերենցին, Գ. Սունդուկյանին, Հ. Պարոնյանին, Մուրացանին, Ե. Օտյանին, Հ. Թումանյանին, Ա. Իսահակյանին, Ե. Չարենցին, Դ. Դեմիրձյանին և մյուս դասականներին: Էդ. Ջրբաշյանը տասնամյակներ շարունակ հետևողականորեն զբաղվել է Հ. Թումանյանի և մի շարք այլ հեղինակների ստեղծագործությունների ուսումնասիրությամբ, Ս. Սարինյանը՝ 19-րդ դարի գրական ընթացքով և հատկապես Մուրացանի ու Բաֆֆու ստեղծագործություններով՝ դրանք համապատասխանաբար դիտարկելով հայկական ռոմանտիզմի և ռեալիզմի ընդհանուր օրինաչափությունների համատեքստում: Արևմտահայ բանաստեղծների գրական ժառանգության քննությանն է անդրադարձել Վ.Կիրակոսյանը: Ավ.Իսահակյանի գրական ժառանգությանը, գիտական կենսագրությանը, բանաստեղծի ու համաշխարհային գրականության առնչություններն են վերհանվել Ա.Իսահակյանի գիտական աշխատություններում:

Այս աշխատանքների հիման վրա ստեղծվել է «Հայ նոր գրականության պատմություն» հինգհատորյակը (1962-1979 թթ. Խմբագիր՝ Ս. Սարինյան): Հայ նոր գրականության պատմության ուսումնասիրման բնագավառում հաջորդ կարևոր ձեռքբերումը «Հայ քննադատության պատմություն» երկհատորյակն է (Ս. Սարինյան, Վ. Կիրակոսյան, Ա. Ալեքսանյան, Լ. Ասմարյան, Ս. Հարությունյան, Մ. Սաղյան և ուր.):

Առանձնակի ուշադրություն է դարձվել 1910-ական թթ. սկսվող նորագույն գրականությանը և ընթացիկ գրական կյանքին: 1954 թ. հրատարակվել է հայ խորհրդային գրականության տարեգրության առաջին հատորը (1917-1950 թթ.), ապա լույս է տեսել 1951-1975 թթ. ընդգրկող երկրորդ հատորը, ինչպես նաև խորհրդահայ գրականության պատմության երկհատորյակը (1961 թ. 1-ին, 1965 թ. 2-րդ հատորը):

ԳԱԱ համակարգում սփյուռքահայ գրականության պատմությունն ուսումնասիրող բաժին առաջինն ստեղծվել է Գրականության ինստիտուտում 2009 թ.: Բաժինը ներկայումս ձեռնամուխ է եղել երկհատոր «Սփյուռքահայ գրականության հանրագիտարան»-ի ստեղծմանը, որտեղ առանձին բառահողվածներով կներկայացվեն սփյուռքահայ հեղինակները, Սփյուռքի գրական կենտրոնները, միությունները և գրական մամուլը:

Իրականացվել է մի շարք տեսական հիմնահարցերի քննություն, որոնք վերաբերում են ազգային գրականության առանձնահատկություններին՝ համաշխարհային գրականության տեսանկյունից (Ա. Գրիգորյան):

Գրականության ինստի-



տուտն սկզբնավորման տարիներից ձեռնամուխ է եղել հայ դասականների երկերի ակադեմիական բազմահատորյակների հրատարակությանը: Անցնող տասնամյակների ընթացքում լույս են տեսել Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Բաֆֆու, Հ. Թումանյանի (երկու անգամ), Գ. Սունդուկյանի, Հ. Պարոնյանի, Պ. Պոռչյանի, Մուրացանի, Ե. Չարենցի, (որին այնուհետև գումարվեց «Անտիպ և չհավաքված երկեր» հատորը), Ա. Բակունցի, Դ. Դեմիրձյանի երկերի ակադեմիական հրատարակությունները:

Արդեն սկսվել է Ավ. Իսահակյանի երկերի լիակատար հրատարակությունը (14 հատորով, գլխ. խմբ.՝ Ա. Իսահակյան, լույս են տեսել I, II և IV հատորները), Լևոն Շանթի երկերի ժողովածուն (9 հատորով, լույս են տեսել I-VII հատորները), նախապատրաստական փուլում է Լիկոլ Աղբալյանի երկերի հրատարակությունը (5 հատորով):

ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԴՅԱԿՈՅՔԻ ԻԿՄՆԱԿԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒՄ: 1960 թվականից մինչև օրս հայ բանահյուսական մշակույթի իկմնական հետազոտություններն իրականացվել են հետևյալ ուղղություններով՝ բանահավաքչական աշխատանքներ, համահավաք բնագրերի կազմում, «Սասնա ծռերի» պատումների գրառում, ուսումնասիրում և հրատարակում, Հայ բանահյուսության գրառման և հետազոտման պատմություն, բանահյուսության և գեղարվեստական գրականության փոխառնչությունների ուսումնասիրում, բանահյուսական տեքստաբանություն և դրան առնչվող տարբեր խնդիրների ուսումնասիրում, Մեծ եղեռնի ականատես վկաների հուշապատումների և եղեռնին նվիրված թուրքալեզու երգերի հավաքում ու ուսումնասիրում:

Բանահյուսական առանձին ժանրերի գիտական համահավաք բնագրերի կազմման և հետազոտության ուղղությամբ տարված աշխատանքների շնորհիվ կազմվել և հրատարակվել են ավանդական զրույցների (Ա. Ղանալանյան), «Հայ ժողովրդական հանելուկների», «Հայ հմայական և ժողովրդական աղոթքների» (Ս. Հարությունյան), «Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգերի» (Ա. Ղազինյան), «Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգերի» (Ռ. Գրիգորյան), «Հայ ժողովրդական վիպերգերի ու պատմական երգային բանահյուսության» (Գր. Գրիգորյան) գիտական համահավաք բնագրերը:

Հայ առասպելաբանության ոլորտում կատարված հետազոտությունների իկմքի վրա խորացվել և ընդլայնվել են հայոց դիցաբանության հնդեվրոպական և առաջավորասիական ակունքներին, տարածաշրջանի այլթնիկ ավանդությունների թողած ազդեցություններին, հայոց իին դիցարանին վերաբերող ուսումնասիրությունները:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: Տնտեսագիտության ոլորտում հետազոտական աշխատանքներն սկզբնական փուլում իկմնականում վերաբերում էին ձյուղային տնտեսագիտության հարցերին, Հայաստանի տնտեսական պատմությանը և հայ տնտեսագիտական մտքի պատմության խնդիրներին: Հրատարակվել են հայ տնտեսագիտական մտքի պատմության առանձին շրջաններն ընդգրկող աշխատություններ, ուրվագծվել են տնտեսագիտական մտքի իկմնական ուղղությունները (Ս. Չուրաբյան, Ն. Թովմասյան, Մ. Գրիգորյան): 1960-ական թվականներից հետո տնտեսագիտական հետազոտությունների որոնմաների առանցքը դարձել են հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման խնդիրները, լույս են տեսնում բազմաթիվ աշխատություններ՝ նվիրված իկմնական ֆոնդերի վերարտադրությանն ու արդյունավետությանը, գիտատեխնիկական առաջընթացին՝ կառավարմանը և խթանմանը, տնտեսական հաշվարկին (Ա. Առաքելյան, Մ. Քոթանյան, Ռ. Միրզոյան, Լ. Անանյան), կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության գնահատմանը (Բ. Եղիազարյան), տրանսպորտի զարգացմանը (Կ. Խուրշուդյան):

ՀՍՍՀ ԿՎՎ և ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի համատեղ աշխատանքով (գիտ. ղեկ.՝ Ծ. Մարգարյան) կազմվել են հանրապետության առաջին միջձյուղային հաշվեկշիռները, դրանց գիտական ու գործնական արդյունքները՝ ամփոփելով «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության միջձյուղային կապերը» (1970 թ.) մենագրության մեջ: Առաջին անգամ իրականացվել է հանրապետության հողային ֆոնդի տնտեսական գնահատում (Ն. Մանասերյան, Կ. Պոսոշնիկովա, Լ. Աղամյան):

Ինստիտուտի հետազոտական կարևոր ոլորտներից են ժողովրդագրության և զբաղվածության քաղաքականության մշակման, բնակչության և աշխատանքային ռեսուրսների կառավարման և կանխատեսման հարցերը (Վ. Խոջաբեկյան): Մշակվել է ամբողջական աշխատանքի արտադրողականության գնահատման և դրա՝ իրրև արտադրության արդյունավետության ընդհանրական ցուցանիշի կառավարման նոր մեթոդաբանություն (Յու.Սուվարյան): Ծուկայական տնտեսաձևին



անցնելուց հետո հիմնավորվել են հանրապետության ազգային էկոնոմիկայի ստեղծման, վարչահրամայական տնտեսական համակարգից սեփականության բազմաձևության անցման և շուկայական ենթակառուցվածքների կազմավորման տրամաբանությունը և փուլերը, անկախության և ազգապահպանության ռազմավարական ուղղությունները, շուկայական էկոնոմիկայի պետական վերահսկման և կարգավորիչ դերի, քաղաքակիրթ շուկա ձևավորելու անհրաժեշտությունը (Մ. Քոթանյան, Վ. Խոջաբեկյան, Յու. Սուվարյան): Ուսումնասիրվել են հանրապետության գիտատեխնիկական ներուժի զարգացման և օգտագործման, ինովացիոն գործունեության, արտաքին տնտեսական կապերի զարգացման և կատարելագործման (Գ. Խանիկյան, Թ. Թորոսյան, Հ. Ֆահրադյան), Սևանա լճի ավազանի սոցիալտնտեսական զարգացման հիմնական ուղղությունների, էկոլոգատնտեսական հիմնահարցերը (Ռ. Իսախանով):

Հետազոտվել են Հայաստանի հանքային հումքի և հանքարդյունաբերության էկոնոմիկայի առանձին ոլորտներ, մշակվել են առավելապես դեպի տեղական հանքահումքային պաշարների արդյունավետ օգտագործումը վերակողմնորոշելու հնարավոր ուղղությունները, ՀՀ ոչ մետաղական օգտակար հանածոներից մի քանիսի օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնահարցերը (Հ. Ավագյան):

Ներկայումս համակարգված ուսումնասիրությունների առարկա են դարձել հարկային համակարգը, համաշխարհային ֆինանսատնտեսական ձգնաժամի խնդիրները (Վ. Հարությունյան):

Կատարվել են մարդկային

կապիտալի, ապագա մարդկային հասարակության էության բնութագրման ու ձևավորման, գիտության դերի վերաբերյալ հետազոտություններ (Բ.Եղիազարյան): Զարգացման և տնտեսական աճի վերաբերյալ նոր համակարգի մշակման անդադարձ է «Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը» հետազոտությունը (Յու. Սուվարյան, Վ. Հարությունյան, Վ. Սարգսյան, Վ. Խաչատրյան, 2011թ.):

ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ: Հայ փիլիսոփայական միտքն ունի դարավոր ավանդույթներ: Հին շրջանի հայտնի փիլիսոփաների աշխատությունները հայ հոգևոր մշակույթի մասն են կազմում: Հայ փիլիսոփայության պատմության ոլորտում Վ. Զալյանի հետազոտությունները դարձան ծրագրային հետազգ պատմափիլիսոփայական հետազոտությունների համար: Նրա գործը շարունակեցին Ս. Արևշատյանը, Գ. Գրիգորյանը, Ա. Թևոսյանը, Կ. Միրումյանը և ուրիշներ: Ս. Արևշատյանի ջանքերի շնորհիվ հրատարակվեցին միջնադարյան փիլիսոփայական ստեղծագործությունների բազմաթիվ բնագրեր և դրանց թարգմանություններ:

Հայ փիլիսոփայության պատմության ոլորտում հետազոտությունները հնարավորություն տվեցին բացահայտելու ակադեմիկ հայ մտածողների (Եզնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ, Անանիա Ծիրակացի, Գրիգոր Մագիստրոս, Հովհաննես Սարկավազ, Վահրամ Բարունի, Գրիգոր Տաթևացի, Հովհան Որոտնեցի, Սիմեոն Զուղայեցի, Ստեփանոս Լեհացի և ուրիշներ) գաղափարական ժառանգության տեղն ու նշանակությունը հայ փիլիսոփայության և մշակույթի պատմության համա-

տեքստում: Ներկայացվել է հայ փիլիսոփայության պատմության ամբողջական նոր շարադրանք՝ անտիկ շրջանից մինչև XVIII դարը (Գ. Գրիգորյան, Ա. Թևոսյան, Կ. Միրումյան):

Հետազոտություններ են կատարվել նաև փիլիսոփայության ընդհանուր հիմնահարցերի, մասնավորապես, տրամաբանության բնագավառում: Առաջադրվել է բազմատրամաբանության գաղափարը, հատուկ ուշադրություն է նվիրվել ավանդական ձևական տրամաբանության և մաթեմատիկական տրամաբանության հարցերին, ձևակերպվել է լեզվաբանական լրացուցչության սկզբունքը (Գ. Բրուտյան): Գ. Բրուտյանի աշխատություններով ու ջանքերով Հայաստանում հիմնվել է փիլիսոփայական փաստարկման դպրոց՝ գիտության նոր ուղղություն, որը միջազգային լայն ծանաչում է գտել:

Ինստիտուտի հիմնական հետազոտական ուղղություններից է գիտության փիլիսոփայությունը և մեթոդաբանությունը: 1960-70-ական թվականներին Հ. Գևորգյանի աշխատություններով կատարվել է անցում իմացաբանության ավանդական ընդհանուր խնդրակարգից դեպի գիտության փիլիսոփայության ու մեթոդաբանության և տրամաբանության բնագավառ, որը լայն ծանաչում է բերել «Գիտական գիտելիքի տրամաբանական վերլուծության փիլիսոփայական հարցերը» անունով հայկական դպրոցին:

Գեղագիտության բնագավառում ուսումնասիրվել են գեղեցիկի էությանը, արվեստի առարկային, արվեստի առաջացմանը վերաբերող հիմնահարցեր, հատկապես՝ գեղեցիկի օբյեկտիվության չափանիշների և ճշմարտության հետ նրա հարաբերության հարցը (Ա.Քալանթար, Ե.Հակոբջա-



նյան): Հետազոտվել են ազգային գիտակցության գեղագիտական դրսևորումները, որոնց նպատակն էր վեր հանել հայ ազգային գեղարվեստական-գեղագիտական մտածողության առանձնահատկությունները (Յա. Խաչիկյան):

Սոցիալական փիլիսոփայության ոլորտում հետազոտվել են աշխատանքի, տեխնիկայի, գիտության և գիտատեխնիկական առաջընթացի վերաբերյալ հարցեր, բացահայտվել են «պրակտիկա-տեխնիկա-գիտություն» համակարգի ձևավորման և զարգացման կառուցվածքը, գիտության, տեխնիկայի, արտադրության և հասարակական պրակտիկայի հարաբերակցության առանձնահատկությունները տարբեր պատմական ժամանակաշրջաններում (Ս. Թովմասյան, Ա. Էկմալյան):

Նշանակալից արդյունքներ են ստացվել լոկալ քաղաքակրթությունների տեսության, սոցիոլոգիայում նեոպոզիտիվիզմի

հիմնական ուղղությունների, անձի և ապրելակերպի հետազոտություններում (Է. Մարգարյան, Ս. Ալահվերդյան, Ռ. Նավասարդյան, Մ. Հարությունյան):

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ: 1988 թ.՝ Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո, սոցիոլոգիական հետազոտությունների բաժինը մշակել է աղետների սոցիոլոգիան, որպես սոցիոլոգիայի բնագավառում հետազոտությունների նոր ուղղություն (Գ.Պողոսյան), որն առաջինն էր և միակը Խորհրդային Միությունում: Այդ ժամանակակաղեմիական հետազոտություններում սկսել են ձևավորվել նոր գիտական ուղղություններ՝ արտագաղթի և փախստականների սոցիոլոգիան, աղքատության սոցիոլոգիան, ընտանիքի սոցիոլոգիան, երիտասարդության և մանկության սոցիոլոգիան, էթնոսոցիոլոգիան և այլն:

Գիտական կապերի շնորհիվ ինստիտուտի սոցիոլոգները մասնակցում են միգրացիայի, թրաֆիքինգի, ժողովրդավարա-

կան ինստիտուտների զարգացման և հասարակության փոխակերպման հարցերին նվիրված խոշոր միջազգային ծրագրերին:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: Ինստիտուտի պետության և իրավունքի բաժնի հետազոտությունները նվիրվել են իրավունքի պատմության և իրավունքի հուշարձանների, Հայաստանի պետականության, ինչպես նաև իրավունքի ձևավորման տեսական, շրջակա միջավայրի իրավական ապահովման և պաշտպանության հիմնախնդիրներին (Ա. Բեգյան, Ռ. Ավագյան, Վ. Ստեփանյան, Ն. Այվազյան, Գ. Սարգիսով):

90-ական թվականներից հետո առաջին անգամ հայ իրավագիտության պատմության ընթացքում արխիվային նյութերում հայտնաբերված նոր աղբյուրների հիման վրա փորձ է արվել նորովի հետազոտել, գիտականորեն հիմնավորել և գիտական շրջանառության մեջ դնել պառլամենտարիզմի հիմնարար հարցերը, հայ իրավաքաղաքական





մտքի պատմությունը, միջնադարյան Հայաստանի իրավունքի պատմությունը (Ռ. Ավագյան, Գ. Սաֆարյան):

ՃԱՐՏԱՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Այս բնագավառում կարևորագույն նվաճումներից է Գառնիի հեթանոսական տաճարի վերականգնման գիտական հիմնավորումը: Նախագծի հեղինակ Ա.Սահինյանի ղեկավարությամբ 1968-1975 թթ. իրականացվել է տաճարի վերակառուցումը (Հայաստանի պետական մրցանակ): Արվեստի ինստիտուտի, Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական խմբի և Վենետիկի «Հայ մշակույթի ուսումնասիրման կենտրոնի» համագործակցության շնորհիվ 1968-1998 թթ. Միլանում իտալերեն, հայերեն և անգլերեն լեզուներով հրատարակվել են «Հայ ճարտարապետության վավերագրերը» մատենաշարի 23 պրակները, որոնք միջազգային գիտական հանրությանն են ներկայացրել ազգային շինարարական արվեստի գոհարները: Բազմակողմանի ուսումնասիրվել է միջնադարյան հայ ճարտարապետությունը: Գրվել են ինչպես դրա պատմությանը, այնպես էլ քաղաքաշինությանը և քաղաքացիական ճարտարապետությանը նվիրված ընդհանրացնող աշխատություններ (Վ. Հարությունյան, Ս. Մնացականյան, Մ. Հասրաթյան, Ա. Չարյան):

Ճարտարապետության պատմաբանները հայ ճարտարապետության ականավոր ներկայացուցիչներին՝ Թորոս Թորամանյանին, Ալեքսանդր Թամանյանին, Ռաֆայել Իսրայելյանին և այլոց, ոճական տարբեր ուղղություններին, քաղաքաշինությանը, նոր շինանյութերի և շինարարական առաջավոր մեթոդների որոնմանը նվիրված

աշխատություններում ստեղծել են ճարտարապետության պատմությունն ընդհանրացնող աշխատություններ: Այս ուղղությամբ հանգրվանային աշխատանքներից է «Հայկական ճարտարապետության պատմություն» վեցհատորյակը. 1996-2004 թթ. տպագրվել են առաջին երեք հատորները (խմբ.՝ Գ.Տիրացյան, Մ.Հասրաթյան), պատրաստ են հաջորդ գրքերը:

ԿԵՐՊԱՐՎԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: Ստեղծվել են Կիլիկիայի, Գլաձորի, Վասպուրականի, Ղրիմի, Արցախի մանրանկարչական դպրոցներին նվիրված մենագրություններ, ընդլայնվել են միջնադարյան հայ կերպարվեստի ուսումնասիրության շրջանակները, լուսաբանվել նշանավոր մանրանկարիչ ծաղկողների՝ Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի, Հակոբ Ջուղայեցու և այլոց ստեղծագործական ժառանգության յուրահատկությունները: Գիտական ուսումնասիրության նյութ են դարձել հայկական զարդանկարչությունը, որմնանկարչությունը, քանդակագործությունը, խաչքարերը, միջնադարյան հայ ճարտարապետության և կերպարվեստի մի շարք ծյուղերի համադրման հարցերը: Հայ կերպարվեստի պատմական զարգացումն ամբողջացնող կամ նրա առանձին խոշոր շրջափուլերին նվիրված հիմնարար ուսումնասիրություններ են Լ. Դուրյանի, Ն. Ստեփանյանի, Ա. Աղասյանի մենագրությունները, «Հայ կերպարվեստի պատմության ուրվագծեր» (ռուսերեն) կոլեկտիվ աշխատությունը և ազգային ճարտարապետության ու կերպարվեստի զարգացման ողջ ընթացքը ներկայացնող «Հայ արվեստի պատմությունը» (Ա. Աղասյան, Մ. Հասրաթյան, Հ. Հակոբյան և Վ. Ղազարյան, 2009 թ., արժանացել

է Հայաստանի պետական մրցանակի):

Արգասավոր ծանապարհ է անցել **հայ թատերագիտությունը**՝ փաստական նյութի կուտակումից մինչև արվեստագիտական ընդհանրացումներ, մենագրական աշխատություններից մինչև թատրոնի պատմություն ու տեսություն: Համակարգվել և ամբողջացվել է հայ թատրոնի պատմությունը հնադարից մինչև XX դարակեսը (Հ. Հովհաննիսյան, Լ. Հախվերդյան): Առաջադրվել է դրամայի ծագման նոր տեսություն, բացահայտվել են հելլենիզմի հետ առնչությունները: Կազմվել է հայ նոր թատրոնի բազմահատոր ժամանակագրությունը՝ ընդարձակ մատենագիտությամբ (Բ. Հարությունյան): Գեղագիտորեն իմաստավորվել է հայ նոր թատրոնի պատմությունը եվրոպական թատերական մշակույթի համատեքստում: Մանրամասնորեն լուսաբանվել են արևմտահայ թատրոնի պատմությանն առնչվող հանգուցային հարցերը (Գ.Ստեփանյան):

Որոշակի առաջընթաց է ապրել նաև **կինոգիտությունը**՝ հայ արվեստագիտության ամենաերիտասարդ բնագավառը: Հրատարակված աշխատություններում առանձին ուշադրություն է հատկացվել ինչպես հայ կինոյի ականավոր դեմքերի ստեղծագործության, այնպես էլ ազգային կինոարվեստի պատմական զարգացման ուսումնասիրությանը:

Հայ երաժշտագիտության զարգացումն ընթացել է երեք հիմնական ուղիներով՝ հայ երաժշտության պատմություն ու տեսություն, հայ դասականների ստեղծագործական ժառանգության տպագրության նախապատրաստում ու հրատարակում, երաժշտական ֆոլկլորագիտություն:



ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱԼԲԵՐՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն


ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը (ԳԿՄԿ) Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի 38 գիտական կազմակերպություններից և կենտրոններից մեկն է: Այն հիմնադրվել է 1997 թ. ԳԱԱ նախագահության կազմում գործող ասպիրանտուրայի բաժնի հիման վրա: Կենտրոնի հիմնական խնդիրը գիտամանկավարժական կադրերի պատրաստումն է, որն իրականացվում է ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի և հայցորդության միջոցով: Հետազոտությունների իրականացման համար որպես բազա ծառայում են Ակադեմիայի համակարգի գիտահետազոտական ինստիտուտներն

ու կենտրոնները: Ընդհանուր պատրաստվածության կրթամասով նախատեսված պարտադիր և ընտրովի դասընթացները, ինչպես նաև որակավորման քննությունները կազմակերպվում և իրականացվում են Գիտակրթական միջազգային կենտրոնում: 1997-2012 թթ. ընթացքում թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ են պատրաստել և պաշտպանել 918 ասպիրանտ և հայցորդ և 163 դոկտորանտ:

Հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ գիտական ներուժը, տեխնիկական և տարածքային հնարավորությունները՝ 2004 թ. Կենտրոնն ընդլայնել է իր գործունեությունը՝

կազմակերպելով ուսուցում նաև մագիստրոսական ծրագրերով՝ մասնագիտական ուսուցման միջազգային չափորոշիչների համապատասխան: ՀՀ ԳԱԱ համակարգում մագիստրոսական կրթական ծրագրերով ուսուցման կազմակերպումը նպատակ է հետապնդում արագացնելու անցումը կրթությունից դեպի գիտական գործունեություն, որին մեծապես նպաստում են անմիջապես ակադեմիական ինստիտուտներում գործող մասնագիտական ամբիոնները: Մագիստրոսների պատրաստումն ակադեմիական միջավայրում հնարավորություն է տալիս մագիստրանտներին արագորեն ինտեգրվելու գիտական հասարակայնությանը և ձեռք բերելու գիտական մտածողություն: Կրթության և գիտության մերձեցմանն ուղղված այս քայլերը նպաստում են ակադեմիական համակարգի գիտական կադրերի երիտասարդացմանը:

Ժամանակակից կրթության պահանջներին համապատասխան՝ կրթության որակի բարձրացման նպատակով Կենտրոնի նյութատեխնիկական բազան մշտապես համալրվում է համակարգչային և այլ անհրաժեշտ տեխնիկական միջոցներով: Կրթական ծրագրերի իրագործմանն օժանդակում են նաև ակա-





ղեմիական ինստիտուտներն իրենց ժամանակակից լաբորատոր սարքավորումներով: Իսկ Հայաստանի ամենահարուստ գիտական գրադարաններից մեկը՝ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը, որը պարբերաբար համալրվում է մասնագիտական արդի գրականությամբ, մշտապես ԳԿՄԿ ուսանողների և ասպիրանտների տրամադրության տակ է: Ուսումնակազմակերպչական գործընթացը համակարգելու նպատակով Կենտրոնում ստեղծվել է ուսումնական գործընթացի կառավարման էլեկտրոնային համակարգ:

Հաշվի առնելով տարածաշրջանում կրթության պահանջարկը՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն կազմակերպում է նաև օտարերկրյա և սփյուռքահայ ուսանողների ուսուցում ասպիրանտուրայում և մագիստրատուրայում:

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնն իր բարձրորակ մանկավարժական և գիտական կադրերով կարևոր դեր է կատարում հանրապետության տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում: Կարձ ժամանակահատված է անցել մագիստրատուրայի հիմնադրման օրից, բայց այն արդեն կայացած կառույց է, անմիջականորեն մասնակցում է ԳԱԱ համակարգի կազմակերպությունները երիտասարդ կադրերով համալրելու կարևոր գործին:

2004 թ. իր գործունեությունը 3 մասնագիտություններով սկսած ԳԿՄԿ մագիստրատուրան այսօր արդեն վերածվել է համբավվոր ուսումնական հաստատության, որտեղ կրթությունը (առկա և հեռական ուսուցմամբ) իրականացվում է հետևյալ 25 մասնագիտություններով.

1997-2012 թթ. ընթացքում Կենտրոնն արձանագրել է բազմաթիվ հաջողություններ և ունեցել էական առաջընթաց:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն համագործակցում է ՀՀ բուհերի, արտասահմանյան մի շարք հայտնի գիտահետազոտական կենտրոնների և ուսումնական հաստատությունների հետ: Կենտրոնի դասախոսական կազմը պարբերաբար գործուղվում է վերապատրաստման արտերկրի առաջատար գիտաուսումնական հաստատություններ, համալրվում է հանրապետության լավագույն մասնագետներով, ինչպես նաև արտերկրում վերապատրաստված դասախոսներով:

Որոշ մասնագիտությունների

գծով պայմանավորվածություններ են ձեռք բերվում արտերկրում ուսանողների վերապատրաստումը կազմակերպելու ուղղությամբ:

Կենտրոնում գործում է նաև հեռուսուցման հարթակը, որը հնարավորություն է տալիս դասախոսներին առավել արդիական մեթոդներով մատուցել իրենց դասախոսությունները, բարձրագույն կրթությանը հաղորդել ձկունություն, բարձրացնել մասնագիտական պատրաստվածության որակը: Աշխատանքներ են տարվում նաև առգիծ (on-line) ռեժիմով դասախոսությունների և գիտաժողովների կազմակերպման ուղղությամբ՝ ներգրավելով արտասահմանյան գիտահետազոտական և ուսում-


- Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա
- Քաղաքագիտություն (առկա, հեռակա)
- Տնտեսագիտության տեսություն
- Շուկայաբանություն
- Կառավարում (առկա, հեռակա)
- Ֆինանսներ (առկա, հեռակա)
- Դեղագործական քիմիա
- Պատմություն
- Իրավագիտություն (առկա, հեռակա)
- Լրագրություն (առկա, հեռակա)
- Հայոց լեզու և գրականություն
- Կենսատեխնոլոգիա
- Արևելագիտություն
- Հոգեբանություն (առկա, հեռակա)
- Կիրառական մաթեմատիկա
- Ռադիոտեխնիկա և կապ
- Մանկավարժություն և սոցիոլոգիա (առկա, հեռակա)
- Միջազգային հարաբերություններ
- Բնապահպանություն և բնօգտագործում
- Տուրիզմի կառավարում (հեռակա)
- Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ (հեռակա)
- Բիզնես կառավարում (առկա, հեռակա)
- Մոլեկուլային և բջջային կենսաբանություն
- Երկրաբանություն
- Նեյրոֆիզիոլոգիա և տոքսիոլոգիա

նական հանրահայտ կենտրոնների ծանաչված մասնագետների:

Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմը ակտիվորեն մասնակցում է նաև Կենտրոնում տարվող գիտահետազոտական աշխատանքներին: Նրանց ուժերով հրատարակվել են բազմաթիվ մենագրություններ, ուսումնաստանողական ձեռնարկներ և գիտական հոդվածներ:

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի որդեգրած ուղին խոստումնալից հորիզոններ է բացում գիտության և կրթության մերձեցման համար:

Մագիստրանտների բաշխումը՝ ըստ տարիների



ՀՀ ԳԱԱ ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՅՈՒՐԻ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բա-
ժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

Ֆիզիկան Հայաստանում. երեկ և այսօր

Հայաստանում գիտության, այդ թվում նաև ֆիզիկայի զարգացմանը նպաստող որոշիչ խթանը 1919 թ. Երևանի պետական համալսարանի հիմնադրումն էր:

Սկզբում տեխնիկական, 1933 թ-ից հետո ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը դարձան այն կենտրոնները, որտեղ ծավալվեցին ֆիզիկայի ոլորտում գիտական հետազոտությունները:

30-ականների կեսին Խորհրդային Հայաստանում ստեղծվել էին մի շարք գիտահետազոտական ինստիտուտներ, որոնց աշխատանքները համակարգելու համար 1935 թ. ստեղծվեց ԽՍՀՄ ԳԱ հայաստանյան մասնաճյուղը՝ Արմֆանը, որտեղ հաջողությամբ կատարվում էին հետազոտություններ ծծրիտ, բնական, կիրառական և հումանիտար գիտությունների ոլորտներում:



Ա. Ալիխանովը և Ա. Ալիխանյանը



Ակադեմիկոս Արտեմ Ալիխանյան



Ակադեմիկոս Արրահամ Ալիխանով

Փաստորեն, հասունացել էր ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի ստեղծման հարցը: 1943 թ. 23 հիմնադիր-ակադեմիկոսների շարքում էին ֆիզիկոսներ Արամ Ալիխանովը, նրա եղբայրը՝ Արտեմ Ալիխանյանը և աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը: Նրանցից ոչ մեկը դեռ քառասուն տարին չէր բոլորել, սակայն համաշխարհային գիտական հանրության



կողմից երեքն էլ ձանաչում ստացած գիտնականներ էին:

1919-1942 թթ. կարելի է համարել Հայաստանում ֆիզիկայի զարգացման առաջին՝ կայացման փուլ: ՀԽՍՀ ԳԱ կազ-




Ալկաղեմիկոս Գրիգոր Նարեկցյան

մում հիմնադրվել է ֆիզիկամաթեմատիկական ինստիտուտը՝ Արտեմ Ալիխանյանի գլխավորությամբ, որն իր եղբոր՝ Աբրահամ Ալիխանովի հետ Մոսկվայից տեղափոխվել էր Երևան՝ տիեզերական ճառագայթների ֆիզիկայի բնագավառում հետազոտություններ իրականացնելու համար: Սրանով սկսվում է Հայաստանում ժամանակակից ֆիզիկայի՝ որպես գիտության բնագավառի զարգացման երկրորդ փուլը: 1946 թ. Ա. Ալիխանյանի նախաձեռնությամբ ֆիզիկամաթեմատիկական ինստիտուտից առանձնացել է ՀԽՍՀ ԳԱ Ֆիզիկայի ինստիտուտը (հիմնադիր տնօրեն՝ Ա. Ալիխանյան, 1962թ.՝ ԽՍՀՄ ատոմային էներգիայի օգտագործման պետական կոմիտեի Երևանի ֆիզիկայի ինստիտուտ՝ եր.Ֆի, 2011 թ.՝ Ա. Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա

(Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) հիմնադրամ): 1940-ական թվականների վերջին Արագած լեռան լանջին արդեն մշտապես գործում էր Ֆիզիկայի ինստիտուտի բարձունքային կայանը, որտեղ տիեզերական ճառագայթների բնագավառում կատարված հետազոտությունները ձանաչում են բերել ինստիտուտի երիտասարդ աշխատակազմին: Տիեզերական ճառագայթների ֆիզիկայի հետազոտությունները 1950-ական թվականներին զգալիորեն խթանել են տեսական ֆիզիկայի զարգացումը հանրապետությունում: Հայ ֆիզիկոսները դարձան ձանաչված առաջատարներ անցումային ճառագայթման հետազոտությունների բնագավառում, որը կարևոր կիրառական նշանակություն ունի բարձր էներգիաների ֆիզիկայի համար: Ստացված արդյունքներն ամփոփվել են Մ. Տեր-Միքայելյանի «Միջավայրի ազդեցությունն էլեկտրամագնիսական պրոցեսների վրա՝ բարձր էներգիաների պայմաններում» (ռուս., անգլ.՝ 1969 թ., ԱՄՆ) և Գ. Նարեկցյանի և Յան Շիի «Ռենտգենյան անցումային ճառագայթում» (ռուս., 1983թ.) մենագրություններում:

ՀԽՍՀ ԳԱ հիմնադրումից հետո ստեղծվել է Գիտությունների ակադեմիայի Բյուրականի աստղադիտարանը (1946 թ.): Առաջին դիտումները Բյուրականում կատարվել են բաց երկնքի տակ տեղակայված փոքր աստղադիտակներով, իսկ արդյունքները մշակվել են Երևանի աստղադիտարանում: Բյուրականի աստղադիտարանի պաշտոնական բացումը տեղի է ունեցել 1956 թ., և հետազոտական աշխատանքները շարունակվել են Բյուրականում:

1960 թ. տարրական մասնիկների և բարձր էներգիաների ֆիզիկային զուգընթաց՝ Հայաստանում առաջացել են հետազոտությունների նոր ուղղություններ, ստեղծվել նոր հիմնարկներ: Որոշակիորեն կարելի է ասել, որ 1960 թ. սկսվել է Հայաստանում ֆիզիկայի երրորդ՝ բուռն զարգացման փուլը, երբ հայ ֆիզիկոսները և աստղագետները մի շարք փայլուն գիտական արդյունքներ ներկայացրեցին աշխարհին: Հենց այդ հանգամանքի շնորհիվ էր, որ Հայաստանում մեկը մյուսի հետևից բացվեցին ֆիզիկայի բնագավառում գիտահետազոտական



Ալկաղեմիկոս Վիկտոր Համբարձումյան



Ալկաղեմիկոս Միքայել Տեր-Միքայելյան



հիմնարկներ: 1960 թ. հիմնադրվել է ԳԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը (ՌՖԷԻ, հիմնադիր տնօրեն՝ Էմիլ Միրզաբեկյան), Կենտրոնական ԳՀ ֆիզիկատեխնիկական լաբորատորիան (ԿԳՀՖՏԼ)՝ Նորայր Քոչարյանի գլխավորությամբ: Վերջինիս հիման վրա 1968 թ. ստեղծվել է ՀԽՍՀ ԳԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը, որի հիմնական գիտական ուղղությունը լազերային ֆիզիկան է (հիմնադիր տնօրեն՝ Միքայել Տեր-Միքայելյան):

Լազերի ստեղծումն իր կարևոր տեղն ունի XX դարի գիտության և տեխնիկայի առավել ակնհայտ նվաճումների շարքում: Առաջին լազերն ստեղծվել է 1960 թ., և կարճ ժամանակ անց Հայաստանում այդ ուղղությամբ մեկնարկեցին լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքը խորհրդային առաջին արդյունաբերական լազերն էր: Կարճ ժամանակում ստեղծվեցին գիտական և տեխնիկական խնդիրների լուծման համար նախատեսված տարբեր լազերներ ու լազերային սարքեր: Լազերային ֆիզիկան ու տեխնիկան ընդամենը կեսդարյա պատմություն ունեն, սակայն լազերները գրավել են կայուն դիրքեր տնտեսության տարբեր ոլորտներում:

1980 թ. ստեղծվել է ՀԽՍՀ ԳԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների բաժինը, որը 1984 թ. դարձել է ինքնուրույն ինստիտուտ (հիմնադիր տնօրեն՝ Ալպիկ Մկրտչյան):

Հայաստանի գիտական կյանքում կարևոր իրադարձություն էր 1967 թ. ԵրՖԻ-ում 6 ԳԷՎ էներգիայով էլեկտրոնային արագարարի գործարկումը:

ԵՊՀ-ում, գիտական կադրերի պատրաստման նպատակով, տարբեր տարիների բացվել են միջուկային ֆիզիկայի (վարիչ՝

Ա. Ալիխանով), աստղաֆիզիկայի, տեսական ֆիզիկայի, միջուկի և տարրական մասնիկների ֆիզիկայի (նախկինում՝ միջուկային ֆիզիկայի ամբիոն), օպտիկայի, պինդ մարմնի ֆիզիկայի, մոլեկուլային ֆիզիկայի և կենսաֆիզիկայի, բյուրեղների աճի և քվանտային էլեկտրոնիկայի մասնագիտական ամբիոններ: Ստեղծվել են կիսահաղորդչային նյութերի, ճառագայթային ֆիզիկայի, պինդ մարմնի ֆիզիկայի պրոբլեմային լաբորատորիաները:

1975 թ. կազմակերպվել է ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետը, որի կազմում գործում են կիսահաղորդչների և դիէլեկտրիկների ֆիզիկայի, ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի, քվանտային ռադիոֆիզիկայի և

գերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկայի ամբիոնները: Ես հատուկ նշում են ամբիոնների անվանումները, որպեսզի երևա, թե որքան լայն ծակատով է իրականացվել կադրերի պատրաստումը և ինչ ուղղություններով են տարվել գիտական աշխատանքները:

Հաշվի առնելով ֆիզիկայի կիրառական թեքումով մասնագետների պահանջարկը՝ 2002 թ. Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանում ստեղծվել է ֆիզիկա-տեխնիկական ֆակուլտետ:

Մինչև 2006 թ. ֆիզիկայի բնագավառի ինստիտուտներն ընդգրկվել են տարբեր բաժանմունքներում: 2006 թ. ՀՀ ԳԱԱ նախագահ, Ռ. Մարտիրոսյանի նախաձեռնությամբ ստեղծվել է

- Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանը,
- Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը,
- Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը,
- Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտը,
- «Գալակտիկա» ՓԲ ընկերությունը:

Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքը, որի կազմում ընդգրկվել են՝

Այսպիսով՝ ներկայումս ֆիզիկական գիտությունների (այդ թվում՝ նաև աստղաֆիզիկայի) բնագավառում ձևավորվել է նվաճումների և հետազոտությունների լայն ծակատ, ինչը վկայում է այն մասին, որ Հայաստանը լրջորեն ներգրավվել է արդի գիտատեխնիկական հեղափոխության մեջ:

Հայաստանում ամենազարգացած գիտական ուղղությունները և գիտական կոլեկտիվների ներդրումներն այդ ուղղություններում. մասնագետների կարծիքը

Բաժանմունքը դիմել էր ֆիզիկայի ոլորտում աշխատող առաջատար գիտնականներին՝ առաջարկելով պատասխանել հետևյալ հարցերին.

- 1) Ֆիզիկայի բնագավառի ուղղություններից որ երեքը կնշեիք որպես ամենազարգացածը Հայաստանում (հերթականությունը նշել՝ ըստ կարևորության):
- 2) Հակիրճ ձևակերպեք Ձեր դեկավարած աշխատակազմի ներդրումը կոնկրետ ուղղության մեջ:



Պետք է նշել, որ, ցավոք, ոչ բոլորն են արձագանքել մեր առաջարկին: Ստորև ներկայացված են ստացված հեղինակային բոլոր նյութերը (առանց խմբագրման):

Դավիթ Սեդրակյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Երևանի պետական համալսարան

- *Տեսական ֆիզիկա*
- 1) - *Տեսական աստղաֆիզիկա*
- *Քվանտային տեխնոլոգիաների ֆիզիկա*



2) Տեսական աստղաֆիզիկա

Գերխիտ տիեզերական մարմինների՝ սպիտակ թզուկների և նեյտրոնային աստղերի ֆիզիկական առանձնահատկությունների ուսումնասիրություն հարաբերական ընդհանուր տեսության սահմաններում.

1. Առաջարկվել են նեյտրոնային աստղերում մագնիսական դաշտերի գեներացման տարբեր մեխանիզմներ: Ցույց է տրվել, որ առաջացած դաշտերն ունեն պոլոիդալ և թորոիդալ բաղադրիչներ, ընդ որում գեներացվող դաշտերը կարող են հասնել 10^{12} - 10^{14} Գ:


2. Բացատրվել են Vela բաբախիչի անկյունային արագության թռիչքները և հետթռիչքային ռելաքսացիան: Տեսական արդյունքները համեմատվել են դիտումների հետ, և արձանագրվել է բավարար համընկնում: Փաստորեն լուծվել է ռելաքսացիայի հակադարձ խնդիրը, որը պատկանում է ոչ կոռեկտ խնդիրների շարքին:

3. Առաջարկվել է բաբախիչների ռադիոձառագայթման նոր մեխանիզմ, որի համաձայն պտտման էներգիան վերածվում է քվանտային մրրիկներով պայմանավորված մագնիսական էներգիայի, որն այնուհետև անջատվում է՝ աստղի մակերևույթին առաջացնելով էլեկտրական հոսանքներ: Այդ հոսանքները զբաղեցնում են աստղի մակերևույթի որոշակի տիրույթ, որը և որպես ալեցիր ձառագայթում է ռադիոալիքներ: Նեյտրոնային աստղի պտույտի հետևանքով այդ ձառագայթումը դիտվում է պարբերական ռադիոազդանշանների տեսքով: Դա է պատճառը, որ պտտվող նեյտրոնային աստղերն անվանում են բաբախիչներ:

Քվանտային տեխնոլոգիաների ֆիզիկա

1. Քվանտային տեսության շրջանակներում ուսումնասիրվել են մասնիկների ցրման խնդիրները միաչափ և քվադրիմիաչափ պոտենցիալների վրա: Առաջարկվել է նոր մեթոդ այդ խնդիրների լուծման համար: Արդյունքներն ընդհանրացվել են էլեկտրամագնիսական ալիքների համար: Առաջարկված մեթոդները կիրառվել են կիսահաղորդչային նանոհամակարգերի ուսումնասիրություններում: Ստացվող որոշ արդյունքներ համեմատվել են մեր խմբում կատարված փորձարարական արդյունքների հետ:

2. Ուսումնասիրվել են իմպուլսի պահպանման օրենքի կիրառելիության առանձնահատկություններն «ատոմ-ֆոտոն» փոխազդեցության պրոցեսում: Ցույց է տրվել, օրինակ, որ ֆոտոնի կլանման և ձառագայթման ընթացքում էներգիական մի մակարդակից մյուսն անցած իմպուլսի մեծությունն էապես որոշվում է ատոմի ներքին և արտաքին ազատության աստիճանների քվանտային խճճվածության աստիճանով և ընդհանուր դեպքում չի համընկնում ֆոտոնի իմպուլսի մեծության հետ: Հաշվարկվել է բոզե-այնշտայնյան կոնդենստի կոհերենտության պարամետրի կախումը ջերմաստիճանից, և կատարվել է համեմատություն առկա փորձարարական արդյունքների հետ:





Վարդան Սահակյան, Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ): Նյուլթըր ներկայացնում է ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ֆելիքս Ահարոնյանի (աջ նկարը) ղեկավարած խումբը


- 1) - *Տարրական մասնիկների և բարձր էներգիաների ֆիզիկա (տեսական և փորձարարական)*
- *Աստղաֆիզիկա և տիեզերական ճառագայթների ֆիզիկա*
- *Լազերային ֆիզիկա*

2) Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ, ԵրՖԻ) գերբարձր էներգիաների գամմա-աստղաֆիզիկայի խմբի հետազոտությունները վերաբերվում են արդի ֆիզիկայի ամենաարագ զարգացող բնագավառներից մեկին՝ բարձր էներգիաների գամմա-աստղաֆիզիկային: Բնագավառի հիմնական նպատակը տիեզերքում ոչ ջերմային երևույթների ուսումնասիրությունն է, այն է՝ բարձր էներգիաների մասնիկների առաջացումն ու տարածումը տիեզերքում:

Մեր հանրապետությունում բարձր էներգիաների գամմա-աստղաֆիզիկայի բնագավառում ուսումնասիրություններ կատարվում են 1980-ական թվականների սկզբներից, երբ ԵրՖԻ-ում ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ֆ. Ահարոնյանի ղեկավարությամբ ձևավորվեց խումբ, որն իրականացնում էր հետազոտություններ գամմա-բոնկումների գրանցման գիտական սարքավորումների ստեղծման, տեսական աստղաֆիզիկայի և սկզբնական գամմա-քվանտների գրանցման չերենկովյան մեթոդի կիրառության հնարավորությունների ուսումնասիրման ուղղություններով:

Ուսումնասիրությունների արդյունքում, խումբը, աշխարհում առաջին անգամ՝ 1985 թ. նախագծել և սկսել է կառուցել 5 պատկերային մթնոլորտային չերենկովյան դիտակներից (ՊՄՉԴ) բաղկացած համակարգ՝ ԵրՖԻ Նոր Ամբերդի կայանի տարածքում տեղադրելու նպատակով: Համակարգը հնարավորություն է տալիս մթնոլորտային հեղեղը գրանցելու միաժամանակ մի քանի ՊՄՉԴ-ների օգնությամբ («տարածադիտում») և համադրելու տարբեր դիտակներով ստացված տվյալները. արդյունքում որակապես բարձրանում է գամմա-հոսքերի գրանցման արդյունավետությունը: ԵրՖԻ-ում մշակված նոր մեթոդիկական և գիտական ծրագիրը (մթնոլորտային հեղեղների գրանցման չերենկովյան «տարածադիտական» մեթոդը) իրականացվել է HEGRA (High Energy Gamma-Ray Astronomy) միջազգային համագործակցության շրջանակներում, հիմք ծառայելով բնագավառի նոր սերդի բոլոր գիտափորձերի համար (H.E.S.S. - High Energy Stereoscopic System, MAGIC - Major Atmospheric Gamma-ray Imaging Cherenkov Telescopes, VERITAS - Very Energetic Radiation Imaging Telescope Array System, CTA - Cherenkov Telescope Array): ԵրՖԻ խումբը HEGRA և H.E.S.S. համագործակցությունների հիմնադիր անդամ է և CTA նախագծի անդամ:

HEGRA և H.E.S.S. համագործակցությունների շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքում գրանցվել են բարձր էներգիաների գամմա-քվանտների հոսքեր տարբեր դասերի պատկանող աստղաֆիզիկական աղբյուրներից, վերականգնվել են դրանց դիֆերենցիալ էներգիական սպեկտրները և առաջարկվել են այդ





սպեկտրների տեսական մեկնաբանություններ, այսինքն՝ այն ֆիզիկական մեխանիզմները, որոնք գործում են աղբյուրներում և որոնք կարող են ապահովել գրանցված հոսքերը:

H.E.S.S.-ի ստացած արդյունքներից նշենք միայն երկուսը: Աշխարհում առաջին անգամ գրանցվել է աստղաֆիզիկական աղբյուրի՝ RX J1713.7-3946 գերնոր աստղի մնացորդի ձևաբանական պատկերը գամմա-ձա-

ռազայթների ՏէՎ էներգիաների տիրույթում: Պատկերի համադրումն ավելի ցածր տիրույթում ստացված արդյունքների հետ ցույց է տալիս, որ գերնոր աստղերի մնացորդներում մասնիկները կարող են արագանալ մինչև 100 ՏէՎ-ից բարձր էներգիաներ, այսինքն՝ փորձարարական եղանակով ցույց է տրվել, որ այդպիսի օբյեկտներն, իրոք, կարող են գալակտիկական տիեզերական ճառագայթների աղբյուրներ լի-

նել: Այս արդյունքը շատ կարևոր քայլ է շուրջ 100-ամյա վաղեմություն ունեցող այնպիսի խնդրի լուծման ուղղությամբ, ինչպիսին տիեզերական ճառագայթների ծագման հարցն է: Կամ, օրինակ, Ծիր Կաթինում հայտնաբերվել են բարձր էներգիաների գամմա-քվանտների 8 նոր աղբյուրներ, որոնցից առնվազն 2-ը հայտնի չեն ռադիոտիրույթում:

Յուրի Չիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Գիտությունների ազգային ակադեմիա, Երևանի պետական համալսարան





- 1) - *Լազերային ֆիզիկա*
- *Աստղաֆիզիկա, բարձր էներգիաների աստղաֆիզիկա*
- *Կոնդենսացված միջավայրերի ֆիզիկա*

2) *Ինչպես ժամանակին նկատել է ակադեմիկոս Ա. Ալեքսանդրովը՝ «այսօր բոլոր երեխաները գիտեն լազեր բառը»: Իսկ ի՞նչ է լազերը: Ինչո՞վ է այն հետաքրքիր ու օգտակար: Լազերային գիտության- քվանտային էլեկտրոնիկայի հիմնադիրներից մեկը՝ ակադեմիկոս Ն. Բասովն այսպես է պատասխանել այդ հարցին. «Լազերը մի սարք է, որտեղ էներգիան, օրինակ՝ ջերմային, քիմիական, էլեկտրական, փոխակերպվում է էլեկտրամագնիսական դաշտի-լազերային փնջի: Նման փոխակերպման ընթացքում էներգիայի մի մասն անխուսափելիորեն կորչում է, բայց կարևորն այն է, որ արդյունքում ստացվող լազերային էներգիան անհամեմատ բարձր որակ ունի: Լազերային էներգիայի որակը պայմանավորված է բարձր կոնցենտրացումով և մեծ հեռավորություններ փոխանցման հնարավորությամբ: Լազերային փունջը կարելի է կիզակետել աննշան՝ լույսի ալիքի երկարության չափերով տիրույթում ու ստանալ էներգիայի խտություն, որը գերազանցում է միջուկային պայթյունի էներգիայի խտությունը: Լազերային ճառագայթման օգնությամբ արդեն իսկ հաջողվել է հասնել ջերմաստիճանի, ձնշման ու մագնիսական դաշտի լարվածության մեծագույն արժեքների: Վերջապես, լազերային փունջը տեղեկատվության ամենաուսակ կրիչն է, ինչպես նաև փոխանցման ու մշակման միջոցը»:*

Պարզվեց, որ լազերը շատ ավելի հետաքրքիր սարք է, քան ֆանտաստ գրողների երևակայությամբ ծնված «հիպերբոլոիդը» կամ «ջերմային ճառագայթի գեներատորը», որոնք ըստ էության նախատեսված էին լոկ ոչնչացման համար: Իրականությունը երևակայությունից ավելի վառ ու հարուստ գտնվեց: Մեր օրերում լազերները հաջողությամբ աշխատում են արդյունաբերության ամենատարբեր բնագավառներում, լուծելով բազմազան խնդիրներ: Լազերային ճառագայթով ձևում են գործվածքներ ու կտրում պողպատե թիթեղներ, զոդում ավտոմեքենաների թափքեր և ռադիոէլեկտրոնային սարքավորման մանրագույն տարրեր: Լազերային ճառագայթը դարձել է զարմանալի հատկություններով օժտված վիրաբուժական հատիչ: Լազերները լայնորեն կիրառվում են ժամանակակից հսկող ու չափիչ սարքերում, հաշվողական ու կապի համա-





կարգերում: Լազերներով արագ ու հուսալիորեն վերահսկվում է մթնոլորտի աղտոտվածությունը, ի հայտ են բերվում տարբեր մեխանիզմների տարրերի առավել լարված հատվածներն ու որոշվում դրանց ներքին արատները: Լազերային փունջը դարձել է շինարարների, քարտեզագրողների, հնէաբանների, քրեագետների հուսալի օգնականը: Անընդհատ ընդլայնվում են լազերների կիրառման ոլորտները գիտական հետազոտություններում:

Լազերային տեխնոլոգիաների յուրացումն էապես բարձրացնում է ժամանակակից արդյունաբերության արդյունավետությունը: Այդ տեխնոլոգիաների շնորհիվ հնարավոր է դառնում արտադրական պրոցեսների ամբողջական ավտոմատացումը: Կարելի է պնդել, որ լազերային տեխնոլոգիաների ներդրումն ու կատարելագործումը կրեթի ժամանակակից արտադրության պատկերի որակական փոփոխման: Մեծ ու տպավորիչ են լազերային տեխնիկայի այսօրվա նվաճումները: Սակայն վաղվա օրն ավելի վիթխարի նվաճումներ է խոստանում: Լազերների հետ են կապում նոր ակնկալիքներ՝ սկսած տարածական կինոյից մինչև գլոբալ խնդիրներ. տեղեկատվության հե-

ռահար պաշտպանված փոխանցում, ֆոտոսինթեզի գաղտնիքների բացահայտում, տարրերի տրանսմուտացիա, ղեկավարվող ջերմամիջուկային ռեակցիա:

Լազերների ստեղծմամբ լույսի և նյութի փոխազդեցության ֆիզիկայում առաջացած ուղղություններից մեկի՝ հեղուկ բյուրեղների (ՀԲ) ոչ գծային օպտիկայի բնագավառում հետազոտությունները նախաձեռնվել են 1972 թ. ԵՊՀ իմ ղեկավարած օպտիկայի ամբիոնում: ՀԲ-ում երկրորդ հարմոնիկի առաջացման ուսումնասիրությամբ հնարավոր է դարձել տեղեկություն ստանալ դրանց մոլեկուլների կառուցվածքի մասին և շարժընթացի ծավալային բնույթը բացատրել ֆլեքսոէլեկտրական երևույթով: Մշակվել է ՀԲ քառալիքային կոհերենտ սպեկտրադիտման մեթոդը, որի միջոցով ցուցադրվել են կարգավորվածության պարամետրի տեղային չափումների, նրա բաշխման բարձր կարգի մոմենտների և ընկալունակության թենզորի բաղադրիչների որոշման հնարավորությունը: Ըստ լուսային դաշտի լարվածության՝ 3-րդ կարգի երևույթների ուսումնասիրությունը հանգեցրել է ՀԲ-ում լույսով մակածված ֆազային անցումների գոյության գաղափարին: Առաջին անգամ

ֆազային անցման շրջակայքում դիտվել են գլանային դոմեններ: Ցույց է տրվել, որ ՀԲ-ի մատրիցում ներկանյութի մոլեկուլների առկայությունն առաջացնում է նոր բնույթի անկայունություններ, երբ հնարավոր է դիտել միաժամանակ երկու տեսակի ֆազային անցումներ՝ ջերմադինամիկական (հավասարակշիռ) և ճառագայթային (անհավասարակշիռ), որոնք էապես ազդում են մեկը մյուսի ընթացքի վրա: Արտածվել է ջերմադինամիկական ֆազային անցման շրջակայքում լազերային գեներացման շեմի բանաձև: ՀԲ-ում հայտնաբերվել են ջերմամագական, գրավիտացիոն և ծավալային ընդարձակման օպտիկական ոչ գծայնության նոր մեխանիզմներ (Յու. Զիլինգարյան, Ռ. Ալավերդյան, Ռ. Հակոբյան): Հայտնաբերվել է օպտիկական երկկայունության երևույթը՝ նեմատիկ ՀԲ-ի մոլեկուլների շեմային վերակողմնորոշման ժամանակ: Հրատարակվել է ՀԲ-ի ոչ գծային օպտիկայի վերաբերյալ աշխարհում առաջին մենագրությունը (Ս. Առաքելյան, Յու. Զիլինգարյան, «Հեղուկ բյուրեղների ոչ գծային օպտիկա», ռուս., Մոսկվա, 1984):




Արամ Պապոյան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ

- 1) - *Լազերային ֆիզիկա*
- *Բարձր էներգիաների ֆիզիկա*
- *Աստղաֆիզիկա*




2) ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի (ՖՀԻ) հիմնական գիտական ուղղությունն ստեղծման օրից (1968 թ.) լազերային ֆիզիկան է: Արդեն գործունեության սկզբնական շրջանում ակադեմիկոս Մ. Տեր-Միքայելյանի ղեկավարությամբ լայնածավալ փորձարարական և տեսական հետազոտություններ են ծավալվել լազերային ճառագայթման գեներացման ու փոխակերպման, լազերային բյուրեղների ստեղծման, ոչ գծային օպտիկայի, լազերային ճառագայթման և նյութի ռեզոնանսային փոխազդեցության, մթնոլորտում լազերային ճառագայթման տարածման ուղղություններով: ՖՀԻ-ում կատարված հետազոտությունները լայն ծանաչում են ստացել աշխարհում, իսկ կիրառական մշակումները ներդրվել են խորհրդային արդյունաբերություն: Այսօր էլ լազերային ֆիզիկայի գիտական դպրոցն ամուր հիմքեր ունի ինստիտուտում: Ատոմական միջավայրի լազերային սպեկտրադիտման (մասնավորապես՝ նանոբջիջներում), քվանտային օպտիկայի, քվանտային ինֆորմացիայի, նոր լազերային նյութերի և կառուցվածքների մշակման աշխատանքների, ինչպես նաև լայն միջազգային համագործակցության շնորհիվ ՖՀԻ-ն այսօր լազերային ֆիզիկայի բնագավառի ծանաչված կենտրոններից է:



Ռոբերտ Ավագյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)

- 1) - *Բարձր էներգիաների ֆիզիկա*
- *Լազերային ֆիզիկա*
- *Կիսահաղորդիչների ֆիզիկա*



2) ԵրՖԻ-ի 6 ԳէՎ էլեկտրոնային սինքրոտրոնի վրա ստացվել են բևեռացված ֆոտոնների փնջեր, որոնց օգնությամբ ուսումնասիրվել են ֆոտոծնման պրոցեսները: Կատարվել են նաև կանալավորված էլեկտրոնների և պոզիտրոնների ճառագայթման ուսումնասիրություններ բյուրեղներում (SLAC, ԱՄՆ), ինչպես նաև 100-300 ԳէՎ էներգիաների տիրույթում՝ CERN-ում (Շվեյցարիա):

HERA արագացուցիչ-կուտակիչի միջոցով HERMES գիտափորձի շրջանակներում հետազոտվել է նուկլոնների սպինային կառուցվածքը՝ օգտագործելով 36 ԳէՎ էներգիայով բևեռացված էլեկտրոնների և պոզիտրոնների ցրումը ջրածնի և այլ միջուկների վրա:

ԵրՖԻ-ի էլեկտրոնային գծային արագարարի վրա լիցքավորված մասնիկների միջոցով կատարվել են առաջին գիտափորձերը՝ նվիրված բժշկական իզոտոպների ստացմանը:

Հայաստանում միջուկային ֆիզիկայի զարգացմանը նպաստելու և բժշկական իզոտոպների պահանջն ապահովելու համար հիմնավորվել է C18 ցիկլոտրոնի ձեռքբերման և ԵրՖԻ-ի տարածքում տեղադրման կարևորությունը: Սպասվում են նոր գիտափորձեր C18 ցիկլոտրոնի վրա՝ ուղղված (p,n) ռեակցիաների ուսումնասիրմանը և օգտագործմանը հիմնարար ու կիրառական խնդիրների լուծման համար:



Ստեփան Պետրոսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ

- 1) - Կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկա
 - Լազերային ֆիզիկա
 - Արեգակնային ֆոտովոլտային էներգետիկա

2) Պրոֆեսոր Ս. Պետրոսյանի և նրա աշակերտների կողմից ուսումնասիրվել են տարբեր տիպի կիսահաղորդչային նանոհետերոկառուցվածքներում ցածր չափայնության էլեկտրոնային գազերի հպակային երևույթները: Առաջին անգամ առաջարկվել է հետերոչափային հպակի, մասնավորապես Շոտկիի երկչափ դիոդի և երկչափ p-n - անցման գաղափարը, և կառուցվել է դրանց տեսությունը: Առաջարկված հետերոչափային հպակների հիման վրա ստեղծվել են նոր տիպի կիսահաղորդչային սարքեր, այդ թվում դաշտային տրանզիստորներ և կոորդինատագայուն ֆոտոդիոդներ:



Ուսումնասիրվել են կիսահաղորդչային նանոլարերի, նանոգնդների և դրանց վրա հիմնված սարքերի էլեկտրոնային և ֆոտոէլեկտրական հատկությունները, պարզաբանվել է այդպիսի համակարգերում դասական չափային երևույթների դերն էլեկտրական դաշտերի էկրանավորման և անհավասարակշիռ լիցքակիրների գեներացման և վերամիավորման պրոցեսներում: Կառուցվել է նանոլարերում ֆոտոհաղորդականության տեսությունը, ցույց է տրվել, որ մակերևութային վերամիավորման գերակշռող դերի պատճառով ֆոտոհաղորդականության կինետիկան բնութագրվում է երկարատև ռելաքսացիաներով և, կախված լարի շառավղից, այդ ռելաքսացիաները բնութագրող ժամանակները կարող են հասնել վայրկյանների և նույնիսկ ժամերի:

Ապակեբյուրեղական հատուկ տակդիրների վրա ստեղծվել են բարակթաղանթային CIGS արեգակնային ֆոտովոլտային տարրեր, համակողմանի ուսումնասիրվել են դրանց ֆոտոէլեկտրական, սպեկտրային և ունակային բնութագրերը, ցույց է տրվել, որ օպտիմալ կառուցվածքներում արեգակնային լույսի էներգիան էլեկտրականի փոխակերպման արդյունավետությունը կարող է գերազանցել 10 %-ը:

Լազերային փոշեցրման օգնությամբ InSb-ի հիմքի վրա ստեղծվել են հետերոանցումային և մակերևութային-արգելքային կառուցվածքներ, որոնք ցուցաբերել են մեծ ֆոտոզգայնություն սպեկտրի ենթակարմիր (3-5 մկմ) տիրույթում: Ուսումնասիրվել են այդպիսի ենթակարմիր ֆոտոընդունիչների հատկությունները:

Վերջաբան

Վերը բերված հեղինակային նյութերը մի կողմից ցույց են տալիս ֆիզիկայի բնագավառում գրանցված նվաճումների լայն սպեկտրը, մյուս կողմից՝ կարևորագույն ուղղությունների գնահատման տարբեր մոտեցումները: Մոտ ապագայում կփորձենք կրկին անդրադառնալ այս հարցին, ունենալով նաև այլ գիտական կոլեկտիվների ղեկավարների և ծանաչված գիտնականների (մասնավորապես, ակադեմիկոսներ Ա. Մկրտչյանի, Ռ. Մարտիրոսյանի, Վ. Հարությունյանի, Է. Ղազարյանի, Է. Չուբարյանի և ուրիշների) ներկայացրած նյութերը: Դա հնարավորություն կտա ի մի բերելու մեր գիտնականների ձեռքբերումներն ու դրանց գնահատականները գիտության մի ոլորտում, որը, թերևս, ամենազարգացածն է Հայաստանում:





ՀՀ ԳԱԱ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՆՈՐԱՅՐ ԱՌԱՔԵԼՅԱԼ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկական և տեխնիկական
գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-
քարտուղար

ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքն ստեղծվել է 2006 թ. (սկզբում՝ «ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի, մեխանիկայի և ինֆորմատիկայի բաժանմունք» անվանումով)՝ ընդգրկելով ՀՀ ԳԱԱ երեք գիտահետազոտական ինստիտուտներ՝ **Մաթեմատիկայի, Մեխանիկայի, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների**:

Պատերազմական դժվարին տարիներին՝ 1943 թ., Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի (ՀԽՍՀ ԳԱ) հիմնադրումից քիչ անց Արտաշես Շահինյանի

ջանքերով 1944 թ. ստեղծվեց ՀԽՍՀ ԳԱ Մաթեմատիկայի և մեխանիկայի բաժինը, որը 1955 թ. վերակազմավորվեց ՀԽՍՀ ԳԱ Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի (առաջին տնօրեն՝ ակադեմիկոս Ա. Շահինյան): Այդ ինստիտուտի կազմից 1971 թ. ձևավորվեցին ՀԽՍՀ ԳԱ երկու նոր ինստիտուտներ՝ Մաթեմատիկայի (առաջին տնօրեն՝ ակադեմիկոս Մխիթար Զրբաշյան) և Մեխանիկայի (առաջին տնօրեն՝ ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյան): 1957 թ. ստեղծվեց ՀԽՍՀ ԳԱ և ԵՊՀ Հաշվողական կենտրոնը (առաջին տնօրեն՝ ակադեմիկոս Սերգեյ Մերգելյան), որը հետագայում վերանվանվեց ՀԽՍՀ ԳԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի:

Բաժանմունքի կազմում ներկայումս ընդգրկված են 16 ակադեմիկոս և 8 թղթակից անդամ, բաժանմունքի գծով ընտրվել են ՀՀ ԳԱԱ արտասահմանյան 26 անդամ և 5 պատվավոր դոկ-

տոր: Բաժանմունքի հիմնական գիտական ուղղություններով հրատարակվում է (ռուսերեն) **ՀՀ ԳԱԱ Տեղեկագրի** 3 հանդես՝ **Մաթեմատիկայի** (գլխ. խմբագիր՝ թղթակից անդամ Արթուր Սահակյան), **Մեխանիկայի** (գլխ. խմբագիր՝ թղթակից անդամ Արա Ավետիսյան) և **Տեխնիկական գիտությունների** (գլխ. խմբագիր՝ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյան): Մաթեմատիկայի հանդեսը 1979 թ-ից թարգմանում է անգլերեն Allerton Press հրատարակչությունը՝ զգալիորեն ընդլայնելով հանդեսի ընթերցողների շրջանակը:

ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Մաթեմատիկայի բնագավառում հետազոտություններն ակադեմիայում կատարվել են սկզբում Մաթեմատիկայի և մեխանիկա-



Ակադեմիկոս Արտաշես Շահինյան



Մ. Զրբաշյան, Ա. Շահինյան, Ս. Մերգելյան (1952 թ.)

յի բաժանմունքում (1944-1955) և Ինստիտուտում (1955-1971), այնուհետև՝ Մաթեմատիկայի ինստիտուտում՝ հիմնականում հետևյալ ուղղություններով:



Ակադեմիկոս Մխիթար Ջրբաշյան

Կոմպլեքս անալիզ: Առաջին ինքնատիպ հետազոտությունները կատարվել են ֆունկցիաների մոտավորության տեսության բնագավառում անցյալ դարի 30-ական թվականներին (Ա. Շահինյան), որոնց արդյունքներն ամփոփվել են նրա թեզում 1937թ.: Հետագայում, ներգրավելով այդ բնագավառ Մխիթար Ջրբաշյանին և Սերգեյ Մերգելյանին, Ա. Շահինյանը, ակնավոր ուս մաթեմատիկոսներ Մ. Կելդիշի և Մ. Լավրենտևի աջակցությամբ, դրել է ֆունկցիաների տեսության գծով միջազգային լայն ճանաչում ստացած հայկական մաթեմատիկական դպրոցի հիմքերը: Մասնավորապես, 1940-1950-ական թվականներին ակադեմիկոսներ Ա. Շահինյանը և Մ. Ջրբաշյանն ստացել են մետրիկական բնույթի նուրբ հայտանիշեր կոմպլեքս հարթության մեջ բազմանդամների և ռացիոնալ ֆունկցիաների

լրիվության վերաբերյալ (միջին կամ կշռային իմաստով): Ս. Մերգելյանը Մ. Կելդիշի ղեկավարությամբ հետազոտել է կոմպլեքս հարթության կոմպակտների վրա բազմանդամներով և ռացիոնալ ֆունկցիաներով լավագույն հավասարաչափ մոտարկման խնդիրները, և 1949 թ., 21 տարեկան հասակում, արժանացել գիտության դոկտորի կոչման: 1951 թ. նա ստացել է բազմանդամներով հավասարաչափ մոտավորության հնարավորության դասական խնդրի վերջնական լուծումը (հայտնի է «Մերգելյանի թեորեմ» անունով), որի համար 1952 թ. արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի:

Ամբողջ և մերոմորֆ ֆունկցիաներով հավասարաչափ և շոշափումային մոտարկման հարցերի շրջանակը կոմպլեքս հարթության անսահմանափակ փակ բազմությունների վրա հետազոտվել է 60-70-ական թթ. (Ս. Մերգելյան, Մ. Ջրբաշյան, Ն. Առաքելյան և այլք): Մասնավորապես, ստացվել են մետրիկական բնույթի հայտանիշներ շոշափումային մոտավորության



Ակադեմիկոս Սերգեյ Մերգելյան

թույլատրելի արագությունների համար (Մ. Ջրբաշյան, Ն. Առաքելյան), ինչպես նաև ծճգրիտ արդյունքներ կանոնական բազմությունների վրա լավագույն մոտարկումների համար (Ն. Առաքելյան և այլք): Ամբողջ ֆունկցիաներով հավասարաչափ մոտավորության հնարավորության խնդրում Մ. Կելդիշի և Ս. Մերգելյանի աշխատանքներից հետո Ն. Առաքելյանը 1964 թ. ստացել է այդ խնդրի վերջնական լուծումը: Հետագայում այս արդյունքներն էական կիրառություններ են գտել աստիճանային շարքերի արդյունավետ անալիտիկ շարունակության և նրանց եզակիությունների տեղաբաշխման, բացթողումներ ունեցող բազմանդամներով մոտավորության հարցերում (ակադեմիկոս Ն. Առաքելյան, թղթ. անդամ Վ. Մարտիրոսյան):

50-ական թթ. Մ. Ջրբաշյանը հետազոտությունների մի շարքում զարգացրել է կոմպլեքս



Մ. Ջրբաշյան և Ն. Առաքելյան (1975 թ.)

տիրույթում Միտտագ-Լեֆֆլերի տիպի կորիզներով ինտեգրալային ձևափոխությունների տեսությունը՝ անկյունային տի-



րույթներում անալիտիկ ֆունկցիաների ներկայացումներով և դրանց կիրառություններով, իսկ հաջորդ շարքում ներմուծվել են շրջանում *մերոմորֆ ֆունկցիաների նոր դասեր*՝ Ռ. Նևանլինայի դասի ընդհանրացումեր: Այս արդյունքներն ամփոփված են Մ. Ջրբաշյանի «Ինտեգրալ ձևափոխությունները և ֆունկցիաների ներկայացումներ կոմպլեքս տիրույթում» (ռուսերեն, 1966) մենագրությունում: Կատարվել են այդ դասերի ֆունկցիաների և դրանց եզրային վարքի մանրամասն հետազոտություններ (Մ. Ջրբաշյան, Վ. Չաքարյան, Ֆ. Շամոյան, Ա. Ջրբաշյան և այլք):

Անալիտիկ ֆունկցիաների *արժեքների բաշխման տեսությունում* հերքվել է Ռ. Նևանլինայի հայտնի վարկածը վերջավոր կարգի ամբողջ ֆունկցիաների դեֆեկտների վերաբերյալ (Ն. Առաքելյան, 1966 թ.): Ստացվել են Ռ. Նևանլինայի և Լ. Ալֆորսի երկրորդ հիմնական թեորեմի նման արդյունքներ մերոմորֆ ֆունկցիաների Ո-կետերի «մերձավորության» և «աղձատման» մասին (Ֆ.մ.գ.դ. Գ. Բարսեղյան): Լուծվել են մի շարք կարևոր խնդիրներ անալիտիկ և հարմոնիկ ֆունկցիաների միակության վերաբերյալ (ակադեմիկոսներ Ա. Շահինյան, Մ. Ջրբաշյան, Ս. Մերգելյան, Ն. Առաքելյան, Վ. Չաքարյան, թղթ. անդամ Վ. Մարտիրոսյան, ֆ.մ.գ.դ. Ա. Վաղարշակյան):

Իրական անալիզ: Այս ուղղությամբ հետազոտությունները Հայաստանում սկսվել են 50-ական թվականներին ակադեմիկոս Ալեքսանդր Թալալյանի կողմից և շարունակվում են մինչ այժմ: Դրանք վերաբերում են չափելի ֆունկցիաներն օրթոգոնալ շարքերով *ներկայացման ու միակության*, բազմաչափ եռանկյունաչափական շարքերի ին-

տեգրելիության հարցերին, երբ նրանց մասնակի գումարների հաջորդականության ինտեգրալային միջինները զուգամիտում են ինտեգրելի ֆունկցիայի: Մասնավորապես, աշխատանքների մի շարք նվիրված է համարյա ամենուրեք զրոյի զուգամիտող եռանկյունաչափական շարքերի գործակիցների վարքի ճշգրիտ գնահատականներին (Ֆ.մ.գ.դ. Ֆ. Հարությունյան, Ն. Պողոսյան, Ռ. Հովսեփյան): Նման հարցեր ուսումնասիրվել են նաև Հաարի, Ուոլշի և Լ_p տարածություններում բազիսներով շարքերի համար (Ֆ. Հարությունյան, Ղ. Ղազարյան, Հ. Մուշեղյան և այլք): Ստացվել են Դ. Մենշովի *ուղղման թեորեմների* էական ուժեղացումներ (Ֆ. Հարությունյան, Ռ. Հովսեփյան): Լուծվել է օրթոգոնալ շարքերի համարյա ամենուրեք զուգամիտող մասնակի գումարների համարների աձի խնդիրը: Տեղայնացման հատկությամբ օժտված օպերատորների համար լիովին լուծվել է նրանց համարյա ամենուրեք զուգամիտության բազմությունների կառուցվածքի հարցը (Ֆ.մ.գ.դ. Գ. Կարագուլյան): Լուծվել են ազահ ալգորիթմի զուգամիտության վերաբերյալ մի շարք կարևոր խնդիրներ (Ս. Գոգյան): Ֆուրյեի շարքերի և ձևափոխությունների համար ստացվել են նոր տիպի միակության թեորեմներ:

Հետազոտվել են Ֆրանկլինի դասական և ընդհանուր համակարգերով շարքերը: Մասնավորապես, նկարագրվել են այն պայմանները, որոնց դեպքում Ֆրանկլինի ընդհանուր համակարգը բազիս կամ ոչ պայմանական բազիս է Լեբեգի կամ Հարդիի տարածություններում (ակադեմիկոս Գ. Գևորգյան, ԵՊՀ): Լրիվ նկարագրվել են այն $\Lambda = \{ \lambda_n \}$ հաջորդականությունները, որոնց համար սահմանափակ

մասնակի Λ -վարիացիա ունեցող շատ փոփոխականների ֆունկցիայի Ֆուրյեի շարքը զուգամետ է (թղթակից անդամ Ա. Սահակյան, Ի. Գոգինավա): Ուսումնասիրվել է տյուպիցյան մատրիցների և օպերատորների հետքերի՝ հանրագումարելի ֆունկցիաներով մոտարկման հարցը, ստացվել են համապատասխան սխալների գնահատականներ (Ա. Սահակյան, ֆ.մ.գ.դ. Մ. Գինովյան):

Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն:

Ստեղծվել է նոր ուղղություն՝ կոմբինատոր ինտեգրալ երկրաչափություն, որն ընկած է հավանականությունների տեսության և դիֆերենցիալ երկրաչափության եզրում: Դրա համար հիմք է հանդիսացել Բյուֆֆոն-Սիլվեսթրի խնդրի լուծումն ակադեմիկոս Ռ. Համբարձումյանի կողմից, որը հնարավորություն է տալիս լայն դասի բազմությունների չափերը ներկայացնելու պարզ սիմպլեքսների դիոֆանտյան վերլուծության տեսքով:

Կետային և երկրաչափական պրոցեսների համար ստեղծված է «տիպական» երկրաչափական օբյեկտների տեսություն: Դրա հիմքում ընկած է Ռ. Համբարձումյանի զարգացրած ֆակտորիզացման տեսությունը, որը թույլատրում է ձևափոխությունների խմբի նկատմամբ ինվարիանտ կետային պրոցեսների մոմենտալին չափերի ֆակտորիզացումն՝ ըստ այդ խմբի Հաարի չափերի:

Հիմնվել է *ստոխաստիկ երկրաչափության* հայկական դպրոցը, որի նվաճումներից հարկ է նշել ընդգրկման-բացառման հիմնարար թեորեմը կետային պրոցեսների տեսությունում (Ռ. Համբարձումյան, Հ. Սուքիասյան), ինչպես նաև ուռուցիկ մարմինների մաթեմատիկական տոմոգրաֆիայի խնդրի լուծելիությունը



երեք X-ձառագայթներով:

Հետազոտվել են վիճակագրական ֆիզիկայի մաթեմատիկական խնդիրները, մասնավորապես լուծվել է Ռ. Դոբրուշինի պրոբլեմը մի կետային բաշխումներով պատահական դաշտը նկարագրելու վերաբերյալ, որը թույլատրում է գիբսյան պատահական դաշտերի տեսության նոր, ավելի պարզ շարադրանք (Ֆ.մ.գ.դ. Բ. Նահապետյան): Առաջարկվել է նոր մոտեցում կլաստերային վերլուծությունների մեթոդով գիբսյան պատահական դաշտերի ուսումնասիրման համար (Ս. Պողոսյան):

Դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումներ: Ֆունկցիոնալ անալիզի գծով հետազոտություններն սկսվել են 50-ական թվականներին ակադեմիկոս Ռ. Ալեքսանդրյանի կողմից, որն առաջարկել է մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումների եզրային խնդիրներում ծնված օպերատորների սեփական ֆունկցիաների համակարգի կառուցման նոր եղանակ:

Կոտորակային կարգի դիֆերենցիալ հավասարումների համար *եզրային խնդիրներում* ստացվել են արդյունքներ սեփական ֆունկցիաներով վերլուծությունների վերաբերյալ (Ս. Ջրբաշյան, Ա. Ներսեսյան): Առաջարկվել է Ֆրեդհոլմի երկրորդ սեռի ինտեգրալ հավասարումների վրտերայնության գաղափարի լայն ընդհանրացում (ակադեմիկոս Ա. Ներսեսյան):

Ստացվել են հիմնարար արդյունքներ ընդհանուր էլիպսական համակարգերի և սինգուլյար ինտեգրալ հավասարումների համար դասական խնդիրներում (թղթակից անդամ Ն. Թովմասյան, ՀՊՃՀ): *Թույլ հիպերբոլական հավասարումների* համար մշակվել է հետազոտման միկրոտեղային եղանակը, ստաց-

վել են Կոշու խնդրի կոռեկտության հայտանիշեր: Ապացուցվել է Լաքս-Միզոբատայի թեորեմը կիրիստոֆյան քվադրատային հիպերբոլական համակարգերի համար (Ա. Ներսեսյան, Կ. Յաղջյան, Ա. Հովհաննիսյան, Գ. Հովհաննիսյան):

Մշակվել են ծրագրային փաթեթներ, որոնք հնարավորություն են տալիս արագ մոտարկելու տվյալ ֆունկցիայի դասական Ֆուրյեի և Ֆուրյե-Գեզենբաուերի գործակիցները, Ֆուրյեի ձևափոխությունը, արդյունավետ լուծել երկրորդ սեռի ինտեգրալ հավասարումներ, ինչպես նաև լուծել ինտեգրված պայմաններով խնդիրներ սովորական դիֆերենցիալ հավասարումների համար (Ա. Ներսեսյան, Ա. Պողոսյան): Սովորական դիֆերենցիալ հավասարումների և Դիրակի համակարգի համար առաջարկվել է եզրային խնդիրների սեփական ֆունկցիաներով վերլուծությունների զուգամիտության արագացման եղանակ (Ա. Ներսեսյան, Ռ. Բարխուդարյան): Ընդհատ (դիսկրետ) ցանցի վրա տրված ֆունկցիաների համար մշակվել են սովորական և Էրմիտի միջարկումների արագացման ալգորիթմեր: Ուսումնասիրվել են ֆունկցիայի արագ վերականգնման խնդիրները Ֆուրյեի դասական կամ ընդհատ գործակիցների օգնությամբ: Ստացվել են մոտավորությունների սխալների ձգրիտ ասիմպտոտական գնահատականներ: Փաթեթի տիպի հավասարումների գաղափարը տարածվել է լայն դասի ինտեգրալ հավասարումների համար, ստացվել են մի շարք դասական արդյունքների ընդհանրացումներ: Ուսումնասիրվել են մատրից-ֆունկցիաների մասնավոր ինդեքսների գտնելու հետ կապված խնդիրներ: Բացահայտվել են սինգուլյար ինտեգրալ հավա-

սարումների որոշ դասերի լուծելիության պայմանները (Ա. Ներսեսյան, Ա. Քամայան):

Մաթեմատիկական ֆիզիկա:

Այս ուղղությամբ հայկական դպրոցի հիմքերը դրել է ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը անցյալ դարի 60-ական թվականներին: Այդ գործը շարունակել է Ն. Ենգիբարյանը: Ստացվել են շատ արդյունքներ մաթեմատիկական ֆիզիկայի դիֆերենցիալ, ինտեգրալ, ինտեգրա-դիֆերենցիալ ու հանրահաշվական հավասարումների հետազոտման ու լուծման ուղղությամբ (Ն. Ենգիբարյան, Լ. Արաբաշյան, Ա. Խաչատրյան, Մ. Մուրադյան, Խ. Խաչատրյան, Ռ. Վարդանյան, Ա. Բարսեղյան, Հ. Հարությունյան, Բ. Ենգիբարյան և այլք), որոնք կիրառվել են ձառագայթման տեղափոխման (XS) տեսության գծային ու ոչ գծային ուղիղ և հակադարձ խնդիրներում, ֆիզիկական կինետիկայի, ալիքների ոչ տեղային փոխազդեցության, կիսամարկոլյան պրոցեսների բնագավառներում:

Ստեղծվել է փաթեթի տիպի և ավելի ընդհանուր, գծային օպերատորների ֆակտորիզացման ոչ գծային հավասարումների տեսությունը՝ ներառյալ ոչ շրջելի օպերատորների ֆակտորիզացումը և Միլնի ընդհանրացված պրոբլեմի լուծումը: Ստեղծվել է Վ. Համբարձումյանի սկայար և օպերատորային հավասարումների ընդհանուր տեսությունը: Ձարգացվել են կրիտիկական դեպքում անշարժ կետի նոր սկզբունքներ: Ապացուցվել է Համերշտեյնի ու Ուրիսոնի տիպի ոչ կոմպակտ օպերատորներով հավասարումների որոշ դասերի լուծելիությունը: Մշակվել են ինքնահամաձայնեցված օպտիկական խորությունների ու կինե-



տիկ խորությունների մեթոդները: Չարգացվել են ինտեգրալ հավասարումների թվային-վերլուծական լուծման մի շարք նոր արդյունավետ մեթոդներ: Դրվել են ըստ չափի ածանցյալ պարունակող դիֆերենցիալ հավասարումների տեսության հիմքերը: Հիմնադրված նոր ուղղությունների թվին են պատկանում նաև սպեկտրային գծերում ՃՏ վերլուծական տեսությունը հաճախությունների մասնակի վերաբաշխման դեպքում, պատահական թափառումները պատահական անհամասեռ միջավայրում:

ՄԵՆԱՆԻԿԱ

ՀՀ ԳԱԱ համակարգում մեխանիկայի բնագավառում գիտական հետազոտություններն սկսվել են ՀԽՍՀ ԳԱ Մաթեմատիկայի և մեխանիկայի բաժնում (1944-1945 թթ.), շարունակվել Շինանյութերի և կառուցվածք-

նիկային:

ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտը միջազգայնորեն ճանաչված գիտական կենտրոն է, որտեղ կատարվում են տեսական և փորձարարական հիմնարար հետազոտություններ մեխանիկայի տարբեր ոլորտներում: Այստեղ ակադեմիկոսներ Նագուշ Հարությունյանի և Սերգեյ Համբարձումյանի համատեղ ջանքերով և անմիջական ղեկավարությամբ ձևավորվել է Հայաստանի մեխանիկայի գիտական դպրոցը, որն ունի լուրջ նվաճումներ մեխանիկայի բնագավառում գիտական նոր ուղղությունների ստեղծման և զարգացման գործում:

Ն. Հարությունյանի առաջարկած ժառանգական հատկություններով օժտված ծերացող նյութերից պատրաստված մարմինների **սողքի տեսությունն** իր իսկ կողմից ընդհանրացվել և զարգացվել է անհամասեռ ժառանգականորեն ծերացող մարմինների համար: Ստեղծվել են այդպիսի մարմինների գծային և ոչ գծային սողքի տեսությունները, ինչպես նաև ժամանակի ընթացքում աճող մարմինների մեխանիկայի գիտական ուղղությունը:

Կատարվել են մի շարք հիմնարար հետազոտություններ **առածգականության մաթեմատիկական տեսության** բնագավառում: Դրանց թվին են պատկանում երկրաչափական տարբեր տեսքի ընդլայնական կտրվածքներով պրիզմայաձև ձողերի ոլորման և ծոման խնդիրների ուսումնասիրությունները: Արժեքավոր արդյունքներ են ստացվել հարթ և տարածական **կոնտակտային խնդիրների** լուծման արդյունավետ մեթոդների մշակման ասպարեզում: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում ստրինգերների և բարակապատ ներդրակների առածգական դեֆորմացվող հոծ մարմինների հետ կոնտակտային փոխազդեցության հարցերի, ինչպես նաև լարումնե-



Ակադեմիկոս Նագուշ Հարությունյան

ների ինստիտուտում (1945-1955 թթ.), Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում (1955-1971 թթ.), իսկ այնուհետև՝ Մեխանիկայի ինստիտուտում: Դրանք հիմնականում վերաբերում են **հոծ միջավայրի մեխա-**



Ա. Խաչատրյան, Ն. Հարությունյան, Է. Միրզոյան

րի երկու և ավելի կենտրոնացուցիչների առկայությամբ առածգական մարմինների լարվածա-դեֆորմացիոն վիճակների ուսումնասիրությունը: Հետազոտվել են **քայքայման մեխանիկայի** հարցեր (ակադեմիկոսներ Ն. Հարությունյան, Բ. Աբրահամյան, թղթակից անդամ Ս. Մխիթարյան, ֆ.մ.գ.դ. Վ. Հակոբյան և այլք):

Ուսումնասիրվել են բաղադրյալ մարմինների լարվածային վիճակի առանձնահատկությունները և ստացվել թերլարվածության պայմանները միացումների գագաթներում (Կ. Չոբանյան): Այս աշխատանքի արդյունքը 1971 թվականին գրանցվել է ԽՍՀՄ պետական գրանցման մատյանում որպես գիտական հայտնագործություն: Մշակվել են **անիզոտրոպ շերտավոր թաղանթների դասական և սալերի ու թաղանթների ճշգրտված տեսությունները**, առաջարկվել է միկրոբեռ առածգականության կիրառական տեսության

թողներ, ուսումնասիրվել տատանումների և կայունության հարցերը: Հաստատվել է թաղանթում ֆլատերային տատանումների հնարավորությունը կրիտիկական արագություններից փոքր արագությունների դեպքում: Դիտարկվել են համասեռ և անհամասեռ անիզոտրոպ հատկություններով օժտված նյութից պատրաստված հաստատուն կամ փոփոխական հաստության սալերի ու թաղանթների ստատիկայի և դինամիկայի բազմաթիվ խնդիրներ: Ուսումնասիրվել են կոմպոզիցիոն նյութերից պատրաստված սալերի և թաղանթների օպտիմալացման հարցերը (ակադեմիկոս Գ. Բաղդասարյան, ֆ.մ.գ.դ. Վ. Գնունի, Լ. Մովսիսյան, Ռ. Կիրակոսյան և այլք):

Ստեղծվել է բարակապատ մարմինների **մագնիսաառածգականության տեսությունը** (Ս. Համբարձումյան, Գ. Բաղդասարյան, Մ. Բելուբեկյան): Կարևոր արդյունքներ են ստացվել տարբեր ֆիզիկական հատկություններով դեֆորմացվող պինդ մարմիններում էլեկտրամագնիսաառածգական ալիքների տարածման խնդիրներում: Էական արդյունք է ստացվել պիեզոակ-

տիվ առածգական միջավայրերի դասակարգման հարցում, որը հնարավորություն է տվել հետազոտելու պիեզոառածգական գծային և ոչ գծային ալիքների տարածման առանձնահատկությունները (Գ. Բաղդասարյան, Մ. Բելուբեկյան, Ա. Բագդուև, Ջ. Դանոյան, Կ. Ղազարյան, թղթակից անդամ Ա. Ավետիսյան և այլք):

Կառուցվել է անիզոտրոպ սալերի և թաղանթների **ասիմպտոտական տեսությունը** (ակադեմիկոս Լ. Աղալովյան): Գտնվել է լարումների թենզորի և տեղափոխման վեկտորի բաղադրիչների համար միանգամայն նոր ասիմպտոտիկա, որը հնարավորություն է ընձեռել լուծելու բարակ մարմինների համար բազմաթիվ խնդիրներ, որոնց համար կիրառելի չեն Կիրիսոֆ-Լյավի վարկածները (Լ. Աղալովյան, Ռ. Գևորգյան, Ա.Ս. Խաչատրյան, Մ. Աղալովյան և այլք): Կատարվել են հետազոտություններ **պլաստիկության տեսության** շրջանակներում, լուծվել են խնդիրներ պլաստիկ և ամրապնդվող նյութերի համար (ակադեմիկոս

Կատարվել են փորձարարական հետազոտություններ



Ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյան


նոր տարբերակ (ակադեմիկոս Ս. Համբարձումյան), որի հիման վրա կատարվել են մի շարք կարևոր հետազոտություններ նանոչափեր ունեցող սարքերի ամրության և տատանումների վերաբերյալ: Ստացվել են ձգմանը և սեղմմանը տարբեր ձևով դիմադրող նյութերի առածգականության տեսության հիմնական հավասարումները և լուծվել մի շարք կարևոր խնդիրներ (Ս. Համբարձումյան, Ա.Ա. Խաչատրյան): Մշակվել են գլանաձև թաղանթների ստատիկական և դինամիկական հաշվարկի մե-





ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

բետոնի, կոմպոզիտ նյութերի, մետաղների, գետնահողերի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրման բնագավառում: Ստեղծվել են փորձարարական սարքեր, մշակվել նման նյութերի առածգականության, սողքի, երկարատև ամրության առանձնահատկությունների բացահայտման մեթոդներ: Մշակվել են բետոնե սեղմվող և երկաթբետոնե ծովող տարրերի օպտիմալ նախագծման նոր մոտեցումներ: Կազմվել են գետնահողերի ամրության որոշման ՀՀ 178-99 պետական չափորոշիչները: Բացահայտվել են ամրանավորված պոլիմերային կոմպոզիտ նյութերի մեխանիկական հատկությունների փոփոխման նոր, կարևոր կիրառական նշանակություն ունեցող օրինաչափություններ: Նախագծվել և պատրաստվել են տարբեր նշանակության ածխեպլաստե կառուցվածքային տարրեր: Ուսումնասիրվել են հոծ միջավայրերում բարակ մարմինների ներթափանցման, ինչպես նաև արագ պատվող ռոտորների թրթռասողքի հարցերը (Կ. Կարապետյան, Ս. Մեսչյան, Մ. Մարտիրոսյան, Ն. Սարգսյան, Ա. Սիմոնյան, Կ.Ա. Կարապետյան):



Ստեղծվելով ՀԽՍՀ ԳԱ Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի հաշվողական մաթեմատիկայի լաբորատորիայի հիմքի վրա՝ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը (ԻԱՊԻ) դարձել է Հայաստանում ինֆորմատիկայի տեսության և ծրագրավորման բնագավառի կենտրոն: ԻԱՊԻ հիմնական հետազոտական ուղղություններն են ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի մաթեմատիկական խնդիրները, ավտոմատացման համակարգերի մաթեմատիկական ապահովումը և գիտական հետազոտությունների ավտոմատացումը: ԻԱՊԻ տնօրենների ջանքերով (Ս. Մերգեյան, Ռ. Ալեքսանդրյան, Ա. Պետրոսյան, Ռ. Վարշամով, Կ. Աբգարյան, Յու. Շուքուրյան) ինստիտուտում կայացել է արդյունավետ ստեղծագործական միջավայր, դարձնելով ԻԱՊԻ-ն Հայաստանում համակարգչագիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն, որտեղ իրականացվել են հետևյալ աշխատանքները:

1960-ական թվականներին «Հրազդան-3» մեքենայի համար մշակվել է «Ալգոլ-60» լեզվի փոխաբերիչը և ստեղծվել ստանդարտ ծրագրերի գրադարանը: ԽՍՀՄ-ում առաջին սկսվել են գիտատեխնիկական գրականության ավտոմատացված թարգմանության հիմնախնդիրների ուսումնասիրությունները (Թ. Տեր-Միքայելյան, Վ. Գրիգորյան): Մշակվել է էլեկտրասրտագրերը հեռախոսային գծով փոխանցելու սարքավորում:

Մաթեմատիկական տրամաբանություն: Հետազոտվել է սիմետրիկ կառուցողական տրամաբանությունը, ապացուցվել սիմետրիկ ռեկուրսիվ իրականացնելիության համակարգի անհակասելիությունը: Կառուցվել է նոր տրամաբանական համակարգ՝ աղոտ կառուցողական տրամաբանություն, որը կիրառելի է կառուցողական օբյեկտների հաշվելիության հատկությունները հետազոտելու համար (թղթակից անդամ Ի. Չասլավսկի և այլք):

Ալգորիթմների տեսություն: Կատարվել են ծավալային բարդության տեսության և ալգորիթմական բերելիության հետազոտություններ, մասնավորապես հետազոտվել են Ա. Կոլմոգորովի բարդության հատկությունները, լուծվել են Ա. Մայերի հիմնախնդիրը նվազագույն ինդեքսների բազմության անլուծելիության աստիճանների վերաբերյալ և դրա մի շարք ընդհանրացումներ, ներմուծվել և հետազոտվել են ընդհանուր տեսքի անդրադարձ հավասարումների համակարգեր: Գտնվել է դրանց ալգորիթմական լուծման գոյության անհրաժեշտ և բավարար պայմանը (թղթակից անդամ Հ. Մարանջյան): Հետազոտվել է ռեկուրսիվորեն թվարկելի միթոտիկ բազմությունների միջանկյալ անլուծելիության աստիճանների նուրբ կառուցվածքը: Ուսումնասիրվել են ռեկուրսիվ օպերատորների հաշվարկելի օպտիմալ անշարժ կետերը (Ա. Մոկացյան, Վ. Մարգարյան): Ստեղծվել է օպտիմացված և բաշխված ռեկուրսիվ ծրագրերի սինթեզի համակարգ (ղեկ.՝ Հ. Մարանջյան):

Ավտոմատների տեսություն: Հետազոտվել են ավտոմատների համարժեքության պայմանները, կառուցվածքային ձևափոխությունները, ավտոմատների հատուկ տարատեսակների հատկությունները, դրանց բարելավման հնարավորությունները: Մշակվել է տեսություն և առաջարկվել միկրոծրագրային ավտոմատների ացիկլիկ տրոհման՝ ըստ արագագործության բարելավման մեթոդ (ակադեմիկոս



Յու. Շուքուրյան): Առաջարկվել և հետազոտվել են բաշխված ընթացակից հաշվարկումների հանրահաշվական տիպարներ (մոդելներ) և դրանց վարքը նկարագրող լեզուների դասեր: Մասնակի կոմուտատիվ այբուբենով որոշվող տիպարի համար հետազոտվել են բառերի համեմատման խնդիրները և մշակվել դրանք լուծելու բազմանդամային բարդության ալգորիթմներ (Յու. Շուքուրյան, Կ. Շահբազյան):

Հետազոտվել է ծրագրավորման տիպարների հետ կապված համարժեքության հիմնախնդիրը (ակադ. Ս. Շուքուրյան և այլք): Ապացուցվել է բազմաչափ բազմաժապավեն ավտոմատների համարժեքության խնդրի լուծելիությունը, որից հետևում է 1960-ականներից ի վեր չլուծված չվերասերված, միավոր ռանգով բազիսում ծրագրերի սխեմաների ֆունկցիոնալ համարժեքության խնդրի լուծելիությունը: Մշակվել է հաշվողական տիպարներում համարժեքության խնդիրների ապացույցի նոր տեխնիկա, որի միջոցով ստացվել է բազմաժապավեն ավտոմատների համարժեքությունը որոշելու նոր կոմբինատոր ալգորիթմ:

Ավտոմատների և գրաֆների տեսությունների մեթոդներով 1970-ական թթ. առաջարկվել են նոր մեթոդներ, որոնք կիրառվել են ԷՀՄ-ների ավտոմատացված նախագծման համար (Ա. Պետրոսյան, Ս. Մարկոսյան, Յու. Շուքուրյան):

Դիսկրետ մաթեմատիկա:

Հետազոտվել են բուլյան ֆունկցիաների վերլուծական հատկությունները և դրանց ներկայացման բարդությունները կանոնակարգված (ֆորմալ) լեզուներում: Տրվել է դիսկրետ իզոպերիմետրիայի և տոմոգրաֆիայի խնդիրների լուծումը, ստացվել են հնարավոր լուծումների նկարագրություններ:

Դիսկրետ մաթեմատիկայի եղանակները կիրառվել են կերպարների վերծանման և տվյալների պեղման նոր մեթոդների ստեղծման համար (Լ. Ասլանյան և այլք):

Արհեստական բանականության և իմացաբանական տիպարների բնագավառում հետազոտվել են ընթացակարգերի մակածական սինթեզի, ընդհատուն և անընդհատ խաղերում ռազմավարությունների սինթեզի և փորձարկման, փորձագիտական համակարգերի համար գիտելիքների ներկայացման, շուկայական հարաբերությունների տիպարների կառուցման և փորձարկման մեթոդները: Մշակվել և իրացվել է շուկայական տնտեսության պայմաններում ռազմավարական նախագծեր ստեղծող և ստուգող համակարգ (Է. Պողոսյան և այլք):

Կողավորման և վերջավոր դաշտերի տեսությունների

զարգացման հարցում առաջնակարգ նշանակություն են ունեցել Ռոմ Վարշամովի աշխատանքները (օրինակ՝ Վարշամով-Ջիլբերտի սահմանը): Վերջավոր դաշտերի վրա բազմանդամների վերլուծելիության տեսության բնագավառում 1964 թ. Ռ. Վարշամովի ստացած արդյունքները հնարավորություն ընձեռնեցին հետազայում ստեղծելու բազմանդամների վերածելիության կառուցողական տեսությունը: Ստացվել են մի շարք հիմնարար արդյունքներ ասիմետրիկ կողերի կառուցման բնագավառում: Էական արդյունքներ են ստացվել բազմամուտք կապուլիների կողավորման ոլորտում (ակադ. Գ. Խաչատրյան): 1998–2002 թթ. մշակվել են SAFER+ և SAFER++ ծածկագրման նոր համակարգեր, որոնցից առաջինն ընդունվել է որպես ստանդարտ լայնորեն հայտնի Bluetooth համակար-

գում, իսկ երկրորդն ընդգրկվել է եվրոպական NESSIE նախագծի 5 լավագույն ալգորիթմների ցանկում (Գ. Խաչատրյան, Մ. Կյուրեղյան): Մշակվել է նոր, բաց բանալիներով ծածկագրման համակարգ, որն էական առավելություններ ունի նմանատիպ հայտնի համակարգերի նկատմամբ՝ իրագործման պարզության և տեղեկատվական արդյունավետության առումով (Գ. Խաչատրյան, Մ. Կյուրեղյան):

Թվային ազդանշանների և պատկերների մշակում:

Հետազոտվել են կիրառվող դասական օրթոգոնալ ձևափոխությունները և դրանց իրականացման արագագործ ալգորիթմները: Մշակվել են օրթոգոնալ և հեշտ շրջելի ձևափոխությունների սինթեզման մեթոդներ: Առաջարկվել է Հադամարի մատրիցների կառուցման բազմապատկական մեթոդը (Ս. Աղայան, Հ. Սարուխանյան), որը վերջին տարիներին ընդհանրացվել և կիրառվում է որոշ համակարգերի կառուցման խնդիրներում:

Շենոնյան ինֆորմացիայի տեսություն:

Ներմուծվել է նոր E-ունակության գաղափարը, որն արտահայտում է արագության կախվածությունը սխալի հավանականությունից, շեղման մակարդակից և հուսալիությունից, ստացվել են արդյունքներ ինֆորմացիայի տարբեր կապուլիների համար: Ստացվել են նոր արդյունքներ բազմատերմինալ, փոփոխվող, գաղտնիություն պարունակող աղբյուրների և կապուլիների համար: Ինֆորմատիկայի տեսության մեթոդների կիրառմամբ մաթեմատիկական և կիրառական վիճակագրության ոլորտում զարգացվել է նոր ուղղություն՝ վարկածների ստուգումը և նույնականացումը բազմակի օբյեկտների վերաբերյալ տարբեր դասերի բաշխումների նկատ-



մամբ (Ֆ.մ.գ.դ. Ե. Հարությունյան, Մ. Հարությունյան և այլք):

Թվային մեթոդներ: Հետազոտվել են մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումների լուծման ցանցային եղանակները և այդ խնդիրների յուրահատուկ տարատեսակները, մշակվել են գծային ծրագրավորման խնդիրների լուծման նոր եղանակներ (Ա. Թունիս և այլք):

Ծրագրային մշակումներ և տեղեկատվական տեխնոլոգիաներ: ԷՀՄ-ների մաթեմատիկական ապահովման համար մշակվել են բազմատեսակ փաթեթների ծրագրային համակարգեր: Այստեղ կարևորվում են մաթեմատիկական սպասարկման ինչպես համակարգային, այնպես էլ կիրառական ծրագրային փաթեթների մշակումները (Ա. Քալանթարյան, Ս. Պողոսյան, Ս. Ալավերդյան):

Ակադեմիական գիտահետազոտական համակարգչային ցանց: Ձևավորման աշխատանքներն սկսվել են 1990-ական թվականներին՝ ներդնելով Հայաստանում առաջին ռադիոմո-

դեմային ցանցը: Հետագայում այն վերածվել է ազգային ակադեմիական գիտակրթական ցանցի, որի ծառայություններից օգտվում են ՀՀ ԳԱԱ համակարգի ինստիտուտները, հանրապետության մի շարք գիտական կազմակերպություններ և գերատեսչություններ: Ցանցը հնարավորություն տվեց մեղմելու Հայաստանի և Եվրոպական Միության միջև առկա թվային անջրպետը՝ հնարավորություն տալով տեղական գիտական հանրությանը օգտվելու համաեվրոպական գիտակրթական ցանցից և դրա ծառայություններից: 2011 թվականից ԻԱՊԻ-ն համաեվրոպական հետազոտական և կրթական ցանցերի ասոցիացիայի լիիրավ անդամ է (Ֆ. Սարգսյան, Յու. Շուքրոյան, Վ. Սահակյան, Ա. Նանասյան):

Մեկնարկել է բաշխված հաշվարկումների տեսական խնդիրների և կիրառական համակարգերի մշակման հետազոտությունների նոր փուլ: Ստացվել են բազմապրոցեսորային համակարգերի հաշվողական ռեսուրսների դինամիկ բաշխման և հերթերի կառավարման ալգորիթմներ (Վ. Սահակյան, Տ. Գրիգորյան, Մ. Գյուրջյան):

Բաշխված հաշվողական միջավայրերի մոդելների բնագավառում հետազոտվել և զարգացվում է վիրտուալ ֆաբրիկայի օբյեկտակողմնորոշված մոդելը, որն առաջարկել են «Intel» կորպորացիայի մասնագետները: Այդ մոդելի շրջանակներում առաջարկվել են նոր շարժընթացների տիպեր, «Intel»-ի մասնագետների հետ ստացվել են նախագծման նոր ալգորիթմներ և մշակվել է դրանցով իրականացվող ծրագրային համակարգ (Ս. Շուքրոյան):

2002 թ. Հայաստանում մեկնարկել են աշխատանքներ մեծ

արտադրողականության հաշվողական համակարգերի ստեղծման ուղղությամբ: Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի մի շարք դրամաշնորհների և ՀՀ Կառավարության աջակցությամբ 2004-ին Հայաստանում ստեղծվել է առաջին բարձր արտադրողականությամբ «Արմկլաստեր» հաշվողական համակարգը: 2005-2007 թթ. ստեղծվել և զարգացվել է համակարգչային բաշխիչ միջավայրը՝ հաշվարկումների և տվյալների հիմքերը կառուցելու համար: 2005-2012 թթ. ԻԱՊԻ-ն իրականացրել է **պետական նպատակային ծրագրեր** (դեկ.՝ Յու. Շուքրոյան և Վ. Սահակյան), որոնց շնորհիվ գիտակրթական կազմակերպությունները և Հայաստանի նախարարությունների մի շարք ծառայություններ օգտվում են հաշվողական «գրիդ» պաշարներից: 2008 թ. հիմնադրվել է ազգային գրիդ-նախաձեռնության հիմնադրամը, որի նպատակն է ապահովել կոլեկտիվ օգտագործման կայուն բարձր արտադրողականության հաշվողական միջավայրի մատչելիություն բարձր էներգիաների ֆիզիկայի, մոլեկուլային կենսաբանության, աստղաֆիզիկայի և այլ բնագավառներում աշխատող գիտնականների համար: 2008-2012 թթ. ԻԱՊԻ-ն շահագրգիռ կազմակերպությունների հետ միասին, շնորհիվ Եվրոխորհրդի և ՀՀ կառավարության համատեղ աջակցության, ապահովել է Հայաստանի գիտական հանրության կապը համաեվրոպական գիտակրթական GEANT ցանցի հետ (Յու. Շուքրոյան, Վ. Սահակյան, Գ. Ասատրյան, Ա. Պետրոսյան, Ե. Պրոխորենկո և այլք):



Ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում տեխնիկական գիտությունները զարգացել են Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայում, Հայաստանի պետական Ճարտարագիտական համալսարանում (ՀՊՃՀ) և մի շարք ծյուղային գիտահետազոտական ինստիտուտներում:

Մեքենաշինության ոլորտում Ակադեմիայում կատարված հետազոտությունները վերաբերում են մետաղների և քարերի մշակման տեսությանը և լեռնային երկրագործության մեքենայացման գիտական հիմունքների զարգացմանը: Մասնավորապես, բացահայտվել է կտրման պրոցեսի պարամետրերի և կտրող գործիքի մաշման ընթացքի կապը, մշակվել են կտրման ռեժիմների հաշվարկի օպտիմալ մեթոդներ (ակադեմիկոս Մ. Կասյան): Հետազոտվել են վակուումում, տեխնոլոգիական զանազան միջավայրերում և գերձայնային դաշտում կտրման առանձնահատկությունները, մշակվել շրջատաշման և ներտաշման կատարելագործված ոչ գոգավոր կտրիչներ:

Մշակվել են լեռնային երկրագործության, էռոզիայի դեմ պայքարի, քարքարոտ և աղակալած հողերի յուրացման տեխնոլոգիաներ և մեքենաների համալիրների նախագծման տեսություն, նախագծվել են գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար անհրաժեշտ մեքենաներ (ակադեմիկոս Կ. Ալեքսանդրյան): Հետազոտվել են դժվարամշակ և կարծր ապարներ պարունակող թեք հողատարածքներում պտղատու այգիների և անտառների հիմնման աշխատանքների մեքենայացման և տեխնոլոգիայի մշակման խնդիրները (թղթա-

կից անդամ Ա. Թարվերդյան):

Մեքենագիտության բնագավառում կատարված հետազոտությունները վերաբերում են մեխանիզմների սինթեզի տեսությանը, ավտոմատացված նախագծմանը, ռոբոտ-մանիպուլյատորների մեխանիկային: Այդ ուղղությամբ կատարված հետազոտությունների արդյունքում ձևավորվել է «Մոտարկումային կինեմատիկական երկրաչափություն» գիտական նոր ուղղությունը, որն ստացել է միջազգային ճանաչում (ակադեմիկոս Յու. Սարգսյան): Առաջարկված ավտոմատ նախագծման մեթոդները հաջողությամբ կիրառվել են խողովակազուցման հաստոցների, հատուկ նշանակության սարքերի և բազմաֆունկցիոնալ ավտոմատների մանիպուլյացիոն համակարգերի նոր նմուշների ստեղծման գործում:

Կատարվել են հետազոտություններ՝ նվիրված մեքենամասերի և շփահանգույցների երկարակեցության և հուսալիության տեսությանը, շփական ու հակաշփական նշանակության մեքենաշինական նյութերի ստեղծման գիտական սկզբունքներին, շփամաշվածության ու յուղման պրոցեսների մեխանիկային: Տեղական հանքանյութերի թափոնների հիման վրա մշակվել են ռեսուրսախնայող շփանյութերի արտադրության տեխնոլոգիաներ (թղթակից անդամ Ա. Պողոսյան):

Ավտոմատացման, կառավարման համակարգերի և բարդ տեխնիկական համակարգերի մաթեմատիկական մոդելավորման ոլորտում հետազոտությունները վերաբերում են էլեկտրական մեքենաների տեսությանը, լավագույն որոշումների ընդունմանը, ավտոմատացված նախագծմանը, հաշվողական տեխնիկայի մա-

թեմատիկական և ծրագրային ապահովմանը: Ստեղծվել է բարձր հաճախականության ինդուկտորային գեներատորների տեսությունը, էապես զարգացվել է լավագույն որոշումների ընդունման մաթեմատիկական ապարատը: Մշակված մեթոդները և մաթեմատիկական մոդելները գտել են արդյունավետ ներդրում բարդ տեխնիկական համալիրների ավտոմատացված նախագծման համակարգերի և տարբեր էլեկտրամեխանիկական սարքերի ստեղծման գործում (ակադեմիկոս Հ. Թերզյան):

Տեխնիկական գիտությունների բնագավառում հայ գիտնականների մասնակցությամբ կարևոր մշակումներ են իրականացվել «Omega», «Метеор» ու «Метеорприрода», «Интеркосмос» և «Болгария-1300» **երկրի արհեստական արբանյակների** ստեղծման ուղղությամբ (գլխ. կոնստրուկտոր՝ ակադեմիկոս Անդրանիկ Իոսիֆյան): Էլեկտրատեխնիկայի և



Ակադեմիկոս Անդրանիկ Իոսիֆյան

էներգետիկայի բնագավառներում կատարվել են հետազոտություններ՝ նվիրված էլեկտրատեխնիկայի տեսական հիմունքներին, էլեկտրադինա-



միկային, տիեզերական ապարատների էլեկտրամեխանիկայի սկզբունքներին, մակածական (ինդուկցիոն) և ունակային դասի էլեկտրական մեքենաների դիֆերենցիալ հավասարումներին (Ա. Իոսիֆյան):

Մշակվել են կայունացված համաչափ և անհամաչափ ռեժիմների բարդ էներգահամակարգերի **բազմաբևեռների տեսություններ** (ակադեմիկոս Հ. Ադոնց): Հետազոտվել են բարձր հաճախության գեներատորներում կայունացված և անցումային պրոցեսները: Դիտարկվել են

Պարկ-Գորևի տարածությունում բազմափուլ էլեկտրական մեքենաների դիֆերենցիալ հավասարումների փոխակերպման հարցերը: Ստացվել են փոփոխական հոսանքի մի շարք էլեկտրական մեքենաների նոր դիֆերենցիալ հավասարումներ, մշակվել են համաժամանակյա ունակային մեքենաների նոր կառուցվածքներ (ակադեմիկոս Գ. Արեշյան):

Ստեղծվել են հատուկ նշանակության ինքնավար էլեկտրասնուցման բացառիկ համակարգեր (գլխ. կոնստրուկտոր՝ ակադեմիկոս Վ. Ալեքսեևսկի), որոնք մինչ

այժմ թողարկվում և շահագործվում են հատուկ նշանակության տարբեր ոլորտներում: Առաջարկվել են արագ նեյտրոնների վրա աշխատող ռեակտորով ատոմային էլեկտրակայանների (ԱԷԿ) սկզբունքային նոր տեխնոլոգիական սխեմաներ: Կատարվել են աշխատանքներ՝ նվիրված ԱԷԿ-ների հուսալիությանը (ակադեմիկոս Ա. Պետրոսյանց), որոնք կարևոր դեր են խաղացել բազմաթիվ ԱԷԿ-ների, այդ թվում՝ Հայկական ԱԷԿ-ի շինարարության գործում:





ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ. Հայաստանի հիմնաքարերը*

ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հետադարձ հայացք գցելով Հայաստանի և հայ ժողովրդի բազմադարյան պատմության վրա՝ մենք նորից ու նորից համոզվում ենք, որ մեր ժողովրդի աննկուն աշխատասիրության, ազատ ապրելու և ստեղծագործելու տենչանքի, ուսման ծարավի ու հաղթողի բնավորության շնորհիվ է Հայաստանը գոյատևել մինչ այսօր: Իր պատմության բոլոր ելևէջներին նա հենվել է երեք հոգևոր հիմնաքարերի վրա՝ գիտություն, կրթություն, մշակույթ, որոնք միշտ շաղկապված են եղել վեհ գաղափարներով՝ սերն առ Հայրենիք և հավատն առ Աստված:

Պատահական չէ՝ երբ թվարկում են հայոց պատմությունը կերտող մեծերին՝ թագավորներին, կաթողիկոսներին, զորավարներին և քաղաքական գործիչներին՝ ժամանակն արժեքավորելու առումով, մեծ ակնածանքով հիշում են նույն դարաշրջանի հայ մեծ մտավորականներին՝ Մեսրոպ Մաշտոցին, Մովսես Խորենացուն, Դավիթ Անհաղթին, Անանիա Շիրակացուն, Գրիգոր Նարեկացուն և շատ ուրիշ մեծերի: Իսկ նոր և նորագույն ժամանակաշրջանների համար՝ Խաչատուր Աբովյանին, Կոմիտասին, Հովհաննես Թումանյանին, Մարտիրոս Սարյանին, Հովսեփ Օրբելուն, Վիկտոր Համբարձումյանին,

Արամ Խաչատրյանին և էլի շատ ուրիշների:

Դժբախտաբար, ժամանակները փոխվել են. մտավորականներն արդեն մոռացվում են, գերաշնորհ են համարվում այլ ոլորտի «գործիչները»:

Այնուհանդերձ, Հայաստանի Հանրապետության ապագան, նրա վարկն աշխարհում ես տեսնում եմ գիտության, կրթության և մշակույթի մեջ: Մյուսներն ածանցյալ են այս մնայուն մեծություններին:

Պետականությունը, քաղաքականությունը, տնտեսությունը, ազգային անվտանգությունն արժեգրվում են, եթե ամուրկանգնած չեն գիտության հաջողությունների, կրթյալ մարդկանց և բարձր մշակույթի տեր հասարակության վրա:

Ստորև հիմնականում խոսվելու է գիտության մասին, որը սերտորեն կապված է կրթության և մշակույթի հետ:

Հայ մշակույթի՝ աշխարհում ծանաչում գտած գործերն, ըստ էության, և՛ ձևով, և՛ իմաստով ազգային են, հայկական: Ես չեմ ընդունում ոչ հեռու անցյալում կանոնակարգված կարգախոսը՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական: Ձևը և բովանդակությունը շաղկապված են. բովանդակությունն է թելադրում ձևը, ձևը բովանդակության

ածանցյալն է: Իսկական բարձր արվեստը, լինելով ազգային, ունի համամարդկային հնչեղություն, եթե զերծ է ազգային սահմանափակվածությունից, գոեհիկ ընդօրինակումից և անիմաստ «մոդեռնիզմից»: Նա պետք է իմաստավորված լինի համամարդկային արժեք ունեցող գաղափարներով:

Հայ ստեղծագործողների շատ առաջնակարգ գործեր, որ զերծ են այդ թերություններից, գտել են համընդհանուր ճանաչում և պատիվ են բերում մեր ժողովրդին: Այսպես, օրինակ, Գրիգոր Նարեկացին ոգեշնչել է մեր ժամանակների հայտնի կոմպոզիտոր Ալֆրեդ Շնիտկեին գրելու երգչախմբի համար մի հոյակապ ստեղծագործություն, Ավետիք Իսահակյանի «Աբու-լալա Մահարին»՝ այս սքանչելի փիլիսոփայական պոեմը, թարգմանվել է մի քանի տասնյակ լեզուներով, Մարտիրոս Սարյանի կտավները զարդարում են տարբեր երկրների պատկերասրահները, Արշիլ Գորկին համարվում է ամերիկյան ժամանակակից կերպարվեստի հիմնադիրներից մեկը, Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները հայտնի են ամենուր, Վիլյամ Սարոյանի անունը XX դարի մեծանուն գրողների շարքում է, Սերգեյ Փարաջանովի ֆիլմերը դարձել են դասական, հայոց դու-

* Հոդվածն առաջին անգամ տպագրվել է 2005 թ. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» թերթում:



դուկը հնչում է աշխարհի տարբեր անկյուններում և էլի շատ ուրիշ հայկական ասելիքներ: Դժբախտաբար, այսօր հասարակությունը փոխվել է. բարձրարժեք մշակույթը չի ընկալվում, այն կորցրել է իր ժողովրդականությունն ու հմայքը: Լավագույն գրական երկերն ընթերցողներ գրեթե չունեն, անուշադրության են մատնված հայ ստեղծագործողների բարձրորակ գործերը: Իսկ մեր բեմահարթակներում և հեռուստատեսային հաղորդումներում, որոշ բացառություններով, գերիշխում են գավառականությունն ու շուկայական արվեստը, աղտոտված հայոց լեզուն:

Այս ամենը մտահոգիչ է: Սա շատ լուրջ խնդիր է, որ պահանջում է անհապաղ լուծումներ: Յուրաքանչյուր հապաղում ու բացթողում կարող է օրհասական լինել մեր ժողովրդի համար: Կրթության հարցը միշտ եղել է Հայ առաքելական եկեղեցու, պետության և ժողովրդի ուշադրության կենտրոնում: Հնագույն ժամանակներից Հայաստանում գործել են դպրոցներ և համալսարաններ: Բավական է հիշել Մեսրոպ Մաշտոցի (V դար), Անանիա Ծիրակացու (VII դար), Անիի (XI դար) դպրոցները, Սանահինի ակադեմիան (XII դար), Գլաձորի (XIII դար) և Տաթևի (XIV դար) համալսարանները: Ուսումնական կենտրոններ, որոնք դրեցին Հայոց գիտության և կրթության դարավոր ավանդույթների անկյունաքարերը:

Հատկանշական է, որ, ի տարբերություն ժամանակի եվրոպական համալսարանների, որտեղ դասավանդումը լատիներենով էր, հայկական համալսարաններում բոլոր առարկաները դասավանդվում էին մայրենի լեզվով՝ հայերենով: Այս պայմաններում, կանխարգելով ազգային սահմանափակվածության

վտանգը, հայերեն թարգմանվեցին այլազգի մի շարք հեղինակների ստեղծագործություններ՝ միաժամանակ աշակերտներին ուղարկելով տարբեր երկրներ՝ սովորելու լեզուներ և ձեռք բերելու այլ գիտելիքներ: Պատահական չէ, որ հայերը միակ ժողովուրդն են աշխարհում, որ ունեն կանոնակարգված Թարգմանչաց տոն, իսկ առաջին նախադասությունը, որ Մաշտոցը թարգմանել է հայերեն, եղել է Աստվածաշնչի այս խոսքերը՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ գբանս հանձարոյ»: Գիտության և կրթության մի ամբողջ ծրագիր:

Այսօր Հայաստանի Հանրապետության կրթական ոլորտում կան բազմաթիվ կնձռոտ և չլուծված հարցեր՝ դպրոցների հնացած շենքերը, ծերացած նյութատեխնիկական բազան, դասագրքերի որակը, դասավանդման մեթոդները, շրջանավարտների մնացորդային ցածր գիտելիքները և ընդհանուր մշակույթը:

Ընդունելի չեն դրսից թելադրված այն բոլոր «բարեփոխումները», որոնք բերում են դպրոցների փակման, ուսուցիչների կրճատման, 30-40 աշակերտանոց դասարանների առատության, աշակերտի բնակավայրից հեռու դպրոցների ցանցի ընդլայնման և այլն:

Անհապաղ պետք է ընդլայնել միջնակարգ մասնագիտական կրթության համակարգը: Մեզ պետք են տարբեր մասնագիտությունների միջին օղակի կրթյալ մասնագետներ: Անհնար է պատկերացնել հանրապետության տնտեսության կազմակերպումն առանց այդ մասնագետների:

Հանրապետությունում գործում են բազմաթիվ պետական և մասնավոր համալսարաններ, այլ երկրների համալսարանների մասնաձյուղեր: Կասկածից վեր է, որ Հայաստանում չկա և

առաջիկայում ևս չի լինի այդ համալսարանների քանակին համապատասխանող բարձրորակ պրոֆեսորադասախոսական կազմ: Ստեղծված պայմաններում ուշադրության արժանի դասախոսները, եթե գիտական հետազոտությամբ չեն զբաղվում, ապա որպես կանոն, աշխատում են մեկից ավելի համալսարաններում՝ հսկայական ծանրաբեռնվածությամբ, չնչին աշխատավարձով: Այս ամենը հանգեցնում է նրան, որ դասախոսը դադարում է գիտությամբ զբաղվելուց, չի հաղորդակցվում ժամանակակից գիտության հաջողություններին՝ տարեցտարի կորցնելով իր բարձր որակավորումը: Արդյունքը՝ ցածր որակի դասախոսություններ և ցածր որակավորում ունեցող շրջանավարտներ:

Ինչպես հայտնի է, հանրապետության կրթական համակարգը վերակառուցվում է ըստ Բոլոնիայի համաձայնագրի: Ըստ իս, այդ համաձայնագրի պահանջները պետք է իրականացվեն որոշ վերապահումներով: Ուժի մեջ պետք է թողնել այն ամենը, որը տասնյակ տարիներ տվել է լավագույն արդյունքներ, բարձրորակ մասնագետներ, որոնք հաջողությամբ աշխատում են աշխարհի բարձր վարկանիշ ունեցող գիտական կենտրոններում, բարձրագույն դպրոցներում, ձեռնարկություններում:

Հայաստանի Հանրապետության ամենակարևոր հիմնախնդիրներից մեկը կրթական համակարգի բարեփոխումն է և նրա առջև ծառայած բազմաթիվ և բազմաբովանդակ չլուծված խնդիրների լուծումը: Ստեղծված պայմաններում արտակարգ կարևորվում է Կրթության և գիտության նախարարության դերը: Այսօր այն պետք է զբաղվի միայն այդ հույժ կարևոր գործով՝ իրեն ազատելով գիտությունը կառա-



վարելու՝ պակաս ծանր հոգսից: Վախենալ պետք չէ. գիտությունն ինքնակառավարվող է, և նրա զարգացման գրավականը հենց նրա ազատությունն է:

Միանալով Բոլոնիայի համաձայնագրին, ինչպես նաև եվրոպական այլ կառույցների մեջ մտնելով՝ չպետք է մոռանալ մեր բազմամյա ձեռքբերումները: Այդ գործընթացը պետք է լինի արժանավայել: Անկասկած, նորն ու լավը պետք է ընդունել՝ այն համապատասխանեցնելով երկրի հնարավորություններին և ավանդույթներին:

Մենք եվրոպացիներ չենք, մենք եվրոպականացված ասիացիներ ենք, որն, ըստ իս, ավելի քիչ պատվավոր չէ, որքան զուտ եվրոպացի լինելը: Մենք, հիրավի, կարող ենք և պետք է հպարտանանք, որ ասիացի ենք, հպարտանանք մեր ծագումով և դարավոր պատմությամբ: Համոզված եմ, որ ձապոնացիները և չինացիները ևս հպարտ են, որ իրենք ասիացի են, հպարտանում են դարերից եկող համամարդկային արժեք ունեցող գիտությամբ, կրթությամբ, մշակույթով, ազգային ավանդույթներով, իրենց դինամիկ առօրյայով և կանոնակարգված ապագայով: Մենք հին ժողովուրդ ենք, բայց պետք է ամեն ինչ անենք, որ չդառնանք հնացած, չդառնանք ժողովուրդ՝ առանց ազգային ավանդույթների, ժողովուրդ՝ առանց ապագայի: Ուրեմն, եկեք որոշ վերապահումներով նայենք Հայաստանի եվրոպականացման գործընթացին:

Իհարկե, դա չի նշանակում, թե մենք չպետք է ձգտենք պատվարժան ձևով մտնել եվրակառույցների մեջ, դառնալ եվրամիության լիարժեք անդամ:

Ի դեպ, մենք պետք է հաշվի առնենք, որ գլոբալացում, ինտեգրացում և նման այլ հաս-

կացությունները, եթե, որոշ վերապահումներով, ընդունելի են վաղուց և հիմնականում՝ ձևավորված ուժեղ պետությունների համար, ապա նոր ստեղծվող պետությունների համար, որոնք դեռ ձևավորման գործընթացում են, դրանք ընդունելի չեն, քանի որ, անկասկած, կիսանգարեն ազատ, անկախ, ազգային պետություն ստեղծելու գործին: Այդ կապակցությամբ ուշադրությամբ պետք է հետևել նաև Հայաստանում գործող օտարածին պետական, հասարակական և մասնավոր կազմակերպությունների գործունեությանը:

Գիտությունը, ինքնին լինելով «պահպանողական», միաժամանակ մարդկային գործունեության առավելագույն դինամիկ, առաջադիմական ոլորտներից մեկն է: Եւ իր ներուժով ի վիճակի է կերպարանափոխելու տնտեսությունը, հասարակությունը, հասարակական հարաբերությունները, քաղաքականությունը և, ընդհանրապես, երկիրն ամբողջությամբ:

Գիտությունը տարիների ընթացքում աննկատ փոխել է Հայաստանի Հանրապետությունը՝ այն դարձնելով զարգացած արդյունաբերություն և գյուղատնտեսություն ունեցող երկիր: Հանրապետության քիմիական, լեռնամետաղագործական, ռադիոէլեկտրոնային, մանրէաբանական արդյունաբերությունները, ճշգրիտ գործիքաշինությունն ու մեքենաշինությունը, կառավարման էլեկտրոնային համակարգերի ստեղծումը և այլն արդյունք են մեր գիտության հաջողությունների:

Միշտ էլ բարձր է եղել հայ գիտության մակարդակը: Մաթեմատիկայի, մեխանիկայի, ֆիզիկայի, աստղաֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության հայկական գիտական դպրոցները հայտնի են աշխարհում: Հայ գիտնական-

ների ստացած արդյունքները համընդհանուր ձանաչում են գտել և լուրջ ներդրում են համաշխարհային գիտության մեջ: Մեր գիտնականների աշխատությունները թարգմանվել և հրատարակվել են աշխարհում բարձր գիտական վարկանիշ ունեցող երկրներում՝ ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Ճապոնիա, Գերմանիա, Չինաստան, Լեհաստան և այլուր: Նրանց մենագրությունների հիման վրա հատուկ դասընթացներ են կարդացվել աշխարհի տարբեր համալսարաններում: Նրանք ստացել են բազմաթիվ պետական և ակադեմիական բարձր պարգևներ ու մրցանակներ և այլն:

Անկասկած, Հայաստանի համար հույժ կարևոր էր անցյալ դարի առաջին կեսին Երևանի պետական համալսարանի և Գիտությունների ակադեմիայի ստեղծումը: Այդ իրադարձություններով իրականություն դարձան հայ մտավորականության դարավոր իղձերը: Ահա թե XX դարի սկզբին ինչ է գրել Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը. «Պետք է համախմբել հայ գիտնականներին, ստեղծել գիտություն հայերենով և հայ գիտնականների կաճառ, գիտության օջախ՝ Հայկական ակադեմիա: Եվ պետք է ստեղծել հայոց համալսարան, ուր կարելի լինի բարձրագույն գիտությունները ավանդել ու սովորել հայերենով»:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան հանրապետության գիտական բարձրագույն մարմինն է, կառավարության պաշտոնական գիտական խորհրդատուն: Այն կոչված է համակարգելու հանրապետությունում կատարվող գիտական հետազոտությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով հիմնարար գիտությունների զարգացմանը: Այն պետք է դառնա պե-



տության գլխավոր խորհրդատուն Հայաստանի Հանրապետության հիրավի կայացման և առաջընթացի՝ գիտականորեն հիմնավորված ռազմավարության մշակման գործում:

Հիմնարար գիտությունները դուրս են պետական սահմաններից, նրանց ստացած արդյունքները համընդհանուր են, մեկը մյուսին լրացնող: Հիմնարար գիտությունները զարգանում են անընդմեջ՝ սնվելով նոր գաղափարներով և գիտական հայտնագործություններով: Հին գաղափարները կրկնելը, ընդլայնելը, զարգացնելը միշտ չէ, որ ռացիոնալ է, քանզի կրկնությունը, լինելով մայրը ուսման, շատ հաճախ դառնում է խորթ մայրը առաջընթացի: Իսկ հիմնարար գիտությունը հենց առաջընթացի գրավականն է:

Հայագիտությունը, անկախ նրա «մոդեռնիստական» անվանակոչումներից, հիմնարար գիտությունների շարքում ունի իր ուրույն և պատվավոր տեղը: Հայագիտական հետազոտությունները, ունենալով ազգային երանգավորում, միշտ եղել են համաշխարհային գիտության ուշադրության կենտրոնում, քանզի կառուցվել են հազարամյակների խորքից եկող հենքի վրա:

Վերջերս փորձ է արվում «խմբագրել» մեր պատմությունը՝ հայկական պատմական հուշարձանները վերագրելով այլ ժողովուրդների և կամ փոխելով դրանց ժամանակագրությունը: Պետք չէ թույլ տալ, որ մի շարք օտարածին կամ էլ «հայրենական» գիտականորեն չհիմնավորված գաղափարներով խեղաթյուրվեն մեր պատմությունն ու մեր պատմագիտության հիմնադրույթները: Այս գործում հսկայական է ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի և նրա ինստիտուտների դերը:

Հանրությունը պետք է գիտենա ճշմարտությունը:

Հիմնարար գիտությունները, ինչպես բոլոր քաղաքակիրթ երկրներում, պետք է հովանավորվեն պետության կողմից: Դրանք ամբողջապես պետք է ֆինանսավորվեն պետական բյուջեի միջոցներից և, առանձին դեպքերում, անշահախնդիր բարերարների կողմից:

Երկրի ապագայի և ազգային անվտանգության տեսակետից բավական վտանգավոր է, երբ հիմնարար գիտությունները ֆինանսավորում են արտասահմանյան, հատուկ հիմնադրամներ՝ իրենց հովանավորած կամ թելադրած ծրագրերով, արտասահմանյան համակարգողի մասնակցությամբ: Իհարկե, այդ հնարավորությունները պետք է լիովին օգտագործել, բայց ինչպես հայտնի է, ամեն տեսակի գումար չէ, որ կարելի է ընդունել: Ինչպես ասում են, դրամը ևս կարող է «հոտ» ունենալ: Բանն այն է, որ հիմնարար գիտությունների բնագավառում ստացված արդյունքները և որոշումները, որոնք ընդունվում են այդ արդյունքների հիման վրա, ի վիճակի են որոշակիորեն ազդելու պետական կառավարման ինստիտուտների քաղաքականության վրա՝ զգալիորեն փոխելով երկրի զարգացման՝ պետության և ժողովրդի կողմից ընդունված ծրագրերը:

Գիտությանը, կրթությանը և մշակույթին սատարող բոլոր օտարածին ֆինանսական միջոցները, անկախ դրանց ձևից և ծագումից (հիմնադրամներ, պարգևներ, օգնություն, դրամաշնորհներ և այլն), պետք է վերահսկեն ՀՀ ԳԱԱ-ն, համապատասխան նախարարությունները և գերատեսչությունները:

Կիրառական գիտությունները, որոնց հիմքում ընկած են հիմ-

նարար գիտությունները, պակաս կարևոր չեն հանրապետության համար, քան բուն հիմնարար գիտությունները: Այդ գիտությունները պետք է զարգանան համընթաց՝ մեկը մյուսին հարստացնելով: Ի դեպ, պետք է զարգացնել այն կիրառական գիտությունները, որոնք հեռանկարային են հանրապետության տնտեսական առաջընթացի համար: Այսօր մեզ համար առաջնային են էներգետիկայի հարցերի և հատկապես էներգիայի վերականգնվող աղբյուրների, լեռնամետաղագործության հիմնախնդիրների ուսումնասիրությունները, ճարտարագիտական սեյսմաբանության գծով հետազոտությունները, էլեկտրոնային և ռադիոֆիզիկական սարքերի և համակարգերի, մանրէաբանական պրոցեսների նոր տեխնոլոգիաների, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական արտադրության ստեղծումը, նոր, տրված հատկություններով օժտված նյութերի, տեղեկատվական և կառավարման համակարգերի ստեղծումն ու ուսումնասիրումը:

Կիրառական գիտությունների բազմաբովանդակ արդյունքները տնտեսության մեջ ներդնելու համար հույժ կարևոր է նոր, բարձր տեխնոլոգիաների առկայությունը: Անհապաղ պետք է խթանել լայնածավալ հետազոտություններ բարձր տեխնոլոգիաների բնագավառում:

Կիրառական գիտությունները, որոնք զգալիորեն կապված են մեծածավալ ֆինանսական ներդրումների հետ, զարգացման պրակտիկայի տեսակետից միշտ պետք է լինեն կառավարության ուշադրության կենտրոնում: Բոլոր տնտեսական պայմանագրերը, որոնք կնքվում են պետական կամ մասնավոր ձեռնարկությունների հետ, պետք է պարունակեն հողվածներ տվյալ տնտեսական



գործունեության հետ առնչվող կիրառական գիտությունների ֆինանսավորման մասին:

Գիտության զարգացումը սերտորեն կապված է երկրի տնտեսական, ռազմական հզորության, քաղաքական մթնոլորտի և հասարակության սոցիալական վիճակի հետ: Պետությունը և հասարակությունը պետք է լավ գիտակցեն, որ ժամանակակից բարեկեցիկ և քաղաքակիրթ երկիր չի կարելի ստեղծել՝ առանց գիտության ձեռքբերումների վրա հենվելու: Այլ ծանապարհ չկա: Հարմանալին այն է, որ մարդիկ միանգամայն անտարբեր են գիտության նկատմամբ, թեև անուղղակիորեն օգտվում են գիտության բարիքներից՝ գեղեցիկ ավտոմեքենաներ, գերբարձր արագության ինքնաթիռներ, ռադիո և հեռուստատեսություն, էլեկտրական լույս և ջեռուցում, համաշխարհային ինտերնետային կապ և տեղեկատվություն, կյանքի անբաժան ընկեր բջջային հեռախոս և շատ ու շատ ուրիշ գեղեցիկ բաներ: Այս ամենն արդյունք են գիտության հաջողությունների, և դա պետք է ըմբռնեն թե՛ հասարակությունը և թե՛ երկիրը կառավարողները:

Հայաստանն ունի բազմատեսակ բնական հարստություններ, բայց դրանք այնքան չեն, որ դրանց ուղղակի օգտագործումը երկիրը դարձնի գեղեցիկ ու բարգավաճ: Սակայն կա զորեղ մտավոր ներուժ, որն ի վիճակի է իրականացնելու ժամանակակից ինովացիոն քաղաքականություն և տնտեսական ոլորտում, և քաղաքական ինստիտուտներում: Այն իրականացնելու համար պետք է ունենալ հստակ ձևակերպված օրենքներ և իրավական դաշտ: Հանրապետության ինովացիոն գործընթացը կազմակերպելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր

պետք է ստեղծել ինովացիայի և բարձր տեխնոլոգիաների հանձնաժողով, որի կազմում պետք է ընդգրկվեն գիտնականներ, տնտեսության առաջատար մասնագետներ, ֆինանսիստներ և գործարարներ:

Մեզ համար ընդունելի չէ «հասնել և անցնել» կարգախոսը, քանզի մենք չենք կարող ոչ հասնել և ոչ էլ անցնել: Մենք պետք է գնանք ուրույն ծանապարհով, մեզ պետք են նոր ծանապարհներ, զանգվածային ինովացիոն քաղաքականություն, ինովացիոն երկիր: Այնժամ կարող է և գտնենք մեր պատվավոր տեղը քաղաքակիրթ աշխարհում: Հայաստանն այդ հնարավորություններն ունի, քանի որ ինովացիայի հիմքում ընկած են հիմնարար գիտությունները, որտեղ արդեն մենք ունենք մեր որոշակի տեղն աշխարհում:

Անկասկած, բարեփոխումների կարիք ունի նաև հանրապետության գիտության համակարգը: Ահա ուշադրության արժանի մի քանի դրույթ:

Գիտությունը պետք է համալրվի երիտասարդ, հեռանկարային այնպիսի մասնագետներով, որոնք ամուր կանգնած են նախորդ սերունդների ստացած գիտական հիմնարար արդյունքների վրա, շարունակում են ծանաչված գիտական դպրոցների ավանդույթները՝ դրանք հարստացնելով նոր գիտական արդյունքներով, որոնք հիմք կծառայեն նոր գիտական դպրոցների ստեղծման համար:

Անհրաժեշտ է թարմացնել գիտահետազոտական ինստիտուտների գիտատեխնիկական բազան: Գիտությունը պետք է սպառազինվի նոր և նորագույն գիտական սարքերով: Հին և հնամաշ սարքերի օգնությամբ կարելի է ստանալ միայն «հին և հնամաշ» գիտական արդյունքներ:

Ընկել է հրատարակվող

գիտական աշխատությունների որակը: Ծուկայական հարաբերությունների պայմաններում մի շարք մասնավոր և որոշ պետական հրատարակչություններ ու տպարաններ, առանց լուրջ գիտական գրախոսման, տպագրում են աշխատություններ, որոնք պատիվ չեն բերում մեր գիտությանը: Անհապաղ պետք է միջոցներ գտնել՝ վերացնելու ստեղծված անթույլատրելի կացությունը: Ծայրահեղ զավառական, գործից անտեղյակ դիլետանտների գրած «ազգասիրական» հոդվածներն ու գրքերը վնասակար են, շեղում են ընթերցողին՝ սերմանելով նրա մեջ հիվանդ սնապարծություն: Մի հիվանդություն, որն ամենուր խանգարել և խանգարում է առաջընթացին:

Եզակի գիտական սարքավորումները համատեղ օգտագործելու նպատակով պետք է շարունակել ստեղծել ինքնաֆինանսավորվող գիտական կենտրոններ՝ թույլ չտալով, սակայն, որ դրանք վերածվեն սովորական գիտահետազոտական ինստիտուտների և/կամ հայտնի ինստիտուտների կցորդների՝ բյուջետային ֆինանսավորմամբ:

Անընդունելի է, երբ գիտահետազոտական ինստիտուտներն ու լաբորատորիաները գրեթե ամբողջությամբ կենտրոնացվել են երևանում: Հանրապետության գիտական ենթակառուցվածքն առողջացնելու նպատակով ՀՀ ԳԱԱ-ն պետք է ունենա իր մասնաձյուղերը կամ կենտրոնները հանրապետության առանձին տարածաշրջաններում: Մասնավորապես, պետք է վերակենդանացնել Գյումրիի մասնաձյուղի գործունեությունը՝ որպես ՀՀ ԳԱԱ հյուսիսային մասնաձյուղի: Նոր հարավային գիտական կենտրոն պետք է ստեղծել Գորիսում՝ նրա վրա դնելով նաև Արցախի գիտական օջախների հետ համագոր-



ծակցության կազմակերպումը:

Քննության առարկա պետք է դառնա այն գիտական միավորումների հարցը, որոնք ժամանակին օտարվել են Հայաստանի գիտությունների ակադեմիայից: Պետք է մտածել դրանց մի մասը ԳԱԱ համակարգ վերադարձնելու մասին:

Պաշտպանվում են ցածրորակատենախոսություններ՝ հաճախ գիտական նորմերի խախտումներով: Պետք է վերանայել գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների թվաքանակը, կազմը և ենթակայությունը: ԲՈՒՀ-ը պետք է գործի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր:

ՀՀ ԳԱԱ կազմում պետք է ունենալ ուրույն կարգավիճակով բարձրագույն ուսումնական հաստատություն, որտեղ դասավանդումը կկազմակերպվի հատուկ ծրագրերով, դասավանդման նոր մեթոդներով և այնպիսի դասախոսական կազմով, որը համալրված է գիտահետազոտական ինստիտուտների ակտիվ ստեղծագործող գիտական աշխատակիցներով:

Ժամանակն է ՀՀ ԳԱԱ հովանուները վերականգնելու Մոսկվայի Լազարյան ծեմարանը՝ որպես Հայ-ռուսական համալսարան՝ հայագիտության, արևելագիտության և միջազգային իրավագիտության ֆակուլտետներով:

Հանրապետությունում պետք է հիմնադրել ակադեմիական մրցանակներ՝ երիտասարդ գիտնականների և կրթական թոշակներ՝ գիտական հակումներ ցուցաբերած լավագույն ուսանողների համար:

Հայաստանի Հանրապետության տնտեսական կյանքը, ներքին և արտաքին քաղաքականությունը, ազգային անվտանգության հարցերը կարիք ունեն գիտական վերլուծության: Այս և

նման այլ հարցերի ուսումնասիրության համար, ըստ իս, անհրաժեշտ է ՀՀ ԳԱԱ համակարգում ունենալ Ազգային անվտանգության և ստրատեգիական հարցերի գիտահետազոտական ինստիտուտ՝ համալրված տարբեր բնագավառների բարձրորակ մասնագետներով:

Հսկայական է ՀՀ ԳԱԱ և հանրապետության առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունների համագործակցության դերն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետության կայացման, զարգացման և գոյատևման գործում: Ի դեպ, արդյունավետ համագործակցություն հնարավոր է իրագործել միայն առողջ, քաղաքակիրթ և ստեղծագործ մտավորականության առկայության պայմաններում: Հիշենք, որ իսկական մտավորական անհատականություն է, նա, որպես կանոն, հանդես է գալիս իբրև քննադատական և կառուցողական ընդդիմություն: Պետությունը պետք է հենվի այդ մտավորականների վրա. չէ՞ որ հայտնի է՝ հենվել կարելի է այն բանի վրա, որ դիմադրում է: Բայց, ավանդ, այսօր այդպես չէ: Կառավարման տարբեր ոլորտի մեծ ու փոքր գործիչներ շատ հաճախ հենվում են քծնող, անհարգի ծառայություններ մատուցող, արկածախնդիր «մտավորականների» վրա:

Որոշակի բարեփոխումների կարիք ունի նաև ՀՀ ԳԱԱ կառավարման համակարգը:

Անհրաժեշտ է ավելի սերտացնել բաժանմունքների և ինստիտուտների կապը: Բաժանմունքները, համալսարանները և պրոբլեմային խորհուրդները, պետք է հանդես գան որպես գիտության տվյալ բնագավառի համակարգող հանրապետությունում: Կարծում եմ՝ պետք է վերանայել բաժանմունքների կազմը՝ այն դարձնել

լով ավելի նեղ մասնագիտական:

Հաշվի առնելով, որ հանրապետությունում ի վերջո գերակայելու է մասնավոր սեփականությունը, ՀՀ ԳԱԱ կանոնադրության մեջ պետք է տեղ գտնեն հողվածներ, որոնք կարգավորում են գիտական արդյունքների, այսինքն՝ մտավոր սեփականության՝ շուկայական իրացման հարցերը:

Անհրաժեշտ է վերականգնել Ակադեմիայի և նրա բաժանմունքների տարեկան ընդհանուր ժողովներում գիտական զեկուցումներ լսելու շատ կարևոր և իմաստավորված ավանդույթը: Դա գիտության քարոզչության լավագույն միջոցներից մեկն է և դպրոց է երիտասարդ գիտնականների համար:

Պետք է կրճատել Ակադեմիայի նախագահության կազմը՝ այն դարձնելով ավելի օպերատիվ և գործնական: Նախագահության նիստերում պետք է լսել հանրապետությունում ստացված առավել հետաքրքրություն ունեցող գիտական արդյունքները: Նախագահությունը պետք է դառնա գիտության բարձրագույն փորձագետը հանրապետությունում:

Ընդունելի չէ ԳԱԱ փոխնախագահների և ակադեմիկոս-քարտուղարների պաշտոնների համատեղումը: Դա Ակադեմիայի կառավարման տեսակետից ուսցիոնալ չէ, եթե չչասենք հակակառուցողական է:

Վերջերս Հայաստանի մի շարք աստիճանավորված և իրենց վիճակից չբավարարված որոշ գիտնականներ իրենց գիտական անհաջողությունները տեսնում են ՀՀ ԳԱԱ կառուցվածքի, նախագահության անդամների և տարեց ակադեմիկոսների մեջ: Նրանք առաջարկում են վերակառուցել Ակադեմիան՝ ըստ արևմտյան մոդելների, վերատեստավորել տարեց ակադեմիկոսներին և, վերջապես, քննար-



կել Ակադեմիայի գոյության անհրաժեշտության հարցը:

Վաստակաշատ տարեց գիտնականների մասին խոսելն առնվազն անբարոյականություն է և անհարիր մեր ժողովրդին: Չէ որ այդ մարդիկ իրենց բազմամյա գիտական գործունեությամբ փառք ու պատիվ են բերել հայոց գիտությանը, Հայաստանին: Ի դեպ, ես գիտեմ մեծ թվով տարեց գիտնականների, ովքեր այսօր էլ ստեղծագործում են և ավելի գործունյա են, քան նրանց ինքնահավան երդվյալ քննադատները:

Անհեթեթություն է Ակադեմիայի վերակառուցումն ըստ արևմտյան մոդելների: Ինչո՞ւ քանդել մի ամբողջ համակարգ, որն իր ստեղծման օրից ձեռք է բերել բարձր ծանաչում գիտական աշխարհում՝ տալով միջազգային արժողության գիտական ստեղծագործություններ: Նա այսօր էլ իր «հնացած» կառուցվածքով, իր վարած գիտական քաղաքականությամբ Հայաստանի Հանրապետության առաջընթացի կարևոր գրավականներից մեկն է: Այնուհետև չպետք է մոռանալ, որ մենք չունենք և առաջիկայում ևս չենք ունենա այնպիսի ֆինանսատեխնիկական հնարավորություններ, ինչպիսիք ունեն աշխարհում

ճանաչված գիտական կենտրոնները, որոնց համար Գիտությունների ակադեմիան ուրիշ դեր ու նշանակություն ունի:

Չեմ ընդունում ակադեմիական ինստիտուտների օտարումը ՀՀ ԳԱԱ-ից և տեղափոխումը տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ: Համոզված եմ, որ նրանք բուռնորեն կկորցնեն իրենց նշանակությունը: Սխալ է հիմնարար գիտություններով զբաղվող ակադեմիական ինստիտուտների միացումը, եթե անգամ դրանք ունեն ձևական նմանություն: Գիտակ մարդիկ գիտեն, որ հիմնարար գիտությունները հիմնականում զարգանում են և հասնում մեծ հաջողությունների, ոչ մեծածավալ և սահմանափակ թվով համասեռ թեմաներ ունեցող ինստիտուտներում:

Ինչ վերաբերում է ՀՀ ԳԱԱ-ն լուծարելու ապազգային գաղափարին, ապա կցանկանայի հիշեցնել հետևյալը: Այդօրինակ իրադրություն կար նաև Ռուսաստանում, բայց դա ի չիք եղավ, երբ երկրի նախագահը հայտարարեց. «Ոչ մի նմանատիպ բան, որ կարող է բերել Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի լուծարմանը, երկրի ղեկավարներին կողմից չի սատարվի»:

Գիտությունների ազգային ակադեմիան վերափոխելիս մենք պետք է գնանք մեր ընտրած ճանապարհով՝ վերցնելով և տեղայնացնելով այն լավը, որ կա ուրիշ ակադեմիաներում՝ չխախտելով պատմականորեն ձևավորված մեր լավագույն ավանդույթները: Այստեղ տեղին է հիշատակել Նորբեյան մրցանակի դափնեկիր, ակադեմիկոս Ժ. Ալֆյորովի խոսքերը. «Իսկապես Գիտությունների ակադեմիան պահպանողական կազմակերպություն է, որով կարելի է հպարտանալ, չէ որ մեկը պետք է լինի, որ պահի գաղափարներն ու ավանդույթները»:

Այսօր Հայաստանում գործում են մեծ թվով հասարակական ակադեմիաներ, օտարերկրյա ակադեմիաների մասնաճյուղեր, որոնց գործունեությունը, դժբախտաբար, որոշ բացառություններով, աջ ու ձախ ակադեմիկոսի կոչում շնորհելն է, պատվոգրեր և դիպլոմներ հանձնելը, մեծանուն գիտնականների անուններ կրող մեդալներով պարգևատրելը, գերպատվավոր տիտղոսներ շնորհելը և այլն: Այսօր Հայաստանում ավելի շատ ակադեմիկոսներ ունենք, քան ոչ շատ հեռու անցյալում՝ գիտության դոկտոր-



ներ: Ազատություն, անկախություն, ժողովրդավարություն՝ չի նշանակում հանրապետության գիտական կյանքի վերածում «արևելյան շուկայի»: Բավ է երկիրը հեղեղել գավառական «հանձարներով»:

Ես դեմ չեմ հասարակական ակադեմիաներին, բայց դրանք պետք է լինեն իսկապես հասարակական, թվով՝ սահմանափակ, և կատարեն հանրագուտ աշխատանք հանրապետության համար և ոչ թե զբաղվեն ցուցամոլությամբ՝ ի լուր ամենքի:

Մի քանի խոսք «ուղեղների արտահոսքի» մասին: Անշուշտ, ցանկալի չէ, որ գործունյա մտավորականը ստեղծագործության համար բարենպաստ պայմանների բացակայության պատճառով հեռանա Հայաստանից: Սակայն դա ունի նաև իր դրական նշանակությունը: Վերջին հաշվով, ընդլայնվում է հայ գիտնականների գործունեության դաշտը, և, որպես կանոն, Հայաստանից հեռացած գիտության իսկական նվիրյալը չի խզում իր գիտական կապերը՝ շարունակելով համագործակցությունը Հայաստանում աշխատող իր գործընկերների հետ: Եվ եթե ժամանակին ստեղծվեն բարենպաստ պայմաններ, նրանք հայրենիք կվերադառնան գիտական նոր գաղափարներով:

Ամենևին չեմ ընդունում այն հայտարարությունները, թե Հայաստանից հեռացել է երիտասարդ մտավորականության լավագույն մասը: Անհեթեթ հայտարարություն, որը տարածում են հայրենիքից հեռացած շնորհազուրկ մասնագետները և դժգոհության ցավով տառապող մտավորականները: Հայաստանի Հանրապետությունում կան և գործում են աշխարհում ծանաչված մտավորականներ և տաղանդավոր երիտասարդ գիտնականներ, որոնք շատ ավել

լի առաջադեմ ու լուսավոր են, քան հեռացածներից շատերը:

Սփյուռքահայ մտավորականության մեջ կան աշխարհում ծանաչված բարձրորակ մասնագետներ: Նրանց հետ պետք է համագործակցել հավասարը հավասարի հետ նշանաբանով: Մենք պետք է կատարենք համատեղ հետազոտություններ, ստեղծենք համատեղ գործող գիտական կենտրոններ և լաբորատորիաներ (իհարկե, Հայաստանում), կազմակերպենք համատեղ գիտաժողովներ և այլն, անկախ հետազոտությունների ոլորտից: Այդ համագործակցության մեջ մենք կուզենայինք տեսնել նաև Սփյուռքի մեր հայրենակիցների այլազգի գործընկերներին: Բայց, դժբախտաբար, մեր գերհարգալից վերաբերմունքը նրանց նկատմամբ, կոչումներ և պարգևներ շնորհելու շուրջ քաղաքականությունը հաճախ ընկալվում է յուրովի: Նրանց հաճախ թվում է, թե իրենց կոչումը մեզ լուսավորելն է: Մենք բոլորս պետք է քաջ գիտենանք, որ աշխարհով մեկ սփռված հայությունը հայ է մնացել շնորհիվ մայր գիտության, կրթության և մշակույթի, որոնք գործում են, քանի դեռ կան Հայ առաքելական եկեղեցին և Հայաստանի Հանրապետությունը:

Հայաստանի գիտությունն իրավունք չունի սահմանափակելու իր միջազգային կապերը՝ համագործակցելով միայն սփյուռքահայ գիտնականների հետ: Մենք պետք է խորացնենք և ընդլայնենք մեր համագործակցությունը աշխարհի բոլոր առաջատար գիտական կենտրոնների հետ:

Գիտության զարգացման և ինովացիոն քաղաքականության հարցերում մեծ է գործարար մարդկանց դերը: Նրանք պետք է նորովի նայեն իրենց գործունեությանը՝ գիտակցելով, որ իրենց

գործի հետագա առաջընթացը պայմանավորված է իրենց ոլորտի գիտության առաջընթացով: ՀՀ ԳԱԱ-ն երախտագիտությամբ է հիշում այն գործարար մարդկանց անունները, որոնք անշահախնդիր օգնում և օժանդակում են գիտության զարգացմանը: Մենք ակնածանքով ենք նշում նրանց անունները՝ Հրանտ Վարդանյան, Արա Աբրահամյան, Լուիզ-Սիմոն Մանուկյան, Հովնանյան եղբայրներ, Կյուլպենկյան հիմնադրամի տնօրինություն:

Հսկայական է պետության և հասարակության դերը գիտության, կրթության և մշակույթի զարգացման գործում: Հանրապետության նախագահից մինչև շարքային քաղաքացին պետք է գիտենան, որ Հայաստանի Հանրապետության համար գիտությունը, կրթությունը և մշակույթը առաջնային են: Պետությունը, պետական, քաղաքական և հասարակական գործիչները արմատապես պետք է փոխեն իրենց վերաբերմունքն այդ մնայուն իրողությունների նկատմամբ: Հայտնի է, որ միայն գիտականորեն հիմնավորված տնտեսությունն ու պետական քաղաքականությունն են ի վիճակի արմատապես բարեփոխելու հանրապետության սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական իրավիճակն ու ազգային անվտանգության մակարդակը և ապահովելու պետության կայունությունն ու արժանավայել տեղը քաղաքակիրթ երկրների շարքում:

Այսպես, գիտության և հատկապես Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի առջև դրված են չափազանց կարևոր խնդիրներ: Այդ խնդիրները լուծելու համար նախ և առաջ պետք է լուծվի գիտության ֆինանսավորման հարցը: Այն պետք է ֆինանսավորվի գոնե աշխարհում



ընդունված նվազագույն չափաքանակով: Դժբախտաբար, մեր գիտությունը ֆինանսավորվում է բյուջեի ծախսային մասի 1 տոկոսի չափով, որը երեք անգամ պակաս է ընդունվածից: Չնայած այս անընդունելի իրավիճակին՝ գիտության նվիրյալներն աշխատում են չնչին (նվաստացուցիչ) աշխատավարձով՝ ստանալով ուշադրության արժանի նոր գիտական արդյունքներ: Եվ բնական է ամերիկյան պաշտոնական փորձագետների զարմանքն ու վերջերս արած հայտարարությունը. «Չնայած բոլոր դժվարություններին, Հայաստանի գիտնականները պահպանել են իրենց բարձր մակարդակը և դրամական միջոցների խիստ սահմանափակվածության պայմաններում հասել են տպավորիչ արդյունքների»:

Բացարձակապես ընդունելի չեն այն հայտարարությունները, թե Հայաստանում այլ հնարավորություններ չկան: Ֆինանսական հնարավորություններ կան, դրանք պետք է բացահայտել ու բաշխել՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ապագան և ոչ թե օրվա կոնյունկտուրան: Ըստ իս, անհապաղ պետք է վերանայել բյուջեից սնվող կազմակերպությունների թվաքանակը, դրանց անհրաժեշտությունը և ծախսերի չափը: Այսպես, օրինակ՝

- Հիմնավորված չէ հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների թվաքանակը: Գիտակ մարդիկ ասում են, որ եթե մոռացվեն քաղաքական շարժառիթները, դրանց թիվը կարելի է կիսով չափ պակասեցնել:

- Ակնհայտ է, որ ոչնչով հիմնավորված չէ Ազգային ժողովի պատգամավորների թվաքանակը: Համեմատելով այն մեր կարգի երկրների պառլամենտների

հետ՝ դժվար չէ նկատել, որ այն ուռձացված է:

Անհասկանալի է հանրապետության Հանրային հեռուստատեսության ֆինանսավորումը բյուջեից; Աշխարհին է հայտնի, որ հեռուստատեսությունն առավել շահութաբեր ձեռնարկություններից է և կարող է բյուջեն սնել մեծածավալ հարկերով: Ինչ վերաբերում է պետական, կառավարական և այլ բյուջետային կազմակերպություններին, ապա նրանք գործի համար անհրաժեշտ հեռուստահաղորդումները կազմակերպելու համար սեփական բյուջեում պետք է նախատեսեն համապատասխան գումար: Չարմանալի չէ, արդյոք, երբ 2005 թվականի բյուջեով ՀՀ ԳԱԱ ողջ համակարգին տրվում է 2,002 միլիարդ դրամ, իսկ Հանրային հեռուստատեսությանն ու ռադիոյին՝ 3,097 միլիարդ դրամ:

Կան նաև այլ պաշարներ՝ կապված բուն գիտության կազմակերպման հետ:

Կիրառական գիտություններով զբաղվող ինստիտուտները և գիտական կենտրոնները կարող են համապատասխան արտադրական ձեռնարկությունների հետ համատեղ ստեղծել ինքնաֆինանսավորվող գիտաարտադրական միավորումներ, տեխնոպարկեր, որոնք, իրացնելով իրենց գիտատար արտադրանքը, ի վիճակի կլինեն ֆինանսավորել մայր գիտությունը և գիտությունն ընդհանրապես:

Գիտահետազոտական ինստիտուտներին տալով ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ՝ նրանց զրկել են սեփական մտավոր հարստության շուկայական, գիտության համար անհրաժեշտ, ազատ և լայն իրացման հնարավորությունից: Վերացնելով այդ արգելքը՝ ինստիտուտները նման եղանակով ստացած եկամուտները կօգ-

տագործեն գիտության հետագա զարգացման համար:

Ի դեպ, հաճախ պնդում են նաև, թե գիտությունը շահութաբեր չէ, և գիտական կազմակերպությունները պետք է դասվեն շահույթ չհետապնդող կազմակերպությունների շարքը: Հարկավ, միշտ չէ, որ գիտությունն ամենօրյա ակնառու շահույթ է բերում: Բայց հայտնի է, որ նա հասարակության ամենաշահութաբեր գործոնն է, և բնական է, որ պետք է շահույթ հետապնդի: Ակնհայտ է նաև, որ ժամանակակից էներգետիկան, արդյունաբերությունը, կապը, տրանսպորտը, գյուղատնտեսությունը շահութաբեր են: Բայց չէ՞ որ դրանց բարձր շահութաբերության հիմքում ընկած են գիտության ձեռքբերումները, գիտական նոր արդյունքները: Ուրեմն՝ գիտությունը բազմակողմանի շահութաբեր է և, բնական է, շահույթ հետապնդող: Այսպիսով՝ գիտությունը միշտ էլ պետք է ստանա շահույթի իր մասնաբաժինը:

Վերջապես, գիտությունը կարող է թեթևացնել իր հոգսերը՝ վերանայելով հանրապետության բյուջեով ֆինանսավորվող գիտական կազմակերպությունների ցուցակը, թողնելով այնտեղ միայն արժանիներին՝ այն կազմակերպությունները, որոնք ստացել են միջազգային ծանաչում գտած գիտական արդյունքներ, ստեղծել են հայտնի գիտական դպրոցներ, կատարել են միջազգային հնչեղություն ունեցող հայագիտական հետազոտություններ, իրենց ստացած արդյունքներով սատարել են հանրապետության տնտեսության զարգացմանը:

Հաճախ սահմանափակ ֆինանսական հնարավորություններն առիթ են տալիս գիտությունից հեռու քաղաքական որոշ գործիչների՝ ոչ հեռատես հասարակագետների թելադրանքով



հայտարարել, որ եթե ֆինանսական հնարավորությունները չեն ներում, թող այլ գիտություններով զբաղվեն հարուստ երկրները, իսկ մենք կզբաղվենք միայն հայագիտությամբ: Այդ հիվանդ գաղափարների անհեթեթությունը լավ էր հասկանում Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին նախագահ Հովսեփ Օրբելին, որը Ակադեմիայի կազմը ձևավորելիս 23 հիմնադիր անդամներից 17-ին առաջադրեց ֆիզիկամաթեմատիկական և բնական գիտություններից: Նա լավ գիտեր, որ հայագիտության զարգացման համար պետք է հանրապետությունում ունենալ բազմաբովանդակ գիտական մթնոլորտ, որ մի գիտությամբ, թեկուզ և ազգային ու բազմաբովանդակ, առողջ գիտական մթնոլորտ ստեղծել հնարավոր չէ:

Այստեղ մասնակիորեն լուսաբանվեցին նաև գիտության ֆինանսավորման հետ կապված հարցեր: Վիճակը բարվոք չէ, բայց, ըստ իս, խնդիրն ունի հեռու գնացող խոր արմատներ: Բանն այն է, որ, դժբախտաբար, հանրապետությունում գործող համակարգը, ինչպես նշում են իրավասու մարմինները, կոռումպացված է, և բնական է՝ այդ համակարգի չկոռումպացված ենթաբաժինները ֆինանսական հետաքրքրություն չեն ներկայացնում և նորմալ ֆինանսավորվել չեն կարող: Փառք Աստծո, վերջերս հանրապետության բարձրաստիճան ալրերն սկսել են «խաչակրաց» արշավանք կոռուպցիայի դեմ: Վիճակի շտկման հույսեր կան: Ապրենք հույսով: Ի դեպ, չմոռանանք, որ կոռուպցիան չինովնիկների, օլիգարխների և քրեական հեղինակությունների դիկտատուրան է:

Անկասկած, վերոնշյալ հարցերը բարդ են և բազմաշերտ, դրանք առնչվում են հանրապե-

տության տնտեսական, սոցիալական և քաղաքական հիմնախնդիրներին: Բայց ուշ թե շուտ այդ հարցերը պետք է լուծվեն (ըստ իս, այդ հարցերի օպտիմալ լուծումները հետաքրքիր են ոչ միայն գիտության տեսակետից): Դրանք կարող են իրատեսական լուծումներ ստանալ միայն համակարգային վերլուծության պայմաններում: Համադրելով այդ բոլոր հանգուցային հիմնախնդիրները, օգտվելով գիտական վերլուծության կանոններից՝ հնարավոր կլինի գտնել դրանց առավել ընդունելի լուծումները: Մենք պետք է ունենանք Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքներ և իրավական փաստաթղթեր, որոնք պետք է լինեն գիտականորեն հիմնավորված, հստակ ձևակերպված և ձկուն, որպեսզի հետագայում՝ ենթաօրենսդրական ակտեր և նորմատիվային փաստաթղթեր ստեղծելիս, ստիպված չլինենք ընդունել բազմաթիվ բացառություններ: Դժբախտաբար, միշտ չէ, որ մեր օրենքներն այդպիսին են:

Սակայն այդ ամենի համար պետք է ունենալ Հայաստանի Հանրապետության կառուցման, զարգացման և գոյատևման գիտականորեն հիմնավորված ռազմավարություն և դրանից բխող մարտավարական քայլեր, որոնք ընդունելի են ժողովրդի կողմից և հավատ են ներշնչում:

Ամենօրյա խնդիրների մարտավարական, թեկուզ և լավ լուծումներով կայուն ժողովրդավարական պետություն ստեղծել հնարավոր չէ:

Մենք պետք է հստակ գիտենանք, թե ուր ենք գնում, ինչպիսի պետություն ենք ստեղծում: Դարավոր գիտություն, կրթություն և մշակույթ ունեցող հայ ժողովուրդը և նրա պետությունը չեն կարող հանգրվանել քաղաքա-

կիրթ աշխարհի հեռավոր և մութ անկյուններից մեկում:

Ես դեմ եմ նաև, երբ պետական, քաղաքական և տնտեսական որոշ գործիչներ երկիրը «փրկելու» համար համառորեն ուզում են Հայաստանը դարձնել զանգվածային զբոսաշրջության երկիր՝ հանրապետության ողջ տարածքը ծածկելով հյուրանոցների, ռեստորանների, սրճարանների, խաղատների, գիշերային ակումբների խիտ ցանցով՝ ժողովրդին թողնելով միայն քիչ թե շատ կրթված սպասավորների դերը: Զբոսաշրջությունը Հայաստանում առաջնային լինել չի կարող, դա անհարիր է դարավոր գիտություն և մշակույթ ունեցող ժողովրդին և երկրին: Պատմությանը հայտնի են դեպքեր, երբ դարավոր մշակույթ ունեցող երկիրը գնացել է զբոսաշրջության՝ անմիջական հարստություն բերող ձանապարհով, իսկ այսօր երրորդ երկրների շարքում է, և վաղեմի առաջնությունը վերականգնելու բոլոր ջանքերն ապարդյուն են անցնում: Այդ ամենը բնական է. ժամանակի ընթացքում փոխվել է այդ երկիրը, ժողովուրդը, փոխվել է նրա մտածելակերպը, և նա հաշտվել է սպասարկող լինելու անհեռանկարային գաղափարին: Մերը չի կարող դա լինել: Ըստ իս, Հայաստանի Հանրապետությունը պետք է լինի առաջատար գիտության, կրթության և մշակույթի երկիր՝ ուժեղ արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ, որում կարող է տեղ գտնել նաև զբոսաշրջությունը:

Գիտության, կրթության և մշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքով է որոշվում պետության վարկն աշխարհում: Նույն հատկանիշով էլ որոշվում է երկիրը կառավարողների քաղաքակրթության աստիճանը:



ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼԵՎՈՒ ԹԱՎԱԴՅԱԼ

ՀՀ ԳԱԱ քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

ՀետՀ Գիտությունների ակադեմիայի կազմավորումից մինչև 1953 թ. քիմիայի և երկրի մասին գիտությունների բնագավառում գործող գիտահետազոտական ինստիտուտները՝ Քիմիական ինստիտուտը և երկրաբանական գիտությունների ինստիտուտը, ընդգրկված են եղել Ֆիզիկամաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների բաժանմունքում, իսկ 1953-1963 թթ. ընթացքում՝ Տեխնիկական գիտությունների բաժանմունքում: 1963 թ. ՀետՀ ԳԱ նախագահության կազմում կազմավորվեցին Քիմիական գիտությունների և երկրի մասին գիտությունների բաժանմունքները, որոնք 1990թ. միավորվեցին Քիմիական և երկրաբանական գիտությունների բաժանմունքի կազմում: 1994-2007 թթ. ընթացքում քիմիական և երկրի մասին գիտությունների ոլորտում գործող ինստիտուտները վերախմբավորվեցին. Քիմիական գիտությունների ոլորտում աշխատող ինստիտուտները՝ Բնական գիտությունների, իսկ երկրի մասին գիտությունների ոլորտում աշխատող ինստիտուտները՝ Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքներում:

2006 թ. ՀՀ կառավարության հոկտեմբերի 12-ի 1530-Ն որոշման համաձայն՝ ստեղծ-

վեց ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնը (ՀՀ ԳԱԱ ՕԴՔ ԳՏԿ):

2007 թ. ՀՀ ԳԱԱ նախագահության Քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքի կազմում կրկին վերամիավորվեցին քիմիայի և երկրի մասին գիտությունների բնագավառում գործող գիտահետազոտական ինստիտուտները: Ներկայումս բաժանմունքի կազմում ընդգրկված են՝

1. Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնը, որն իր կազմում ներառում է Օրգանական քիմիայի ինստիտուտը, Ա. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը և Մոլեկուլի կառուցի ուսումնասիրման կենտրոնը,
2. Ա. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտը,
3. Մ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտը,
4. Երկրաբանական գիտությունների ինստիտուտը,
5. Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը:

70 տարվա ընթացքում բաժանմունքի կազմում աշխատել են բազմաթիվ արժանավոր և գիտության բնագավառում մեծ

ավանդ ունեցող գիտնականներ, որոնցից 27-ը վախճանվել են՝ թողնելով գիտական հարուստ ժառանգություն: Այսօր բաժանմունքն իր կազմում ընդգրկում է 11 ակադեմիկոս, 7 թղթակից անդամ և 22 արտասահմանյան անդամ, ինչպես նաև 2 պատվավոր դոկտոր:

Բաժանմունքի կազմում գործում են հետևյալ գիտական հանդեսները. «Հայաստանի քիմիական հանդես»-ը հիմնադրվել է 1947 թ. «ՍտՀ ԳԱ Տեղեկագիր. ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական և տեխնիկական գիտություններ» վերնագրով: 1966 թ-ից հանդեսը լույս է տեսել «Հայկական քիմիական հանդես», իսկ 1995 թ-ից՝ «Հայաստանի քիմիական հանդես» անվանմամբ: 1995 թ-ից տարեկան հրատարակվում է 4 հատոր, որոնք ներառում են հոդվածներ ընդհանուր, ֆիզիկական, անօրգանական, վերլուծական, օրգանական և կենսօրգանական քիմիայի վերաբերյալ: Ամսագրի գլխավոր խմբագիրն է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանը:

«ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր. գիտություններ երկրի մասին» հանդեսը հիմնադրվել է 1948թ. «ՍտՀ ԳԱ Տեղեկագիր. ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական և տեխնիկական գիտություններ» վերնագրով, որտեղ



տպագրվել են նաև երկրաբանական գիտություններին նվիրված հոդվածներ: 1964 թ-ից հանդեսը լույս է տեսնում «ԳԱԱ Տեղեկագիր. գիտություններ Երկրի մասին» անվանմամբ: 1993 թվականից տարեկան հրատարակվում է 3 հատոր: Ամսագրում տպագրվում են հոդվածներ, որոնք ներառում են Երկրի մասին գիտությունների բոլոր բնագավառները: Ամսագրի գլխավոր խմբագիրն է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Ջրբաշյանը:

ՔԻՄԻԱ

Քիմիայի ասպարեզում հետազոտությունները կապված են Հայաստանում բավական վաղ զարգացած քիմիական գիտական դպրոցի հետ, որի ակունքներում դեռևս 1920-1930 թթ. կանգնած էին Ա. Իոնիսյանը, Ս. Ղամբարյանը, Լ. Ռոտինյանը, Վ. Իսազուլյանը, իսկ հետագայում՝ նրանց աշակերտները՝ Ա. Մնջոյանը, Հ. Զալթիկյանը, Գ. Մաթևոսյանը, Ա. Բաբայանը, Վ. Թառայանը, Ա. Գասպարյանը և ուրիշներ: Քիմիայի ասպարեզում ձեռքբերումները կապված են նաև Հայաստան հրավիրված գիտնականների՝ մասնավորապես Ա. Նալբանդյանի անվան հետ:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ

Հայաստանում օրգանական քիմիայի բնագավառում գիտահետազոտական աշխատանքների սկիզբը կապվում է Ս. Ղամբարյանի անվան հետ (1928 թ.): Հետագայում այս ուղղությունը բուռն զարգացում է ապրել, երբ դեռևս ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաձյուղի կազմում ստեղծված Քիմիայի ինստիտուտի հիման վրա 1957 թ. կազմավորվել է Օրգանական քիմիայի ինստիտուտը (ՕՔԻ):

Ինստիտուտի հետազոտությունների ավանդական և ներկայումս զարգացող ուղղությունը չհազեցած միացությունների՝ ամինո- և ամոնիումային, ֆոսֆորօրգանական, գերչհազեցած միացությունների և բնական կենսակարգավորիչների, ազոլների և պոլիմերների, ինչպես նաև պիրիմիդինային փոխարկումների (վերախմբավորումների) քիմիան է: Կատարված հետազոտությունները հանգեցրել են չհազեցած



ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի արտադրած դեղամիջոցները. «Գանգլերոն» (սրվակներով և պատիճներով), «Թիյոդին» (սրվակներով)



միացությունների ռեակցիաների նոր, կարևոր օրինաչափությունների պարզաբանման, նոր ռեակցիաների հայտնաբերման, որոնք իրավամբ կարող են դասվել օրգանական քիմիայում լայնորեն հայտնի ռեակցիաների շարքին:

Այսպես՝ մշակվել է ացետիլենային ց-գլիկոլների սինթեզի եղանակ, որը գրականության մեջ հայտնի է «Ֆավորսկի-Բաբայանի ռեակցիա» անունով: Համընդհանուր ծանաչման են արժանացել ինստիտուտում հայտնաբերված «դեհիդրոքլորացման-ձեղքման», «վերախմբավորման-ձեղքման», «ցիկլացման-ձեղքման» և հիմքով կատալիզվող «ներմուլեկուլային ցիկլացման» ռեակցիաները: Հետազոտություններ են իրականացվել նաև Ստիվենսի և Սոմմելեի վերախմբավորումների, ինչպես նաև չհագեցած ամոնիումային միացությունների հալոգենացման և դեհիդրոհալոգենացման օրինաչափությունների հայտնաբերման ուղղությամբ:

Հայտնաբերվել են վինիլարոպարգիլային հալոգենիդների դեհալո-դիմերիզացիայի, ինչպես նաև անոմալ տեղակալման ռեակցիաները, 2-Ի պիրանների ինքնաբերաբար ընթացող փոխարկումը ֆուրանների: Առաջին անգամ ցույց է տրվել փոխանցիկ մետաղների կոմպլեքսների ներկայությամբ դիենների, ենինների, դիինների ալկիլման հնարավորությունը դիկարբոնիլային միացություններով:

Էլեմենտորգանական միացությունների ասպարեզում կատարված հետազոտությունների արդյունքում բացահայտվել են ֆոսֆորօրգանական միացությունների (ֆոսֆորետաինների, ինչպես նաև հնգակովալենտ ֆոսֆորի) նոր տիպի փոխարկումներ:

Ձարգացվել է պոլիմերների

րի քիմիայի նոր ուղղություն՝ ոչ դասական մոնոմերների ցիկլոպոլիմերում, որն այդ բնագավառի առաջին հետազոտությունն է համաշխարհային պրակտիկայում: Մշակվել է ացետիլենի ստացման կողմնակի արգասիք դիացետիլենի հիման վրա վինիլազոլների և դրանց ֆունկցիոնալ ածանցյալների սինթեզ: Զլորոպրենի և ստիրոլի հիման վրա ստացվել են իմունոդիագնոստիկ մոնոդիսպերս լատեքսներ: Հայտնաբերվել են պիրիմիդինների մի շարք նոր ոչ տրիվիալ միջդասային փոխարկումներ՝ «վերամիխացմամբ» ընթացող ենամինային վերախմբավորումը, պիրիմիդինների C-C ռեցիկլումը, պիրիմիդինիումային աղերի վերախմբավորումներն ազոլ[1,5-a] պիրիմիդինների, տրիազոլների, ազոլտրիազինների:

Արոմատիկ ալդեհիդների ներկայությամբ ացետիլացետոնի և ացետոքացախաթափի էսթերի ու առաջնային ամինների փոխազդեցությամբ իրականացվել է անսովոր կարբոցիկլացում:

Սորուն նյութերի պենստորանսպորտին վերաբերող աշխատանքների արդյունքներն անցած դարի 50-60-ական թվականներին ներդրվել են ԽՍՀՄ տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններում:

Ստեղծվել են շրջակա միջավայրի, մարդու և կենդանիների համար էկոլոգիապես անվտանգ, գյուղատնտեսական մշակաբույսերը վնասատուներից պաշտպանելու ժամանակակից միջոցներ՝ ֆերոմոններ: Սինթեզվել են հակավիրուսային, մանրէասպան, հակասնկային, կարդիոտոնիկ, ուղեղի արյան շրջանառությունը կարգավորող և այլ ակտիվությամբ օժտված միացություններ: Մենդային արոմատիզատոր «Անի» բուսեոլիդն օգտագործվել է Սանկտ-Պետեր-

բուրգի Մենդային արոմատիկայի կոմբինատում «Բոված ընկույզ» էսենցիայի արտադրության համար: Մշակվել են գիտական հետազոտությունների համար անհրաժեշտ քիմիական ռեակտիվների ստացման նոր, ժամանակակից եղանակներ:

Հետերոցիկլային միացությունների բնագավառում նշանակալից ձեռքբերումների համար ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ.Դանագուլյանին 2010 թ. շնորհվել է ՌԴ Մենդելեևյան քիմիական ընկերության, «Գիտական գործընկերություն» միջազգային հիմնադրամի և Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի սահմանած դիպլոմ և «Ոսկե նշան»:

ՖԻԶԻՈԼՈԳԻԱՊԵՍ ԱԿՏԻՎ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐԻ ՍԻՆԹԵԶ

Հայաստանում ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների, այդ թվում նաև դեղանյութերի սինթեզի բնագավառում գիտահետազոտական աշխատանքների սկզբնավորումը կապվում է Ա.Մնջոյանի անվան հետ, ում անմիջական ջանքերով 1955 թ. երևանի քիմիադեղագործական գիտահետազոտական լաբորատորիայի հիման վրա Ակադեմիայի համակարգում ստեղծվեց այսօր արդեն Ա. Մնջոյանի անունը կրող Լուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը (ԼՕՔԻ): Հիմնադրման օրից ինստիտուտը զբաղվում է կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզով և հետազոտությամբ, ինչպես նաև սինթեզված նյութերի կառուցվածքի և կենսաբանական հատկությունների միջև կապի որոնմամբ: Հետազոտությունների հիմնական ուղղություններն են սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների, քաղցկեղային ու վարակային հիվան-



դրությունների և բորբոքային երևույթների բուժման համար նոր, արդյունավետ, հեռանկարային, կենսաակտիվ միացությունների ստեղծումը և ուսումնասիրությունը, նյարդահոգեկան համակարգի խանգարումները բուժող նոր դեղամիջոցների որոնումը, ինչպես նաև վիրաբուժական պրակտիկայում օգտագործվող դեղապատրաստուկների ստեղծումը: Սինթետիկ հետազոտությունները տարվել են օրգանական միացությունների բազմաթիվ դասերի բնագավառներում: Ինստիտուտի հետազոտություններն ունեցել են և ունեն կիրառական ուղղվածություն, այն է՝ յուրաքանչյուր թեմա կատարելիս խնդիր է դրվում որոնել բժշկական պրակտիկայի համար նոր, արդյունավետ դեղամիջոցներ: Իր գործունեության ընթացքում ինստիտուտում ստեղծվել և կյանքի է կոչվել 16 դեղամիջոց, որոնցից են դիտիլինը (մկանային ռեյաքսանտ վիրաբուժությունում), գանգլերոնը (խոցային հիվանդության և ստենոկարդիայի բուժման համար), թիյոդինը (ռադիկուլիտների, նևրիտների դեմ), որոնք մինչև այսօր արտադրվում են ինստիտուտի արտադրական տեղամասում: Նշված ձեռքբերումների համար ինստիտուտը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով (1971թ.):

ՄՈԼԵԿՈՒԼԻ ԿԱՌՈՒՅՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլի կառուցի ուսումնասիրման կենտրոնը (ՄԿՈՒԿ) ստեղծվել է 1994 թ. ՀՀ-ում գործող տարբեր գիտական հիմնարկներում առկա բացառիկ սարքերը և արհեստավարժ մասնագետներին կենտրոնացնելու նպատակով: Նրա գործունեության հիմնական ոլորտը տարբեր ֆիզիկաքիմիական մեթոդներով

օրգանական միացությունների կառուցվածքի և կարևորագույն հատկությունների որոշումն է:

Առաջին անգամ ստացվել են Fe-պորֆիրինների 5-կոորդինացված նիտրիտային կոմպլեքսները: Նիտրիտի տրանս-դիրքում լիգանդի առկայությամբ դիտվում է նիտրիտո-նիտրո իզոմերացում: Ստացվել են Fe-պորֆիրինների առաջին 6-կոորդինացված նիտրատային կոմպլեքսները, որոնցում, ի տարբերություն նիտրատի բիդենտատ կոորդինացիայի, դիտվում է մոնոդենտատ միացում: Ցույց է տրվել, որ ազոտի օքսիդի (NO) փոխազդեցությունը Fe-պորֆիրինների նիտրատային կոմպլեքսների հետ հանգեցնում է նիտրո-նիտրոզիլային կոմպլեքսի առաջացման:

Հետազոտվել է ռենտգենյան ձառագայթների ազդեցությունը Ag (արծաթ) - պորֆիրինների ատոմական կառուցվածքի վրա: Պարզվել է, որ այդ ազդեցության հետևանքով տվյալ միացությունները ենթարկվում են վերաբյուրեղացման: Առաջարկվել է այդ փոխակերպման մեխանիզմը:

Ցույց է տրվել, որ միջուկային մագնիսական ռեզոնանսի սպեկտրադիտման եղանակով կարելի է գնահատել ատոմներում և քիմիական խմբերում ներքին դաշտերը, ինչպես նաև որոշել տարբեր լուծույթների դիէլեկտրական հաստատունները, օգտագործելով վերջինների կապը սպին-սպինային փոխազդեցության հաստատունների հետ:

Այժմ ՄԿՈՒԿ-ի մասնագիտական և տեխնիկական հնարավորություններից օգտվում են ինչպես հանրապետության, այնպես էլ այլ երկրների գիտական կազմակերպությունները: ՄԿՈՒԿ-ի աշխատակիցներ Տ.Կուրտիկյանը (2005 թ.) և Հ.Կարապետյանը (2008 թ., հրաժարվել է 2013 թ.) արժանացել են ՀՀ Նախագահի

մրցանակի բնական գիտությունների բնագավառում:

ՔԻՄԻԱԿԱՆ ՖԻԶԻԿԱ

Քիմիական ֆիզիկական որպես գիտության ինքնուրույն բնագավառ Հայաստանում սկսել է զարգանալ 1960 թ-ից, երբ ակադ. Ա. Նալբանդյանի նախաձեռնությամբ և Հայաստանի կառավարության աջակցությամբ հիմնադրվեց Հայկ.ԽՍՀ ԳԱ Քիմիական ֆիզիկայի լաբորատորիան: Չարգանալով և ընդլայնելով իր գիտական ուղղությունները՝ լաբորատորիան 1975 թ. վերակազմավորվեց որպես ՀԽՍՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտ, իսկ 1993 թ-ից կրում է նաև իր հիմնադրի անունը: Ինստիտուտում զարգացող գիտական հիմնական ուղղություններն են. քիմիական փոխարկման տեսությունը, շղթայական ռեակցիաները, ազատ ռադիկալների մասնակցությամբ ընթացող բարդ և տարրական քիմիական ռեակցիաները, կատալիտիկ պրոցեսները, քիմիական պրոցեսների մաթեմատիկական մոդելավորումը, գազերում և կոնդենսացված ֆազում ընթացող այրման պրոցեսները, դժվարահալ անօրգանական նյութերի ստացման տեխնոլոգիաների մշակումը բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի (ԲԻՍ) եղանակով, շրջակա միջավայրի քիմիական անվտանգության հիմնահարցերը, ՀՀ հանքավայրերից ստացված արժեքավոր տարրեր պարունակող խտանյութերի համալիր վերամշակման տեխնոլոգիաների ստեղծումը:

Կարճ ժամանակահատվածում հայ գիտնականները, շնորհիվ իրենց առաջադրած և մշակած ինքնատիպ եղանակների ու մոտեցումների կիրառման, հասել են մեծ հաջողությունների քիմիական փոխարկումների և

հատկապես գործնականորեն կարևոր նշանակություն ունեցող գազաֆազ օքսիդացման ռեակցիաների կինետիկայի բնագավառում: Ստեղծվել է էլեկտրոնային պարամագնիսական ռեզոնանսի (ԷՊՌ) սպեկտրադիտման հետ համակցված ազատ ռադիկալների սառեցման (մատրիցային մեկուսացման) կինետիկական եղանակը, որի օգնությամբ առաջին անգամ հնարավոր եղավ մի շարք ռեակցիաներում բացահայտել շղթայի կրողների՝ ազատ ռադիկալների առկայությունը և այդ մակարդակում ուսումնասիրել կիրառական նշանակություն ունեցող կարևոր քիմիական ռեակցիաներ: Ինստիտուտում կատարված գիտական աշխատանքների առաջին բարձր գնահատականը 1977 թ.՝ ակադեմիկոսներ Ա. Նալբանդյանին և Ա. Մանթաշյանին շնորհված ՀԽՍՀ պետական մրցանակն է:

Ինստիտուտի առաջատար գիտնականները մշակել են նաև ազատ ռադիկալների մասնակ-

ցությամբ օրգանական նյութերի հեղուկաֆազ օքսիդացման տարրական ռեակցիաների հետազոտման կինետիկական ԷՊՌ եղանակ, որի օգնությամբ հետազոտվել են նաև տարբեր կենսահակաօքսիդիչների ազդեցության քիմիական մեխանիզմները (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Լ. Թավադյան): 1988 թ. Լ. Թավադյանը և ԽՍՀՄ ԳԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի գործընկերները (Ն. Էմանուել, Է. Բյումբերգ, Ս. Մասլով) հայտնաբերել են շղթայական ռեակցիաների ընտրողական արգելակման նոր երևույթը (ԽՍՀՄ թիվ 388 հայտնագործություն):

Ակադեմիկոս Ա. Նալբանդյանի նախաձեռնությամբ 1970-ական թվականներից ինստիտուտում մեծ թափ է ստացել անօրգանական նյութերի ստացման ԲԻՍ ուղղությունը, որի մշակման մեջ անգնահատելի ավանդ ունի ՌԴ ԳԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ա. Մերժանովը: Հետազոտություն-

ները ԲԻՍ բնագավառում կրում են արտահայտված գործնական ուղղվածություն: Առաջին անգամ ցույց է տրվել գազային ջրածնի միջավայրում այրման պայմաններում անցումային մետաղների հիդրիդների ստացման հնարավորությունը (պրոֆ. Ս. Դոլովսանյան): Սինթեզվել է մետաղների ավելի քան 200 հիդրիդ: ԲԻՍ եղանակով մոլիբդենի երկսիլիցիդի ($MoSi_2$) ստացման տեխնոլոգիան ներդրվել է Վանաձորի բարձր ջերմաստիճանային տաքացուցիչների գործարանում, որի համար հետազոտողների խումբը (Ա. Նալբանդյան, Ա. Մերժանով, Ս. Դոլովսանյան և ուրիշներ) 1980 թ. արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի:

Նշված ուղղությամբ տարված աշխատանքների արդյունքում մշակվել է դժվարահալ մետաղների համաձուլվածքների ցածր ջերմաստիճանային (մետաղների հալման ջերմաստիճանից ցածր) ստացման սկզբունքորեն նոր՝



ՀՀ ԳԱԱ Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հեղուկ սինթեզի կոմպոզիցիոն նյութերի ստացման փորձարտադրական տեղակայանքը



«հիդրիդային ցիկլի» եղանակը (պրոֆ. Ս. Դուրխանյան): Իրականացվել է պինդ նյութերի փոքր հավելումների օգնությամբ այրման ռեակցիաների քիմիական խթանում, որը հնարավորություն է տալիս այրման ռեժիմում ստանալու մեծ մաքրություն և պահանջվող միկրոկառուցվածքով խեցեղեն նյութեր (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ս. Խառատյան): Նշված երևույթի հիման վրա մշակվել են ավելի քան երեք տասնյակ խեցեղեն ու կոմպոզիցիոն նյութերի և այրման ռեժիմում մի շարք մետաղների (Cu, Ni, Co) մանրափոշիների ու կարևոր համաձուլվածքների (Fe-Cr, Fe-Mo) ստացման նոր տեխնոլոգիական պրոցեսներ:

Մշակվել է մոլիբդենի խտանյութի համալիր վերամշակման տեխնոլոգիա՝ խտանյութի ուղղակի վերականգնման և գոլորշաօքսիդացման եղանակներով: Տեխնոլոգիան ապահովում է նպատակային արժեքավոր տարրերի (մոլիբդեն, սելեն, տելուր, ռենիում և այլն) կորզման բարձր աստիճան, իսկ սուլֆիդային խտանյութում պարունակվող ծծումբն ստացվում է տարրական ծծմբի կամ նատրիումի սուլֆիդի ձևով, որով պայմանավորված է մշակված եղանակի զգալի բնապահպանական առավելությունը (այդ աշխատանքներն արժանացել են «Ժնև-2003» գյուտերի, նոր տեխնիկայի ու ապրանքների միջազգային ցուցահանդեսի արժաթե մեդալի):

Քիմիական և կենսաքիմիական ֆիզիկայի ոլորտում նշանակալից ձեռքբերումների համար 2011 թ. ՀՀ ԳԱԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտին շնորհվել է «Գիտական գործընկերություն» միջազգային հիմնադրամի, ՌԴ ԳԱ և Մոսկվայի Լոմոնոսովի անվ. պետական լսարանի սահմանած «Ակադեմիկոս Ն. Էմանուելի հիշատակի» շքանշան:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ԶԻՄԻԱ

Հայաստանում ընդհանուր և անօրգանական քիմիայի բնագավառում գիտահետազոտական աշխատանքների զարգացումն սկսվել է 1957 թ., երբ ՀՀ ԺՏԽ կազմում գիտությունների ակադեմիայի անօրգանական քիմիայի սեկտորի հիման վրա ստեղծվեց Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտը: Հետագայում նորաստեղծ ինստիտուտը տեղափոխվեց ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի, իսկ այնուհետև՝ քիմիական արդյունաբերության նախարարության ենթակայության տակ՝ որպես Երևանի քիմիայի գիտահետազոտական ինստիտուտ: 1970 թ-ից ինստիտուտը ՀՀ ԳԱԱ համակարգում է:

Մեծ է ինստիտուտի գիտնականների ներդրումը հանրապետության քիմիական արդյունաբերության ստեղծման և զարգացման գործում: Այլումասիլիկատային ապարների քիմիական մշակման բնագավառում կատարված հիմնարար և տեխնոլոգիական հետազոտությունների շնորհիվ առաջարկվել է նեֆելինային սիենիտների համալիր մշակման նոր եղանակ, որը հնարավորություն է տալիս ստանալու արզնահող, սոդա, պոտաշ, սիլիկատային միացություններ (Մ. Մանվելյան):

Ապակու արդյունաբերության զարգացման համար ուսումնասիրվել են քվարցիտները, պեոլիտները, լեյցիտային ապարները: Չգալի աշխատանքներ են կատարվել բոր-սիլիկատային ապակիների էլեկտրաեփման ներդրման ուղղությամբ (Կ. Կոստանյան, Ա. Մելիք-Հախնազարով):

Հիմնարար արդյունքներ են ստացվել սիլիկատային և ալյումինատային լուծույթներից հատուկ մաքրության SiO₂ և Al₂O₃

ստացման ուղղությամբ (Ա. Վարուժանյան, Կ. Աբաջյան, Ա. Խանամիրովա):

Ապարների ջրաջերմային մշակման և հարստացման եղանակը հաջողությամբ կիրառվել է իոնափոխանակման պրոցեսների միջոցով նոր հատկություններով նյութերի, հանքային պարարտանյութերի ստացման ուղղությամբ (Գ.Գրիգորյան, Ս.Կարախանյան):

Ներկայումս ինստիտուտում իրականացվող կարևորագույն ուղղություններն են՝

- տեղական հումքից և արտադրական թափոններից ֆունկցիոնալ նշանակության նյութերի ստացման և ներդրման տեսական և տեխնոլոգիական հիմունքների մշակումը,

- նանոչափային նյութերի և կոմպոզիտների ստացումը և ուսումնասիրումը:

Ինստիտուտի աշխատակիցների ստացած կարևորագույն արդյունքներից կարելի է առանձնացնել մի քանիսը:

Իրագործվել է եռարժեք մետաղների մոլիբդենային Ա- հետերոպոլիթթուների միջուկների առաջնային կառուցվածքների սինթեզ (Ֆ. Միրզոյան): Մշակվել է ալյումինով աղքատ հանքանյութի հարստացման պարզ և մատչելի եղանակ (Ս. Սահարունյան):

Հետազոտվել և մշակվել են նոր բաղադրության և ֆունկցիոնալ նշանակության ապակիներ, ապակեբյուրեղային և նանոկոմպոզիտային նյութեր և տեխնոլոգիա (Ն. Կնյազյան, Ն. Հարությունյան):

Առաջարկվել է սերպենտինացված ապարների ջերմաթթվային մշակման նոր եղանակ MgO-ի մինչև 95% լուծահանմամբ (Ն. Ջուլումյան): Ուսումնասիրվել են շերտավոր կավերի խտանյութերի ստացման, մաքրման և օրգանական նյութերի

հետ փոխազդեցության պրոցեսները ռետինների, կաուչուկի, դեղորայքի և օծանելիքների լցանյութերում (Ս. Ենգիբարյան, Վ. Մարտիրոսյան):

Մշակվել են նանոկառուցվածքային պոլիմերային կոմպոզիտներ, սիլիկատազանազան հիմքով բարձր արդյունավետությամբ հակակոռոզիոն նյութեր, ցածր-ջերմաստիճանային կոռոզային խեցու ստացման եղանակներ (Ս. Հայրապետյան, Ա. Կոստանյան), ինչպես նաև նոր պլազմամեխանաքիմիական եղանակ՝ ձառագայթակայուն ռեզինոստիվային տվիչներում կիրառվող հատուկ մաքրության ավաստների, ցիկլոհեքսանի փոխարկման և մեթանի ածխաթթվային փոխակերպման պրոցեսներում օգտագործվող Fe-ի, Co-ի և Ni-ի նանոչափային փոշիների և դրանց համաձուլվածքների սինթեզի համար (Ս. Ալոյան):

Ուսումնասիրվել են Հայաստանի Թեղուտի պղնձամոլիբդենա-

յին հանքավայրի օքսիդացված շերտերի ֆլոտացիոն վերամշակման պրոցեսները սուլֆիդիզատորների առկայությամբ (Ա. Հովսեփյան):

ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի բնատարածքն իր երկրաբանական կառուցվածքով, մագմատիզմով, օգտակար հանածոների բազմազանությամբ ու դրանց տեղաբաշխման յուրահատկություններով մի յուրօրինակ փորձադաշտ է երկրաբանական ամենաբազմազան հիմնահարցերի ու խնդիրների ուսումնասիրման համար:

Մինչև 1930-ական թվականները երկրաբանական հետազոտություններ Հայաստանում հիմնականում կատարվել են Ռուսաստանի գիտնականները, մասնավորապես՝ ակադեմիկոսներ Ֆ. Լևինսոն-Լեսինգը, Ա. Չավարիցկին, Կ. Պաֆենհոլցը, Ա. Բետեխտինը և ուրիշներ, նպաս-

տելով երկրաբանական գիտության զարգացմանը Հայաստանում:

Հետագայում երկրաբանական տարաբնույթ հետազոտություններ են ծավալել ճանաչված հայ երկրաբաններ Հ. Կարապետյանը, Տ. Ջրբաշյանը, Ե. Բագրատունին, Պ. Ղամբարյանը, Հ. Ստեփանյանը, Գ. Օգանեզովը, Հ. Մաղաքյանը, Ս. Մովսեսյանը, Ս. Մկրտչյանը և ուրիշներ:

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում երկրաբանական համակարգված հետազոտությունների և երկրաբանական գիտության զարգացման սկիզբը կապված է 1935 թ. ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի և նրա կազմում երկրաբանական գիտությունների ինստիտուտի ստեղծման հետ:

1943 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծումից առ այսօր ընկած ժամանակաշրջանը բնորոշվում է

Երկրաբանական դաշտային հետազոտություններ (ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ)





երկրաբանական հիմնարար և կիրառական նշանակություն ունեցող հետազոտություններով:

Կենսաշերտագրություն: Տարբեր խմբերի կենդանական աշխարհի մոնոգրաֆիական նկարագրության հիման վրա մշակվել է Հայաստանի ֆաներոզոյան ժամանակաշրջանի (D-Q) նստվածքների կենսաժամանակաշերտագրական սխեման (Ն. Ազարյան, Վ. Հակոբյան, Ռ. Առաքելյան, Ա. Գաբրիելյան, Ս. Գրիգորյան), որը հիմք հանդիսացավ տարբեր մասշտաբի երկրաբանական և մասնագիտացված քարտեզների կազմման համար: Մշակվել է Հայաստանի նորագույն երկրաբանական պատմության նոր շերտագրական և հնէաաշխարհագրական սխեմա (Յու. Սայադյան):

Տեկտոնիկա, ռեգիոնալ երկրաբանություն: Բացահայտվել են տարածաշրջանի երկրաբանատեկտոնական զարգացման օրինաչափությունները և երկ-

րադինամիկական ռեժիմները, մշակվել են Կովկասի, Փոքր Կովկասի, Հայաստանի տեկտոնական գոտավորման սխեմաներ, կազմվել են Հայաստանի տարբեր մասշտաբի երկրաբանական և տեկտոնական քարտեզներ (Ա. Ասլանյան, Ա. Գաբրիելյան, Կ. Պաֆենհոլց, Լ. Վարդանյանց): Տեսական տեկտոնիկայի և երկրադինամիկայի բնագավառներում մշակվել է երկրի բևեռների չանդլերյան տատանումների քանակական տեսությունը (Ա. Ասլանյան):

Սեյսմատեկտոնիկա, վտանգավոր երկրաբանական երևույթներ: ՀՀ և հարակից տարածքների համար կազմվել է ակտիվ խզվածքների, վտանգավոր երկրաբանական երևույթների, մասնավորապես՝ սողանքների, տարբեր մասշտաբի քարտեզներ (Ա. Կարախանյան, Ա. Ավագյան, Հ. Բաղդասարյան և ուրիշներ): Երևանի ագլոմերացիայի և մի շարք բնակավայրերի համար կազմվել

են մանրամասն սեյսմաշրջանացման դետերմինիստական և հավանական քարտեզներ (Ա. Կարախանյան, Հ. Բաբայան, Բ. Դուրգարյան և ուրիշներ): Հայաստանի նախագծվող նոր ԱԷԿ-ի համար կազմվել է ակտիվ խզվածքների և մագնիտոդային ներուժի սեյսմատեկտոնական նոր մոդել (Ա. Կարախանյան, Ա. Ավագյան և ուրիշներ): ՀՀ տարածքի հյուսիսում հայտնաբերվել է նոր տրանսսահմանային ակտիվ խզվածք, որն էպպես փոխում է այդ տարածքի սեյսմիկ վտանգի իրավիճակը (Ա. Կարախանյան, Հ. Բաղդասարյան, Ա. Ավագյան և ուրիշներ): Տեսական և փորձարարական հետազոտությունների արդյունքում հնարավոր է դարձել իրական ուժեղ երկրաշարժերի ժամանակ գրունտների և վերգետնյա կառույցների տատանումների օրինաչափությունների կանխագուշակումը (Է. Խաչիյան):

Լիթոլոգիա: Բացահայտվել են տարբեր տիպերի նստվածքային և հրաբխանստվածքային լիթոգենեզի առանձնահատկությունները և օրինաչափությունները, գնահատվել են ՀՀ տարածքում բենթոնիտների, դիատոմիտների, ցեոլիտոլիտների, սիլիցիտների, կարբոնատային գոյացումների առաջացման առանձնահատկությունները և դրանց նոր տեղամասերի հայտնաբերման հեռանկարները (Մ. Սաթիան, Ռ. Մանդալյան, Ա. Սադոյան, Ժ. Ստեփանյան, Թ. Ավագյան և ուրիշներ), մշակվել են տարբեր երկրադինամիկ պայմանների կավառաջացման մոդելներ (Ի. Պետրոսով): Կազմվել է Հայկական ԽՍՀ լիթոլոգիական քարտեզը:

Մագմատիզմ և մետամորֆիզմ: Մշակվել են մագմայական և մետամորֆային համալիրների





հասակային և կազմավորումային դասակարգման սխեմաներ ըստ երկրաբանական և իզոտոպային հասակի որոշումների: Առաջարկվել են տարբեր երկրադինամիկական պայմանները բնորոշող մագմածին համալիրների առաջացման պետրոլոգիական մոդելներ (Գ. Բաղդասարյան, Ռ. Ջրբաշյան, Հ. Ղազարյան, Բ. Մելիքսեթյան, Ռ. Մելքոնյան, Ա. Մնացականյան և ուրիշներ): Մշակվել է ապարառաջացման պրոցեսների բացահայտման նոր թթվածնաիզոտոպային մեթոդը (Մ. Հակոբյան, Ռ. Մելքոնյան): Որոշվել է Ամասիա-Սևան-Հազարայի օֆիոլիթային գոտու օվկիանոսային կեղևի ձևավորման վաղ-միջին յուրա հասակը, պարզաբանվել են օֆիոլիթային համալիրի կառուցվածքը և երկրաքիմիական առանձնահատկությունները (Ղ. Գալոյան, Ռ. Մելքոնյան): Իզոտոպային հասակային որոշումների հիման վրա առանձնացվել են պանաֆրիկյան և հերցինյան համախմբման բյուրեղային հիմքի ելքերը, որոշվել են մետամորֆային տարբեր ֆազերի ապարների սկզբնական կազմը, առաջացման երկրադինամիկական պայմանները (Վ. Աղամալյան): Կազմվել են «Հայկական իՍՀ մագմատիկ և մետամորֆային ֆորմացիաների քարտեզը» և «Հայաստանի բյուրեղային հիմքի քարտեզը»:

Հրաբխականություն: ՀՀ-ում լայնորեն տարածված (մակերեսի մոտ 1/2) նորագույն հրաբխային համալիրների ուսումնասիրության արդյունքում ի հայտ են բերվել դրանց ձևավորման երկրաբանական և երկրադինամիկական պայմանները, ժայթքման տիպերը, ապարների կազմությունը (Կ. Շիրինյան, Կ. Կարապետյան, Ս. Կարապետյան և ուրիշներ): Կատարվել է Հայաստանի նախագծվող նոր ԱԷԿ-ի

տարածքի հրաբխային վտանգի հավանականային գնահատում (Ռ. Ջրբաշյան, Խ. Մելիքսեթյան, Յու. Ղուկասյան): Մանրակրկիտ երկրաքիմիական և պետրոլոգիական հետազոտությունների հիման վրա առաջարկվել է կոլիզիայի զոնաներում նորագույն հրաբխականության ձևավորման մոդելը և հրաբխաշերտագրությունը: Կազմվել են Հայաստանում 500-ից ավել հրաբխային կենտրոնների տվյալների թվային հենք և հրաբխականության արտահայտման մանրակրկիտ երկրաբանական քարտեզներ:

Հանքառաջացում և մետաղագոյացում: Կատարվել են մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի համալիր ուսումնասիրություններ, կազմավորումային դասակարգում, ի հայտ են բերվել դրանց տեղաբաշխման և առաջացման օրինաչափությունները, բացահայտվել են հազվագյուտ տարրերի բաշխման առանձնահատկությունները (Հ. Մաղաքյան, Ս. Մկրտչյան, Կ. Քարամյան, Գ. Փիջյան և ուրիշներ): Հարկ է հատուկ նշել Հ. Մաղաքյանի դերը Հայաստանում մետաղագոյացման ձևավորման և զարգացման բնագավառում: Իզոտոպային տվյալների հիման վրա մշակվել են Հայաստանի տարատեսակ պղինձ-մոլիբդենային հանքավայրերի առաջացման մոդելները, որոշվել են նրանց առաջացման հասակները՝ (Ռ. Մելքոնյան, Բ. Տայան, Ս. Հովակիմյան): Քաջարանի (Ս. Մովսեսյան, Ս. Մկրտչյան) և Դաստակերտի (Հ. Մաղաքյան) հանքավայրերի հայտնաբերման և ուսումնասիրման համար Ինստիտուտի և արտադրական կազմակերպությունների մի շարք աշխատակիցներ արժանացել են իՍՀՄ պետական մրցանակի, Ինստիտուտի մի շարք աշխատակիցներ (Հ. Մաղաքյան, Գ. Փիջյան,

Ա. Ֆարամազյան, Շ. Ամիրյան, Ա. Կարապետյան, Վ. Պարոնիկյան, Ռ. Չարյան, Բ. Մելիքսեթյան, Ա. Հակոբյան) Հայաստանի հանքային ֆորմացիաներում գլխավոր և հազվագյուտ տարրերի տեղաբաշխման օրինաչափությունների բացահայտման համար արժանացել են ՀՀ պետական մրցանակի գիտության բնագավառում: Մշակվել և փորձարկվել են խոր տեղադրված տարբեր տիպի հանքավայրերի որոնման երկրաքիմիական նոր մեթոդներ, որոնք հավատարմագրված են որպես գիտական հայտնագործություններ (Ս.Գրիգորյան):

Հիդրոերկրաբանություն և ինժեներային երկրաբանություն: Մշակվել է ՀՀ հանքային ջրերի դասակարգման սխեմա՝ ըստ դրանց քիմիական կազմի (Ա. Դեմյոսիսին), առանձնացվել է կարբոնատային բորակիր, հազվագյուտ ալկալային մետաղներ պարունակող ջրերի փոքրկուկասյան մարզը (Է. Խալաթյան): Մշակվել և կիրառվել է մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի որոնման հիդրոերկրաքիմիական մեթոդը (Ն. Դոլովխանովա, Պ. Ղափլանյան, Ա. Գալստյան և ուրիշներ): Ի հայտ են բերվել ՀՀ բազմաթիվ բնակավայրերի ջրամատակարարման պայմանները, պարզաբանվել և նկարագրվել է ջրերի որակը (Հ. Շահինյան):

Երկրաին ֆորմատիկա: Կազմվել է ՀՀ ջրային պաշարների նոր կողավորման համակարգ: Կազմվել է ռեյտեֆի եռաչափ մոդելի և միջին տարեկան հոսքի մոդուլի թվային քարտեզի հիման վրա գետի տրված հատվածքում հոսքի քանակի ալգորիթմ (Արշ. Ավագյան):

Մինչև 1993 թ. ԵԳԻ-ում գործել է նաև աշխարհագրության բաժինը, որտեղ կազմվել է Հայաստանի հիդրոլոգիական ատլասը (Ա. Բաղդասարյան):



ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱ

1961 թ. Լենինականում (այժմ՝ Գյումրի) երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի ստեղծումով նոր փուլ սկսվեց Հայաստանում երկրաֆիզիկական և ինժեներասեյսմաբանական գիտական ուղղությունների զարգացման համար: Որպես հիմնական ուղղություններ, ինստիտուտում գիտական հետազոտություններ են ծավալվել կառուցվածքային երկրաֆիզիկայի, սեյսմաբանության, մագնիսականության և հնէամագնիսականության, հանքային և ինժեներային երկրաֆիզիկայի, տեսական և հաշվողական երկրաֆիզիկայի, երկրաշարժերի նախանշանների և սեյսմիկ վտանգի ուսումնասիրման և գիտական սարքաշինության բնագավառներում:

Լորաստեղծ ինստիտուտում նշված ուղղություններով հետազոտություններն իրականացվում էին հանրապետության նշանավոր գիտնականներ Ա. Նազարովի (տնօրեն), Բ. Կարապետյանի, Ց. Հակոբյանի, Ծ. Հովհաննիսյանի, Հ. Վանցյանի, Ս. Դարբինյանի, Ս. Բադալյանի, Ս. Գ. Ծահինյանի, Ս. Ա. Ծահինյանի, Ն. Կարապետյանի և ուրիշների գիտական ղեկավարությամբ:

Երկրաֆիզիկայի և կառուցվածքային երկրաֆիզիկայի բնագավառի հետազոտություններ: Երկրակեղևի խորքային երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրման և օգտակար հանածոների հանքավայրերի որոնման նպատակով երկրաֆիզիկական պլանաչափի հետազոտություններ կատարվել են դեռևս Հայրենական մեծ պատերազմից հետո: Սակայն հետագայում հետազոտություններն իրականացվել են ավելի համակարգված և բնութագրվել են ուսումնասիրությունների մասշտաբի խոշորացմամբ, համալիր մեթոդների ավե-

լացմամբ, նյութի մեկնաբանման քանակական նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառմամբ:

Համալիր երկրաֆիզիկական մեթոդներով ուսումնասիրվել են երկրակեղևի խորքային կառուցվածքը և նրանում ընթացող տեկտոնական պրոցեսների բնույթը: Կազմվել է Մոխոյի և կոնսոլիդացված կեղևի մակերևույթների, երկրակեղևի և հրաբխանստվածքային ծածկույթի հզորությունների, ինչպես նաև իզոստատիկ վիճակի 1:500000 մասշտաբի քարտեզներ (Ծ. Հովհաննիսյան):

Հրաբխականության և խզումնային տեկտոնիկայի կապի մասին ուսումնասիրությունների արդյունքում Գեղամ-Սյունիքի շրջանում հայտնաբերվել են ոչ մեծ խորություններում տեղադրված մագնիսակալով խոշոր մարմիններ, որոնք ունեն մինչ այժմ չստացած արմատներ երկրակեղևի ներքին շերտերում (Մ. Բադալյան): Սևանի ավազանի երկրակեղևի վերին շերտի կառուցվածքի գրավիտացիոն երկչափ մոդելի մշակման արդյունքում ստացված տվյալները հնարավորություն են տվել ավելի հավանական համարելու Փոքր և Մեծ Սևանների ոչ միաժամանակյա ծագման վարկածը (Հ. Բաբաջանյան):

Հայաստանի սեյսմակալով տարածքներում ստեղծված երկրադինամիկական փորձադաշտերում կատարված գրավիտացիոն դաշտի ոչ մակընթացային փոփոխությունների ուսումնասիրման արդյունքում մշակվել են երկրակեղևի դինամիկ ակտիվության գնահատման չափորոշիչները (Հ. Հովհաննիսյան):

Մշակվել և կատարելագործվել են երկրակեղևի գրավիտացիոն, սեյսմագրավիտացիոն և երկրաշերմային մոդելների կառուցման մեթոդները: Սեյսմիկ վտանգի ծձգրտման նպատակով կառուց-

վել է երկրակեղևի սեյսմակալով շերտի 1:200000 մասշտաբի կառուցվածքադինամիկ եռաչափ մոդելը (Ս. Հովհաննիսյան, Հ. Հովհաննիսյան, Հ. Գասպարյան, Ֆ. Ֆիդանյան), ինչպես նաև Հայաստանի տարածքի ընդհանրացված ջերմային մոդելը և ջերմային հոսքի նոր քարտեզը (Կ. Վարդանյան):

Սեյսմաբանական հետազոտություններ: Սեյսմաբանական հետազոտությունները Հայաստանում ուղղված են հիմնականում երկրակեղևի կառուցվածքային և երկրաշարժի օջախի ֆիզիկայի ուսումնասիրմանը: 1966 թ. Հայաստանում սեյսմիկ կայանների միասնական համակարգի ստեղծումը նոր հնարավորություններ է ընձեռնել սեյսմաբանական հետազոտություններին:

Ծավալային սեյսմիկ ալիքների տարածման արագությունների կտրվածքների որոշման հիման վրա կառուցվել են Փոքր Կովկասի և Հայկական լեռնաշխարհի տարածքի ծավալային սեյսմիկ ալիքների հողոգրաֆները (Ն. Կարապետյան, Ա. Սահակյան, Ա. Ավետիսյան): Հեռավոր ուժեղ երկրաշարժերից ձևավորվող մակերևութային սեյսմիկ ալիքների խմբային արագությունների տարալուծման հետազոտությունների հիման վրա որոշվել են երկրակեղևի ամբողջ և նրա առանձին շերտերի հզորությունները (Ա. Բադալյան): Հիմնական գիտական ձեռքբերումներից են ուղիղ և անդրադարձված սեյսմիկ ալիքների օգնությամբ Փոքր Կովկասի կառուցվածքի ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղաձիգ անհամասեռությունների հայտնաբերումը, դրանց տարածական կողմնորոշման, խորքային բեկվածքների ու դրանց խորության որոշման համար նոր մեթոդների մշակումը:

Երկրաշարժի օջախների ֆի-



զիկայի ուսումնասիրությունները նպատակաուղղված են երկրաշարժերի էներգիայի, մեխանիզմների որոշման և դրանց հիման վրա խզումագոյացման պրոցեսների և երկրակեղևի սեյսմածին շերտի լարվածադեֆորմացիոն վիճակի ուսումնասիրմանը (Ն. Կարապետյան, Է. Գյոդակյան, Մ. Մկրտչյան): Մանրամասն ուսումնասիրվել են Սպիտակի երկրաշարժի հետշոկային դաշտը, օջախների մեխանիզմը և տեղաշարժերի դասը դրանցում: Երկրաշարժերի կանխագուշակման հիմնախնդրի շրջանակներում կատարվել են սեյսմիկ ռեժիմի քանակական բնութագրերի տարածաժամանակային փոփոխությունների հետազոտություններ՝ նպատակաուղղված երկրաշարժերի երկարաժամկետ և միջնաժամկետ նախանշանների բացահայտմանը (Է. Գյոդակյան, Մ. Մկրտչյան):

Սեյսմիկ վտանգի ուսումնասիրման աշխատանքներն ընթանում են հանրապետության տարածքի ընդհանուր և մանրակրկիտ սեյսմիկ շրջանցման, քաղաքների և հիդրոտեխնիկական կառույցների ու էներգիական համալիրների տարածքների սեյսմիկ միկրոշրջանցման ուղղություններով:

Հանքային երկրաֆիզիկայի բնագավառի հետազոտություններ: Հանքային երկրաֆիզիկայի կիրառումը պայմանավորված է հանրապետության տարածքում օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ: Գնահատվել են երկրաֆիզիկական մեթոդների որոնողահետախուզական հնարավորությունները Հայաստանի ոսկու հանքավայրերում՝ հիմնվե-

լով դրանց դետերմինացված ֆիզիկաերկրաբանական մոդելների վրա (Ա. Զիլինգարյան): Տվյալների մշակման ժամանակ կիրառվել են միաչափ էներգիական և ինքնակարգավորվող ֆիլտրացիայի մեթոդները, որոնց շնորհիվ երկրաֆիզիկական դաշտերում առանձնացվել են թույլ արտահայտված անոմալիաները (Կ. Կարապետյան):

Կարևոր արդյունքներ են ստացվել ակուստիկ կարոտաժի, էմանացիոն հանույթի, ինչպես նաև ուրբանիզացված տարածքների գեոէկոլոգիական իրավիճակի գնահատման և քարտեզագրման բնագավառում (Ռ. Գասպարյան, Ս. Փաիլևանյան):

Հանքային երկրաֆիզիկայի գիտական մշակումների մեջ իրենց ուրույն դերն են ունեցել էլեկտրահետախուզական մեթոդների ընդգետնյա տարբերակների զարգացման և հանրապետության հանքավայրերում դրանց ռացիոնալ համալիրների ներդրման հարցերը: Այդ հարցերի տեսական, մեթոդական և պրակտիկ կիրառական արդյունքներն ամփոփված են հեղինակային խմբի (Ս. Բադալյան, Գ. Ղազարյան, Վ. Գամոյան) հրատարակած «Ընդգետնյա էլեկտրահետախուզություն Հայաստանի մետաղային հանքավայրերում» ծավալուն մենագրության մեջ:


Երկրամագնիսականության և հնէամագնիսականության բնագավառի հետազոտություններ: Այս բնագավառի հետազոտությունները հիմնականում միտված են Երկրի մագնիսական դաշտի և նրա տարածաժամանակային համընդհանուր փոփոխությունների հիման վրա երկրակեղևի երկրաբանական և տեկտոնական կառուցվածքի, մագնիսական բևեռների տեղաշարժի ու նշանափոխության ու-

սումնասիրմանը: Հետաքրքիր արդյունքներ են ստացվել գլոբալ մասշտաբով մագնիսական դաշտի վարիացիաների առանձնահատկությունների հետազոտման, ձեղքերի առաջացման ֆիզիկական մեխանիզմի և արեգակնային ակտիվության հետ դրանց առնչության բացահայտման բնագավառում, ինչպես նաև հանրապետության տարածքում տեկտոնական լարումների դինամիկայի հետ կապված ռեգիոնալ դաշտի վարիացիաների անոմալիաների բացահայտման ու հետազոտման խնդիրներում (Ա. Սիմոնյան, Ս. Հովհաննիսյան): Տարբեր հասակի և ծագման ապարների պետրոմագնիսական և հնէամագնիսական ուսումնասիրությունների արդյունքում կազմվել է Ֆաներոզոյի հնէամագնիսական-շերտագրական ամփոփ սանդղակը (Ջ. Մինասյան, Թ. Սիրունյան, Ա. Կարախանյան):

Տեսական երկրաֆիզիկայի բնագավառի հետազոտություններ:

Տեսական երկրաֆիզիկայի լաբորատորիայում աշխատանքներ են տարվում երկրաֆիզիկական տարբեր խնդիրների լուծման նպատակով մաթեմատիկական մեթոդների կիրառման ուղղությամբ: Ծարունակվել են հետազոտությունները գրավիչափության, մագնիսաչափության և սեյսմաբանության տվյալների մեկնաբանման նոր մեթոդների մշակման ուղղությամբ:

Մշակվել է գծային, ոչ կոռեկտ խնդիրների լուծման երկակի մեթոդ, որը հնարավորություն է տալիս երկրաֆիզիկական խնդիրները լուծելու դրանց առավել բնական դրվածքի, ոչ բավարարելակետային ինֆորմացիայի պայմաններում (Ս. Հովհաննիսյան):



GIS տվյալների բազա Հայկական ատոմակայանից 50 կմ շառավղով՝ ներառյալ երկրաբանական, հրաբխագիտական, երկրաֆիզիկական, տեկտոնական տվյալները: (ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ)

հիմնատակի փոխազդեցության մի շարք հիմնահարցերի ուղղությամբ (Բ. Կարապետյան, Ս. Դարբինյան, Ս. Խաչատրյան, Ռ. Մարտիրոսյան, Լ. Մխիթարյան, Հ. Սարգսյան, Կ. Տոնոյան, Ա. Հովսեփյան):

Ձևախեղման ենթարկվող պինդ մարմինների նմանության տեսության մշակումը (Ա. Նազարով, 1965) հնարավորություն է տվել իրականացնել նաև շենքերի և կառույցների, դրանց առանձին տարրերի տարաբնույթ և կիրառական տեսանկյունից կարևոր փորձարարական աշխատանքներ (Ս. Շահինյան, Ս. Շահինյան, Ռ. Համասյան, Ա. Մկրտչյան, Վ. Մնացականյան, Դ. Մխիթարյան, Պ. Խաչատրյան, Կ. Գոմցյան): Կատարելագործվել են շենքերի և կառույցների հաշվարկման մեթոդները՝ հաշվի առնելով սեյսմիկ ազդեցությունների ալիքային բնույթը և կոնստրուկցիաների տարածական աշխատանքը:

Երկաֆիզիկական սարքաշինության բնագավառի հետազոտություններ: Երկրաֆիզիկական սարքաշինության լաբորատորիան զբաղվում է սարքերի մշակմամբ, նախագծմամբ և փորձանմուշների պատրաստմամբ: Պատրաստվել են հատուկ նշանակության օբյեկտների (այդ թվում ատոմակայանների) սեյսմիկ անվտանգության ապահովման համակարգեր, ծովային սեյսմատվիչների մի քանի տիպ: Նախագծվել, պատրաստվել և փորձարկվել է կոշտ հիշողությամբ թվային հորատանցքային արագացումաչափ (աքսելերոմետր): Փորձարկման բարձր ցուցանիշները հիմք են հանդիսացել պատրաստելու տեխնոլոգիական հարմարանքներ սարքի փոքր քանակով արտադրության համար (Մ. Հարությունյան, Ռ. Սարգսյան, Ա. Գասպարյան):

Հետազոտվել է սեյսմիկ ալիքային դաշտն անիզոտրոպ միջավայրում: Լուծվել է տատանումների կետային ներդաշնակ աղբյուրից անիզոտրոպ միջավայրում սեյսմիկ ալիքների տարածման հարթ խնդիրը: Գնահատվել են սեյսմիկ լայնական ալիքի ձակատի վրա առաջացած բացատների չափերը (Կ. Մկրտչյան):

Ինժեներային սեյսմաբանության և սեյսմակայուն շինարարության բնագավառի հետազոտություններ: Ինժեներային սեյսմաբանության ուղղությամբ իրականացվել են բազմաբնույթ գիտակիրական հետազոտություններ: Մշակվել և կատարելագործվել է երկրաշարժի ժամանակ գետնահողի տատանման քանակական պարամետրերի գնահատման մեթոդը, գործիքային հիմքով գնահատվել է սեյսմիկ ուժգնությունը (Ա. Նազարով, Բ. Կարապետյան, Ս. Դարբինյան, Վ. Գրիգորյան, Զ. Կարապետյան):

Կազմվել են հանրապետության տարածքի սեյսմիկ վտանգի և սեյսմիկ շրջանացման քարտեզները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության,

Արցախի և հարակից տարածքներում հնագույն ժամանակներից մինչև 2003 թ. տեղի ունեցած ուժեղ երկրաշարժերի ատլաս (Թ. Բաբայան), հանրապետության խոշոր քաղաքների, հիդրոտեխնիկական կառույցների և հատուկ նշանակության օբյեկտների մանրամասն սեյսմիկ գոտիավորման քարտեզներ (Ս. Փիրուզյան, Ս. Սիմոնյան, Ս. Կարապետյան, Թ. Բաբայան), որակապես նոր հիմքի վրա կազմվել է ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման 1:200000 մասշտաբի քարտեզը, որի վրա առաջին անգամ անջատվել են գրունտների տատանումների 0,6g արագացումների արժեքով գոտիներ (Վ. Գրիգորյան): Արդիականացվել է ՀՀ տարածքի 1:200000 մասշտաբի սեյսմիկ շրջանացման քարտեզը, որի վրա առաջին անգամ առանձնացվել են գրունտների առավելագույն արագացման 0.7-1.2 g արժեքներով գոտիներ (Ս. Հովհաննիսյան, Է. Գյոդական, Զ. Կարապետյան, Հ. Հովհաննիսյան):

Հետազոտություններ են տարվում կառույցների և շենքերի վրա սեյսմիկ ազդեցության հաշվարկների, կառույցի և նրա

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՎԻԼԵՆ ՀԱԿՈՒՅԱԼ

Ակադեմիկոս, բժշկական գիտությունների դոկտոր, բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար,

ԳՈՀԱՐ ՑԱԿԱՆՈՎԱ

Կենսաբանական գիտությունների թեկնածու, բնական գիտությունների բաժանմունքի գիտական քարտուղար

Հայաստանում բնական գիտությունների ոլորտում գիտահետազոտական աշխատանքները գրեթե միաժամանակ սկզբնավորվել են գյուղատնտեսության, բուսաբանության, ջրակենսաբանության, մանրէաբանության, իսկ ավելի ուշ՝ նաև ագրոքիմիայի և կենսատեխնոլոգիայի ոլորտներում: Այդ գիտությունները նոր վերելք են ապրել XX դարի սկզբից: Այսպես՝ 1943 թ., Գիտությունների ակադեմիայի կազմավորման հետ միաժամանակ հիմնադրվել է Կենսաբանական

գիտությունների բաժանմունքը, որի կազմի մեջ էին մտնում Բուսաբանության, Կենդանաբանության, Բույսերի գենետիկայի և սելեկցիայի, Ֆիզիոլոգիայի ինստիտուտները, Միկրոբիոլոգիայի սեկտորը և Սևանի ջրակենսաբանական կայանը, որը հետագայում վերակազմավորվել է Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի (1990 թ.): Հետագայում Կենսաբանական գիտությունների բաժանմունքում տեղի են ունեցել մի շարք վերակազմավորումներ և համալրում-

ներ. ստեղծվել են Ագրոքիմիայի լաբորատորիան (1947 թ.), որը հետագայում վերակազմավորվել է Գ. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի (1966 թ.), Բժշկագիտական բաժանմունքը (1950 թ.), Նուրբ օրգանական քիմիայի (1955 թ.), Ընդհանուր անօրգանական քիմիայի (1957 թ.), Կենսաքիմիայի (1961 թ.) և Մանրէաբանության (1961 թ.) ինստիտուտները: 1960 թ. Բժշկագիտական սեկտորը վերակազմավորվել է Բժշկական գիտությունների





բաժանմունքի՝ իր կազմի մեջ ընդգրկելով Ֆիզիոլոգիայի, Ռենտգենաբանության և ուռուցքաբանության, ինչպես նաև Սրտաբանության ինստիտուտները: 1963 թ. Բժշկական գիտությունների բաժանմունքը լուծարվել է, իսկ բաժանմունքի կազմի մեջ մտնող ինստիտուտներից Ֆիզիոլոգիայի ինստիտուտը կրկին անցել է Կենսաբանական գիտությունների բաժանմունքի, իսկ Ռենտգենաբանության և ուռուցքաբանության, Սրտաբանության ինստիտուտները՝ Առողջապահության նախարարության ենթակայության տակ:

1964 թ. Կենսաբանական գիտությունների բաժանմունքի՝ Նուրբ օրգանական քիմիայի, Ընդհանուր և անօրգանական քիմիայի, Օրգանական քիմիայի և Կենսաքիմիայի ինստիտուտներն անցել են Գիտությունների ազգային ակադեմիայի կազմում նույն թվականին հիմնադրված Քիմիական գիտությունների բաժանմունքի կազմի մեջ:

Հետագա տարիներին Կենսաբանական գիտությունների բաժանմունքում ստեղծվել են Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը և Փորձարարական կենսաբանության ինստիտուտը, որը հետագայում

վերանվանվել է Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի:

1994 թ. Կենսաբանական գիտությունների ու Քիմիական և Երկրաբանական գիտությունների բաժանմունքները վերամիավորվել են՝ կազմելով Բնական գիտությունների բաժանմունքը: Սակայն 2006 թ. քիմիական ուղղությամբ ինստիտուտները, առանձնանալով Բնական գիտությունների բաժանմունքից, հիմնադրել են Քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունքը:

2006 թ. Կենդանաբանության ինստիտուտի ու Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտների միավորմամբ ՀՀ ԳԱԱ պատմության մեջ առաջին անգամ ստեղծվել է Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն:

2010 թ. Բնական գիտությունների բաժանմունքը համալրվել է Կենսատեխնոլոգիայի ինստիտուտով: Միկրոբիոլոգիայի ինստիտուտի և Մանրէների ավանդադրման կենտրոնի միավորմամբ ստեղծվել է «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնը:

Գիտության վերելքի այս 70 տարիների ընթացքում բաժանմունքը ղեկավարել են գիտու-

թյան կարկառուն դեմքեր՝ ակադեմիկոսներ Խ. Կոշտոյանցը (1943-1947 թթ.), Հ. Բունիաթյանը (1947-1957 թթ.), Վ. Գուլբանյանը (1957-1970 թթ.), Վ. Ղազարյանը (1970-1994 թթ.), Է. Գաբրիելյանը (1994-2005 թթ.): Այսօր բաժանմունքը ղեկավարում է ակադեմիկոս Վ. Հակոբյանը:

2013 թ. դրությամբ Բնական գիտությունների բաժանմունքի կազմի մեջ են մտնում 11 գիտահետազոտական կազմակերպություններ. Բուսաբանության, Կենդանաբանության, Կենսատեխնոլոգիայի, Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի, Գ. Ղավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների, Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության, Միկրոբիոլոգիայի, Մոլեկուլային կենսաբանության, Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտները և Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների ու Մանրէների ավանդադրման կենտրոնները, որոնցից 5-ը միավորված են 2 կենտրոնների մեջ՝ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական, «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոններ:

ԲԱԺԱՆՈՒՆՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

70 տարվա ընթացքում բաժանմունքում իրենց բեղմնավոր գործունեությունն են ծավալել շատ արժանավոր և աշխարհահռչակ գիտնականներ: Ցավոք, 31 ակադեմիկոս, 15 թղթակից անդամ և 2 արտասահմանյան անդամներ վախճանվել են՝ թողնելով իրենց գիտական հարուստ ժառանգությունը սերունդներին:

Այսօր բաժանմունքում ընդգրկված են 9 ակադեմիկոս, 11 թղթակից և 29 արտասահմանյան անդամներ, ինչպես նաև 12 պատվավոր դոկտորներ:



**ԲԱԺԱՆՍՈՒՆԷԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-
ԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ**

Այսօր ՀՀ ԳԱԱ համակարգում ընդհանուր և կիրառական կենսաբանության ուղղություններով հետազոտություններ են տարվում բուսաբանության, էկոլոգիայի, կենդանաբանության, կենսաքիմիայի, մանրէաբանության, կենսատեխնոլոգիայի, գենետիկայի, հիդրոպոնիկայի և ջրակենսաբանության բնագավառներում:

Բուսաբանություն: Բուսաբանական ուսումնասիրությունների սկիզբը Հայաստանում կապված

է (ավելի քան 500 հազար նմուշ), որը մեծ ծանաչում ունի ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Հիմնարար և կիրառական նշանակության արժեքավոր հետազոտություններ են իրականացվել հանրապետության ֆլորայի, բուսական ծածկույթի, էվոլյուցիոն կարգաբանության, բույսերի ֆիզիոլոգիայի, ինչպես նաև բուսաբանական այգիներում (Երևանի, Վանաձորի և Սևանի) բույսերի ներմուծման ու կլիմայավարժեցման ուղղություններով: Այսպես, վերջին տարիներին ՀՀ

ծումը հանրապետության տարածքում:

Նշանակալից գիտական հետազոտություններ են ծավալվել նաև երկրաբուսաբանության, բույսերի էկոլոգիայի և անտառագիտության ուղղություններով: Բուսաբանական գիտության կիրառական նշանակություն ունեցող ուղղություններից է համաշխարհային ֆլորայի օգտակար բուսատեսակների ներմուծումը և կլիմայավարժեցումը: Վերջին տարիներին Հայաստանում զարգացել է նաև բրածո բույսերի ուսումնասիրման ուղղությունը՝



է բնախույզ Ա. Շելկովնիկովի գործունեության հետ. 1920-ական թթ. նրա պատրաստած հերբարիումի հիման վրա ստեղծվել է Հայաստանի բնապատմական թանգարանի հերբարիումը, իսկ հետագայում՝ նաև Բուսաբանության ինստիտուտը: Այսօր այն ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի բարձրակարգ բույսերի կարգաբանության և աշխարհագրության բաժնի հերբարիումն

ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի մասնագետները պատրաստել և հրատարակել են «Հայաստանի ֆլորա» 11-հատորյակը և Հայաստանի բույսերի Կարմիր Գրքի երկրորդ լրամշակված տարբերակը, որում, Հայաստանի կարևոր բուսաբանական տարածքների առանձնացման նպատակով, գնահատվել է Կարմիր Գրքում ընդգրկված հազվագյուտ ու անհետացող բույսերի տարա-

հնէաբուսաբանությունը:

Կարևոր հետազոտություններ են իրականացվում նաև հիդրոպոնիկայի՝ բույսերի անհող մշակման պայմաններում բույսերի արտադրության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Էկոլոգիա: ՀՀ ԳԱԱ Էկոլոգա-նոսֆերային հետազոտությունների կենտրոնում հիմնարար և կիրառական նշանակության



արժեքավոր հետազոտություններ են իրականացվել շրջակա միջավայրի կայուն աղտոտիչների՝ ծանր մետաղների ասոցիացիաների ձևավորման, զարգացման դինամիկայի, էկոլոգիական ռիսկի գործոնների դրսևորման, Երևանի շրջակա միջավայրի հիմնական երկրաքիմիական ցուցանիշների քանակական և որակական փոփոխությունների, էկոհամակարգերի գործունեության կենսաերկրաքիմիական ցիկլայնության, քիմիական տարրերի ջրային միգրացիայի ուղղությամբ:

Հետազոտություններ են տարվում նաև հանքալեռնային արդյունաբերական քաղաքներում հանքանյութի կազմում պարունակվող թունավոր քիմիական տարրերի (Hg, Cd, As) ուսումնասիրման ուղղությամբ, որոնք ռիսկի գործոն են բնակչության առողջության համար: Հիմնարար և կիրառական նշանակության կարևոր ուղղություն է նաև լանդշաֆտային պլանավորման և լանդշաֆտային կայունության գնահատման գիտամեթոդական հիմունքների և շրջակա միջավայրի աղտոտման հեռազննման մոնիթորինգային համակարգի մշակումը: Կարևոր և ռազմավարական հետազոտություններ են իրականացվում նաև սննդի որակի վերահսկման ուղղությամբ:



Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտը միակ կազմակերպությունն է, որն իրականացնում է հետազոտություններ Սևանի էկոհամակարգի գնահատման, էվտրոֆացման պրոցեսների կանխման կամ դրանց ընթացքի դանդաղեցման, ջրի որակի բարելավման, լճում բուսական և կենդանական տեսակների կենսապայմանների վերականգնման, գետերի հունների փոփոխության, բնապահպանական նորմերին համապատասխան նոր կառուցվող հիդրոտեխնիկական կառույցների, Հայաստանի անդրսահմանային՝ Դեբեդ, Ողջի, Աղստև գետերի և Հրազդան հիդրոէկոհամակարգի ուսումնասիրությունների ուղղությամբ:

Կենդանաբանություն: Հիմնարար հետազոտություններ են իրականացվել ազգային անվտանգության, հետևաբար՝ ռազմավարության գերակա և առաջնահերթ խնդրի՝ հանրապետության կենդանական աշխարհի համակողմանի ուսումնասիրության ուղղությամբ:

Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի աշխատակիցներն իրականացնում են ֆաունայի բազմազանության, էկոլոգիայի, կենսաբանության, տարածվածության և ներկա վիճակի գնահատման ուսումնասիրություն: Արժեքավոր են հնէակենդանաբանության ասպարեզում կատարվող հետազոտությունները՝ պլեյստոցենի, հոլոցենի և միջնադարի բնական դամբարանների, հուշարձանների և կենդանիների ժայռապատկերների ուսումնասիրության ուղղությամբ: Կարևոր և արժեքավոր հետազոտություններ են տարվում էնդեմիկ ձկնատեսակների գենոֆոնդը պահպանելու ուղղությամբ: Նույն կենտրոնում ստեղծվել է ֆաունայի անողնաշար և ողնա-





շարավոր կենդանիների թանգարան: Կենտրոնի աշխատակիցները պատրաստել և հրատարակել են «Հայաստանի գյուղատնտեսական կուլտուրաների, անտառների և պահեստների վնասատուներ» տեղեկագիրը, «Հայկական ՍՍՀ Կարմիր գիրքը» (կենդանիներ, 1987), «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը» (2010):

Կենսաքիմիա: Մեր հանրապետությունում կենսաքիմիական հետազոտությունների զարգացումը կապված է Հ. Բունիայանի անվան հետ: 1961թ. ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի կազմում ընդգրկված կենսաքիմիայի բաժնի հիման վրա ստեղծվել է ՀՀ ԳԱԱ Հ. Բունիայանի անվան կենսաքիմիայի ինստիտուտը, որը հետագայում դարձավ ուղեղի կենսաքիմիայի խոշոր կենտրոններից մեկն աշխարհում: Այնտեղ հիմնադրվել է նեյրոհորմոնների կենսաքիմիայի ուղղությունը, զարգացվել են նեյրոքիմիայի և մոլեկուլային նեյրոէնդոկրինոլոգիայի երկու նոր նեյրոէնդոկրին սրտաբանության և ուղեղի նեյրոէնդոկրին իմուն համակարգի տեսությունները (ակադեմիկոս Ա. Գալոյան): Հիմնարար հետազոտություններ են տարվում սրտամկանի մեռուկացման և ռեպերֆուզիայի վնասակար ազդեցության բուժման, բակտերիաների սկրինինգի, տարբեր հիվանդությունների ժամանակակից թթվածնի նյութափոխանակության առանձնահատկությունների, նեյրոսպեցիֆիկ սպիտակուցների, ադենիլային միացությունների, նյարդային հյուսվածքում կենսաէներգիական մեխանիզմների, թաղանթային սպիտակուցների ուսումնասիրության ուղղությամբ:

Կենսատեխնոլոգիա: «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտարական կենտրոնում հիմնարար, կարևորագույն ռազմավարական նշանակության հետազոտություններ են իրականացվել սպիտակուցային Լ-ամինաթթուների նորագույն



արտադրական կենսատեխնոլոգիաների մշակման և դրանց հիման վրա «Պոլիամին» և «Պանամին» ամինաթթվային բնույթի դեղապատրաստուկների արտադրության կազմակերպման ուղղությամբ: Չարգացվել է կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզի ուղղությունը, որի շնորհիվ մշակվել են հակավիրուսային, հակաուռուցքային, հակաթմբանյութային, հակահիպերտենզիվ և այլ ազդեցության դեղապատրաստուկների ստացման համար օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների և դրանցից կազմված պեպտիդների սինթեզի արդյունավետ տեխնոլոգիաներ: Լայն միջոցառումներ են իրականացվել մանրէաբանության գիտաարտադրական բազան ամրապնդելու, ինչպես նաև ընդհանուր և կիրառական մանրէաբանությունն ու մանրէաբանական արդյունաբերությունը զարգացնելու ուղղությամբ: Իրականացվել են նաև կարևոր մշակումներ առողջապահության, գյուղատնտեսության, սննդարդյունաբերության, բնապահպանության և կենսաբանորեն ակտիվ նյութերի կենսամիմետիկ սինթեզի ուղղությամբ:

Մանրէաբանություն: Կարևոր հետազոտություններ են իրականացվել մարդու և կենդանիների վիրուսային վարակների ուսումնասիրությունների, ինչպես նաև դրանց դեմ պայքարելու համար պատրաստուկների ստեղծման, գյուղատնտեսական, տեխնիկական, ինչպես նաև ընդհանուր և կիրառական մանրէաբանության զարգացման ուղղությամբ:

Մոլեկուլային կենսաբանություն: Կարևոր և հիմնարար հետազոտություններ են իրականացվել օրգանիզմի տարբեր ախտաբանական վիճակներում՝

աուտոիմունային, աուտոբորբոքային, վարակիչ, օնկոլոգիական, հոգեկան և ուղեղանոթային հիվանդությունների ժամանակ բջջային ակտիվության կարգավորման մեխանիզմների և դրանց խանգարումների ուսումնասիրման ուղղությամբ: Հետազոտությունների կարևորագույն ուղղություններից է նաև հայերի գենոմի ուսումնասիրությունը: Եվս մեկ կարևոր ուղղություն է սննդի անվտանգության վերահսկումը: Արժեքավոր է իմունային և ազդանշանային համակարգերի միջնորդանյութերի ուսումնասիրությունը:

Ֆիզիոլոգիա: Հայաստանում ֆիզիոլոգիայի բնագավառում գիտական հետազոտությունները սկզբնավորվել են 1921 թ. Երևանի պետական համալսարանում ստեղծված Կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնում, որի հիման վրա կազմակերպվել է հանրապետությունում առաջին գիտահետազոտական լաբորատորիան: Հայկական ֆիզիոլոգիական գիտության ձևավորման ու զարգացման գործում բացառիկ է Լ. Օրբելու, Խ. Կոշտոյանցի, Է. Հասրաթյանի ավանդը: Կարևոր և արժեքավոր են նյարդաֆիզիոլոգիական, շարժողական և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման նեյրոնային մեխանիզմների, նյարդային համակարգի փոստատուցողական հատկությունների, օրգանիզմի նեյրոնային մեխանիզմների ընդերային գործառույթի կենտրոնական կարգավորման, ուղեղի լիմբիկ համակարգի, հարթ մկանների ֆիզիոլոգիայի, ԿԼՀ-ի շարժողական համակարգի օղակներում նեյրոնային և սինապտիկ կազմավորումների, ԿԼՀ-ում և ՊԼՀ-ում ռեաբիլիտացիայի նախաձեռնման և արագացման, սինապտիկ անցելիության փոր-



ձարարական հատկանիշների ուղղությամբ իրականացված ուսումնասիրությունները:

ԲԱԺԱՆՍՈՒՆՔԻ ՀԱՆԴԵՍԵՐԸ

Բաժանմունքի կազմում են «Հայաստանի բժշկագիտություն» (գլխ. խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յու. Ալեքսանյան), «Հայաստանի կենսաբանական հանդեսը» (գլխ. խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Է. Գևորգյան), «Բնական գիտությունների նոր էլեկտրոնային հանդեսը» (գլխ. խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Շահինյան) և «Նեյրոքիմիա» (գլխ. խմբագիր՝ կ.գ.դ., պրոֆ. Մ. Աղաջանով) գիտական հանդեսները:

XXI ԴԱՐԻ ԿԱՐԵՎՈՐ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ



XXI դարի մուտքը Հայաստանում բնական գիտությունների բնագավառ բերեց զարգացման նոր մակարդակ, նոր հորիզոններ, ինչպես նաև հնարավորություն՝ մշտապես լինելու համաշխարհային գիտության զարգացման առաջին շարքերում:

Հայաստանում բնական գիտությունների զարգացումը խորապես կապված է հանրապետության՝ համաշխարհային ծանաչում ունեցող գիտնականների դրած կարևորագույն խնդիրների լուծման հետ: Այսպես, Հայաստանում XXI դարի կարևոր և ռազմավարական ուղղություն է երկրաբնապահպանությունը, քանի որ հանրապետությունում հրատապ խնդիրներ են տարածքի էկոլոգիական իրավիճակի համալիր գնահատումը, ռիսկերի գործոնների բացահայտումը, էկոլոգիական փորձաքննության գիտամեթոդական հիմունքների մշակումը, մարդու էկոլոգիային առնչվող խնդիրների լուծումը,

բնական ռեսուրսների կառավարման գործընթացների բարեփոխումը: Այդ շրջանակներում կարևոր են նաև Հայաստանի և Արցախի ժամանակակից ու բրածո բույսերի կենսակարգաբանական և ֆլորիստիկ ուսումնասիրությունները, էկոհամակարգերի փոփոխության կանխատեսումը՝ կապված կլիմայի սպասվող փոփոխության հետ: Կարևորվում է նաև Հայաստանի արիդային տարածաշրջանների չորադիմացկուն և տնտեսապես արժեքավոր ծառաբույսերի էկոլոգոցենոտիկ առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Անթրոպոգեն ազդեցության և անընդհատ վատթարացող պայմաններում հետզհետե մեծ կարևորություն են ստանում նաև ֆաունայի վիճակի գնահատումն ու պահպանությունը, տնտեսական նշանակություն ունեցող, վտանգված, ինչպես նաև մարդու առողջության համար ռիսկի գործոն հանդիսացող տեսակների վերհանումը և համամոլորակային խնդիր դարձած կլիմայի փոփոխության, անապատացման, ներկայումս առավել խոցելի վիճակում հայտնված բարձրլեռնային համակարգերի ուսումնասիրությունը:

Բնակչության առողջապահության առումով կարևոր ռազմավարական նշանակություն ունի սննդի շղթայի ռիսկի գնահատման ոլորտը, որի զարգացումն էապես կապված է սննդամթերքի անվտանգության ապահովման, գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների ռիսկերի վերլուծության և անվտանգության գնահատման, բարեխիղճ գյուղատնտեսական գործելակերպի մեթոդների մշակման հետ: Բնակչության առողջապահության համընդհանուր խնդիր է նաև Հայաստանում մեծ տարածում գտած հիվանդությունների





ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային մեխանիզմների բացահայտումը և հայկական գենոմի ուսումնասիրությունը՝ այդ հիվանդությունների կանխարգելման, կանխորոշման, ախտորոշման և բուժման արդյունավետ եղանակների մշակման նպատակով:

Համաշխարհային տնտեսության առավել դինամիկ զարգացող և ներդրումային ոլորտներից է նաև կենսատեխնոլոգիան:

Անցած 70 տարիները բավական արգասաբեր են եղել Բնական գիտությունների բաժանմունքի գիտական կազմակերպությունների համար: Մեր բաժանմունքի գիտնականները հաջողությամբ ստացել են կարևոր գիտական և կիրառական արդյունքներ, որոնք ունեցել են միջազգային ճանաչում: Այժմ էլ բաժանմունքի գիտական կազմակերպությունների, բաժանմունքի անդամների գիտական հետազոտությունները մեծ արժեք են ներկայացնում ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլ նաև միջազգային գիտական հանրության համար:

Բաժանմունքի գիտական կազմակերպություններում կան նաև բազմաթիվ չլուծված հարցեր՝ ֆինանսական ծանր խնդիրներ, ժամանակակից գիտական սարքավորումների խիստ անբավարար մակարդակ, գիտական հետազոտությունների բազմաթեմայնություն, ինստիտուտների և լաբորատորիաների անհրաժեշտ ինտեգրման անբավարար վիճակ, երիտասարդ գիտնականների արտահոսք և այլն: Այսուհանդերձ բաժանմունքի գիտական կազմակերպություններն ապահովում են գործունեության բարձր մակարդակ:



ԷՎՐԻԿ ԳԵՂԱՄԻ ԱՖՐԻԿՅԱՆ

ԱՇՈՏ ՍԱՂՅԱԼ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀՀ ԳԱԱ «Հակենսատեխնոլոգիա»
ԳԱԿ տնօրեն

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հանրապետության գիտության վաստակավոր գործիչ Էվրիկ Գեղամի Աֆրիկյանը ծնվել է 1925 թ. մայիսի 14-ին Երևանում: 1947 թ. ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը: Ուսանողական տարիներին աշխատել է ընդհանուր վիրաբուժության կլինիկայում, տպագրել է մի շարք գիտական հոդվածներ, «Պենիցիլինը և դրա նշանակությունը բժշկության մեջ» (1947 թ.) մենագրությունը, որն այդ տարիներին Սովետական միությունում հրատարակված ակնարկներից առավել ընդգրկունն է:

Ուսուցումը ԽՍՀՄ ԳԱ Միկրոբիոլոգիայի ինստիտուտին կից ասպիրանտուրայում, ակնավոր մանրէաբան, ԳԱ թղթակից անդամ Ն. Ա. Կրասիլնիկովի ղեկավարությամբ որոշիչ նշանակություն է ունեցել նրա հետագա գիտական գործունեության համար:

1963 թ. Է. Աֆրիկյանը ղեկավարել է ՀՍՍՀ ԳԱ Միկրոբիոլոգիայի ինստիտուտը: Նրա արդյունա-

վետ գիտակազմակերպական գործունեության շնորհիվ ինստիտուտը դարձավ ԽՍՀՄ-ում ընդհանուր և կիրառական մանրէաբանության խոշոր կենտրոններից մեկը: Հայաստանում այդ բնագավառի գործարանների նախագծման, շինման-տաժային աշխատանքների և շահագործման փորձն էական նշանակություն ունեցավ ԽՍՀՄ-ում բակտերիալ ինսեկտիցիդների, ամինաթթուների և այլ կարևոր կենսապատրաստուկների արդյունաբերական արտադրության զարգացման համար: 1993 թ. Միկրոբիոլոգիայի ինստիտուտի բազայի վրա Է. Աֆրիկյանը հիմնել է «Մանրէների ավանդադրման հանրապետական կենտրոնը» որն այնուհետև



ՀՀ ԳԱԱ Միկրոբիոլոգիայի ինստիտուտը (ք.Արմավյան)



դարձել է գիտաարտադրական նշանակության ոչ ախտածին միկրոօրգանիզմների կուլտուրաների «Ազգային հավաքածու»:

Երկար ժամանակ Է. Աֆրիկյանն աշխատել է արտասահմանյան առաջատար կենտրոններում՝ Պաստյորի ինստիտուտում (Ֆրանսիա, Փարիզ), ԱՄՆ-ի, Կանադայի, Ճապոնիայի գիտական լաբորատորիաներում: Նա մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների, իսկ 1993-1998 թթ. ընտրվել է INTAS միջազգային հիմնադրամի գիտական խորհրդի անդամ (Բելգիա, Բրյուսել):

Է. Աֆրիկյանը հեղինակ է 4 մենագրության և ավելի քան 300 գիտական հոդվածների, որոնք արտացոլում են նրա գիտական հետաքրքրությունների լայն շրջանակը՝ մանրէային անտագոնիզմ և հակաբիոտիկներ, էնտոմոպաթոգեն բակտերիաներ և վնասակար բակտերիաների դեմ պայքարի միկրոկենսաբանական միջոցներ, մանրէային կենսաքայքայիչներ, կենսակատալիզ և կենսափոխակերպում և ընդհանուր ու կիրառական միկրոկենսաբանության այլ խնդիրներ:

Է. Աֆրիկյանի հետազոտությունների հիմնական առարկան անբուսական սպորաառաջացող բակտերիաներն են և դրանց միջոցով կենսաբանորեն ակտիվ նյութերի ստացումը: Երկար տարիների բեղմնավոր աշխատանքի արդյունքում բացահայտվել են հողում այդ բակտերիաների տարբեր տեսակների և խմբերի տարածվածության օրինաչափությունները և էկոլոգիական առանձնահատկությունները: Պարզաբանվել է նշված բակտերիաների անտագոնիստական հատկությունների յուրօրինակությունը, ինչը հաստատել է Ն. Կրասինիկովի առաջարկած հակաբիոտիկների առաջացման

տեսակային մենահատուկության դրույթը: Բակտերիաների անտագոնիստական տեսակները բնութագրվել և օգտագործվել են բուսաբուծության մեջ: Այդ աշխատանքների արդյունքներն ամփոփվել են «Բակտերիաներ-անտագոնիստներ և դրանց կիրառությունը» գրքում (1959 թ.): Իր մշակած էլեկտրոնային մանրադիտակով տեսածրման մեթոդի կիրառմամբ Է. Աֆրիկյանը բացահայտել է *Bacillus mycoides*-ի ինվերսիվ ձևերի էությունը՝ պայմանավորված ազար պարունակող սննդատար միջավայրերի մակերևույթին գոյացած բակտերիական ձգափոկերի բջիջների կիսման տարբեր ինտենսիվությամբ:

ԽՍՀՄ-ում Է. Աֆրիկյանը կոորդինացրել է էնտոմոպաթոգեն բակտերիաների ուսումնասիրման և կիրառման աշխատանքները՝ ուղղված էկոլոգիայի, դասակարգման, նյութափոխանակության, ինսեկտիցիդ ազդեցության, էնտոմոցիթոյների ուսումնասիրման, ինչպես նաև *Bacillus thuringiensis*-ի օգտագործմամբ նոր բակտերիային ինսեկտիցիդային պատրաստուկների արտադրության կազմակերպմանը: Այդ աշխատանքների արդյունքներն ամփոփված են «Էնտոմոպաթոգեն բակտերիաները և դրանց նշանակությունը» մենագրությունում (1973 թ.): Էնտոմոպաթոգեն բացիլների առանձին տարատեսակների էկոլոգա-աշխարհագրական տարածվածության որոշակի օրինաչափությունների բացահայտման հետ մեկտեղ, առաջին անգամ հայտնաբերվել է բյուրեղանման թույներ չառաջացող *Bacillus cereus*-ի կուլտուրաների խաչաձև սեռոլոգիական ագլյուտինացումը *Bacillus thuringiensis*-ի հակաշիճուկների H-հակագենների հետ: Տվյալ երև-

ույթը վկայում է այդ տեսակների ֆիլոգենետիկ սերտ կապի մասին և լայն հնարավորություն է ստեղծում էնտոմոպաթոգեն և այլ տեսակների բացիլների գենետիկական ճարտարագիտության համար:

Bacillus thuringiensis-ի շտամների էնտոմոլոգիական, կենսաբժշկական և թունաբանական հատկությունների ուսումնասիրությունների հիման վրա կազմակերպվել է էնտոմոպաթոգեն պատրաստուկների մեծածավալ արտադրություն՝ թեփուկաթևավորների դեմ պայքարի համար բակտերիալ ինսեկտիցիդ պատրաստուկների և մոծակների թրթուրների դեմ՝ լարվիցիդ պատրաստուկի:

Է. Աֆրիկյանն աշխատակիցների հետ առաջին անգամ հայտնաբերել է միջատասպան թույների կենսասինթեզի գենետիկական դետերմինանտների պլազմիդային բնույթը (1976 թ.):

Է. Աֆրիկյանն ուսումնասիրել է նաև այլ էնտոմոպաթոգեն բացիլներ՝ մասնավորապես *Bacillus sphaericus*-ը և ծագումով մոտ այլ տեսակներ: Բացահայտել է դրանց կենսաբազմազանությունը, անջատել նոր, ակտիվ շտամներ՝ մորեխների, մոծակների, բզեզների և այլ առավել վտանգավոր վնասատուների դեմ: Էնտոմոպաթոգեն բացիլների (*Bacillus popilliae-lentimorbus*)՝ ճապոնական բզեզի կաթնային հիվանդության հարուցիչների ուսումնասիրման արդյունքում բացահայտել է դրանց կախվածությունը թիամինից և բիոտինից: Հայտնաբերել է դիաուքսիայի երևույթը, որի պատճառով հեղուկ արհեստական միջավայրերում աճելու պրոցեսում այդ բակտերիաների սպորագոյացումն արգելափակվում է:

Է. Աֆրիկյանը և իր աշխատակիցները երկար տարիներ

ուսումնասիրել են թթենու շերամի բակտերիոզները և հայտնաբերել են, որ որոշ բակտերիային հիվանդությունների պատճառը դրանց աղիքային միկրոֆլորայում ոչ սպորավոր, վիտամինների և ամինաթթուների պահանջ ունեցող բակտերիաների առանձին տեսակների ակտիվ բազմացումն է: Լման բակտերիոզներն առանձնացվել են որպես ինքնուրույն նոզոլոգիական խումբ և բնութագրվել որպես վարակիչ ավիտամինոզներ: Հատկանշական է, որ հայտնաբերված հարուցիչը և հիվանդության ախտանշանները նկարագրվել են դեռևս Լուի Պաստյորի՝ թթենու շերամի հիվանդությունների մասին աշխատությունում:

Է. Աֆրիկյանի ղեկավարությամբ մանրէների ավանդադրման կենտրոնն այսօր էլ ակտիվ գործունեություն է ծավալել էնտոմոպաթոզեն բացիլների ուսումնասիրման և կիրառման

ուղղությամբ: Ներկայումս միկրոօրգանիզմների Ազգային հավաքածուն ներառում է *Bacillus thuringensis* և մի շարք ուրիշ տեսակների շուրջ 5000 էնտոմոպաթոզեն շտամներ: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում էքստրեմոֆիլ բացիլների՝ մասնավորապես աղասերների, ալկալոֆիլների և ջերմասերների ուսումնասիրման աշխատանքներին: Տարբեր տեսակի բացիլների մոտ նկարագրվել են ցիկլոդեքստրինների կենսասինթեզի առանձնահատկությունները՝ կախված բակտերիային բջջի սպորառաջացման ընթացքում ֆերմենտների ակտիվությունից:

1976 թ. Է. Աֆրիկյանի ղեկավարությամբ իրականացվել են մանրէաբանական և կենսաքիմիական հետազոտություններ՝ տիեզերական տեխնիկայում օդտազործվող պոլիմերային նյութերի մանրէներով քայքայման

պրոցեսների ուսումնասիրման ուղղությամբ: Վերջին տարիներին այս աշխատանքները կատարվել են NASA-ի և Եվրոպական տիեզերական գործակալության ֆինանսավորման շրջանակներում: Կենսաքայքայված պոլիմերներից անջատված սնկային քայքայիչների կուլտուրաների հավաքածուն ներառում է մոտ 1000 շտամ: Հետազոտությունների արդյունքներն ամփոփված են «Պոլիմերային նյութերի սնկային դեգրադանտներ. տվյալների բազա և կուլտուրաների հավաքածու ատլասի հետ» գրքում (2005թ.):

Չնայած պատկառելի տարիքին, Էվրիկ Գեղամի Աֆրիկյանն այսօր էլ շարունակում է իր ակտիվ և բեղմնավոր գործունեությունը՝ հաստատելով Վոլտերի իմաստալից խոսքերը. «Հիմարի համար ծերությունը բեռ է, տգետի համար՝ ձմեռ, իսկ գիտության մարդու համար՝ ոսկե հունձ»:





ԻՄ ՈՒՍՈՒՑՉԻ՝ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՐԱՉՅԱ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ՄԱՍԻՆ

ԱՐՄԵՆ ՄԻՍՈՆՅԱԼ

ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան
կենսաքիմիայի ինստիտուտի
լաբորատորիայի վարիչ,
ՀՀ գիտության վաստակավոր
գործիչ, պրոֆեսոր



Այս տարի ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան նշում է իր կազմավորման 70-ամյակը: Ակադեմիան կազմավորվել է Հայրենական մեծ պատերազմի ծանր տարիներին: Ակադեմիայի հիմնադիր անդամներ են դարձել ճանաչված գիտնականներ, գրականության ու մշակույթի գործիչներ, որոնք դեմք ու դիմագիծ են տվել մեր ժողովրդին: Ակադեմիայի հիմնադիր անդամներից է նաև Հրաչյա Բունիաթյանը, որը XX դարի կենսաքիմիայի բնագավառի համաշխարհային ճանաչման արժանացած գիտնական է:

Ակադեմիկոս Հրաչյա Բունիաթյանն ականավոր գիտնական ու մանկավարժ էր, գիտության ոլորտի անխոնջ կազմակերպիչ: Երկար տարիներ ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտում աշխատելով նրա կողքին, լինելով նրա աշակերտներից մեկը՝ ուզում եմ ներկայացնել իմ հուշերից մի քանիսը, որոնք բնութագրում են նրան՝ որպես մեծ մտավորականի, հոգատար ու զգայուն ուսուցչի ու ազնիվ քաղաքացու:

Հ. Բունիաթյանը չէր հանդուրժում բամբասանք, ավելորդ խոսակցություններ և դրանք տեղնուտեղը կանխում էր: Կենսաքիմիայի ինստիտուտի երիտասարդ աշխատակիցներից մեկը գանգատվում է նրան, թե իր լաբորատորիայի վարիչը ամսագրերը տուն է տարել և իրենց զրկել դրանցից օգտվելու հնարավորությունից: Բունիաթյանն իսկույն հրավիրում է վարիչին և բողոքողի ներկայությամբ հարցնում, թե ինչու է նա ամսագրերը տուն տարել: Պարզվում է, որ բողոքը ստահոդ է: Ջուսպ ձևով ասում է՝ գնացեք, գնացեք աշխատեք: Բողոքողը քրտնած դուրս է գալիս աշխատասենյակից:

Ն. Ալեքսիձեն մեր մասնա-

գիտական խորհուրդ էր ներկայացրել դոկտորական ատենախոսություն, որի վերաբերյալ իր գործընկերները Թբիլիսիում (որտեղ կատարվել էր աշխատանքը) բացասական կարծիք էին հայտնել: Հ. Բունիաթյանը, որը խորհրդի նախագահն էր, համբերատար ծանոթանալով աշխատանքին, դրական կարծիք հայտնեց, և աշխատանքը ներկայացրեցինք հրապարակային պաշտպանության: Ամեն ինչ անցավ բարեհաջող, ներկայացվող խիստ պահանջներին համապատասխան: Գործերը պատրաստեցինք Մոսկվա՝ ԲՈՀ ներկայացնելու համար: Եվ այդ պահին Թբիլիսիից ստացանք երկու անստորագիր նամակ, որոնց մեջ բացասաբար էր խոսվում աշխատանքի մասին: Հ. Բունիաթյանը ինձ, որպես խորհրդի գիտքարտուղարի, կանչեց և վրդովված ու անորոշ ասաց.

- Երբ վերջ կլինի սրան, բան ունեք ասելու՝ գիտնականին վայել ձևով եկեք, նստենք քննարկենք: Չէ՞ որ գիտությունը նման ձևով է զարգանում և ոչ թե անստորագիր նամակներով:

Հոգնած աչքերով նայելով ինձ հարցրեց.

- Ի՞նչ անենք:

Այն ժամանակ անստորագիր նամակներն այնքան էլ ուշադրության չէին արժանանում, անտեսվում էին, մանավանդ, երբ դրանց մեջ զգացվում էր սուտն ու կեղծիքը:

- Դեն գցենք,- ասացի:

Բունիայանը ժպտաց և պատռելով նամակները՝ աղբարկղ նետեց:

Մի քանի ամիս հետո Ն. Ալեքսիձեի աշխատանքը ԲՈՒՀ-ը հաստատեց, և որոշ ժամանակ անց նրան ընտրեցին Վրաստանի գիտությունների ակադեմիայի անդամ:

Մինչև այսօր Ն. Ալեքսիձեն երախտագիտությամբ է հիշում այդ ամենը և շարունակում է իր գիտական ու մարդկային անկեղծ համագործակցությունը մեր ինստիտուտի հետ:

Հ. Բունիայանի կինը՝ Թամարա Մախմուրյանը, պրոֆեսոր էր, ճանաչված բժիշկ և աշխատում էր Ռենտգեն ինստիտուտում, որն այն ժամանակ Թումանյան փողոցի վրա էր: Երբեմն նա զանգահարում էր ամուսնուն՝ խնդրելով, որ ինստիտուտի ավտոմեքենան ուղարկի՝ իրեն տուն տանելու: Ամուսնու պատասխանը միշտ նույնն էր.

- Թամարա, այդտեղից մինչև մեր տուն տաքսին ինչքան է վերցնում, մեկ ուրբի: Դու վճարիր, գնա տուն, ես կգամ, քեզ կվերադարձնեմ:

Այն տարիներին դեռ տրամվայն անցնում էր Բաղրամյան փողոցով (որի վրա էր Հ. Բունիայանի առանձնատունը): Շատ անգամ եմ ականատես եղել, թե ինչպես էր նա շաբաթ կամ կիրակի օրերին տրամվայ նստում Խանջյան փողոց՝ քրոջ տուն գնալու համար, երբեք չչարաշահելով իրեն՝ որպես Ակադեմիայի փոխնախագահի, հատկացված ծառայողական ավտոմեքենան:

Պ. Սևակի փողոցում նոր էր շահագործման հանձնվել Ակադեմիայի կենսաքիմիայի ինստիտուտի հսկայական շենքը: Արդեն հայտնի էր, թե տնօրինությունը որտեղ է տեղավորվելու, ինչ տարածքներ են զբաղեցնելու լաբորատորիաները: Հ. Բունիայանին, որպես տնօրենի, հատկացվել էր ընդարձակ աշխատասենյակ երկրորդ հարկի վերջումը: Ես մտածեցի աշխատասենյակին կից սենյակը դարձնել սանհանգույց, որտեղից կօգտվեր միայն տնօրենը: Երբ միտքս նրան հայտնեցի, պատասխանը խիստ ու կտրուկ եղավ.

- Ինձ առանձին սանհանգույց պետք չէ, միայն աշխատեք ընդհանուր սանհանգույցը մաքուր պահել:



2. Բունիայանը կենսաքիմիայի ինստիտուտի աշխատակիցների հետ



2. Բունիայանը, ձախից Յ. Սուջյանը և Է. Մխեյանը



Ազից Ա. Գալոյանը

Շահագործման հանձնելուց տարիներ հետո ինստիտուտի շենքի մաշվածությունը նկատելի դարձավ: Մի օր ասացի. «Հրաչիկ Խաչատուրի, Ձեր աշխատասենյակը լրիվ տեսքից ընկել է, պատերը ձեռքով են և կարող են փլվել, լավ կլիներ՝ վերանորոգեինք»:

– Իմ առանձնասենյակը վերանորոգել պետք չէ, ես այսպես էլ յուր եմ գնում, լավ կլինի դուք որոշ լաբորատորիաների շուռ եկող դռներն ամրացնեք,- պատասխանեց նա:

Այս տողերը գրելիս երևակայությանս մեջ հառնում էր Հ. Բունիայանի պապի՝ Հայրապետ աղա Խաչատրյանի կարճահասակ, սովորական, փոքր-ինչ հնամենի հագուստով, խոհուն ու լուրջ մարդու, միլիոնատիրոջ կերպարը, ով անցյալ դարի սկզբներին իր ողջ կարողությունը նվիրել էր իր քաղաքի՝ Նոր Բայազետի բարգավաճման, հայրենակիցների բարօրության ու կրթության գործին, ապրելով սովորական, բայց պատվավոր, ժողովրդի կողմից սիրված ու հարգված բարերարի կյանքով:

Ակամայից ես ակադեմիկոս Բունիայանի մեջ տեսնում էի այն գեների դրսևորումները, որոնք նրան էին փոխանցվել պապից՝ նրա մեջ դրսևորելով չափավորություն, համեստություն, ազնվություն և դիմացինին օգնելու պատրաստակամություն:

Հայաստանի Կոմերիտմիության կենտկոմը 1967 թ. առաջին անգամ սահմանել էր մրցանակ՝ երիտասարդ գիտնականների աչքի ընկնող աշխատանքները խրախուսելու համար: Հ. Բունիայանն իմ աշխատանքը, որ վերաբերվում էր ուղեղում էներգիական փոխանակությանը, ներկայացրեց այդ մրցանակին: Աշխատանքը քննարկվեց ոչ միայն Ակադեմիայում, այլև Բժշկական ինստիտուտում և դրական եզրակացությամբ ներկայացվեց կոմսոմոլի կենտկոմ: Չորս շնորհալի երիտասարդ գիտնականների աշխատանքների թվում իմ աշխատանքը ևս արժանացավ այդ մրցանակին, և ինձ շնորհվեց Հայաստանի Լենինյան կոմերիտմիության մրցանակի դափնեկրի պատվավոր կոչում: Իմ կյանքում շատ կոչումներ ու մրցանակներ եմ ստացել, բայց այդ առաջինն ինձ համար մնաց ամենանվիրականը:

Հաջորդ օրը, երբ ես դափնեկրի պատվավոր կոչման շնորհագիրը ձեռքիս մտա Բունիայանի աշխատասենյակ, նա տեղից բարձրացավ, ընդառաջ եկավ, շնորհավորեց ինձ և հայրաբար գրկելով, ցածր ձայնով ասաց.

– Միայն չեծամտանաս:

Այդ պատգամն իմ ամբողջ կյանքում մշտա-



Ձախից Խ.Ա. Կոչտոյանցը



պես ուղեկցել է ինձ մարդկանց հետ իմ փոխհարաբերություններում: Հետագա իմ հաջողությունները վերագրում եմ ոչ միայն իմ նպատակաուղղված, ազնիվ ու տքնաջան աշխատանքին, այլև այդ պատգամին:

Հ. Բունիաթյանը դեմ էր մեր գիտական լեզվում տասնյակ տարիների ընթացքում հարազատ դարձած օտարալեզու շատ տերմինների հայերենացման գործընթացին, համարելով, որ դա խառնաշփոթ է առաջացնում և աղքատացնում լեզուն: Օրինակ էր բերում անգլերենը ու եվրոպական այլ լեզուներ, որոնց մեջ հարյուրամյակների ընթացքում օտար լեզուներից փոխառնվել և հարազատ են դարձել հազարավոր գիտական տերմիններ:

Տարիներ անց, երբ Հ. Բունիաթյանն այլևս չկար, Ա. Գալոյանի և Ի. Բատիկյանի հետ հրատարակեցինք երեք մեծածավալ ռուսերեն-հայերեն, ռուսերեն-անգլերեն-հայերեն կենսաքիմիական և կենսաբանական բացատրական բառարաններ, ինչպես նաև անգլերեն-ռուսերեն-հայերեն կենսաբանական մեծածավալ բառարան, որը ներառում է կենսաբանության տարբեր բնագավառներին վերաբերող ավելի քան 80 հազար տերմին: Այդ բառարաններն ստեղծելիս աշխատել ենք հնարավորս հայերեն դարձնել օտարալեզու հազարավոր կենսաբանական տերմիններ, սակայն հետևելով ակադեմիկոս Հ. Բունիաթյանի խորհրդին՝ պահպանել ենք նաև դրանց՝ այլ լեզուներից փոխառնված բարեհնչյուն ու հասկանալի հոմանիշները, թողնելով ժամանակի քննությանը այն հարցը, թե դրանցից ավելի ընդունելին որը կմնա մեր լեզվում:

Պրոֆեսոր Հ. Բունիաթյանը կյանքում և գիտության մեջ աչքի էր ընկնում սկզբունքայնությամբ,

իր և իր աշակերտների նկատմամբ պահանջկոտությամբ, ճշտապահությամբ, ազնվությամբ, բարեխղճությամբ և հանդուրժողականությամբ: Այդ ոգով էլ դաստիարակում էր իր սաներին:

Իր կենդանության ժամանակ մեր ինստիտուտից որևէ գիտական հոդված առանց նրա կարդալու և բարեխղճորեն կատարված շտկումների տպագրության չէր ներկայացվում:

Հիշում եմ իմ ասպիրանտական տարիներին փորձերի նույն տարբերակը տասն անգամ կրկնում էի և նմանատիպ արդյունք ստանում: Ոգևորված ներկայացնում էի իմ ղեկավարին՝ Հ. Բունիաթյանին: Խրախուսող աչքերով նայում էր ինձ և ասում. «Հետաքրքիր տվյալներ են, բայց մի անգամ էլ կրկնիր, որ ավելի վստահ լինենք»: Նրա յուրաքանչյուր խորհուրդ մենք երբեք չէինք հակադարձում և կատարում էինք ամենայն բարեխղճությամբ:

Հ. Բունիաթյանի բացառիկ հիշողություն ունենալու վկայությունն է հետևյալ դեպքը: Մենք մասնակցում էինք կենսաքիմիային նվիրված համամիութենական հերթական գիտաժողովներից մեկին, որը տեղի էր ունենում Մինսկում: Գիտաժողովի առաջին օրը, պլենար նիստում Հ. Բունիաթյանը ներկայացնում էր նյարդաքիմիայի բնագավառում վերջին երեք տարիների հաջողությունները: Այդ դասախոսությունը տևեց ավելի քան երկու ժամ, որի ընթացքում նա ներկայացրեց նաև տարբեր հեղինակների աշխատանքներից հղումներ, առանց հուշաթղթի, միայն հիշողությամբ՝ մեծ գոհունակություն պատճառելով հարյուրավոր ներկաներին:

Ես ոչ միայն պրոֆ. Հ. Բունիաթյանի աշակերտն եմ եղել, այլև նրա հայրենակիցը: Ծնողներիցս շատ բան էի լսել Նոր Բայազետում

Բունիաթյանների տոհմիկ ընտանիքի մասին՝ կապված հատկապես Հ. Բունիաթյանի հոր՝ Խաչատուր Բունիաթյանի և իմ պապի՝ Գեղամ Տեր-Սիմոնյանի բարեկամական և ընկերական հարաբերությունների հետ: Անցյալ դարի սկզբներին նրանք երկար տարիներ միասին դասավանդել են Նոր Բայազետի Ս. Հռիփսիմե-Մեսրոպյան ուսումնարանում՝ աշխատելով այնպիսի նշանավոր մարդկանց հետ, ինչպիսիք էին ակադեմիկոս Հրաչյա Աձառյանը, նշանավոր գրող ու հրապարակախոս Ավետիս Ահարոնյանը և ուրիշներ:

Նոր Բայազետից Հ. Բունիաթյանի աշակերտներից էր նաև պրոֆ. Էմիլ Մխեյանը, որն այն տարիներին կենսաքիմիկոսների մեջ աչքի էր ընկնում իր գիտական վերլուծական մտածողությամբ, հետազոտությունների արդյունքների մեկնաբանման ու կարողությամբ: Նա մեծ հարգանք ուներ Հ. Բունիաթյանի նկատմամբ և վայելում էր նրա փոխադարձ հարգանքն ու վստահությունը:

Ինչպես Է. Մխեյանը, այնպես էլ ես, միշտ ներքուստ հպարտացել ենք, որ ակադեմիկոս Հ. Բունիաթյանը մեր հայրենակիցն է, սակայն երբևէ դա չենք բարձրաձայնել ու առավել ևս՝ չարաշահել:

Ակադեմիկոս Հ. Բունիաթյանն ապրել է բազմաբեղուն, հետաքրքիր ու ուսանելի կյանք: Նրա դերը Հայաստանում՝ կենսաքիմիական գիտության զարգացման մեջ հսկայական է և, հիրավի, նա Հայաստանի կենսաքիմիական դպրոցի հիմնադիրն է:

Ականավոր գիտնականի ու մանկավարժի՝ Հրաչյա Բունիաթյանի կերպարը լավ օրինակ է գիտնականների երիտասարդ սերնդի դաստիարակության համար:



ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ԺՐԱՅՐ ՎԱՐԴԱՆՅԱԼ

ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

XX ԴԱՐԻ ԱԿԱՆԱՎՈՐ ԲՈՒՍԱԲԱՆԸ՝ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՐՄԵՆ ԼԵՎՈՆԻ ԹԱԽՏԱԶՅԱԼ

XX դարի ականավոր բուսաբան, ֆիլոզոֆների և էվոլյուցիոնիստ, ՀՀ ԳԱԱ և ՌԴ ԳԱ ակադեմիկոս Արմեն Լևոնի Թախտաջյանի արգասաբեր գիտական գործունեությունը հսկայական նշանակություն է ունեցել բուսաբանական գիտության զարգացման գործում Հայաստանում Ռուսաստանում, նաև ամբողջ աշխարհում: Նա մինչև կյանքի վերջը շարունակ հարստացրել է բույսերի կենսակարգաբանությունը նոր փաստերի մեկնաբանումով և ամփոփումով, մեթոդական նոր մոտեցումներով:

Նրա հայրը՝ Լևոնը, կրթվել է Գերմանիայում, ստացել ագրոնոմի որակավորում, այնուհետև կատարելագործել է իր մասնագիտությունն Անգլիայում, Ֆրանսիայում և Շվեյցարիայում: Աշխատել է

Շուշիում, որտեղ ամուսնացել է: Նրա որդին՝ ապագա գիտնականը, ծնվել է Շուշիում 1910 թ. հունիսի 10-ին:

Դեռևս ուսանողական տարիներին Թիֆլիսի Մերձարևադարձային կուլտուրաների համամիութենական ինստիտուտում Կովկասի բուսականության մեծագույն գիտակ Դ. Սոսնովսկու ղեկավարությամբ Ա. Թախտաջյանը կատարել է իր առաջին հետազոտությունները բարձրակարգ բույսերի դասակարգման և էկոլոգիայի վերաբերյալ: Գիտարշավների ժամանակ հավաքած բույսերի ուսումնասիրման համար հաճախ մեկնել է Լենինգրադ, այնտեղ առնչվել է ժամանակի խոշորագույն բուսաբանների, հատկապես Ն. Վավիլովի հետ:



Վայոց ձոր, 1933 թ.



Գիտարշավ դեպի Երանոս սար, 1973 թ.



Արմեն Թախտաջյանը, 34 տարեկանում դառնալով Բուսաբանության ինստիտուտի տնօրեն, իսկ 35-ում՝ ԳԱ թղթակից անդամ, անմիջապես ձեռնամուխ է եղել բուսաբանական գիտության հիմնական ուղղությունների (կարգաբանություն, մորֆոլոգիա, անատոմիա, երկրաբուսաբանություն, հնէաբուսաբանություն, կարիոլոգիա, պալինոլոգիա) ստեղծմանը և զարգացմանը: Ի դեպ, պալինոլոգիական ուսումնասիրությամբ (փոշեհատիկի կառուցվածքի) խորհրդային Միությունում և հենց Հայաստանում առաջինը սկսեց զբաղվել Ա. Թախտաջյանը՝ իր աշակերտներ Ե. Ավետիսյանի, Թ. Ծատուրյանի, Վ. Աղաբաբյանի և ուրիշների հետ:

Երևանի պետական համալսարանում նա ղեկավարել է բույսերի մորֆոլոգիայի և կարգաբանության ամբիոնը, որտեղ նրա հետաքրքրությունը ֆիլոգենիայի (բույսերի ցեղակցական կապերի) նկատմամբ վերածվել է բարձրակարգ բույսերի տարբեր խմբերի միջև ցեղակցական փոխհարաբերությունների և ընդհանրապես բուսական աշխարհի էվոլյուցիայի նպատակասլաց ուսումնասիրության: Այդ հետազատությունների վերջնական արդյունքը բարձրակարգ բույսերի ինքնատիպ համակարգի ստեղծումն է, որի համար նա արժանացել է ԽՍՀՄ Կոմարովյան մրցանակի: Իր այդ համակարգը նա անընդհատ կատարելագործել է լրացնելով մեծ թվով բնութագրական հատկանիշներով: Դասագրքերում, տեղեկագրերում, հանրագիտարաններում Ա. Թախտաջյանի համակարգը աստիճանաբար փոխարինում է հնացած կամ անբավարար մշակված համակարգերին: Ժամանակին այն մտավ խորհրդային Մեծ Հանրագիտարանի (1978 թ.) 3-րդ հրատարակության, Բրի-

տանական Հանրագիտարանի 15-րդ հրատարակության (1975 թ.), գերմանական բարձրագույն դպրոցի բուսաբանության դասական դասագրքի 30-րդ և 31-րդ հրատարակությունների մեջ (1971 թ.): Մեծատաղանդ գիտնականը շարունակել է մշակել համակարգի նոր տարբերակ, որտեղ արդեն արտացոլվել են մոլեկուլային բուսաբանության և ժամանակակից գիտական այլ ուղղությունների նորագույն տվյալները:

Գիտական բազմաթիվ արշավախմբերի ընթացքում Ա. Թախտաջյանի առանձնահատուկ ուշադրության կենտրոնում Հայաստանի և Անդրկովկասի բուսականությունն էր, որին նա նվիրել է մի շարք կարևոր ուսումնասիրություններ: Ուշագրավ է հատկապես նրա «Հայաստանի բուսաաշխարհագրական ակնարկ» աշխատությունը, որը թեև հրատարակվել է 1941 թվականին, սակայն մինչ օրս էլ կարևոր տեղեկատու է Հայաստանի բուսականության բնութագրման մասին: Շրջագայելով տարբեր մայրցամաքներում, երկրներում և արևադարձային կղզիներում, ուսումնասիրելով վիթխարի գրականություն՝ ակադեմիկոս Ա. Թախտաջյանը մոլորակի բուսաբանների համար ստեղծել է «Երկրի ֆլորիստիկական մարզերը» չափազանց կարևոր աշխատությունը, որի համար 1981 թ. նրան շնորհվել է ԽՍՀՄ պետական մրցանակ: Նա ձևակերպել է ֆիտոխորոհոմիայի հիմնական սկզբունքները:

Ավելի ուշ՝ 1986 թվականին, այդ գիրքը, ֆիտոխորիայի քարտեզներով և հիմնավորապես մշակված, անգլերեն հրատարակել է Կալիֆոռնիայի համալսարանը: XX դարի խոշորագույն բուսաբաններից մեկը՝ Լ. Ստեփինսը, այսպես է գնահատել այդ

գիրքը. «Աշխարհի բույսերի այս դասակարգումը լավագույնն է մինչև հիմա եղածներից»:

Դեռևս 40-ական թվականներին, երբ Արմեն Թախտաջյանն աշխատում էր Երևանում, որոշեց ստեղծել հիմնարար և հանրագիտարանային ուսումնասիրություն Հայաստանում աճող բոլոր բուսատեսակների մասին: Բնականաբար, այն ժամանակ ոչ ոք չէր ենթադրում, թե Հայաստանի ֆլորան այդքան հարուստ է, և կպահանջվի բազմաթիվ հատորների հրատարակում: Առաջին հատորը (1954 թ.) ամբողջությամբ գրեց Ա. Թախտաջյանը: Միաժամանակ նա մեծ եռանդով կարգաբան մասնագետներ էր պատրաստում, որոնք պետք է շարունակեին և իրականացնեին նրա մտահաղացումը՝ Յա. Մուլքիջանյան, Ե. Ավետիսյան, Վ. Ավետիսյան, Ե. Գաբրիելյան և ուրիշներ: Սակայն ԽՍՀՄ գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի տխրահռչակ սեսիան և դրան հաջորդած լիսենկոյական խայտառակ կամայականությունները Ա. Թախտաջյանին ստիպում են Երևանից տեղափոխվել Լենինգրադ, որտեղ նա սկզբում զբաղեցնում է Լենինգրադի համալսարանի կենսաբանության և հողագիտության ֆակուլտետի դեկանի, իսկ ավելի ուշ՝ ԽՍՀՄ առաջատար Վ. Կոմարովի անվան բուսաբանական ինստիտուտի տնօրենի պաշտոնները: Սակայն նա երբևէ չիսկզբ իր կապերը Հայաստանի հետ: Ամեն տարի այցելելով Հայաստան՝ նա իր աշակերտների հետ կազմակերպում էր բուսաբանական արշավախմբեր: Ան. Ֆյոդորովի հետ համատեղ նա իրականացրել է «Երևանի ֆլորայի» երկու հրատարակություն (հայերեն՝ Երևանում, ռուսերեն՝ Լենինգրադում), շարունակել խմբագրել «Հայաստանի ֆլորան» հրատա-




րակությունը (մինչև 1986 թ. լույս է տեսել 8 հատոր): Այս շարքի 9-րդ հատորի վրա տարվող աշխատանքները համընկան մեր երկրի համար ծանր ժամանակաշրջանին:

Հպարտությամբ պետք է նշել, որ հետխորհրդային ամբողջ տարածքում Հայաստանը եզակիներից մեկն էր, իսկ Կովկասում՝ միակ հանրապետությունն էր, որ պահպանեց բույսերի կարգաբանության բաժինն իր արդյունավետ գիտական գործունեությամբ: Ծնորհիվ Ա. Թախտաջյանի՝ գերմանացի գործընկերների հետ ունեցած սերտ կապերի պայմանավորվածություն ձեռք բերվեց «Հայաստանի ֆլորայի» հետագա հատորների գերմանական հայտնի մասնագիտացված հրատարակչության կողմից



ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտ, 1980 թ.



Գիտարշավ դեպի Վայոց ձոր, 1982 թ.

անվճար տպագրության մասին: 1995 թ. տպագրվել են «Հայաստանի ֆլորայի» 9-րդ, իսկ 2001 թ.՝ 10-րդ հատորները: 2010 թ. լույս տեսավ «Հայաստանի ֆլորայի» եզրափակիչ՝ 11-րդ հատորը, որը նվիրված է Հայաստանում աճող հացազգի տեսակներին (100 ցեղ, ավելի քան 300 տեսակ):

Ա. Թախտաջյանի մեծագույն աշխատություններից է նաև «Բույսերի կյանքը» (ռուսերեն) յոթհատորյա հրատարակությունը:

Ակադեմիկոս Ա. Թախտաջյանն ստեղծել է հայ բուսաբան-կարգաբանների հզոր դպրոց, որտեղ աշխատում են մի քանի

սերունդների ճանաչված մասնագետներ:

Ընդգրկուն է նաև Ա. Թախտաջյանի գիտակազմակերպական գործունեությունը: Նա եղել է “Ботанический журнал” (Սանկտ Պետերբուրգ) հանդեսի գլխավոր խմբագիր, Հայկական աշխարհագրական ընկերության նախագահ, Համամիութենական բուսաբանական ընկերության նախագահ և Լոնդոնի Լինեյի ընկերության արտասահմանյան անդամ, Հնդկաստանի հնէաբուսաբանական ընկերության պատվավոր անդամ, ԱՄՆ-ի, Նորվեգիայի, Լեհաստանի, Ֆինլանդիայի

գիտությունների ակադեմիաների արտասահմանյան անդամ, գերմանական «Լեոպոլդինա» բնագիտության ակադեմիայի անդամ և այլ:

Բնական գիտությունների բնագավառում ակնառու նվաճումների, երկարամյա և բեղմնավոր գիտական գործունեության համար Հայաստանի նախագահի հրամանագրով ակադեմիկոս Ա. Թախտաջյանը 2009 թ. պարգևատրվել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոցի» շքանշանով:

Ա. Թախտաջյանը վախճանվել է 2009 թ. նոյեմբերի 13-ին Սանկտ Պետերբուրգում:

ԱԿԱՆԱՎՈՐ ՖԻՏՈՖԻԶԻՈԼՈԳԸ՝ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԻՔԱՅԵԼ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ԶԱՅԼԱԽՅԱՆ



Մեծ է ՀՀ ԳԱԱ և ՌԴ ԳԱ ակադեմիկոս Միքայել Քրիստափորի Զայլախյանի ներդրումը կենսաբանական գիտության զարգացման գործում ինչպես Հայաստանում, այնպես էլ ամողջ աշխարհում: Մ. Զայլախյանը պատկանում է բույսերի ֆիզիոլոգիայի ականավոր հիմնադիրների թվին և համարվում է XX դարի եվրոպական առաջատար գիտնականներից մեկը:

Զայլախյանը ծնվել է 1902 թ. մարտի 8-ին Նոր Նախիջևանում (այժմ՝ ՌԴ Դոնի Ռոստով քաղաքում):

Զայլախյանի նախնիները Հին Հայաստանի մայրաքաղաք Անիից են: Միջնադարում, փրկվելով հալածանքներից, տեղափոխվել են Դրիմ և Դրիմի արևելյան մաս, Թեոդոսիայի հարևանությամբ, որը հայտնի էր որպես Ծովային Հայաստան: Մ. Զայլախյանը սովորել է Նովոչերկասկի դասական արական դպրոցում: Ուսման տարիներին ընտանիքը բնակվել է Նովոչերկասկում, այնուհետև՝ տեղափոխվել Երևան:

1926-1928 թթ. Մ. Զայլախյանն աշխատել է Էջմիածնի բույսերի բուծման կայանում: 1926 թ. ավարտել է ԵՊՀ գյուղատնտեսական ֆակուլտետը և աշխատել ԽՍՀՄ ԳԱ Բույսերի ֆիզիոլոգիայի ԳՀԻ-ում: 1928-1929 թթ. նա աշխատել է ՀԽՍՀ հողօդկոմատի գյուղատնտեսության վարչությունում՝ որպես հրա-



հանգիչ, իսկ 1929-1931 թթ.՝ Անդրկովկասյան Անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի բուսաբանության ամբիոնում՝ որպես ասիստենտ:

1931-1934 թթ. Մ. Չայլախյանը եղել է ՍՍՀՄ ԳԱ Լենինգրադի կենսաքիմիայի և ֆիզիոլոգիայի լաբորատորիայի ասպիրանտ: Նույն թվականին էլ Բույսերի կենսաքիմիայի և ֆիզիոլոգիայի լաբորատորիայի կազմում տեղափոխվել է Մոսկվա, որտեղ հե-

տազոտությունները է կատարել ակադեմիկոս Ա. Ա. Ռիխտերի ղեկավարությամբ:

1935-1991 թթ. Մ. Չայլախյանն աշխատել է ԽՍՀՄ ԳԱ Կ. Ա. Տիմիրյազևի անվան Բույսերի ֆիզիոլոգիայի ինստիտուտում՝ որպես բույսերի աճման ու զարգացման լաբորատորիայի վարիչ: Նրա կյանքում արմատական փոփոխություններ են տեղի ունեցել ինստիտուտում աշխատելու տարիներին: Այստեղ ձևավորվել

են երիտասարդ գիտնականի գիտահետազոտական աշխատանքների ուղղությունները: 2008 թ., ի պատիվ նշանավոր կազմակերպչի և պրոֆեսորի, Կ. Տիմիրյազևի անվան բույսերի ֆիզիոլոգիայի լաբորատորիան պաշտոնապես անվանակոչվել է ակադեմիկոս Մ. Չայլախյանի անունով:



Տիմիրյազևի անվ. ԲՖԻ-ի լաբորատորիա

Մ. Չայլախյանը եղել է ԵՊՀ-ի բույսերի անատոմիայի և ֆիզիոլոգիայի (1941-1948 թթ.), միաժամանակ Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի բույսերի ֆիզիոլոգիայի և մանրէաբանության ամբիոնների վարիչ (1941-1946 թթ): Եռանդուն գիտաստեղծագործական, փորձարարական և հետազոտական գործունեության արդյունքում արժանացել է ճանաչման ինչպես հայրենիքում, այնպես էլ արտասահմանում:

1941 թ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Բուսաբանության ինստիտուտում, որտեղ 1942 թ. հիմնել է Բույսերի ֆիզիոլոգիայի լաբորատորիան: Լինելով պարզ և

համեստ մարդ, Մ. Չայլախյանն աչքի էր ընկնում մտքի ձկունությամբ և ինքնուրույնությամբ, դատողությունների յուրօրինակությամբ, ուժեղ կամքով, եռանդով և անսովոր աշխատասիրությամբ:

1967 թ. Մ. Չայլախյանը արժանացել է ԽՍՀՄ գիտության վաստակավոր գործչի կոչման, 1968 թ.՝ ընտրվել ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս:

1969 թ. Մ. Չայլախյանն ընտրվել է Գերմանիայի բնախոյզների «Լեոպոլդինա» ակադեմիայի ակադեմիկոս: Մասնակցել է Ռուստոկի համալսարանի 600-ամյակին նվիրված գիտաժողովին «Բույսերի ծաղկման հորմոնալ

կարգավորում» զեկուցմամբ և արժանացել Ռոստոկի համալսարանի պատվավոր դոկտորի կոչման: Նույն տարում ընտրվել է նաև բույսերի ֆիզիոլոգների Ամերիկյան, Հնդկական և Բուլղարական բուսաբանական ընկերությունների պատվավոր անդամ և հանդես է եկել բազմաթիվ զեկույցներով:

1971 թ. Մ. Չայլախյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1972 թ. կենսաբանական գիտության զարգացման և իր ծննդյան 70-ամյակի կապակցությամբ պարգևատրվել է Լենինի շքանշանով, իսկ 1975 թ.՝ «Կարմիր դրոշի շքանշանով», 1979 թ. ԱՄՆ-ում միջազգային ասոցացի-

այի X համագումարին Մ. Չայլախյանն արժանացել է պատվո շքանշանի, 1982 թ. գիտական բացառիկ նվաճումների համար և ծննդյան 80-ամյակի կապակցությամբ պարգևատրվել է Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով:

Մ. Չայլախյանի գիտական աշխատանքները հիմնականում վերաբերում են բույսերի աճման ու զարգացման հարցերին, օնթոգենեզի ընդհանուր օրինաչափությունների մշակմանը, գենետիկ վարժապետության, սնուցողական և հորմոնային գործոնների բացահայտմանը: Նա բույսերի զարգացման ու ծաղկման հորմոնային տեսության հիմնադիրն է, որը նրան համաշխարհային ճանաչում է բերել: Դեռևս 1936-37 թթ. նա հանգել է այն եզրակացության, որ բույսերի ծաղկման լուսապարբերական կարգավորումն իրականանում է հորմոնային գործոնների օգնությամբ, որոնց անվանել է ֆլորիգեն: Մ. Չայլախյանը ցույց է տվել, որ ֆլորիգենը հորմոնային կոմպլեքս է, կազմված 2 բաղադրամասերից՝ հիբերեյիններից և անտեզիններից. հիբերեյինների անբավարարությունը սահմանափակում է երկարօրյա բույսերի զարգացումը կարծ օրվա պայմաններում, իսկ անտեզինների պակասը դանդաղեցնում է կարճօրյա բույսերի զարգացումը: Նա միաժամանակ պարզել է, որ, բացի հորմոնային խթանիչներից, բույսերի ծաղկման կարգավորմանը մասնակցում են նաև արգելակող (ինհիբիտորային) բնույթի նյութերը:

Բույսերի ծաղկման, տրոֆիկ սնուցման և հորմոնալ գործոնների ուսումնասիրության արդյունքների հիման վրա Մ. Չայլախյանը ձևակերպել է ընդհանուր հայեցակարգ, համաձայն որի բոլոր միամյա բույսերի ծաղկումն ընթանում է երկու փուլով. նախ առաջանում են ծաղկային ցողունները, ապա ծաղիկները:

Մ. Չայլախյանի աշխատանքները կարևոր գիտական և գործնական նշանակություն ունեն նաև գյուղատնտեսության համար: Նա ավելի քան 500 գիտական աշխատանքների հեղինակ է, այդ թվում 10 մենագրության:

Մ. Չայլախյանը վախճանվել է 1991 թ. նոյեմբերի 30-ին և թաղված է Մոսկվայի (Վազանկովյան) հայկական գերեզմանատանը:



Նկ. 8 Ակադեմիկոս Ա.Ի. Մերկիսը պարգևատրում է Մ.Ք. Չայլախյանին անվանական ժապավենով



Նկ. 10 Մ. Չայլախյանը



Նկ. 9 Մ. Չայլախյանը և Ա. Լանցը



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԵՐԶՅԱԼ

Տեխնիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
ակադեմիկոս, ՀՊՀՀ պրոռեկտոր

ԱՆԴՐԱՆԻԿ ԻՈՍԻՖՅԱՆԻ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների շարքում իր պատվավոր տեղն ունի ականավոր գիտնական, հատուկ և տիեզերական էլեկտրամեխանիկայի հիմնադիր, Սոցիալիստական աշխատանքի հերոս, Լենինյան և Պետական մրցանակների դափնեկիր, Ռուսաստանի և Հայաստանի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ Անդրանիկ Իոսիֆյանը:

Նա ծնվել է Ղարաբաղի Ծմակահող գյուղում ուսուցչի ընտանիքում: 1922 թ. կամավոր գնացել է բանակ: Չորացրվելուց հետո ընդունվել է ինստիտուտ: Արդեն ուսանողական տարիներին դրսևորվել են նրա բացառիկ ընդունակությունները: Բուհն ավարտելուց հետո Իոսիֆյանին հրավիրում են Համամիութենական էներգետիկ ինստիտուտ, որտեղ նա աշխատում է մինչև 1941 թ.: Այդ ինստիտուտում է նա ձևավորվել որպես գիտնական և 35 տարեկանում դարձել տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Այդ ժամանակաշրջանին են վերաբերում Իոսիֆյանի եզակի մշակումները էլեկտրական գնդացիների և հեռահար


իրանոթների, թափավազքի գծային շարժիչների ստեղծման ուղղությամբ, ոչ հպումային սելսիոնի գյուտը, դրա հիման վրա էլեկտրական մեքենաների ընդհանրացված տեսության ստեղծումը և այլն:

Նրա՝ ոչ հպումային սելսիոնի գյուտը բացառիկ դեր է ունեցել տիեզերական, ավիացիոն և ռազմական տեխնիկայում:

1941 թ. սեպտեմբերին ռազմական էլեկտրատեխնիկայի մշակման և թողարկման նպատակով Մոսկվայում ստեղծվում է Պետական միութենական N 627 գործարանը, և 36-ամյա Իոսիֆյանը նշանակվում է այդ գործարանի տնօրեն:

Իոսիֆյանի ղեկավարությամբ հետագայում գործարանը վերաճել է էլեկտրատեխնիկական խոշորագույն կայսրության՝ էլեկտրամեխանիկայի Համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի (ԷՄՀԳՀԻ), որն այժմ կրում է նրա անունը:

Դժվար է գերագնահատել ԷՄՀԳՀԻ-ի նշանակությունը իրօրևատիեզերական տեխնիկայի կայացման և զարգացման գործում: 40-ականների վերջում Իո-



սիֆյանը նշանակվել է իրօրևների և տիեզերական սարքերի էլեկտրատեխնիկական սարքավորման գլխավոր կոնստրուկտոր և ներգրավվել է Ս. Կորոլյովի, ապա նաև Մ. Յանգելի ղեկավարած գլխավոր կոնստրուկտորների խորհրդի կազմի մեջ:

Տիեզերքում շահագործելու համար նախատեսված էլեկտրատեխնիկական սարքավորումները տիեզերական փորձարկումների կարիք ունենին: Անդրանիկ Իոսիֆյանի ղեկավարությամբ համաշխարհային պրակտիկայում առաջին անգամ ստեղծվում է «Օմեգա» տիեզերական էլեկտրատեխնիկական լաբորատորիան: Այդ մշակումներին մասնակցել է նաև Իոսիֆյանի ստեղծած ԷՄՀԳՀԻ-ի երևանյան մասնաճյուղը:

Իոսիֆյանի գլխավորած ԷՄՀԳՀԻ-ի խոշորագույն նվաճումներից է օդերևութաբանական արբանյակների ստեղծումը, որը նախորոշեց ինստիտուտի՝ հետագա տարիների թեմատիկան: Այսօր Իոսիֆյանի անվան





ԷՄՀԳՀԻ-ն ՌԴ միակ կազմակերպությունն է, որտեղ մշակվում են երկրի օդերևութաբանական բնույթի արհեստական արբանյակներ:

Գլխավոր կոնստրուկտոր Իոսիֆյանի ղեկավարությամբ մշակված «Կոսմոս», «Մետեոր», «Մետեոր-պրիորդա», «Ռեսուրս», «Էլեկտրո», «Օմեգա» և այլ տիեզերական կայանների տասնյակ օրինակներ տարբեր ժամանակներում դուրս են բերվել ուղեծիր:

Իոսիֆյանի գլխավորությամբ 60-ական թվականների սկզբին ծավալվել են սուզանավերի էներգիական համակարգի ստեղծման ուղղությամբ աշխատանքներ: Ստեղծվող էլեկտրասարքավորումը պետք է բավարարեր բացառիկ բարձր պահանջների՝ սակավադժվարություն, ցածր մագնիսականություն, բարձր օգտագործելիություն և ավտոմատացում: Որոշակի սուզանավերի համար էլեկտրասարքավորման մշակմանը և ստեղծմանը զուգահեռ ձևավորվել է գիտական նոր գաղափար՝ հեռանկարային ատոմային սուզանավերի համար գերհաղորդիչ թիավար էլեկտրական շարժիչների և գերհաղորդիչ տուրբոգեներատորների օգտագործմամբ, ատոմային սուզանավերի էլեկտրաշարժման համակարգի ստեղծման ուղղությամբ: Նման գերխնդիր կարող էր առաջադրել միայն այնպիսի ռոմանտիկ գիտնականը, որպիսին Անդրանիկ Իոսիֆյանն էր: Ցավոք, նրա մահվանից հետո այդ հույժ հեռանկարային աշխատանքները չգտան իրենց տրամաբանական ավարտը:

70-ականների վերջին, երբ սկսվեց ատոմային էներգետիկայի բուռն զարգացումը, Անդրանիկ Իոսիֆյանը նշանակվեց ատոմային էլեկտրակայանների համար էլեկտրասարքավորումների համալիրի ստեղծման աշխատանքների գիտական ղեկավար: Ստեղծված «Սկալա» համակարգը, որը ներառում է ոչ միայն ռեակտորի կառավարման և պաշտպանության ավտոմատացված համակարգ, այլև երաշխավորված սնուցման համակարգ, այսօր հաջողությամբ շահագործվում է ատոմային շատ էլեկտրակայաններում:

Հատուկ էլեկտրատեխնիկայի բնագավառի բարդագույն և կարևորագույն խնդիրների լուծման հետ մեկտեղ, Անդրանիկ Իոսիֆյանը շատ ժամանակ էր հատկացնում ընդհանուր արդյունաբերական նշանակության էլեկտրատեխնիկայի արտադրությանը, որի ամենախոշոր նվաճումն միջազգային ինտեգրացիայի շրջանակներում Իոսիֆյանի ղեկավարությամբ 4A սինքրոն շարժիչների թողարկումն էր (1968-1972 թթ.), իսկ հետագայում հաստատուն մագնիսներով միկրոշարժիչների ստեղծումը: Այդ հիստերեզիսային շարժիչների ներդրման շնորհիվ ծնվեց «ուժային հողակադիտում» նոր ուղղություն:

Հարկ է նշել, որ Իոսիֆյանը զգալի ներդրում ունի Հայաստանի գիտության և արդյունաբերության զարգացման գործում: Ըստ էության, էլեկտրատեխնիկական, ռադիոտեխնիկական և էլեկտրոնային գիտությունն ու արդյունաբերությունը Հայաստանում սկիզբ են առել Իոսիֆյանի նախաձեռնությամբ և որոնց զարգացմանը նա մշտապես աջակցել է:

Համալիր էլեկտրասարքավորման համամիութենական գիտահետազոտական ինստիտուտն ստեղծվել էր որպես ԷՄՀԳՀԻ երևանյան մասնաձյուղ: Հետագայում այն դարձավ վերերկրյա և վերջրյա շարժական բազավորման ինքնավար էլեկտրամատակարարման համակարգերի գլխա-

մասային կազմակերպություն, որի եզակի մշակումները ցայսօր թողարկվում են զենիթաիրթիռային համալիրների ղեկավարման համակարգերի էլեկտրամատակարարման համար:

Գործնականում ինստիտուտում ստեղծված ողջ արտադրանքը թողարկվել է Հայէլեկտրագործարանում, որը դարձել էր էներգիական համակարգերի խոշորագույն արտադրողը. բավական է ասել, որ 90-ականներին այստեղ թողարկվել է երկրում արտադրվող էլեկտրամատակարարման միջոցների 40 %-ը:

Իոսիֆյանի նախաձեռնությամբ երևանում ստեղծվեց երկրորդ խոշորագույն ինստիտուտը՝ Մաթեմատիկական մեքենաների երևանի գիտահետազոտական ինստիտուտը, որը կարճ ժամանակամիջոցում դարձավ էլեկտրոնային հաշվողական մեքենաների միասնական թողարկման մի հատվածի մշակման գլխամասային ձեռնարկություն, կյանքի կոչելով կառավարման եզակի ավտոմատացված համակարգ, որը շահագործվում է մինչև այսօր:

1962 թ. Մոսկվայում ստեղծելով Ծ-3 փոքրածավալ էլեկտրոնային հաշվողական մեքենայի առաջին նշումները՝ դրանցից մեկը Իոսիֆյանն ուղարկել է Երևան, և դրա հիման վրա կազմավորվել է ՀԽՍՀ ԳԱ հաշվողական կենտրոնը, որը հսկայական դեր է խաղացել հանրապետությունում հաշվողական գիտության կայացման և զարգացման գործում:

Տրանզիստորե ՀԿԲ Երևանում, «Ավտոմատիկա» ԳՀԻ Կիրովականում, էլեկտրոնային արդյունաբերության ձեռնարկությունների համալիրը Աբովյանում. ահա ոչ լրիվ ցանկը այն եզակի գիտաարտադրական ձեռնարկությունների, որոնք ստեղծվել են Իոսիֆյանի աջակցությամբ:

Անդրանիկ Իոսիֆյանը մեծ գիտնական էր, անխոնջ նվիրյալ, մեծ հայրենասեր, որն իր կյանքն ի սպաս դրեց իր երկրի գիտության և տեխնիկայի կայացմանն ու զարգացմանը:




ԱՄԵՆԱԿԵՏԱՔՐՔԻՐ

ԳԻՏԱԿԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

ԸՆԴԵՍԸ

ԸՅԱՍՏԱՆՈՒՄ



ՐԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ԿՐՈՂ ԵՔ
ՀԱՆԳԱՀԱՐԵԼ

52 38 30

